Այդ հարցումին մէջ դուք խտացած կը գտնէք պահանջը մեր ժողովուրդի ազգային ազատութեան: Բոլոր տեսակի ազատութիւնները փոքրեց մեր ժողովուրդը, ու ամէն տեղ վերաւորուեցաւ իր հոգու խորքին մէջ: Ամէն տեղ դժուարութեան մը մատնուեցաւ: Ամէնքէն արհեհարուեցաւ: Անհատական միջոցներն անզօր դարձան անոր աչքին: Ու ան համոզումով ու ներքին մղումով հաւատքան ազատութեան գաղափարին կառչեցաւ:

— Ի՞նչ պիտի ըլլանք, ի՞նչ պիտի ընենք: Քաղաքական անհամբերութեան պոռթկումն է որ կը փրթի մեր ժողովուրդի չբթունքներէն դէպ ի հաւաքական կամք մը, որ իրեն ազատ հայրենիք մը պիտի տայ: Գոնէ այս յոյսովը կ'ապրի, այդ յոյսովն է որ իր հարցումը կ'ընէ:

Հոգեկան կորովի արտայայտութիւնն է այդ անհամբերութիւնը, որ ծնունդն է յուսահատեցնող պայմաններու, բայց յուսահատութեան ճիչը չէ: Ընդհակառակն, անոր ազդովին ապրելու, քաղաքականապէս զգալու, եւ գործ մը կատարելու յատկանշական ոգին է որ կը դրսեւորի, մղիչ ուժ մը հանդիսանալով քայլ մը առնելու դէպ ի յառաջ, դէպ ի մեր ժողովուրդի ազատութեան վերջնական նպատակը:

Օրը Օրին

Մանկապարտէզ

Պաներէօ – Քաշան ունի իր մանկապարտէզը:

Հպարտ է իր մանկապարտէզով:

Դաշտահանդէս կը սարքէ իր մանկապարտէզին ի նպաստ:

Յետո՞յ, կը հարցնէք: Մէկ մանկապարտէզով ի՞նչ կը փրկուի...

Մեծ խնդիրներն ու ցաւերը չորս կողմէ կը խուժեն: Մտահոգ բոլոր ճակատներուն վրայ, ու ահա մանկապարտէզի մը խնդիրը:

Այո՛, այսօր, ա՛յս վայրկեանիս ա՛յս մանկապարտէզը· փոքրիկ թումբ մը, միացած հարիւրաւոր թումբերու՝ կը դառնայ պատուար մը:

Ամէն տեղ դիմադրական նիգ մը: Ու շատ տեղ՝ շատ սրտառուչ:

Այս մանկապարտէզը փոքրիկ երեւոյթ մըն է, ինքնագործունէութեան նշոյլ մը, որ պէտք է ընդհանրանայ:

Երեք տարի է կը դիմանան: 17 աշակերտներն այսօր 57ի բարձրացած են: Ունին 350 ֆրանքի պիւտճէ մը, ամսական: Դիմեցին մեծ հաստատութիւններուն, կրթական գործով զբաղող, ու մերժուեցան:

Սակայն գիւղը յամառեցաւ: Իրարու թեւ թիկունք եղան, համերաշխութեամբ գործեցին՝ գոնէ այս մանկապարտէզին շուրջ: Զոհողութիւններ ըրին, ու դիմացան մինչեւ այսօր: Վաղուան Հայը պահպանելու համար:

Դիմանալու պայքար: Այո՛, սրտառուչ երեւոյթ:

Հաստատուն կամքով ,զոհողութեան զգացումով ,համերաշխութեան ոգիով հազար փոքր գիւղեր իրարու ետ շաղթեցէ՛ք, իրենց հազար մանկապարտէզներով, ու դուք պիտի տեսնէք փոքրիկ խնդիրը կը դառնայ ազգային մեծ գործ մը, դիմադրութեան ամէնէն ազդեցիկ պատուարը:

Ինչպէ՞ս չգովել այս գիւղն իր նիգերուն համար: Ինչպէ՞ս չօգնել անոնց որ տեւական դառնայ այդ փոքրիկ դպրոցը:

Դաշտահանդէս...Աւելի շիտակ մրցահանդէս մըն է գեղին պահպանութեան համար: Աւելի հետաքրքրական ու աւելի ոգեւորիչ, քան որ եւ է մրցահանդէս:

Գացէ՛ք, տեսէ՛ք, ոգեւորուեցէ՛ք:

Ու օգնեցէ՛ք:

ՐԻՎԱՐԷՑ

Թուրքեր կը փաչային Սուրիական Հող

Սուրիական սահմանը կ'անցնին բազմաթիւ Թուրքեր՝ մանաւանդ վերին ձեզիրէի մէջ, որուն կուգան Այնթապէն, Մարտինէն եւ շրջականերէ գործ փնտռելու, որովհետեւ բշուառութիւնը կը սաստկանայ իրենց երկրին մէջ:

Ասոնք անշուշտ առանց արտօնութեան կամ անցագրի կուգան եւ ձերբակալուելով Ընդհ. Ապահովութեան կողմէ ետ կը էշուին Անատոլու՝ 15 օրուան բանտարկութենէ յետոյ:

Նախկին Խտիվը Սուրիոյ Գահին Վրայ

Եգիպտոսի »էլ ձիհատ» թերթին հաղած տեղեկութեանց համաձայն, իբր թէ Հիւսիսային Սուրիոյ երեսփոխանները համաձայնած են սուրիական գահը յանձնելու համար Խտիվ Ապպաս Հիլմի փաշային եւ արդէն յարաբերութեան մէջ են անոր հետ:

Ըստ «ձիհատ»ի այս շարժումին պատճառն է, Սուպիի պէյ Պէրէֆէթի թեկնածութեան ձախողութիւնը:

Անգլերուն Դաշնակցութենէն կը Քաշուին

Լոնտոնի բաղաքական շրջանակներու մէջ մտահոգութիւն կը տիրէ բաղաքական միջազգային կացութեան մասին, զոր կ'ենթադրեն թէ կրնայ աւելի բարդանալ: Նոյն շրջանակներուն մէջ, կ'ըսուի թէ Ճափոն, Գերմանիա եւ Իտալիա հիչ ատենէն պիտի հաշուին Ազգերու Դաշնակցութենէն:

Կ'ըսուի թէ Ճափոն վերջնապէս տրուած է իր որոշումը, եթէ Ազգերու Դաշնակցութեան Մանչուրիոյ ենթիչ յանձնախումբին տեղեկագիրը իրեն համար անվնասաբեր եզրակացութեան մը յանգի:

Գալով Գերմանիոյ, համաւցումներէն յետոյ, իր առեւտրական պարտերը ուրանալու բաղաքականութիւնը մեծ դժգոհութիւն յարուցած է Լոնտոնի ելմտական շրջանակներուն մէջ:

Իսկ Իտալիոյ մուք նպատակները նոյնպէս կը մտահոգեն Լոնտոնը, ուր Իտալիոյ օդանաւային նախարարին զօրավար Պալպոյի յայտարարութիւնները զինաթափութեան ժողովին արդիւնքին մասին, կը նկատեն ազդանշան մը: Եթէ կ'ըսեն Հիթլերեանները անցնին իշխանութեան գլուխը եւ Գերմանիոյ կապերը խզեն Ազգերու Դաշնակցութեան հետ· հաւանական է որ Իտալիա հետեւի Գերմանիոյ օրինակին:

Անգլեհիրլանտական Վէճը

Իրլանտայի Երեսփ· ժողովը 43ի դէմ 58 ձայնով բուէարկեց կառավարութեան կողմէ պահանջուած 2 միլիոն ոսկիի վարկը որ պիտի յատկացուի Անգլիոյ դէմ տնտեսական պայքարին: Բուէարկութենէն առաջ, բուռն վիճաբանութիւն մը տեղի ունեցաւ· վարչապետը Տէ Վալերա խստօրէն բննադատուեցաւ ընդդիմադիրներուն կողմէ:

Ընդդիմադիր մը պահանջեց որ վերջ տրուի Անգլիոյ հետ վէճին: Իսկ նախկին դատական նախարարը ըսաւ· — Այս ընթացքով յեղափոխութեան կ'երթանք· այս յեղափոխութիւնը արիւնահեղ պիտի ըլլայ, պիտի յանգի տեսակ մը բոլշեւիկեան հանրապետութեան որ պիտի ջնջէ անհատական սեփականութիւնը»:

Աշխատաւորականներու պետն անգամ որ Տէ Վալերայի եւ Մահտօնալտի միջեւ, իբր միջնորդ ծառայեր էր, բննադատեց կառավարութիւնը թէ որ եւ է ազդու միջոցի չէ դիմած:

Տէ Վալերա բոլոր բննադատութիւններուն պատասխանելէ յետոյ, ըսաւ թէ չկայ որ եւ է աշխարհագրական օրէնք որ Իրլանտան ստիպէ կապուած մնալու Անգլիոյ: Պելճիքան շատ աւելի մօտ է ըսաւ, Ֆրանսայի եւ սակայն անկախ է»:

Սակայն Իրլանտայի տնտեսական կացութիւնը վտանգուած է Անգլիոյ հետ յարուցուած վէճէն ի վեր: Երկրագործները չեն կրնար ծախել իրենց արտադրութիւնները՝ որոնց Անգլիա մուտքը անկարելի դարձած է ծանր մաքսատուրէերու հետեւանքով: Անցեալ տարի, Անգլիա՝ Իրլանտայէն գրեթէ 25 միլիոն ստերլինի ապրանք: Այսօր, Իրլանտայի մայրաքաղաքին մէջ կարագին լիվրան կը ծախուի 20 ֆրանքի եւ զոյգ մը կօշիկը կ'արժէ 3 ոսկի:

Լեհեհռուս Դաշնագիր Մը

Վարշաւիայէն տրուած տեղեկութեանց համաձայն, Լեհաստան եւ Ռուսիա, ոչ – յարձակողական դաշինքէն յետոյ, մտադրութիւն ունին իրարու հետ կնքելու առեւտրական դաշնագիր մը: Առաջարկը նախ ներկայացուած է խորհրդային կառավարութեան կողմէ:

Վերջին Ժամ

Գերմանիոյ Ներքին Կացութիւնը

Հիթլերեաններու յանգապարտութիւնը

Կը թուի թէ ահաբեկչական արարքները արդիւնաւէտ չեն ըլլար եւ ահաբեկիչները պատժելու համար մշակուած հրամանագրին հրատարակումը պիտի ուշանայ քանի մը օր: Կրնայ ըլլալ նոյնիսկ որ, արտակարգ միջոցները բնաւ գործադրութեան չդրուին, Հիթլերի տեղակալներուն հաւաստումներէն յետոյ թէ ամէն ջանք պիտի թափեն որ մարտական խումբերը դադրին ահաբեկումներ կատարելէ:

Հակառակ տակաւին Հիթլերեան դեկավարներու այս հաւատիքներուն, Քէօնիկսպէրկի մէջ, նորէն ահաբեկումներ կատարուեցան: Երկու ծպտեալ ոստիկաններ յարձակում կրեցին 40 հոգինոց զինեալ խումբի մը կողմէ: Անոնցմէ հինգ հոգի կարելի եղաւ ձերբակալել:

Լէօցկնի Ռայխսպանքի մասնաճիւղին վրայ ձեռնաւումբ մը նետուեցաւ, կարեւոր վնասներ պատճառելով: Նման դէպքեր տեղի ունեցան նաեւ մէկ քանի ուրիշ վայրերու մէջ:

Իսկ Ալթոնայի Հիթլերեաններու բնակարաններուն մէջ կատարուած խուզարկութեանց ընթացքին, ոստիկանութիւնը զէնքեր եւ ռազմանիւթեր գրաւեց:

*** Պաշտօնապէս հաստատուած է թէ յուլիս 31ին եւ օգոստոս 1ին, Քէօնիկսպէրկի մէջ կատարուած հրձիգութեանց հեղինակները Հիթլերեան մարտիկներ էին, որոնք կը գործէին իրենց խմբապետին հրամանին տակ:

Քննութիւնը վերջացած եւ թղթածրարը դրկուած է դատական նախարարութեան: Քէօնիկսպէրկի բանտարտական տան վրայ կատարուած յարձակումը գործած են 8 Հիթլերեաններ, որոնք ձերբակալուած են: Ձերբակալուած են նաեւ 12 ուրիշ Հիթլերեաններ՝ իբր հրձիգ:

*** Բացի Պերլինէն, Փրուսիոյ մնացեալ վայրերուն մէջ, յուլիս 1էն յուլիս 20 պատահած են 322 դէպքեր, որոնց ընթացքին սպաննուած են 72 եւ վիրաւորուած 497 հոգի:

*** Պողպատէ Սաղաւարտակիրներու տարեկան ժողովը տեղի պիտի ունենայ Պերլինի մէջ, սեպտեմբեր 3ին եւ 4ին:

Հիթլեր Պերլինի Մէջ

Պերլինի մէջ զրոյց կը չրջի թէ Հիթլեր գաղտնօրէն Պերլին հասած է, տեսակցութիւն մը ունենալու համար պատերազմական նախարարին Շլայխէրի հետ:

Հիթլերեան չրջանակներու մէջ չրջող զրոյցներու համաձայն, իրենց դեկավարին նպատակն է Շլայխէրի հետ այժմէն բանակցիլ՝ Գերման կառավարութեան կազմին մէջ կարգ մը փոփոխութիւններու համար:

Անգործներու օժանդակութիւնը

Ֆրանսական պաշտօնական զեկոյց մը կը յիշեցնէ թէ Աշխատանքի նախարարութիւնը նախապէս մտադիր էր յատուկ օրինագիծ մը ներկայացնել խորհրդարանին՝ անգործ արհեստաւորներու օժանդակութեան համար: Սակայն այս օրինագիծին իւրաքանչիւր կէտը երկար ժամանակի կը կարօտի: Որով Աշխատանքի նախարարը լուծման ուրիշ եղանակ մը նախատեսած է: 1932, յուլիս 28ի հրամանագիր մը՝ անկախ աշխատաւորներու փոխադարձ օգնութեան սնտուկին իրաւունք տուած է օգտուելու պետական նպաստներէն: Իսկ ուրիշ հրամանագիր մը, թոյլ տալու համար որ այս սնտուկները կարենան անմիջապէս գործել, թոյլ կուտայ որ ի հաշիւ յետագային ստանալիք իրենց պետական նպաստի գումարներուն, կարենան փոխ դրամ առնել:

Աշխատանքի նախարարը միւս կողմէ, կը ջանայ բարելաւել մասնակի անգործներու նպաստի պայմանները:

Զինուորականներ Ցունաստանի մէջ

Ցունական թերթերը կը գրեն թէ, Օթոնայեան եւ Փլաստիրաս զօրավարներու գլխաւորութեամբ, զինուորականներէ բաղկացած ուժեղ կազմակերպութիւն մը, պիտի փորձէ արգիլել ընտրութիւնները: Լատատեղակ չրջանակներ կը հաստատեն այս լուրը:

Փախանատասխու եւ Զալտարիս յայտնած են թէ հանրապետութեան նախագահէն Պ. Զայիմիսէն պիտի խնդրեն որ ուժգնօրէն միջամտէ, արգիլելու զինուորականներու այս ձեռնարկը:

Փոխ–վարչապետը Պ. Կոնթոս այս մասին հարցման պատասխանելով, յայտնեց թէ կառավարութիւնը ոչ մէկ տեղեկութիւն ունի այս չարժման մասին եւ թէ, ամէն պարագայի մէջ, անհրաժեշտ պիտի ընէ որպէսզի ընտրութիւնները որոշուած օրը տեղի ունենան ազատօրէն:

***Պ. Վենիզելոս՝ Ցունաստանի վարչապետը որ Փարիզ կը գտնուէր, նախորդ օր մեկնեցաւ Ցունաստան:

Ցունական դրամատուներ

Ցունաստանի մէջ գործող հելլենական դրամատուներու տնօրէնները միացեալ դիմում մը կատարած են եմմատական նախարարին, խնդրելով անկէ իմացնել կառավարութեան, թէ իրենց դրամատուները ծանր կացութեան մը պիտի մատնուին եւ խնդրական պիտի դառնայ իրենց յետագայ պարտաւորութեանց կատարումը, եթէ երբեք փոխանակութեան ընթացիկ սակացոյցով վերադարձնեն իրենց մօտ ի պահ դրուած եւ մատնաւորներու պատկանող ոսկեդրամները:

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

Սեւանիկի եւ անոր նման քաւարաններու անհամբերութիւնը պէտք է ցնցէ բոլորիս, մանաւանդ Երեւան նստողները, օր առաջ տոյժ կորուստէ վերկելու փիզիքական գոյութիւնը այն զանգուածներուն, որ համբերութեան եւ անհամբերութեան սահմաններն անցած են:

Իսկ քաղաքական անհամբերութիւնը որ կը ծաւալի գաղութէ գաղութ, որ միայն կոչ մը հոգի խնդիր չէ, այլ ազատութեան, կոչուած է հաւաքական կամք մը դառնալու եւ ազդակ մը ազատագրական պայքարին:

Կ. Ս.

ՊԵՏՔ ՈՒ ՀԱՅՐՈՒԹԻՒՆ ԱՂԱՐԻՆ ՀԱՄԱՐ

10.— ՓՈՒՆՈՒ ՊԱՆՈՒՐԳԱՆ

Ի՞նչ ասեմ, ի՞նչ գրեմ, ի՞նչ կե-
ցուածք ունենամ, որ ես ևս ար-
ձագանգեմ այս ահռելի ողբերգու-
թեան:

Ինչպիսի՞ խօսքեր կարող են
գտնուիլ մարդկային լեզուի մէջ,
որ կարենան արտայայտել այն
զգացումները, որոնք ինձ պատ-
ռոտում են ներսէն:

Ինչպէ՞ս կարելի է ինձ զսպել
եւ չլալ, երբ ականատես եմ ես
ամբողջ ազգի մը ողբերգութեան,
որ ինքզինքը կը տեսնէ ոտքի տակ
տրորուած, ոչնչացուած, ջարդուած
եւ հալածուած

ՍԵՓԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ

Ձի՛ եղբա՛ր, ինչքա՜ն ես սիրելի պիտակս,
Չե՞ս մ՚ու մարդոց մէջ մեծ յարգանքի պատճառս...

Ձի՛ եղբա՛ր, ցոլցլուն սիրտ մի փոխակո՛ն,
Հաւասարութեան մեծ ջատագո՛վ դուն միշտ...

Ձի՛ ես արեւաբա՛ղ ու բեղմնաւո՛ր ոյժ մը,
Ոչ մէկ ուժ կրնայ քեզ ոչնչացնել երբեք...

Ձի՛ ես արեւաբա՛ղ, երազ մը ոսկեզօ՛ծ,
Ոչ մէկ ուժ կրնայ քեզ ոչնչացնել երբեք...

Ձի՛ ես անուշա՛հոտ շուշան մը ազնիւ,
Ոչ մէկ ուժ կրնայ քեզ ոչնչացնել երբեք...

Ձի՛ ես անուշա՛հոտ, երազ մը ոսկեզօ՛ծ,
Ոչ մէկ ուժ կրնայ քեզ ոչնչացնել երբեք...

Ձի՛ ես արեւաբա՛ղ շուշան մը ազնիւ,
Ոչ մէկ ուժ կրնայ քեզ ոչնչացնել երբեք...

ԱՐՓԻԿ Ի. ՀՈՎՍԷՓԵԱՆ

ՀՈՎՈՒՍ ՈՎՈՒՆ

(Կիպրոսէն)

Մարիկիս՝ ի սր ի գր ինչ ի սր ինչ
Մարիկիս, կեղծաւոր երբեմնի տիւր-
Ձեռքերուդ մէջ տուած էիր մեր ճակատագիրը,
Ու մենք կը հաւատայինք քեզի, որ մեր ազատիչն էիր...

Ու մենք կը հաւատայինք քեզի, որ մեր ազատիչն էիր,
Ու մենք ձեռքերդ կը համբուրէինք ամէն անգամ որ կը հանդիպէինք քեզի

Իզմիրի Քարափի Ընկերութեան դատը

Իզմիրի Քարափի ընկերութեան դատավարութիւնը վերջանալու վրայ է: Ընդհանուր դատախազը իր մեղադրանքին մէջ, ընկերութեան տնօրէններուն եւ գլխաւոր պաշտօնեաներուն վերագրեց կաշառակերութիւն, գողծարարութիւն եւ վաւերագրերու փճացում եւ երեք Ֆրանսացիներու համար պահանջեց հինգ տարի բանտարկութիւն, իսկ երկու Թուրքերու համար երեք տարի բանտարկութիւն:

Իրաքի ասնվանապրական օրէնքը

Իրաքի անգլիական մարզպանը Պաղտատէն մեկնեցաւ Լոնտոն, ուրկէ պիտի վերադառնայ Հոկտեմբերին:

Լոնտոնի մէջ, մարզպանը պիտի խորհրդակցի կառավարութեան հետ, Իրաքի Ազգերու Դաշնակցութեան մէջ մուտքին վերաբերեալ հարցերու եւ այդ առթիւ Իրաքի սահմանադրական օրէնքին մէջ փոփոխութիւններու մասին: Այդ պարագային Իրաքի մարզպանութիւնը պիտի փոխուի անգլիական դեսպանութեան:

Ռումանիոյ խաղաղական կացութիւնը

Ռումանիոյ գիւղացիական կուսակցութիւնը երկար խորհրդակցութիւններէ յետոյ մշակեց ծրագիրը՝ որ հիմ պիտի ծառայէ նախաընտրական յայտարարութեան, երբ դահլիճը ներկայանայ խորհրդարանին:

Համաձայն այդ ծրագրին, կառավարութիւնը բացարձակ լիազօրութիւն պիտի պահանջէ խորհրդարանէն, որպէս զի կարենայ ազատօրէն բարեկարգել երկրին ելեւմուտքը, կէրպարկելով անհրաժեշտ միջոցները, ինչպէս նաեւ բարեփոխելու համար երկրագործական օրէնքները:

Գալով նոր կառավարութեան, այժմէն իսկ կարելի է ըսել թէ անմիջապէս որ նոր երեսփոխաններու եւ Ծերակուտականներու ընտրութիւնները վաւերացուին եւ Ծերակոյտի ու Երեսփ. ժողովի դիւանները ընտրուին, արդի վարչապետը պիտի ներկայացնէ իր հրաժարականը: Անկից յետոյ, թագաւորը պիտի ձեռնարկէ անհրաժեշտ խորհրդակցութեանց: Ամէնէն առաջ խորհրդակցութեան պիտի կանչուի անշուշտ գիւղացիականներու պետը Մանիու, որ դեռ չի գիտցուիր թէ ի՞նչ պատասխան պիտի տայ: Եթէ ան մերժէ, ներկայ վարչապետն է Պ. Վայտա, որ պիտի ստանձնէ նոր կառավարութեան կազմութիւնը:

Ց.



Հ. Դ.

Փարիզ եւ արուարձաններ

Աննիւռի Զէյթուն կամքէն սոխպողաբար ժողովի կը հրաւիրէ Քլիշիի Ազատամարտ խումբի ընկերները այսօր Կիրակի երեկոյեան ժամը 8.30ին: Մահակ-Մեսրոպ Դպրոցարանի սրահը, 26 rue Président Kruger, Asnières, գանձապահէն կը խնդրուի հաշուետուրը միասին բերել:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՇՐԵՊ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ՓԱՐԻԶԻ ՀԱՐԱՒԱՑԻՆ ՇՐՋԱՆԻ
«ՅԱՌԱՋԴԻՄԱՍԻՐԱՑ» ՄԻՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ
Ի ՆՊԱՍՏ ՏԵՂԻՈՅՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԻԶԻՆ
Նախագահութեամբ՝ Պ. ՍԵԴՐԱԿ ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆԻ
Այսօր Կիրակի առաւօտ ժամը 9էն կէսկոյեան ժամը 8
Պ. Կարապետ Կարիճեանի պարտէզին մէջ
Sentier des Bas-Longchamps
Սիրայօժար մասնակցութեամբ՝
Թառիստ՝ ԺՈՐԺի եւ Պ. ԱՐՏԱՇԷՍ ԳՄԲԷԹԵԱՆԻ
Ճոխ պիւֆէ: Պար, երգ, զուարթ անակնկալներ մանկապարտէզի փոքրիկներուն կողմէ:
ԳԻՆ՝ 3 ՖՐԱՆՔ
ՇԱՆՕԹ.—Porte d'Orléansէն առնել 88 թիւ հանրակառքը եւ իջնել Bagneux
Ընծրեւի պարագային ֆանդիսականները պիտի պատսպարուին վրանները տակ:

Դաշտանականէս Շավիլի ասնտարին մէջ

կազմակերպուած Շավիլի ե. ե. միութեան կողմէ
Այսօր Կիրակի առաւօտէն մինչեւ իրիկուն
Շավիլի անտառին մէջ, անցեալ տարուան վայրը
Կը նուագէ Միութեան նուագախումբը. հայկական եւ եւրոպական պարեր: Նուիրաբաշխութիւն մանուկներու... եւալն: Ճոխ պիւֆէ՝ դիւրամատչելի գիներով:
Շաղորդակց. միջոցներ.— *Փորթ Մէյն Քլուէն կամ Լուվրէն առնել 1 թիւ հանրակառքը եւ իջնել* Au Puits Sans Vin, *կամ Մոնփառնասէն շոգեկառք՝ իջնել* Chaville *R. G.*

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ *Հաւաքարձրդեանական Երիտասարդաց միութեան Օփէրէթային ներկայացումը Օգոստոս 27ին էմիլ Զոլաի մէջ: Կը խնդրուի բոլոր հայ կազմակերպութիւններէն նկատի ունենալ այդ օրը:*

ՆԱՄԱԿԱՏՈՒԻՓ

ՍՏԱՑՈՂ

Մարսէյլ, Տօքթ.— Բ.— 70:

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

— Կը փնտռուի Եղկատի Ուբրումտիլի գիւղացի Կարապետ Գասպարեան որ 1925ին Պէյրութէն Ֆըրանսա եկած է եւ աշխատած է Թուռնի մօտ Լա Պօն գիւղին մէջ: Յետոյ փոխադրուած է Մարսէյլ: Մէկ տարիէ ի վեր լուր չկայ իր մասին: Իմացնել՝ Ազատի Տէրտէրեանի, Traverse Chevalier, No. 26 St. Loup, Marseille.

— Զանազգալէցի Օր. Նուարդ Մեսրոպեան, հօր անուն՝ Մեսրոպ, մօր անուն՝ Սողոմէ, կը փնտռէ իր ազգականներէն Օննիկ Միքայէլեան, որ 1930ին եկած է Ֆրանսա: Բարեկամներէ եւ հայրենակիցներէ կը խնդրուի իր հասցէն յայտնել Mlle Nevart Mésropian, 47 Cité Foch, Digoin, (S. et L.)

Վարձու խանութ

Լուսաւոր, կազ, ելեկտրականութիւն, առանց բրփրիզի, յարմար դերձակի, սափրիչի, կոշկակարի եւ ամէն առեւտրական գործի համար: Դիւրամատչելի պայմաններ: Դիմել Տէր-Յակոբեան տպարան, 17 rue Damesme, մէթրօ Պօլպիաք:

Imp. A. DER (Agopian)
7, Rue Damesme, Paris (13)
Le Gérant H. STEPHAN

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԲԱՑԱՌԻԿ ԵՒ ՋՈՒԱՐԹ ԵՐԵԿՈՅԹ
Կազմակերպութեամբ
ԱՐՄԱՆ ԿՈՒՐԻԿԵԱՆԻ եւ ՍԱՐԻՄ ՄԱՔՍՈՒՏԵԱՆԻ
Այսօր կիրակի գիշեր ժամը 9ին
Studio Rudolf սրահին մէջ, **6bis rue Campagne Première**
(Métro: Raspail et Vavin)
ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԻ **ՄԵԾԱՊԱՏԻՒ ՄՈՒՐԱՑԿԱՆՆԵՐ**
(Ջաւեշտ 3 արար, Յ. Յ. Պարոնեանի)
Կը մասնակցին Փարիզի լաւագոյն դերասանները
Տոմսերը կը ծախուին սովորական տիղերը
Մուտք՝ 5 եւ 10 ֆրանք

Սամուէլ Մուրատեան վարժարան

Վեճետիկի Մխիթարեան Հայրերու Ս. Մուրատեան վարժարանը կը վերաբացուի յառաջիկայ Հոկտեմբեր 1ին:

Վարժարանը զետեղուած է Սէն գետի ափերուն եւ շրջապատուած ընդարձակ պարտէզներով եւ անտառով:

Դպրոցական ծրագիրը պետական վարժարաններու ծրագրին յարմարցուած է եւ շրջանաւարտ աշակերտները իրաւունք ունին յաճախելու որ եւ է պետական համալսարան:

Մասնաւոր խնամք կը տարուի ֆիզիքական զարգացման:

Արձանագրութեանց կամ աւելի մանրամասնութեանց համար դիմել նամակով կամ անձամբ հետեւեալ հասցէին.—

Secrétariat du Collège S. Moorat, 26 Rue Troyon, SÈVRES (S. et O.).

Վարժարանին քարտուղարը կ'ընդունի ամէն օր ժամը 15—19:

Դպրոցասէր Տիկնանց վարժարան

1 Bld. du Nord, Le Raincy (S. et O.)

Վարժարանը՝ հայեցի դաստիարակութեան հետ, իր աշակերտուհիներուն կ'ապահովէ միջավայրի համապատասխան ուսում:

Հայերէն եւ ֆրանսերէն լեզուները կ'աւանդուին հաւասար խնամքով: Ուսման բոլոր ճիւղերը կը պահեն իրենց մասնաւոր տեղը:

Աշակերտուհիներու արձանագրութիւնը կը սկսի Օգոստոս 15ին: Նիւթական անձուկ պայմաններու մէջ գտնուողներու զաւակները պիտի ընդունուին իբր կիսաթոշակ:

Պայմաններու համար դիմել վարժարանին Տնօրէնուհեան, գրաւոր կամ անձամբ, երեքշաբթի, հինգշաբթի եւ շաբաթ կէս օրէ վերջ:

ՀԱՄՑԷՅԻ ՓՈՓՈԽՈՒԹԻԻՆ
ՏՕՔԹԷՕՐ Մ. ՏԻՄԻՃԵԱՆ *(ՆՈՐԱՑՐ)*
147, Rue de Voies-du-Bois
Tél. Charlebourg 05-74 **Colombes (Seine)**
(Փարիզէն՝ Gare St. Lazare-ի գիծը առնել եւ իջնել La Garenne)
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԿԻՆԵՐՈՒ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
ընդունելութեան ժամը 2—8, կիրակի եւ տօն օրեր 9—12

ՍԵԴՐԱԿ ՍԱՍՈՒՆԻ
վիրաբոյժ - ատամնաբոյժ
ՎԿԱՅԵԱԼ ՓԱՐԻԶԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՖԱՔՈՒԼԹԵԷՆ
14 Rue Lagrange, PARIS (5)
ՄԱՄՆԱԴԷՏ ՈՍԿԻ ԲՈՒՐՈՒՆԻ, ՊՈՒԺՃԻ եւ ԱՏԱՄՆԱՇԱՒ Ի
բերնի, լինդերու, ակռաներու խնամք եւ վիրաբուժ. գործողութիւն
կ'ընդունի ամէն օր, ժամը 2էն 8, առտուները ժամադրութեամբ, կիրակի եւ տօն օրեր 9էն մինչեւ կէսօր:
Métro St. Michel *կամ* Maubert-Mutualité

ՆՈՐ ՀԱՍՑԷ
ՏՕՔԹՕՐ ԱՍԼԱՆ
ՓՈԽԱԴՐԱԾ Է ԻՐ ԴԱՐՄԱՆԱՏՈՒՆԸ
34 Boulevard de Clichy, Paris (18)
Métro: Pigalle Tél. Marcadet 76-65
Ընդունելութեան ժամերը ամէն օր ժամը 11էն կէսօր եւ 3էն 8ը: Կիրակի եւ տօն օրերը 10—12.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՐՄԱՆԱՏՈՒՆ
ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ ՏՕՔԹ. ՄԻՀՐԱՆ Կ. ՔԷՇԻՇԵԱՆ
Նախկին բժշկապետ Մերսինի Ֆրանս. հիւանդանոցներու
Պատուոյ մէտալլ Ֆրանս. առողջապահ. նախարարութենէն
Հասցէ՝ 31 Rue de la Rochefoucauld (9)
Téléphone: TRINITÉ 59—54
Բաց է ամէն օր կէսօրէ վերջ ժամը 2.50էն 7.50, (կէսօրէ առաջ միմիայն ժամադրութեամբ) կիրակի եւ տօն օրերը 10—12:
Շոն կը կատարուին՝ Ռ. Ճառագայթներով ամէն կերպ քննութիւն, շողանկարում (radiographie), գեր-մանիշակագոյն, յետ-կարմրագոյն եւ ուլտրաձկնեան դարմանում (radiothérapie profonde), նաեւ ՏԻԱԹԷՐՄիի բոլոր կիրարկումները եւ ելեկտրաբուժական բոլոր ձեւերը, որ ներքին, արտաքին եւ մորթային բազմաթիւ հիւանդութիւններու դէմ գործուած գիտական ամենավերջին եւ զօրաւոր ազդակներն են:
Թոքախտաւորներու համար **pneumothorax**ի գործողութիւն: Շակաշիճախտային կանխարգելիչ եւ բուժիչ պատուաստ եւ շիճուկ (կատարելապէս անվտանգ):
Ջղային եւ հոգեկան հիւանդութիւններու դէմ քնաճապական, Թելադրական եւ ֆրէօտեան մէթոտներ:
Դարմանատունը ունի իր մասնագէտ բժիշկները աչքի, քթի, ականջի, ինչպէս նաեւ արանց եւ կանանց ծննդամիզային եւ վէներային հիւանդութիւններու համար:
Assurance Socialeի պատկանող հիւանդներու կը տրուի լուրջ խնամք:
Տօքթ. Մ. Քէշիշեան, որպէս մասնագէտ ներքին հիւանդութեանց, կ'այցելէ նաեւ դրսի հիւանդներուն.
Métro: Trinité, St. George et Pigale: Tramway 26, 28, 54:
Autobus AF, AJ, AM, B, BD, BI, G, Gbis, L, H, Hbis, R, Rbis

Plomberie Couverture
Eau, Gaz, Appareils sanitaires, installation dégout
Ամրցելի գիներով: Ցանցնարարութիւնները կ'աւարտին որոշուած օրը: Գոհացում կը տրուի ամենադժուարահաճներուն:
Դիմել՝ A. TATOULIAN, 12bis rue Eli, Gentilly, Seine

ՕԳՏՈՒԵՑԷՔ ԲԱՑԱՌԻԿ ԱՌԻԹԷՆ

ՁՄՐԱՆ ԿԱՐԱԳԸ ԱՊԱՀՈՎԵՑԷՔ ԱՄԱՌՈՒԱՆ ԱԺԱՆ ԳԻՆՈՎ

ՔԱՆԻ ՈՐ ԳԻՆԵՐՈՒ ՁԳԱԼԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՆԱԽՕՐԵՆԱԿԻՆ ԿԸ ԳՏՆՈՒԻՔ, ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՍ ՍՈՑՆ ՊԱՀԱՆՋԸԸ ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ ԲԱՑԱՌԻԿ ԳԻՆՈՎ ՎՃԱՐՈՒՄԱՆ ՍԿՍԱԾ Է:

Անարատ կարագ	5%	ադուսած բիլօն	12.50	Ֆրանք
» »	3%	» »	12.75	»
» » *demi salé*	1½%	» »	13.50	»
Հալէպի հալած անարատ կարագ		»	17.—	»

2—5—10 քիլօնոց գոցուած եւ ժաքուր տուփերու մէջ, յանձնելի բնակարան: Մեծաքանակ գնումի բացառիկ գեղչ:

Դիմել՝ Comptoir Général des Beurres, 74 Rue Georgie, Paris (14). Tél. Seg. 70-07, 70-88.

Teinturerie Bosquet

20 Ave. Bosquet, Paris (7), Tél. Invalides 26—25

Կը մաքրենք եւ կը ներկենք զգեստները, կը հանենք բիծերը, «կը լեցնենք» պատռուածքները, կ'ընդունինք ասեղնագործութիւններ եւ կաշիի, ինչպէս նաեւ վարագոյրի եւ կարասիի վերաբերեալ գործեր, արդուկ՝ արագ եւ վայրկենական, ամերիկեան ձեւով օսլայում 12 ժամուան մէջ սուգի նոր գլխարկներ կը պատրաստենք: Տունէն կ'առնենք եւ կը յանձնենք: Ջափաւոր գին եւ արագ գործ:

Հայերու ժամադրավայրը
ճաշարան ՖԼՕՐԻԱ
61 Rue Monsieur le Prince, PARIS (6e)
Մէթրօ Օտէօն եւ Սէն Միշէլ Հեռաձայն Danton 52—73
Արեւելեան եւ եւրոպական խնասուած կերակուրներ

ՃԱՇԱՐԱՆ CAUCASE
23 Rue de la Huchette, Métro St. Michel
Դուսական եւ արեւելեան համեղ կերակուրներ՝ պատրաստուած յայտնի խոհարարներու կողմէ:
Ճաշի միջոցին անընդհատ նուագ
Prix Fixe *4 պնակ կերակուր՝ 6 ֆրանք*


ՏՕՔԹ. ՍՊԱՐԹԱԼԻ
ՓԱՐԻԶԻ ԲԺՇ. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԷՆ
Նախկին գլխաւոր բժիշկ եւ վիրաբոյժ Իզմիրի Ազգ. Հիւանդանոցի
44 Rue Poissonnière. *Մէթրօ՝* Bonne Nouvelle
Ընդունելութիւն ամէն օր ժամը 14—18 եւ ժամադրութեամբ

Հրաւէր բոլոր փափկաճաշակներուն
ճաշարան ԳԱՐԼՕ
34 Rue St. Lazare, Paris (9)
Արեւելեան եւ եւրոպական համեղ եւ խնամուած կերակուրներ
Գինները շատ դիւրամատչելի, արագ եւ անձերի սպասարկութիւն
Մի մոռնաք իր անուանի մածունը

ՏՈՒՐՔ ԵՒ ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԻՒՆ
Ձեր հաճարակալութեան, տուրքի գործողութեանց եւ առեւտրական ձեւակերպութեանց համար դիմեցէք
Դաւիթ Թաճիրեանի
6 Passage Violet, Paris (10) *ԱՄԻՍԸ 50 ՖՐ.*

Հայրենակիցներու ուշադրութեան
Սուլթաններու Սուլթանը, աշխարհի սուրճերուն թագաւորը համդիպ մարսողութիւնը կը դիւրանայ եւ հաճոյալի ժամանց կ'ունենայ: Պահանջեցէք հայ նպարավաճառատուներէ
Կեդրոնատեղի 92 Rue d'Angoulême
S. TOROSSIAN
Մէթրօ Ccuronnes եւ Parmentier
Ծանօթ.— կեդրոնատեղիէն չորս անգամէն կամ միանուագ քիլօ գնողներու կը տրուի նուէր:

Etude de Me **BERNARD WAHÉ** (ՊԷՕՐԷՖՃԵԱՆ)
(12 année)
Licencié en Droit de la Faculté de Paris
Ancien élève de l'École des Hautes Etudes Sociales
JURISCONSULTE
Droit Français et International Privé
18, Rue Dauphine, Paris (6e) Tél. Danton 73-
Կը ստանձնէ ամէն տեսակ դատական խնդիրներ, ինչպէս նաեւ փոխարկածներ, անձամբ կը պաշտպանէ առեւտրական եւ ֆայտարար դատարաններու առջեւ, կուտայ certificats de coutumeներ, կը կատարէ ամուսնութեան եւ ամուսնալուծման վերաբերեալ բոլոր գործողութիւնները



REALISATION IMMOBILIERE

Կը հրաւիրենք բոլոր անոնք որ տուն շինել պիտի տան, չի կնքել անձնաւորութիւն, առանց մեզի խորհուրդ հարցնելու:

Ամէն դիւրութիւն շինութեանց եւ փոխառութեանց համար պայմանաժամ նուազագոյն տոկոսով:

Դրուած դրամագլուխին վրայ 100ին 70 եկամուտ կ'ապահովենք բեկան: Ունինք նաեւ վարձու յարկաբաժիններ եւ աշխատանոցներ:

Խորհրդակցութիւնները ձրի են, ժամը 2էն 6.30:

Նշանաւոր *20, Passage Prado,* (մէթրօ Սէն-Տընի)

LE SEUL QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : Sch. Missakian
Rédaction & Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme PARIS (13e)
Téléphone : Glacière 15-70
(ԵՐԹԵԼԻԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro: TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ,—

	ՏԱՐԵԿԱՆ	ՎԵՑԱՄՍԵԱՅ	ԵՌԱՄՍԵԱՅ
Յիսանսա եւ գաղութներ	140 ֆրանք	70 ֆրանք	35 ֆր.
Անգլիա, Եգիպտոս, Զուիցերիա, Իտալիա	250 »	130 »	—
Ամերիկա	8 տոլար	5 տոլար	—
Ուրիշ երկիրներ	200 ֆրանք	100 ֆրանք	—

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9 ՕԳՈՍՏՈՍ 1932
9 AOUT 1932

Հ. ՏԱՐԻ Թիւ 1932 — Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ — ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ԳՈ՛ՐԾ, ԳՈՐԾ Կ'ՈՒԶԵՆՔ

Այլ անկիւնէ մը քննենք մեր ժողովուրդի հոգեբանութիւնը: Ու այս անգամ, ամէնէն սուբ անկիւնէն:

Ուշադիր եղէք տարագիր զանգուածներու հոգեկան պոռթկումներուն, հին ու նոր գաղութներուն մէջ, հին ու նոր սերունդին քով, ու դուք պիտի տեսնէք անոր ձեւակերպուած պահանջը.

— Գործ կ'ուզենք, գո՛րծ...

Անելի մտանուած հայ ժողովուրդը, իր խանդավառութեան, յուսահատութեան եւ անհամբերութեան վերջին խօսքը կ'ըսէ: Կ'ըսէ անոնց բերնով, որ հաւաք ունին մեր վաղուան մասին, որ ուժ ունին իրենց հոգուն եւ բազուկներուն մէջ, որ իրենց անհատական կամքը հաւաքական կամքին կը խառնեն, որ վերջապէս, ներկայ անելէն՝ ելքի մը կը ձգտին:

— Գո՛րծ, գործ դէպ ի այդ ելքը:

Գործի այս պահանջը ամէնէն սուբ արտայայտութիւնն է մեր զանգուածներուն, եւ կ'անցնի անոր դրական հաշուին:

Եւ որովհետեւ այդ գործը գործադրութեան ընթացքին մէջը չէ, (գոնէ պահանջող զանգուածին համար այդ այդպէս է), գործը կը մնայ մաքերուն մէջ, որպէս հոգեբանութիւն մը: Այդ պատճառով, թնդիրը քննենք որպէս հոգեբանութիւն եւ խուսափինք մանրամասնութիւններէն:

Մեր ժողովուրդի ծայրայեղ նկարագիրն է, որ յայտ կուգայ այս պարագային ալ: Տարագիր հայութիւնը երկուքի կը բերուի իր հոգեբանութեամբ: Առաջին հատուածն անտարբեր է եւ յուսահատ, ճիգի չի հաւատար, գործի չի մասնակցիր եւ գործ չի պահանջեր: Կրաւորական է եւ անհատապաշտ: Ան ինքզինք կորած կը հաշուէ կամ դիտակցութիւնն իսկ չունի իր կորուստին, ու միեւնոյն ժամանակ չի հետաքրքրուիր ապրողներով եւ չմրոնքներ անոնց ապրումը:

Ծայրայեղ կրաւորականութիւն:

Երկրորդ հատուածը, ուժի կուտակումէն եւ կազմակերպուած ոգիէն մղուած՝ չի բաւարարուիր ընթացիկ գործով, իրապաշտ ու քայլ առ քայլ: Այլ կը ցանկէ միւս ծայրայեղութեան ու կ'ուզէ ցայտուն գործը տեսնել, արդիւնքը վայելել, հրաշքն իրականացնել, մէկ թռիչով: Որովհետեւ, երբ «գործ կ'ուզենք» կ'ըսէ, այդ բաղձանքին ու պահանջին մէջ՝ ամբողջական եւ յաղթական արդիւնքն արձանագրուած է:

Ծայրայեղ գործունէութիւն, որ սակայն երեւակայական է:

Ահա, այստեղն է որ յառակօրէն պէտք է ըմբռնենք եւ ըմբռնել տանք մեր ժողովուրդին քաղձալիին եւ կարելիին սահմանները:

«Գործ կ'ուզենք»ի հոգեբանութիւնը բաղձալիին սահմանները կը ծաւալի, մանաւանդ ազգային – քաղաքական մարզին մէջ: Ո՛րքան վատ է մեր ժողովուրդին վիճակը, ա՛յնքան սուբ է եւ անսահման անոր բաղձանքները: Անոր գործի բաղձանքը աստիճանական գործունէութիւնը կը մերժէ, միջանկեալ սեղմանիները կ'արհամարհէ, անչօշափելի օգուտները կ'անտեսէ, ու կը ձգտի վերջնական կատարեալ գործման մը:

Այսպէս, հոգիով կը ձգտի, մտքով կ'որոշէ, ու բաղձանքներով կը ծրագրէ: Իսկ բաղձանքը սահման չի ճանչնար, հետեւաբար՝ ծրագիրն անսահման է, ու գործը երեւակայական:

Մինչդեռ գործելը կը նշանակէ իրականութեանը բախիլ: Կարելին կը դառնայ գործ, անկարելին կը մնայ երեւակայութիւն:

Ժողովուրդի մը բաղձանքները, երեւակայութեան ուժով՝ կրնան զօրացնել անոր խոհեմը: Իսկ խոհեմին հասնելու համար այդ ժողովուրդը պէտք ունի կամքի եւ դատողութեան: Կամքն ու դատողութիւնը հաշուի հետ գործ ունին, իրականութեամբ կը պայմանաւորուին, տեսանելիէն դէպ ի անտեսանելին կ'երթան:

Մեր ժողովուրդի գործի պահանջը, ինչպէս ըսինք, դրական երեւոյթ է, պայմանաւ որ իրականութեան եւ կարելիի դիտակցութեան հետեւի:

Անհրաժեշտն, այս պարագային, պայծառ դիտակցութիւնն է, եւ ոչ թէ բաղձանքը, որ կրնայ եւ չափի տակ չի մտներ:

Թողնել որ գործի պահանջը մեռնի մեր ժողովուրդին մէջ, կը նշանակէ զայն մղել կրաւորական խեղճ վիճակի մը, որմէ այնքան դժգոհ ենք:

Թողնել նաեւ որ գործի պահանջը դեգերի բաղձանքներու անսահմանութեան մէջ, կը նշանակէ՝ այս ժողովուրդը մղել մտային հիւանդութեան մը, երեւակայական գործունէութեան մը եւ ջլատել անոր մէջ կամքը՝ իրական եւ կարելի գործերն ալ կատարելու: Որովհետեւ, երեւակայութիւնը եւ բաղձանքը երկար ժամանակ դառնալով զանգուածներու ուղեղին մէջ, ինքնաթելադրանքով՝ գոյութիւն չունեցածը գոյ կը դառնայ, անկարելին՝ կարելի, բաղձանքը՝ հաւատք: Ակէ դուրս մնացածը՝ անհետաքրքիր:

Եւ որովհետեւ մտքերու մէջն է որ կը դառնայ այս ժպալաէքնը, դիւրին եւ միեւնոյն ժամանակ հաճելի է: Մեր ժողովուրդը, այդ հոգեբանութեամբ կրնայ կորսնցնել կարելի, բայց դժուարին գործը տեսնելու իր ընդունակութիւնը:

Ու այդ աղետալի է:

Մենք գիտենք, ու հայ ժողովուրդը պէտք է գիտակցի, որ գործելը կը նշանակէ դժուարութեան բախիլ: Իսկ դժուարութիւնն այն չափանիշն է, որով կը չափուի ժողովուրդի մը կամքը:

Մեր ժողովուրդը պէտք է աղաւաղ հրաշքի հոգեբանութենէն, ըլլայ քաղաքական թէ դիւանագիտական, տեղափոխական թէ մշակութային գործերուն մէջ:

Հոգեկան բուժումի համար, դարձեալ լաւագոյն միջոց գործն է: Գործի այս երակն ամուր պէտք է բռնել, բայց զայն դէպ ի երեւակայութիւնն իրենէ դիտակցութեան եւ դատողութեան ամուր խարիսխներուն վրայ:

Իրականութեան այս ճամբայէն մենք անմիջական հրաշքներու թերեւս չհանդիպինք, բայց ինչ որ ընենք, մեզ պիտի տանի դէպ ի հրաշքը:

Կ. Ս.

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ԳԵՐՄԱՆԻՈՅ ՆԵՐՔԻՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Անարեկումները կը շարունակուին

Հիթլերի մասին զրոյցները կը յաջորդեն իրարու թէ խորհրդաւոր ճամբորդութիւններ կը կատարէ զանազան ուղղութեամբ:

Պերլինի քաղաքական շրջանակներուն մէջ կը տիրէ այն կարծիքը թէ, եթէ հիթլերեաններն ու կաթոլիկները չհամաձայնին իրարու հետ՝ խորհրդարանական գործակցութեան մը համար, պատերազմական նախարարը Շլայխէր որուն ձեռքը կը գտնուի կառավարութեան դեկը, ամբողջովին պիտի պահէ ներկայ դահլիճին կազմը եւ պիտի շարունակէ հետապնդել իր ծրագիրը:

1) Գերմանիոյ վարչական բարեփոխում, որեան որ կարելի է գերման պետութեանց հետ համախոհուրդ:

2) Բարեփոխում սահմանադրութեան· ստեղծել Ներակոյտ մը՝ որուն որոշումները գերակշռեն երեսփ· ժողովի որոշումները:

ԱՆԱՐԵԿՈՒՄՆԵՐԸ

Մէկ – երկու օրուան յարաբերական հանգարտութիւնը՝ կարծել տուաւ թէ վերջացած են ահաբեկումները եւ թէ Հիթլերի տեղակալները յաջողած են զսպել իրենց մարտիկները: Սակայն նախորդ գիշեր միայն, մէկ քանի ահաբեկումներ կատարուեցան, բոլորը հիթլերեաններու կողմէ:

Քիւլի մէջ, մեծ վաճառատան մը դրան առջեւ, առտուն կանուխ հիթլերեանները պայթեցուցին ուժանակ մը, որ բաւական վնասներ հասցուց: Պրունչվիկի բանուորական թաղին մէջ, նոյնպէս, պայթեցուցին ռումբ մը որ 21 տուներու կարեւոր վնասներ պատճառեց եւ փշրեց 300 պատուհաններ:

Ոստիկանութիւնը յաջողեցաւ ձերբակալել երեք հոգի, որոնց ինքնութիւնը սակայն գաղտնի կը պահէ:

Ելէբրնի մէջ, ձեռնառումբերով քանդեցին ընկերվարական-ներու թերթին տպարանին ճակատը, իսկ Պրեսլաուի, Շտուտկարտի եւ Վիրցիի մէջ ուժանակներ նետեցին ընկերվարական փաստաբանի մը, կաթոլիկ կուսակցութենէն գեկավարի մը եւ ուրիշի մը ննջասենեակներուն մէջ:

Գերման օրաթերթերը այլ եւս, ահաբեկչական ծանր պարագաները միայն կ'արձանագրեն իրենց սիւնակներուն մէջ· որովհետեւ, հիթլերեան բոլոր ահաբեկումներու լուրերուն եթէ տեղ տային, երկար սիւնակներ պէտք է յատկացնէին:

ՁԵՐԲԱԿԱԼՈՒՄՆԵՐ

Քէօնիգսպէրկի մէջ, ոստիկանութիւնը ձերբակալեց 15 համայնավարներ, որոնց տուներէն գտնուեր էին տարբանակներ, փամփուշտներ, մէկ քանի սուիններ, բազմաթիւ ուժանակներ: Իսկ նոյն վայրի հիթլերեանները, կը վայելեն ոստիկանութեան բարեացակամ վերաբերմունքը:

**** Կառավարութիւնը պաշտօնապէս կը հերքէ այն զրոյցները թէ ահաբեկման դէմ, խիստ միջոցներ տրամադրող հրամանագրին կիրարկման առթիւ, վէճ ծագած է դահլիճին մէջ:*

Այս հերքումը սակայն, իրականութիւնը պարտկելու եղանակ մը կը նկատուի լաւատեղեակ շրջաններու կողմէ, որոնք կը հաւատան թէ փրուսիոյ արտակարգ փոխ – լիազօրը Պրաթի կը պնդէ ահաբեկիչներուն դէմ՝ ամենախիստ միջոցներու կիրարկման վրայ, մինչ զօրավար Շլայխէր աւելի համամիտ ըլլալ կը թուի մեղմ քաղաքականութեան մը:

Այս մասին «Պերլինէր Թակէպլաթ» կը գրէ·

— Այս օրերս կատարուած նոր ահաբեկումները, ամէն պարագայի մէջ կը փաստեն թէ կառավարութեան բոլոր սպառնալիքներն ու ազատարարութիւնները ապարդիւն մնացած են: Այս նոր ոճրագործները ամէնէն ծանր դատապարտութիւնը կը կազմեն կառավարութեան վարանոտ քաղաքականութեան:

ԴԱՀԼԻՃԻՆ ՄԷՋ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

Վերջին լուրերու համաձայն, այսօր – վաղը բանակցութիւններ պիտի կատարուին Պերլինի մէջ, կազմելու համար կառավարութիւն մը, որ կարենայ կառավարել մեծամասնութեան մը վրայ կռթնելով: Աւելի ճիշդը, աշխատանք պիտի կատարուի նախ դանելու այս մեծամասնութիւնը, յետոյ՝ ըստ այնմ բաշխելու համար նախարարութիւնները:

Կարգ մը զրոյցներու համաձայն, իրը թէ Միւնիխի մէջ բանակցութիւններ կատարուած են Հիթլերի եւ Գերմանիոյ նախկին գահաժառանգ իշխանին միջեւ ու համաձայնութիւն գոյացած է Հիթլերը նստեցնելու նախագահական աթոռին վրայ: Սակայն չատ կարճ ժամանակի մը համար: Շատ չանցած Հիթլեր իր տեղը պիտի տայ գահաժառանգին, որ յարմար առիթը գտնելուն, ինքզինքը պիտի հռչակէ կայսր Գերմանիոյ:

Կ'ըսուի սակայն թէ Գերմանիոյ նախկին կայսրը դէմ է այս ծրագրին:

ԻՐԼԱՆՏԱԿԱՆ ԴԱՒԱԴՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Անգլիոյ գաղթային նախարարին դէմ

Օթթաւայի մէջ ուր կը գտնուի Անգլիոյ գաղթային նախարարը, երեւան հանուած է դաւադրութիւն մը, որ յուզման մատնած է Լոնտոնի քաղաքական շրջանակները: Դաւադրութիւնը ուղղուած էր Անգլիոյ գաղթային նախարարին դէմ, որ Իրլանտացիներուն կողմէ պատասխանատու կը նկատուի՝ Իրլանտայի դէմ գործադրուած անգլիական փոխ – վրէժի միջոցներուն:

Օթթաւայի ոստիկանութիւնը ձերբակալեց չատ վտանգաւոր նկատուած Իրլանտացի մը, զոր կը մեղադրէ սպանութեան փորձ կատարած ըլլալու յանցանքով:

Գանատայի հեծեալ ոստիկաններու հրամանատարը այս մասին յայտնեց թէ, քանի մը օրէ ի վեր՝ ոստիկանութիւնը կը հետապնդէր գաւադիրներու խումբ մը եւ թէ նոյն իսկ, մէկ քանի գաղտնի ոստիկաններ, յաջողեր էին ներկայ ըլլալ անոնց գաղտնի ժողովներուն:

Առանց նպատակն էր սպաննել Անգլիոյ գաղթային նախարարը, որ Թորոնթոյէն 70 քիլոմեթր հեռու, ջրանցքի մը բացման արարողութիւններուն պիտի մասնակցէր:

Անգլիա եւ հնդկական հարցը

Հնդկաստանի հարցը որ Անգլիոյ վերջին նախարարական խորհուրդին մէջ, բննուեր էր, զանազան ենթադրութիւններու տեղի կուտայ: Կացութիւնը ներկայիս հետեւեալն է:

Յունիս 26ին, կառավարութիւնը ճշդորոշելով իր բաղաքականութիւնը, կ'որոշէր շարունակել հնդիկ հանրային կարծիքին ուղղակի շօշափումները, բայց այլ եւս չհրաւիրել Կոր Սեղանը:

Կառավարութեան այս որոշումը հանոյ չգտաւ հնդիկ կարգ մը ազատական ղեկավարներու· իսկ կառավարութեան ներկայացուցիչը յուլիս 13ին, երեսփ· ժողովի վերջին նիստին մէջ կը յայտարարէր թէ տրամադիր է բննելու ամէն առաջարկ որ բոլորին համար, գոհացուցիչ կերպով լուծում մը կրնայ բերել, առանց խանգարելու սկսուած ձեռնարկներու արագ լրացումը:

Այդ թուականէն ասդին, բազմաթիւ առաջարկներ ներկայացուած են կառավարութեան· ամէնէն աւելի, առաջարկ ներկայացնողները կը պնդեն երրորդ Կոր Սեղան մը գումարելու անհրաժեշտութեան վրայ:

Լոնտոնի պաշտօնական շրջանակները կը յայտնեն թէ Կոր Սեղանի գաղափարը բննուելու վրայ է այս միջոցին, բայց դեռ որեւէ որոշում չէ տրուած այս մասին:

Սխալ է ուրեմն կարգ մը թերթերու այն տեղեկութիւնը թէ Անգլիա որոշած է հրաւիրել Կոր Սեղանի խորհրդաժողովը:

ԿԱՆՏԻ ԳՈՐԾԻ ՎՐԱՑ

Կանտիի հետ անգլիական կառավարութեան վարած բանակցութիւնները անելի մատնուած են, հիմայ որ կարգը եկած է որոշելու թէ նախ, կրաւորական ընդդիմութի՞ւնը պէտք է դադրի թէ բացառիկ հրամանագրերը: Երկու կողմերը կը վարանին եւ ոչ մէկը կ'ուզէ նախ տեղի տալ միւսին: Ամէն մէկը պաշտպանելով իր հեղինակութիւնը, կ'ուզէ որ նախ հակառակորդը զիջում կատարէ: Անգլիական կառավարութիւնը Կանտիի կ'առաջարկէ կառավարական մասնակի իբ֊ենավարութիւն, խոստանալով ապագային հաստատել կեդրոնական պատասխանատու կառավարութեան մը սահմանադրութիւնը:

Կանտի, ընդունելով մէկտեղ, պայման կը դնէ որ նահանգային իբ֊ենավարութիւնը բոլորովին զերծ ըլլայ Լոնտոնի կառավարութեան հսկողութենէն եւ հակակշռի իրաւունքէն:

Բանակցութիւնները ընդհատուած են:

Ամերիկա եւ պարտքերու հարցը

Ուաշինկթընէն «Թայմս»ի կը գրեն թէ ծերակուտական Պօրահ որ իր վերջին երկու ճառերուն մէջ, թելադրեր էր կրճատել պատերազմական պարտքերը, իր բաբեկամներուն յայտնած է թէ Ուաշինկթընէն պիտի վերադառնայ սեպտեմբերի ընթացքին: Իր այս ճամբորդութեան նպատակն է հսկել որ ամերիկեան կառավարութիւնը այնպէս մը չգործէ որ պատերազմական պարտքերը վերաքննուին, առանց եւրոպացին պահանջելու փոխադարձ կարեւոր փոխարինումներ:

Անդրադառնալով այն տեղեկութեան թէ ամէնէն նպաստաւորեալ ազգի սկզբունքով, Ամերիկայի հետ կնքելով առեւտրական դաշնագիր մը, Ֆրանսա պիտի պահանջէ որ Ամերիկայի հանդէպ իր պատերազմական պարտքերը կրճատուին, ծերակուտական Պօրահ, ըսաւ.

— Պատերազմական պարտքերու հարցը աւելի լայն ու խոր է քան թէ առեւտրական դաշնագրի մը սակարկութիւնը՝ պարտքերու դումարին վրայէն քանի մը տոլար զեղչելու նպատակով:

Ծերակուտականը դարձեալ չեշտեց թէ որ եւ է արդարացում չկայ պատերազմական պարտքերը կրճատելու կամ ջնջելու, եթէ այդ քաղաքականութիւնը բոլոր երկիրներու անտեսական վերականդնումին ծառայելու չափ ընդարձակ չըլլայ:

Ռուսաւգերման դարաբերութիւնները

Այս վերջին մէկ քանի օրերու ընթացքին, բոլշեւիկ մամուլը լեզուն, զգալի կերպով փոխուած է հանդէպ Գերմանիոյ: Ռուսական մամուլը Գերմանիոյ քաղաքականութեան մէջ փոփոխութիւն մը կը նշմարէ հանդէպ Ռուսիոյ եւ կը յայտնէ թէ Գերմանիոյ պինուորական ուժերը չատ աւելի մեծ են քան ինչ որ ցոյց կը տրուի, թէ Գերման կառավարութիւնը յաջողած է խարել դաշնակիցներու յանձնախումբերը, ծածկելով զէնք եւ ռազմանիւթ՝ մեծ քանակութեամբ, հակառակ Վէրսայլի դաշնագրին:

Այս տեսակ լեզու մը բոլշեւիկ մամուլին կողմէ, ուշագրաւ է, մանաւանդ որ ան, ցարդ, կը ջանար Գերմանիան ցոյց տալ բոլորովին զինաթափ եւ զոհը՝ Ֆրանսայի, Անգլիոյ եւ ուրիշ պետութեանց:

Իտալիա փոխ կուտայ Թուրքիոյ

ՀՌՈՄ, 7 օգոստոս.— Մօտ աւուրներն Թուրքիա իտալական բա-

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ՕՐՈՒՆ ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՄԵՆՕՐՅԱ ԹԵՐԹԻ — ՀԱՅՐԱՊԵՏ ՀԱՅԿԱԿԱՆ

ԱՄԵՆՕՐՅԱ ՀԱՅ ՄԱՐԴՈՒ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ

##

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՍՈՒՑԱՐԱՆԻ
(ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐՎԵՍՏԻ)

Հայաստան ֆեսիան և իտալիան

Ա.

ԲԱՆԱԿ ՀԱՅԱՍՏԱՆ

Մեր կարդալ սրբի ու գուշակ Մուշէ, Հայի՛ր ու Լօրի հոգիները։

Բիւրեղայ բոլոր կողմերէն ուռ-տաղ, դաշտ, լեռներ, ձորեր, ջրեր, ծաղիկներ, խոտ, տերեւ, ծառեր ու թուփեր, ամէն ինչ կ՚ուրախանայ ու կ՚երգէ, որ ասոնց միջոցով ալ մեր հոգին կրնայ ուրախանալ ու երգել։

Ինչպէ՞ս կրնայ մարդ չուրախանալ, երբ կը տեսնէ, որ ամէն ինչ կ՚ապրի, կ՚աճի, կ՚ուրախանայ ու կ՚երգէ։

Ա. Ի. Իշխանեան

Ես ալ կ՚ուզեմ ուրախանալ ու երգել այս Տարին իմ սրտի մէջ, որովհետեւ ան կը խոստանայ ինծի ամէն ինչ, որ ես կ՚ուզեմ։

Ես կ՚ուզեմ ունենալ ուրախ ընտանիք, ուրախ հարեւաններ, ուրախ ընկերներ, ուրախ գործ, ուրախ ժողովուրդ, ուրախ հայրենիք։

Ես կ՚ուզեմ, որ ամէն ինչ ուրախ ըլլայ իմ շուրջս։

Ես կ՚ուզեմ, որ ամէն ինչ ուրախ ըլլայ ինծի համար։

Ես կ՚ուզեմ, որ ամէն ինչ ուրախ ըլլայ ինծի համար, որովհետեւ ես ալ կ՚ուզեմ ուրախ ըլլալ։

Ես կ՚ուզեմ, որ ամէն ինչ ուրախ ըլլայ ինծի համար, որովհետեւ ես ալ կ՚ուզեմ ուրախ ըլլալ, որպէսզի ես ալ կարենամ ուրախանալ ու երգել։

Ես կ՚ուզեմ, որ ամէն ինչ ուրախ ըլլայ ինծի համար, որովհետեւ ես ալ կ՚ուզեմ ուրախ ըլլալ, որպէսզի ես ալ կարենամ ուրախանալ ու երգել, որպէսզի ես ալ կարենամ ուրախանալ ու երգել, որ Տարին ինծի համար ուրախ ըլլայ։

Ա. Ի. Իշխանեան

ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՅԱՐԱՁԱԳԱՆՔԻ ՕՐԳԱՆ
(ԱԼԿ 1330-ԻՆ ՏԱՐԻ ՀԱՍՏԱՏՎԱԾ)
ՀԱՄԱՐ. Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Խմբագիր Կ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

— Կիմալի՛ Ֆ, — կրկնեց Մարիամը։

Մի քանի վայրկյան հետո ու-րիշներն ալ ներս առնելով Ջեմալը, ան կրկին ըսաւ.

— Ջեմալ, Ֆրանսայի մէջ ալ ունի՞ս ազգականներ։

— Ունիմ, Մարիամ, ունիմ։ Ֆրանսայի մէջ ալ ունիմ, բայց ո՞ւր են, չեմ գիտեր։ Ես ալ ձեզի պէս որբ եմ։ Ես ալ ձեզի պէս ոչ հայր ունիմ, ոչ մայր։ Ես ալ ձեզի պէս ոչ ոքի կը պատկանիմ։ Ես ալ ձեզի պէս ոչ ոքի կրնամ ըսել, թէ՝ հայրիկ, մայրիկ։ Ես ալ ձեզի պէս ոչ ոքի կրնամ ըսել, թէ՝ քոյրիկ, եղբայրիկ։ Ես ալ ձեզի պէս ոչ ոքի կրնամ ըսել, թէ՝ հարազատ։ Ես ալ ձեզի պէս ոչ ոքի կրնամ ըսել, թէ՝ ազգական։ Ես ալ ձեզի պէս ոչ ոքի կրնամ ըսել, թէ՝ ընտանիք։ Ես ալ ձեզի պէս ոչ ոքի կրնամ ըսել, թէ՝ տուն։ Ես ալ ձեզի պէս ոչ ոքի կրնամ ըսել, թէ՝ ունիմ։ Ես ալ ձեզի պէս ոչ ոքի կրնամ ըսել, թէ՝ ինծի։ Ես ալ ձեզի պէս ոչ ոքի կրնամ ըսել, թէ՝ իմ։ Ես ալ ձեզի պէս ոչ ոքի կրնամ ըսել, թէ՝ ես։ Ես ալ ձեզի պէս ոչ ոքի կրնամ ըսել, թէ՝ ես։

Ջեմալ ձայնը խեղդուկ հեկեկանքներով մը կտրեց։

Ան ալ ինքզինքը կորսնցուցած էր։ Ան ալ ինքզինքը կորսնցուցած էր։ Ան ալ ինքզինքը կորսնցուցած էր։

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

LE SEUL QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : Sch. Missakian

Rédaction & Administration

17, Rue Damesme PARIS (13e)

Téléphone : Glacière 15-70

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

(ԵՐԹԵՒԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro: TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ,—

	ՏԱՐԵԿԱՆ	ՎԵՑԱՄՍԵԱՅ	ԵՌԱՄՍԵԱՅ
Ֆրանսա եւ գաղութները	140 ֆրանք	70 ֆրանք	35 ֆր.
Անգլիա, Եգիպտոս, Ջուիցերիա, Իտալիա	250 »	130 »	—
Ամերիկա	8 տոլար	5 տոլար	—
Ուրիշ երկիրներ	200 ֆրանք	100 ֆրանք	—

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 10 ՕԳՈՍՏՈՍ 1932

10 AOUT 1932

Ը. ՏԱՐԻ ԹԻԻ 1933

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

"ՅԱՌԱՋ,,Ի ՀԱՐՑԱՐԱՆԸ

Ինքնութեան թուղթերուն չուրջ «Յառաջ»ի հարցարանը հաւիւ լոյս տեսած, երկկ խմբագրատան դուռը ամէն առին մօտ քսան երիտասարդներ, իրենց անկախոն թուղթերու ցաւերով: Անշուշտ անմիջական դարմանի մը յոյսով:

Բերանացի ու հապճեպ բացատրութիւն մը իր վիճակին եւ անհամբեր սպասումը անմիջական կարգադրութեան մը: Իւրաքանչիւրն իր մասին, իր ցաւերով: Անհատապաշտ: Ու այս, իսկապէս ապրած տառապանքէ մը յետոյ: Իր ցաւէն ընկճուած՝ հաւաքական ցաւի մասին չի մտածեր:

Մինչդեռ մենք հարցարանը հրատարակեցինք, ընդհանուր կարգադրութեան մը մտահոգութիւններով: Ու հարցարանը յստակ ու հասկնալի խմբագրուած է, աւելորդ թիւրիմացութեանց տեղի չտալու համար: Իսկ մեր հայրենակիցներն առանձն կանուխ խմբագրատուն կը վազեն, կարծես թէ կարգադրիչ նոր գրասենեակ մը բացուած ըլլար:

Գիտենք որ մեր հայրենակիցները մեծ նեղութիւններու ենթարկուած են, եւ հալածականի աճապարանքն ունին՝ վայրկեան մը առաջ իրենց կացութիւնը փրկելու: Ատոր համար ղիրենք չենք մեղադրեր: Բայց կ'ուզենք որ գիտակցին թէ ի՞նչ կը պահանջուի իրենցմէ, ու այդ պահանջին ընդառաջ երթան:

Ուրեմն լուսաբանենք հարցարանը, քանի որ այդ պարզ գրութիւնն իսկ լուսաբանութեան կը կարօտի: Մանաւանդ որ կը կասկածինք թէ գաւառներէն անկախոն թուղթեր ունեցողներ կրնան ըլլալ, որ բանեն Փարիզի ճամբան եւ կենան խմբագրական սեղանին առջեւ: Անշուշտ ապարդիւն:

Մենք կը սպասենք մեր հայրենակիցներէն միայն գրաւոր պատասխաններ:

Անձնապէս ներկայացողներուն ոչ մէկ պատասխան ունինք տալու:

Պատասխանները պէտք է ըլլան ճշդրիտ:

Շինծու պատմութիւններն այս պարագային բոլորովին աւելորդ են եւ անտեղի:

Պատասխանները կրնան մեզ դրկել առանձին անհատներն իրենց մասին, կամ որ եւ է թղթակից՝ բազմաթիւ մարդոց մասին:

Այդ թուղթերու հաւաքումը որ եւ է հայրենակիցի դրութիւնը չի կրնար վաւանդել, կը մնայ միայն խմբագրութեան տրամադրութեանը տակ, եւ կ'օգտագործուի միայն այն ատեն, երբ պաշտօնական մարմին մը յանձն առնէ ընդհանուր դիմում կատարել այդ առթիւ:

Անհրաժեշտ է որ մէկ կամ աւ աւելին երկու չարաթուան ընթացքին բոլորի պատասխանները մեզ հասնին: Բոլորին կ'սենք, որովհետեւ անհրաժեշտ է որ Ֆրանսայի մէջ գտնուղ բոլոր անհատներու (անկախոն թուղթ կրողներու) վիճակը պարզուի եւ ընդհանուր յայտարարի բերուի: Եւ եթէ կարգադրութիւն մը պիտի յաջողի, յաջողուի բոլորին համար, բայ ի արտակարգ պարագաներէն:

Ուրեմն, բոլորի շահը կը պահանջէ մտնել այս ցանկին մէջ, առանց «հայկական դիւանագիտութեան»:

Երբ հարցն իր ամբողջ ծաւալով կը պարզուի, պատկերը ճշդօրէն յայտնի կ'ըլլայ, այն ատեն մենք խնդիրը կը քննենք հրապարակով կամ խորհրդակցական ժողովի մը մէջ:

Մեր այս քայլը կ'ըլլայ մեծ օժանդակութիւն մը հանրային այն մարմիններուն, որոնք պաշտօնապէս այս կարգի խնդիրներով կը զբաղին: Մենք, ուրեմն, կ'ուզենք փաստացի խորհուրդով մը մղում տալ զաղթականական մարմիններուն, որպէս զի այս վերջիններն աւելի վճռական քայլ մը առնեն՝ անկախոն թուղթերու ցաւոտ խնդիրը վերջնականապէս լուծելու:

Ու մենք կը հաւատանք թէ, երբ հանրային մարմինները, զինուած ամբողջական փաստերով, միանգամ դիմում մը կատարեն յարնուն հայ ժողովուրդին, կեդրոնական կամ տեղական կառավարութիւններուն, պիտի կրնան լուծել այս խնդիրը, որ քար գայթակղութեան դարձած է, մեր հայրենակիցներէն ոմանք մատնելով թշուառութեան, ու նաեւ անխիղճ շահագործումներուն:

Մեզի կը թուի թէ կառավարութիւնն ալ իր կարգին մեծապէս շահագրգռուած է գործ ունենալ կանոնաւոր ինքնութեան թուղթերու տէր մարդոց հետ, եւ աղատիլ անկախոն մարդոց նեղացուցիչ հանգամանքէն:

Հայոց պարագան, մանաւանդ, ինքնայատուկ է եւ թերեւս աւելի ըմբռնելի, քան ուրիշ օտարականներու ներկայացուցած պարագաները:

Անշուշտ մինչեւ հիմա մասնակի կարգադրութիւններ եղած են եւ այս օրերուն ալ կրնան տեղի ունենալ: Անհատական ճիգերը կրնան չարաչարուիլ, իրենց գլխուն ճանապարհով, որոնց չենք խառնուիր:

Մենք ընդհանուր առաջադրութիւն մը ունինք եւ կը հետամտինք ընդհանուր լուծման մը: Առանձին անհատներու խնդիրը մեզ չի շահագրգռեր, գործնական տեսակէտով:

Այս յստակ բացատրութիւններէն յետոյ, յոյս ունինք որ մեր հայրենակիցները լիովին պիտի ըմբռնեն «Յառաջ»ի հարցարանի ոգին, եւ պիտի փութան գրաւոր պատասխաններ հասցնել մեզ, որմէ յետոյ մենք կրնանք պատկան մարմիններուն, կամ անոնց կազմակերպած խորհրդակցական ժողովի մը մէջ խնդրին գործնական ընթացք տալ:

Կ. Ս.

ՕՐԸ ՕՐԻՆ

ՆԵՐԳԱՂԹ ԵՒ ԱՃՈՒՄ

— :-: —

Ասկէ առաջ բազմիցս «Յառաջ» արտայայտուած է ներգաղթի մասին: Ու յաճախ ըսած է որ, եթէ տարիի 10,000 Հայ կարելի ըլլայ փոխադրել Հայաստան, առաւելագոյն թիւն է որ կարելի է երեւակայել ներկայ պայմաններուն մէջ:

Անցած շաբաթ օրուան թիւով, ռամկավար «Ապագա»ն խելացի դատողութիւն մը կ'ընէ այդ առթիւ, ու մեզի ուրախութեամբ կ'արտատպենք այդ հատուածը·

«Բայց եթէ կարելի ըլլայ ամէն տարի 10,000 հայ գաղթական փոխադրել Հայաստան, նորէն Հայերու այսօրուան թիւը անփոփոխ պիտի մնայ արտասահմանի մէջ, նոր ծնունդները պիտի լեցնեն գացողներուն տեղը եւ դէմ մը միլիոնէն աւելի հայ գաղթականները պիտի մնան օտարութեան մէջ: Պէտք է խորհիլ նաեւ անոնց ինքնապահպանման մասին»:

Այո՛, շատ ճիշդ կը դատէ «Ապագա»ն: Ներգաղթ տասը հազար հոգի, իսկ նոր մուտք, նոր ծնունդներով աւելի քան տասը հազար հոգի:

Այս խելացութիւնն արձանագրելէն յետոյ՝ միակ վախն որ ունինք, այն է թէ մեր գնահատութիւնը կրնայ խրտչեցնել ռամկավարները, ու անոնք փոխեն իրենց խօսքը:

Ուրախ պիտի ըլլանք, եթէ անոնք մնան իրենց համոզման եւ խորհին նաեւ մնացորդացի ինքնապահպանման մասին:

ՐԻՎԱՐԷՑ

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

Իտալիոյ նաւային ռազմախորհուրդներուն առթիւ

Իտալիա նաւային մեծ ռազմախորձեր կը կատարէ Միջերկրականի մէջ:

Մուսոլինի, իր գրասանասուլ, մօտէն կը հետեւի ռազմախորհրդներուն: Իրեն կ'ընկերանայ ծովակալ Սիրիանի, ծովային նախարար:

Այս ռազմախորհրդներու թեման է, — պատերազմի պահուն՝ արգիլել Թշնամի նաւատորմիղին անցքը Հիւսիսային Ափրիկէէն դէպ ի Ֆրանսական ծովեզերքը:

Ռազմախորհրդները մեծ կարեւորութիւն ստացած են, որովհետեւ ատիկա գոյց մըն է նաեւ թէ որքա՜ն կատարելագործուած է իտալական նաւատորմը: Արդարեւ, Իտալիա հսկայ ճիգեր թափեց պատերազմէն առաջ, մանաւորապար Փաշիստներու իշխանութենէն առդին, արդիականացնելու համար պատերազմական նաւատորմը, աւելցնելու համար նաւային միաւորները, զանոնք օժտելու համար ամէն կատարելագործութիւններով: Յետոյ Մուսոլինի չարունակ աշխատեցաւ դուրս ձգել հին նաւերը եւ օժտել նաւատորմը այնպիսի արագաստհութեամբ, որ դերակշռէր Թշնամիին ուժերը:

Նաւատորմին վերակազմութեան հետ եւ հաւասարապէս, Մուսոլինի ամէն կատարելագործութիւններով օժտեց օդային նաւատորմը: Ներկայիս Իտալիա ունի ջրօդանաւերու հսկայ թիւ մը, եւ վարժ ու փորձ օդանաւորդներու խումբեր:

Իտալիա իրապէ՞ս կը հաշուի Ժընեւին

Գրեր էինք թէ Իտալիա կը մտածէ քաշուիլ, ինչպէս Գերմանիա եւ Ճափոն, Ազգերու Դաշնակցութենէն: Մուսոլինիի թերթը, «Փոփոլօ տ'Իտալիա», ինչպէս նաեւ Հռոմի ամբողջ մամուլը կը չարունակեն յարձակիլ Ժընեւեան Կորհրդաժողովին վրայ: Եւ, իրրեւ եզրակացութիւն այս դժգոհութեանց, Հռոմի քաղաքական եւ դիւանագիտական շրջանակները բաց եւ արձակ կարծ կուտան, — այս պայմաններուն մէջ, Իտալիա կրնա՞յ անդամ մնալ Ազգերու Դաշնակցութեան:

Այսու հանդերձ դիտել կը տրուի թէ Մուսոլինի չպիտի ուզէր տակաւին այդքան արմատական լուծում մը տալ հարցին, որ դրուած է: Նոյն ատեն, պէտք է կարծել որ, երբ մէկ կողմէ Ճափոն, միւս կողմէ Գերմանիա, հրաժարին Ազգերու Դաշնակցութենէն, Իտալիա եւս չպիտի վարանի այլ եւս հետեւելու անոնց: Ու երբ Իտալական մամուլը այսպէս բացորոշ կը դնէ հարցը և կը ներկայացնէ Իտալիոյ հրաժարումը Ազգերու Դաշնակցութենէն:

Մահտնապտ «Կր Հաւգչի»

Մաքտոնալտ Իրլանտա կը գտնուի հիմա:

Եւ ահա թերթերը կը գրեն թէ Մաքտոնալտ Իրլանտա գացած է տեսակցելու համար Տէ Վալերայի հետ իրլանտական ազատ պետութեան հարցերուն մասին: «Տէյլի Մէյլ»ի թղթակիցը, յաջողելով գտնել Մաքտոնալտը, որ կ'ուզէր գաղտնի պահել իր ճամբորդութիւնը, տեսակցութիւն մը կ'ունենայ հետը·

— «Կ'ուզեմ կատարեալ հանգիստ մը ընել հոս, դէթ 3—4 օր: Հեռու ամէն աշխատանքէ, հեռախօսէն, խնդրարկուներէն, հանդստանալու եկած եմ այստեղ: Իրլանտայի ոչ հիւսիսովը կը զբաղիմ, ոչ ալ հարաւովը: Ոչ մէկ հարց ու հոգ կը բերէ զիս հոս, հանդչելու եկած եմ պարզապէս»:

× Նորթըն, իրլանտական աշխատաւորական կուսակցութեան պետը, ճառ մը մէջ խօսելով Տըպլինի եւ Լոնտոնի կառավարութեանց միջեւ տեսակէտներու մերձեցման փորձի մը մասին, քննադատեց բրիտանական կառավարութիւնը եւ հրաւիրեց Իրլանտացիները, որ իրենց բոլոր ուժերը նուիրեն Իրլանտայի ազատ պետութեան:

— «Բրիտանական կառավարութիւնը, ըսաւ, անտեսական դեռնի վրայ թշնամութիւններու իր մեթոտին փոխարէն ներկայիս կը հետապնդէ գինուորական գրաւման հին եղանակը»:

Կացութիւնը Գերմանիոյ մէջ

Շփոթ է կացութիւնը Գերմանիոյ մէջ, եւ հակասական են լուրերը, որ կը հասնին Պերլինէն:

ԱՀԱԲԵԿՈՒԻՄՆԵՐ

Սպանութիւնները կը չարունակուին երկրին մէջ: Հրէաներուն ահաբեկիչներուն հոգն իսկ չէ թէ կառավարութիւն մը կայ իրենց պլխուն վերեւ: Օր ցերեկով կը մաքրեն ու կ'ահաբեկեն հակառակորդները: Կիրակի դիշեր Սիլեզիոյ մէջ տեղի ունեցան ահաբեկման 15 դէպքեր: Այսպէս ընկերվարական կուսակցութեանց օրաթերթերու խմբագրատան, կեդրոնատեղիներու, կամ ճախերու բնակարաններուն վրայ ռումբեր նետուեցան, նիւթական մեծ վնասներ պատճառելով ամէն կողմ: Յարձակումներ տեղի ունեցան նաեւ հրէական հաստատութիւններու եւ վաճառատուներու վրայ:

Վալտէնպուրկի մէջ, հրացան պարպեցին քաղաքապետական խորհրդականի մը վրայ, ընկերվարական, որ նստած էր պատուհանը: Պերկվախթ թերթին խմբագրատան պատուհաններուն քարեր նետեցին եւ ներսը, խմբագրատան դրասենեակները մտնելով, տարճանակ պարպեցին խմբագիրներուն վրայ: Նայտէնպուրկի մէջ եւս տեղի ունեցան ահաբեկման դէպքեր ընկերվարականներու դէմ:

ԴԱՀԼԻՃԻՆ ՄԷՋ

Հետզհետէ յստակ պահանջ մը կը դառնայ Հիթլերի թեկնածութիւնը վաւչապետութեան համար: Հիթլեր վաղանցած էր առաջին առթիւ: Ու հիմա, երբ դրուած է իր թեկնածութիւնը, յստակ աչխատանք կը թափէ յաջողցնելու: Տպաւորութիւնը ներկայիս այն է, թէ Հիթլեր պիտի յաջողի մտնել դահլիճին մէջ, այն խօսակցութենէն ետքը, որ տեղի ունեցաւ Հիթլերի եւ Ֆոն Շլայխէրի միջեւ:

Սակայն, Հիթլեր, մտնելով դահլիճին մէջ, չպիտի հանդուրժէ կարգ մը նախարարներու ներկայութեան: Այսպէս, համաձայն վերջին զրոյցներու, վաւչապետ Ֆոն Փափէն եւ ներքին նախարար Ֆոն Կայլ չպիտի կարենան մնալ դահլիճին մէջ:

Միւս կողմէ Հինտէնպուրկ կը մերժէ թոյլ տալ Հիթլերեան դերիչխան դահլիճի մը կազմութեան, չուզելով կորսնցնել նախադահի իր իրաւունքները:

Տէր Մոնթակ գերման թերթը կը գրէ թէ բանօրէն պիտի լուծուի երեսփոխանական ժողովը, եթէ դահլիճի տպտնապը կարելի չըլլայ վերջացնել:

ՀԻԹԼԵՐԻ ՄԱՍԻՆ

Կացութիւնը այնքան չփոթ է երկրին մէջ, որ ժողովուրդը տաբօրինակ լուրեր կը ստեղծէ ժամէ ժամ:

Այսպէս կ'ըսուի թէ Հիթլեր չի փափաքիր վաւչապետ ըլլալ, այլ միայն կառավարիչ որեւէ նահանգի մէջ: Կամ լիազօր դառնալ գերման ներքին պետութեան մը մէջ: Թէ նախկին գահաժառանգը Հիթլերի խոստացած է հարուստ կալուածներ, այնպէս որ Հիթլեր իշխանութեան գլուխ բերելէ յետոյ գահաժառանգը, պիտի քաշուի իր նոր կալուածներուն մէջ, իրրեւ հարուստ հասարակ, իրրեւ նոր ազնուապետ, վերջացած համարելով իր առաքելութիւնը:

ԲԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ?

Բրիտանական մամուլը հետաքրքրութեամբ կը հետեւի Գերմանիոյ չփոթ լուրերուն: Մանաւորապար ահաբեկման դէպքերուն, որ սպառնական նկարագիր ստացան վերջին ընտրութիւններէն ի վեր: Ու դիտել կը տրուի, որ նման կացութիւն մը կրնայ ծանր անդրադարձումներ ունենալ ոչ միայն Գերմանիոյ ներսը, այլ եւ արտասահմանի մէջ: Կարգ մը անգլիական թերթեր կը պահանջեն վերջ մը դնել Հիթլերեան կուսակցութեան սանձարձակութիւններուն: Տէյլի Թելէկրաֆ նկատել կուտայ, թէ «Ֆոն Փափէնի եւ Ֆոն Շլայխէրի կառավարութիւնը, որ ինքզինք այնքան զօրաւոր զգաց զսպելու ամէն խռովութիւն, նոյնիսկ տապալելու Գերման ներքին պետութիւն մը, պիտի տարօր ու տապալի՝ եթէ չկարենայ յոյժ տալ իր հեղինակութիւնը: Ամիս մը առաջ, կացութիւնը մոթ էր տնտեսական պայմաններու բերումով: Իսկ հիմա այնքան չփոթութիւն ստեղծուած է, որ կը վախցուի քաղաքացիական պատերազմէ մը»:

Ամբողջ մամուլը Գերմանիոյ համար անվայել կը համարին ահաբեկումի դէպքերը, որ կը չարունակուին երկրին մէջ, մէկ ծայրէն միւսը: Ու կը զարմանան, որ կառավարութիւնը, պարզ պատրուակով մը լուծելէ յետոյ ամբողջ դահլիճ մը, նոյնքան խիստ չէ չարժիր, երբ հիմա աւելի սպառնական են խռովութիւնները:

ՎԵՐՋԻՆ ՊԱՀՈՒՆ

Պերլինէն կը հեռագրեն թէ Ֆոն Փափէն տախտակաբար մայրաքաղաք հրաւիրեց բոլոր նախարարները, մասնաւորապար պատերազմականն ու ներքինը, որոնք կը գտնուէին ներքին գաւառները: Կը կարծուի թէ չատ կարեւոր որոշումներ պիտի տրուին նախարարական այդ խորհուրդին մէջ, թերեւս կազմուին արտակարգ տանեաններ: Պիտի հրատարակուի հրամանագիր մը, որուն համաձայն ծանր պատիժներու պիտի ենթարկուին ահաբեկիչները, քաղաքական ու պետական դէմքերու վրայ կատարուած յարձակման հեղինակները: Ասոք կայ նոյն իսկ պաշարման վիճակ հռչակելու փրուսիական ամբողջ երկրին մէջ:

Պրիան-Քէլլոկի դաշնագրին ետեւի

Հաղորդակց. միջոցները.— կառ սկսէն Լազարէն առնել շոգեկառք եւ իջնել կառ տ'Արժանթէօյ: Հանրակառք Մատլէնէն թիւ 40 իջնել կար Արժանթէօյ:

Հանդէս Սէն Լուի մէջ

Սէն Լուի (Մարսէյլ) Հ. Յ. Դ. Պատ. Միութեան տարեկան հանդէսը տեղի կ'ունենայ Օգոստոս 14ին: Կը խնդրուի բոլոր կազմակերպութիւնները նկատի ունենալ այդ թուականը: Մանրամասնութիւնները առանձին յայտարարով:

ԴԱՇՏԱՊԱՐԱՀԱՆԴԷՍ ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ՄԱՐՍԷՅԼԻ ՀԱՅ Կ. ԽԱԶԻ ԿՈՂՄԷ

Այս կիրակի, առաւօտէն մինչեւ իրիկուն,

Route Château Gombert, Campagne La Baronne-ի մէջ

Առաւօտ՝ սկաուտական մարզանքներ, վարդավառեան հայկական խաղեր՝ Հայ Արիներու կողմէ, փարիզէն ժամնող իրենց խումբերու մասնակցութեամբ): կէսօրէ վերջ՝ ժամը 2.30ին կը սկսի գեղարուեստական բաժինը՝ ղեկավարութեամբ արուեստագէտ Պ. Մ. Մարութեանի: Բանախօսութիւն, երգ եւ գուգերգ, արտասանութիւն, նուագ, պզտիկ աղջիկներու պար (ռուսական վինկէրքա): Հայկական ճարսանիք, շարժանկարում:

Եւրոպական պարերը կը սկսին ժամը 4.30ին:

Հաղորդ. միջոց.— Առնել 5 թիւ հանրակառքը, որ Սէն Ժէռօմէն վեր, Շաթօ Կոմպէր չի հասած, կը կենայ նոյն ազարակին (Թրմպըլեաններու) դրան առջեւ:

Ճաշը միասին ընելի, ըմպելիքը կը հայթայթուի տեղւոյն վրայ:

Մուտքը 5 ֆրանք

ՕԳՏՈՒԵՑԷՔ ԲԱՑԱՌԻԿ ԱՌԻԹԷՆ

ԶՄՐԱՆ ԿԱՐԱԳԸ ԱՊԱՀՈՎԵՑԷՔ ԱՄԱՌՈՒԱՆ ԱԺԱՆ ԳԻՆՈՎ

ՔԱՆԻ ՈՐ ԳԻՆԵՐՈՒ ԶԳԱԼԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ ԿԸ ԴՏՆՈՒԻՆՔ, ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՍ ՍՈՑՆ ՊԱՀԱՆՋԸԸ ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ, ԲԱՑԱՌԻԿ ԳԻՆՈՎ ՎԱՃԱՌՄԱՆ ՄԿՍԱԾ Է:

Անարատ կարագ	5% աղուած, քիլօն	*12.50*	ֆրանք
» »	3% » »	*12.75*	»
» » *demi salé*	1½% » »	*13.50*	»
Հալէպի հալած անարատ կարագ		*17.—*	»

2—5—10 քիլօնոց գոցուած եւ մաքուր տուփերու մէջ, յանձնելի բնակարան: Մեծաքանակ գնումի բացառիկ գներ:

Դիմել՝ Comptoir Général des Beurres, 74 Rue Gergovie, Paris (14). Tél. Seg. 70-07, 70-88:

Teinturerie Bosquet

20 Ave. Bosquet, Paris (7), Tél. Invalides 26—25

Կը մաքրենք եւ կը ներկենք զգեստները, կը ֆանենք բիծերը, «կը լեցնենք» պատռուածքները, կ'ընդունինք ասեղնագործութեան եւ կաշիի, ինչպէս նաեւ վարագոյրի եւ կարասիի վերաբերեալ գործեր, արդուկ՝ արագ եւ վայրկենական, ամերիկեան ձեւով օսլայում: 12 ժամուան մէջ սուգի նոր գլխարկներ կը պատրաստենք: Ցուներէն կ'առնենք եւ կը յանձնենք: Ջափաւոր գին եւ արագ գործ:

ՄԵՏԱՔԵՂԷՆ ԵՒ ԹԱՒԻՇՆԵՐ

Unis et inprimés, soie naturelle et artificielle

ՄԱՐՇԻ ՅԱՏՈՒԿ ԱՊՐԱՆՔՆԵՐ

ՖԷՐՄԱՆԵԱՆ ԵՂԲԱՐՔ

26 Rue des Capucins եւ 2 Rue Romarin, LYON

Հեռաձայն Burdeau *34-07*, հեռագրական հասցէ Fermanef, Lyon

ՀԱՅՑԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

ՏՕՔԹԷՕՐ Մ. ՏԻՄԻՃԵԱՆ (ՆՈՐԱՑՐ)

147, Rue de Voies-du-Bois
Tél. Charlebourg 05-74 **Colombes (Seine)**
(Փարիզէն՝ Gare St. Lazareի դիմը առնել եւ իջնել La Garenne)
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԿԻՆԵՐՈՒ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
ընդունելութեան ժամը *2—8*, կիրակի եւ տօն օրեր *9—12*

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԵՒ ՃԱՐՏԱՐԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ԵԹԷ կ'ուզէք ձեր գործի տեարակները կանոնաւորել՝ հշգրիտ ու կանոնաւոր տոմարակալութեամբ մը եւ ձեր հաշիւները համառօտիւեն տարեվերջի օրէնքներուն հետ.

ԵԹԷ դատակնիռ առացած էք huissierներէ.

ԵԹԷ պարտականագրութիւններ ունիք շարագրելիք կամ կնքելիք.

ԵԹԷ կ'ուզէք հաշիւի կարգագրութիւն մը կամ ժամանակաւրէնքներ ստանալ.

ԿՐՆԱՄ ԶԵԶԻ ԱՄԵՆԱԱՐԱԳ ԿԵՐՊՈՎ ԳՈՀԱՑՆԵԼ

Դիմեցէ՛ք **Պ. ՓԱՐՄԱԳ**, 28, Bld. de Strasbourg, Paris (X). Tél. Botzaris 17.64

որ կ'ընդունի ամէն օր ժամը 9էն 12, եւ կամ ժամագրութեամբ իր գրասենեակներուն մէջ:

ՍԵԳՐԱԿ ՍԱՍՈՒՆԻ

Վիրաբոյժ - ատամնաբոյժ

ՎԿԱՅԵԱԼ ՓԱՐԻԶԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՃԱՔԻՒԼԵԱԼՆԵՐԷՆ


14 Rue Lagrange, PARIS (5)

ՄԱՄՆԱԳԻՏ ՈՍԿԻ ԲՈՒՐՈՆԻ, ՊՈՒԻՃԻ եւ ԱՏԱՄՆԱՁՈՒ

բերնի, լինդերու, ակռաներու խնամք եւ վիրաբուժ. գործո[illegible]

կ'ընդունի ամէն օր, ժամը 2էն 8, առաւոտները ժամադրութեամբ կիրակի եւ տօն օրեր 9էն մինչեւ կէսօր:

Métro St. Michel *կամ* Maubert-Mutualité



REALISATION IMMOBILIERE

Կը հրաւիրենք բոլոր անոնք որ տուն շինել պիտի տան, չի կնքել անձնատուութիւն, առանց մեզի խորհուրդ հարցնելու:

Ամէն դիւրութիւն շինութեանց եւ փոխառութեանց համար, պայմանաժամ նուազագոյն տոկոսով:

Դրուած դրամագլուխին վրայ *100*ին *70* եկամուտ կ'ապահովենք բեկան: Ընինք նաեւ վարձու յարկաբաժիններ եւ աշխատանոցներ:

Խորհրդակցութիւնները ձրի են, ժամը 2էն *6.30*:

Նշանեան *20, Passage Prado,* (մէթրօ Սէն-Տընի)

Հայերու ժամադրավայրը
ճաշարան ՖԼՕՐԻԱ

61 Rue Monsieur le Prince, PARIS (6e)

Մէթրօ Օտէօն եւ Սէն Միշել Հեռաձայն Danton 52—73

Արեւելեան եւ եւրոպական խնասուած կերակուրներ

ՃԱՇԱՐԱՆ CAUCASE

23 Rue de la Huchette, Métro St. Michel

Ռուսական եւ արեւելեան համեղ կերակուրներ՝ պատրաստուած յայտնի խոհարարներու կողմէ:

Ճաշի միջոցին անընդհատ նուագ

Prix Fixe 4 պնակ կերակուր՝ 6 ֆրանք

Etude de Me BERNARD WAHÉ (ՊԷՕՐԷՔՃԵԱՆ)

(12 année)

Licencié en Droit de la Faculté de Paris
Ancien élève de l'École des Hautes Etudes Sociales
JURISCONSULTE

Droit Français et International Privé

18, Rue Dauphine, Paris (6e) Tél. Danton 73-9[illegible]

Կը ստանձնէ ամէն տեսակ դատական խնդիրներ, ինչպէս նաեւ փորձի արկածներ, անձամբ կը պաշտպանէ առեւտրական եւ հաշտարար դատարաններու առջեւ, կատարէ certificats de coutumesներ, կը կատարէ ամուսնութեան եւ ամուսնալուծման վերաբերեալ բոլոր գործողութիւնները

Բ Ո Ռ

(ՎԷՊ 1830Ի ԻՏԱԼԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՕՐԵՐԷՆ)

Հեղինակ՝ Է. ՎՈՑՆԻՋ Թարգմ. Լ. ՇԱՆԹ

Կինը պոկ տուաւ սիւնից մի փունջ տերեւ ու զայրոյթով շպրտեց գետին:

— Ինչ վատնող է սպանչում. — կրկնեց նա — իսկ դու չես ուզում ինձ ուղղակի ասես. դու կարծում ես որ ինձ հետ միայն կարելի է կատակ անել: Ինչ չուտով զուցէ կախ կը տան, իսկ դու մնաս բարով անգամ չես ասի: Ես ձանձրացել եմ այդ յաւիտենական քաղաքականութիւնից:

— Ա՛, ես էլ. — ասաց Բոռը յօրանջելով: — Լաւ է մի ուրիշ բանից խօսենք. կամ զուցէ կ'ներգես:

— Լաւ. տո՛ւր գիհաւոր. ի՞նչ ներգեմ:

— Կորած ձիու պալլատը: Սքանչելի կերպով գալիս է քո ձայնին:

Զիտտա սկսեց երգելու հին ունգարական պալլատը այն մարդու մասին, որ զրկւելով իր ձիուց, յետոյ տնից, վերջն էլ սիրականից միչտ մխիթարում էր իրեն թէ «աւելի չատ բան է կորել Մօկաչի դաշտում»: Դա Բոռի սիրած երգն էր: Վայրի ու զրաժիկ մէլոսին, ինչպէս եւ յանկերգի հաչտութիւնից աւելի էր դուր գալիս նրան:

Զիտտան զգում էր, որ ձայնը բացւել էր: Հնչիւնները դուրս էին խուժում նրա չրթունքից պարզ, ուժեղ, եւ լի երջանկութեան մի բուռն ծարաւով: Նրան չէին յուզում իտալական ու սլաւոն երգերը, մանաւանդ վերմանականը, բայց Ունգարիայի ժողովրդական պալլատները հրաչալի էր երգում:

Բոռը լսում էր աչքերը փակ ու բրանը կիսաբաց: Դեռ երբեք այդպէս գեղեցիկ չէր երգած Զիտտան: Բայց երբ երգում էր վերջին տողը, յանկարծ զոդաց ձայնը:

«Է՛, միեւնոյն է. աւելի չատ բան է կորել...»:

Կարեց երգը, դէմքը թաղեց պատուտակի կանաչին մէջ ու սկսեց հեծկլտալ:

— Զիտտա՛:

Բոռը վեր կացաւ ու առաւ նրա ձեռքից կիթառը:

— Ի՞նչ ունիս:

Կինը լաց էր լինում ջղաձգօրէն, դէմքը երկու ձեռքովը ծածկած: Բոռ զալաւ նրա ուսին:

— Ի՞նչ ունիս, ասա՛. — կրկնեց մեղմութեամբ:

— Թող ինձ. — ասաց կինը հեծկլտալով ու ետ քաշւեց նրանից: — Թող ինձ:

Բոռ հանդիստ դարձաւ իր տեղը ու սպասում էր, որ կինը դադարէը արտասուելուց, երբ յանկարծ զգաց նրա ձեռքերը իր մարմնին չուրջը. կինը ծունկի էր եկել:

— Ցեւիչէ, մի՛ գնա, մի՛ գնա:

— Դրա մասին վերջը կը խօսենք. ասաց նա, մեղմ հեռացնելով իրանից նրա թեւերը: — Նախ ասա ինձ, ի՞նչ է եղել, ինչո՞ւ վախեցար:

Զիտտա կամաց չարժեց գլուխը:

— Մի որ եւ է բանով քեզ ցա՞ւ եմ պատճառել:

— Ո՛չ: — Ու ձեռքը տարաւ կոկորդին:

— Ուրեմն ի՞նչ:

— Ինչ կը սպաննեն: — Ասաց վերջապէս: — Քո մօտ եկող — գնացողներից մէկիցը իմացայ որ քեզ վտանգ է սպասում: Իսկ երբ քեզ եմ հարցնում, հէնց միայն ծիծաղում ես վրաս:

— Սիրելիս, ասաց Բոռ քիչ լռելուց յետոյ, — դու չափազանցած գաղափարներ ունիս իրերի մասին: Ի հարկէ ինձ երբ եւ իցէ սպանելու են: Ցեղափոխականի սովորական վերջն է դա, բայց ոչ մի պատճառ չկայ վրտանգւած, որչափ եւ բոլոր միւսները.

— Միւսնե՞րը: Ի՞նչ գործ ունիմ ես ուրիշների հետ: Եթէ դու ինձ սիրէիր, ինձ այսպէս մտատանջութեան մէջ չէիր թողնի ու գնա: Դիւներները ես չեմ քնում, վախենում եմ որ քեզ կը ձերբակալեն, իսկ քնելիս երազում եմ որ քեզ սպանել են: Դու իմ մասին աւելի քիչ ես մտածում, քան ա՛յ, այդ չար մասին:

Բոռ վեր կացաւ ու դանդաղ դնաց պատշգամի միւս ծայրը: Բոլորովին պատրաստ չէր մի այսպիսի տեսարանի ու չէր իմանում ինչ պատասխանի: Ճիշդ է, Զեմման իրաւունք ունէր. իր թեթեւամտութեան չնորհիւ մի այնպիսի կծիկ էր խճողել, որ հիմա քանդելու չատ պիտի դժւարանար:

— Նստենք ու այդ բոլորի մասին խօսենք հանդիստ, — ասաց, Զիտտայի մօտը վերադառնալով: — Կարծեմ, իրար լաւ չենք հասկանում: Ի հարկէ, ես չէի ծիծաղի, եթէ գիտենայի որ լրջօրէն ես անհանգիստ էի: Բացատրիր, ինչն է քեզ վախ պատճառում, ու կը պարզենք, եթէ որ եւ է թիւրիմացութիւն կայ:

— Պարզելու ոչինչ չկայ. տեսնում եմ, որ դու ինձ բնաւ չես սիրում:

— Թանկագինս, լաւ է բոլորովին բաց լինենք իրար հետ: Ես միչտ աշխատել եմ անկեղծ լինելու մեր յարաբերութեան մէջ եւ կարծեմ երբեք չեմ խաբել, Եէ...

— Ա՛, ոչ, դու միչտ բոլորովին անկեղծ ես եղել: Դու երբեք չես ասել, որ ինձ մի այլ բան ես համարում, քան մի ընկած կին, որ քեզնից առաջ մատ չէլի է եղել ամէնքին:

— Զիտտա, ի՞նչ ես խօսում: Ես այդ տեսակ բան չեմ մտածած ոչ մի ձակի վրայ:

— Դու ինձ երբեք չես սիրել, պնդում էր կինը մի քանի ձէ

— Այո, ես երբեք չեմ սիրել. Բայց լսիր ու աչխատիր որ [illegible] դրես ինձ:

— Ես քեզ չեմ մեղադրում: [illegible]

— Սպասիր: Ա՛յ, ինչ եմ ուզում [illegible] ես չեմ հաւատում ոչ մի [illegible] մանակին բարոյականութեան [illegible] կատարում նրա պահանջները: [illegible] դու ու կնոջ մէջ եղած յարաբերութիւնը ես համարում եմ անձնական համակրանքի ու հակակրանքի [illegible]

— Եւ փողի, — ընդհատեց կինը սուր ու ընդհատող ծիծաղով:

Բոռ մոայլեց ու մի վայրկեան [illegible] առաւ:

— Այո, անչուշտ: Ինդրի [illegible] կողմը դա է: Բայց հաւատա ինձ, [illegible] նիկատէի, որ քեզ չեմ դուր գալիս, [illegible] երբեք չէի օգտւի քո նիւթական [illegible] դրութիւնից: քեզ մօտս պահելու [illegible] մար: Ես իմ կեանքումս ոչ մի [illegible] հետ այդպէս չեմ վարւած, եւ [illegible] կնոջ էլ չեմ տուած իմ զգացումների մասին. հաւատա, որ ճշմարիտ [illegible] խօսում:

(Շար[illegible])

LE SEUL QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

ՀԱՐԱՁ

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : Sch. Missakian
Rédaction & Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

17, Rue Damesme PARIS (13e)
Téléphone : Glacière 15-70

(ԵՐԹԵԼԻԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro: TOLBIAC)

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ՈՒՐԲԱԹ
12
ՕԳՈՍՏՈՍ
1932
12 AOUT
1932

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ,—

	ՏԱՐԵԿԱՆ	ՎԵՑԱՄՍԵԱՅ	ԵՌԱՄՍԵԱՅ
Ֆրանսա եւ գաղութները	140 ֆրանք	70 ֆրանք	35 ֆր.
Անգլիա, Եգիպտոս, Զուիցերիա, Իտալիա	250 »	130 »	—
Ամերիկա	8 տոլար	5 տոլար	—
Ուրիշ երկիրներ	200 ֆրանք	100 ֆրանք	—

Ը. ՏԱՐԻ ԹԻՒ 1933 — Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱԿԵԱՆ — ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Աբտասահմանի հայ մամուլի մէկ մասը, որ Հայաստանի եւ անոր անտեսական երեւոյթներուն մասին կը խօսի ազգասիրական դրդումով, կը բաւականանայ ջատագովանքով եւ ընդհանուր խօսքերով: Եւ կը մխիթարուի այն հեռանկարով թէ Հայաստանը կը վերաշինուի:

Իսկ բոլշեւիկեան հակում ունեցող թերթերը երեւոյթները կը մեծցնեն եւ ծրագիրներով կը չլացնեն ընթերցողները:

Մինչդեռ Հայաստանի անտեսական կարեւոր խնդիրները աւելի ուշադրութեան արժանի են եւ կը կարօտին լուսաբանութեան:

Այն անտեսական մեծ ձեռնարկները որոնք Հայաստանի ներքին չուկային զատ՝ կապ կրնային ունենալ դուրսի չուկային հետ, որպէս արտահանող երկրի, միշտ ետ մնացած են եւ զոհ գացած Վրաստանի եւ Ադրբէջանի առաջնութեան: Հայաստանը մնացած է իր տեղական գաւառական վիճակին մէջ. իսկ կարեւոր ձեռնարկները կամ կը մնան ծրագրային վիճակի մէջ, եւ կամ արդէն խլուած են Վրաստանի, Ադրբէջանի կամ Ռուսաստանի կողմէ:

Այդ կարգի խնդիրներն են Շաքարի գործարանը, Բազոզալի գործարանը, Ապակու գործարանը, Սեւանի խնդիրը, եւն.:

Այս խնդիրներու մասին «Դրօշակ» կը հրատարակէ հարցերուն խիստ ծանօթ մասնագէտ ճարտարագէտի մը յօդուածը որ ուշադրաւ է ե՛ւ անտեսական ե՛ւ քաղաքական տեսակէտներէն:

Առնենք, օրինակ շաքարի գործարանի խնդիրը:

Մօտ 40 տարի առաջ էր, որ առաջին անգամ Հայաստանի մէջ շաքարի գործարան հիմնելու հարցը բարձրացաւ: Կ'ենթադրուէր գործարանը հիմնել Ալէքսանդրապոլի մէջ: Ասկէ յետոյ, քանի մը անգամ փորձեր եղան այս ծրագիրը իրագործելու: Առանց մէջ մտնելու չափազանցրուած յայտնի շաքարագործարանատէր Բրուսկիի ձեռնարկն էր: Փոխանակ Ուկրայինայէն կովկաս, Թուրքիա եւ Պարսկաստան շաքար փոխադրելու: Բրուսկին կը մտածէր հէնց կովկասի մէջ կազմակերպել շաքարի արդիւնաբերութիւնը: 1910ին ան ուղարկեց մասնագիտական յանձնաժողով մը՝ որոշելու համար չինուելիք գործարանի տեղը: Երկար հետազօտութիւնէն յետոյ, յանձնաժողովը գտաւ, որ ամբողջ Անդրկովկասի ամենայարմար վայրը շաքարամշակութեան համար թէ կլիմայական եւ թէ հողի կազմի տեսակէտէն Ալէքսանդրապոլի շրջանն է: Կատարուած փորձերը ցոյց տուին, որ շաքարի ճակնդեղի բերքը Ալէքսանդրապոլի մէջ աւելի բարձր է, քան նոյն իսկ Ուկրայինայի: Ուստի, Բրուսկին որոշեց Ալէքսանդրապոլ փոխադրել Պատոլոկի իր գործարանը եւ միաժամանակ դրկեց գիւղատնտես – մասնագէտներ, որոնք պայմաններ կնքեցին Շիրակի գիւղացիներուն հետ՝ գործարանին ճակնդեղ մատակարարելու համար: Սակայն, վրայ հասաւ պատերազմը եւ շաքարի գործարանի խնդիրը ջուրն ինկաւ:

Պատերազմէն յետոյ, շաքարի գործարանի հարցը նորէն առաջ քաշուեցաւ 1919 — 1920 թուականին, Հանրապետութեան օրով: Հայաստանի կառավարութիւնը աչքի առաջ ունէր սեփական շաքարի գործարանի կառուցումը: Թուրք – բոլշեւիկեան յարձակումը Հայաստանի վրայ այս անգամ ալ արգելք եղաւ ծրագրի իրականացման:

Խորհրդային իշխանութիւնը միայն 1927ին ուշադրութիւն դարձուց շաքարի գործարանի անհրաժեշտութեան վրայ: Աւտր որոշ չափով նպաստեց այն հանգամանքը, որ Շիրակի գիւղացիութիւնը, Բրուսկիի փորձէն յետոյ, չարունակեց ճակնդեղի մշակութիւնը: Ճակնդեղը Շիրակի դաշտերու ամէնէն ձեռնտու բոյսն է, եւ գիւղացիութիւնը հեշտութեամբ չէր ուզեր հրաժարիլ ճակնդեղի մշակութենէն:

Սակայն երբ Թիֆլիսի «Զարիա Վոստոկա» թերթի մէջ լոյս կը տեսնէ Հայաստանի Ժող. Տնտ. Խորհրդի որոշման լուրը, Վրաստանի Ժող. Տնտ. Խորհուրդն անմիջապէս արտակարգ ժողով կը հրաւիրէ, կը նշանակէ յանձնաժողով մը, չորս կոմունիստներէ եւ չորս մասնագէտներէ բաղկացած, եւ կը հրահանգէ «հարուածային կարգով» ամենակարճ ժամանակամիջոցի մէջ շաքարի գործարանի յարմար տեղ ընտրել եւ իսկոյն ձեռնարկել հետազօտական աշխատանքի:

Այդ առթիւ Վրաստան 45,000 րուբլի տրամադրեց, երբ Հայաստանը միայն կրցած էր 3000 րուբլի յատկացնել

Վրացիները մէկ շաբաթուան ընթացքին ընտրեցին գործարանի տեղը, Գորի, եւ Վրաստանի երկրագործական գործակալը ճակնդեղի համար հող տրամադրեց նոյն քանակով, ինչ քանակով տրամադրած էր Հայաստանը: Թէեւ այդ հողերէն եկած ճակնդեղը ուրիշ բոյսերու համեմատութեամբ 100ին 60ը միայն կ'արձանագրէր, այսու հանդերձ Վրաստանի կառավարութիւնը կ'որոշէ այդ հողերու վրայ ճակնդեղ ցանել, միայն անոր համար, որ շաքարի գործարանը հիմնուի Վրաստանի եւ ոչ Հայաստանի մէջ:

Ու այդպէս ալ կ'ըլլայ: Մինչ Հայաստանի կոմունիստները կը չարժուէին, վրացի կոմունիստները յաջողեցան առանալ Մոսկուայի հաւանութիւնն ու դրամը եւ Գորիի մօտ սկսան չինել շաքարի գործարանը: Գործը հոս հասնելէն յետոյ, առաջարկեցին Հայաստանի մէջ գործարան չչինել եւ Շիրակի ճակնդեղը փոխադրել Գորի՝ Վրաստանի գործարաններու մէջ շաքար պատրաստելու համար:

Այսպիսով, շաքարի խնդրի մէջ, Հայաստանը կը մնար հումի նիւթի երկիր, — չհաղորդուող. իսկ Վրաստանը՝ բարձր ճարտարուեստի կեդրոն:

Մենք դեռ պիտի չարունակենք պատկերացնել տնտեսական այս կարգի խնդիրները եւ լուսաբանել անոնց քաղաքական ատաղը:

Կ. Ս.

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ՋԻՆՈՒԻՐԱԿԱՆ ՄԵԾ ԸՄԲՈՍՏՈՒԹԻՒՆ
ՍՊԱՆԻԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Կռիւներ մայրաքաղաքին եւ նահանգներու մէջ

Ինչպէս երէկ գրած էինք, Մատրիտի մէջ, սպանիական հանրապետութեան դէմ զօրեղ ըմբոստութիւն մը ծագած է: Տակաւին յայտնի չէ թէ ի՞նչ կերպով ծագում առած է ան. սակայն յայտնի է թէ չարժման գլուխը կը գտնուին զինուորականներ:

Ըմբոստութիւնը վարող զինուորականներուն մէջ կը գտնուին բազմաթիւ սպաներ որոնք կառավարութեան բարեկարգումներուն հետեւանքով, հանգստեան կոչուած էին:

Ըմբոստութիւնը որ կը թուի թէ ամբողջն կազմակերպուած էր ամբողջ երկրին մէջ, նուազման նշաններ ցոյց կուտայ:

Սէվիլի հրացանակիրներու հրամանատարը զօրավար Սանժուրժօ եւս ըմբոստներուն գլուխն անցած է եւ գրաւած թղթատարական սպասարկութիւններն ու բոլոր հաղորդակցութեան միջոցները:

Այս առթիւ կը տրուին հետեւեալ մանրամասնութիւնները:

Ներքին նախարարութիւնն եւ ընդհ. ապահովութիւնը տեղեկութիւններ առեր էին թէ նախորդ գիշեր ըմբոստական չարժում մը ծայր պիտի տայ, ղեկավարութեամբ սպաներու եւ յեղափոխականներու: Կէս գիշերէն յետոյ, ժամը 2ին սկսեալ ամբողջ ոստիկաններն ու ոստիկան զինուորները հրացաններով զինուած կը պահպանէին պատերազմական նախարարութեան շրջակայ փողոցները. իսկ կարգ մը կասկածելի անձերու բնակարաններուն մէջ խուզարկութիւններ կը կատարուէին:

Առաւօտեան դէմ, ըմբոստները՝ որոնք մեծ թիւ մը չէին ներկայացներ, չարժում մը փորձեցին պատերազմական նախարարութեան չէնքը գրաւելու համար: Եւ մղուեցան բուռն հրացանաձգութեամբ մը: Անկից յետոյ, ըմբոստները փորձեցին գրաւել կեդրոնական նամակատունը, ուր նահանջի մատնուեցան:

Բազմաթիւ մեռելներ եւ վիրաւորներ կային արդէն այս երկու կռիւներուն հետեւանքով: Ձերբակալուած են բազմաթիւ անձեր, որոնց մէջ՝ բարձրաստիճան զինուորականներ:

Ըմբոստութեան ազդանշանը տրուեցաւ հետեւեալ կերպով: Կէս գիշերէն վերջ, ժամը 4ին, զնդապետ մը՝ ընկերակցութեամբ երկու հարիւրապետներու, մտան Մատրիտի կեդրոնական նամակատունը եւ մօտեցան երկու քաղաքային պահակներու եւ անոնց հարց տուին թէ ո՞ւր կը գտնուի իրենց պետը: Որմէ յետոյ, ազդարարեցին անոնց որ իրենց տրամադրութեան տակ մտնեն: Պահակներու մերժումին վրայ, 40ի չափ զաւազիրներ՝ ատրճանակներով զինուած՝ մտնել փորձեցին նամակատան հեռագրական բաժինը:

Սակայն, պահակները պատրաստուեր էին կրակելու, երբ մօտակայ հրապարակէն ուժեղ հրացանաձգութիւն մը լսուեցաւ: Ատով արդէն կռիւներու ազդանշանը տրուեր էր: Փութով օգնութեան հասնող ոստիկաններուն եւ ըմբոստներուն միջեւ սկսաւ արիւնահեղ կռիւ մը, հրացանով ու գնդացիրով:

Կռիւը չարունակուեցաւ թղթատան, պատերազմական նախարարութեան չէնքին եւ Ընդհ. Ապահովութեան պաշտօնատան չուրջը:

Մատրիտէն տրուած տարբեր տեղեկութեանց համաձայն, ըմբոստական չարժումն ուղղուած է հանրապետութեան դէմ եւ միապետական բնոյթ ունի:

Կառավարութիւնը կը յայտնէ թէ ամբոխը կը մնայ կացութեան եւ թէ կրցած է զսպել չարժումը: Սակայն անկարելի չի թուիր որ մէկ քանի կարեւոր պոռթկումներ եւս պատահին, ըլլայ Մատրիտի թէ գաւառներու մէջ: Կանխարգելիչ չատ խիստ միջոցներ ձեռք առնուած են: Բոլոր զօրախումբերը կազմ ու պատրաստ, հրամանի կը սպասեն, չարժելու մէկ վայրկեանէն միւսը: Իսկ ժողովուրդը հանդարտ կը մնայ:

Իսկ ներքին նախարարութիւնը կը հաստատէ թէ Ալքալայի զօրաբաժինն ամբողջ ըմբոստներուն միացած է եւ դիմեալ վիճակի մէջ՝ զօրանոցէն դուրս ելլելով, ուղած է քալել Մատրիտի վրայ: Սակայն, քանի մը հարիւր քայլ առնելէ յետոյ, զինուորները ետ վերադարձած են:

Կը կարծուի թէ ըմբոստութեան կեդրոնը կը գտնուի այդ վայրին մէջ:

Տակաւին, ստոյգ կերպով չէ ճշդուած առաջին կռիւներու զոհերուն թիւը:

Մատրիտի մէջ՝ ձերբակալուածներու թիւը կը հասնի 150ի: Առանց մէջ կան ծանօթ արքայականներ:

**** Պատերազմական նախարարութիւնը հաղորդեց ժողովուրդին թէ փոխադրութեան բոլոր միջոցները, անձնական կառքեր եւ ինքնաշարժեր, պէտք է տրամադրուին կառավարութեան:*

Բոլոր կառքերը պիտի հաւաքուին զօրանոցներու բակերուն մէջ, ի հարկին գործածուելու համար զօրախումբերու փոխադրութեան՝ մէկ վայրէն միւսը:

Վենիզելոսի յայտարարութիւնները
Յունական ընտրութիւններու մասին

Աթէնք հասնելուն, Յունաստանի վարչապետը Վենիզելոս մամուլի ներկայացուցիչներուն հաստատեց թէ օրէնսդրական ընտրութիւնները տեղի պիտի ունենան բացարձակ ազատութեամբ եւ որոշուած թուականներուն: Գալով, զինուորական խլրտումներուն, Վենիզելոս յայտնեց թէ ժողովուրդը այդ պատճառով մասնակից ըլլալու պէտք չունի:

— Եթէ, ըսաւ, զինուորականները կ'ըսեն թէ ընտրութիւններէն յետոյ պիտի միջամտեն այն պարագային որ հանրապետութիւնը վտանգուած տեսնեն, ո՛չ ոք կրնայ անոնց համամիտ չըլլալ եւ չնորհաւորութեան արժանի են: Բայց եթէ անոնք կը մտածեն երկրին անդորրութիւնը խանգարել ընտրութիւններէն առաջ, չատ խստօրէն պիտի պատժուին:

«Անօգուտ է որ ընդդիմադիր պետերը մտահոգութիւն ցոյց տան: Անոնց դիմումները աւելի ազդու չպիտի ըլլան որքան խմբին– ներս եւ վճռաւէս որոշած եմ ազատ ընտրութիւն կատարել տալ»:

Օթթավայի խորհրդաժողովը

Ձշդուած է թէ Օթթավայի խորհրդաժողովին մէջ, Գանատայի վարչապետին ընթացքին հետեւանքով, նախարարական տագնապ ծագած է Գանատայի մէջ: Գանատական երեք նախարարներ յայտնած են իրենց հրաժարելու մտադրութիւնը, եթէ վարչապետը հաւանի Անգլիոյ տալ աւելի նպաստաւոր մաքսային պայմաններ, քան այն առաջին նախագծի պայմանները, որոնք մերժուած էին անգլիական պատուիրակութեան կողմէ:

Գանատայի վարչապետը Պէննէթ կը պնդէ սակայն Անգլիոյ հետ համաձայնելու իր մտադրութեան վրայ, առաջարկելով աւելի նպաստաւոր պայմաններ:

Այսու հանդերձ, անգլեւգանատական բանակցութիւնները առաջ չեն երթար: Պոլտուին, Գանատայի վարչապետին ուղղուած նամակով մը, կ'ամփոփէ բոլոր այն քննադատութիւնները, որոնք անգլիական պատուիրակութեան կողմէ ուղղուած էին՝ գանատական առաջարկներուն դէմ: Պոլտուին կը պահանջէ աւելի նպաստաւոր պայմաններ ներկայացնել անգլիական պողպատի, երկաթի եւ հիւսկեղէնի արտածման համար եւ փոխանակ Գանատա նետածելի օտար ապրանքներուն վրայ մաքսատուրքերը աւելցնելու, կ'առաջարկէ նուազեցնել անգլիական ներածումներու վրայ դրուելիք տուրքերը:

Գրած էինք թէ Տէ Վալերա Օթթավայէն ետ կանչած էր իր պատուիրակներէն երեքը, որոնց մէջ՝ երկրագործական նախարարը: Իրլանտայի լաւատեղեակ եւ իրաւասու շրջանակները կը յայտնեն թէ կառավարութեան այս կարգադրութիւնը չի ներկայացներ մտանուր կարեւորութիւն մը: Երկրագործական նախարարը եւ իր երկու գլխաւոր աշխատակիցները Օթթավայէն ետ կանչուած են, խորհրդակցելու համար Իրլանտայի երկրագործներուն ծանր կացութեան վրայ: Այս կացութեան պատճառն է Իրլանտայի եւ Անգլիոյ մէջեւ բացուած տնտեսական պատերազմը:

ԳԵՐՄԱՆԻՈՅ ՆԵՐՔԻՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Նախարարներու փոփոխութեան հարցը

ՖՈՆ ՓԱՓԷՆ ԿԸ ՀՐԱԺԱՐԻ

Գերման վարչապետը Ֆոն Փափէն երկար տեսակցութիւն մը ունեցաւ Հանրապետութեան նախագահին՝ Հինտէնպուրկի հետ: Այդ տեսակցութեան հետեւանքով, նախարարաց խորհուրդ հրաւիրուեցաւ:

Այս խորհրդակցութենէն յետոյ, հաւանական կը թուի որ գերման վարչապետը տեսակցութիւն մը ունենայ Հիթլերի հետ, որ այս պահուս Պերլին կը գտնուի:

Թէեւ, դեռ վերջնական ոչինչ կայ, սակայն կը կարծուի թէ հիթլերեաններու ճարտար մէկ խաղին շնորհիւ, Հիթլերի իրը վարչապետ թեկնածութիւնը, լուրջ հանդամանք առանայ այս անգամ:

Հիթլեր իրօք, իր պաշտօնական թերթին մէջ, գրել տուած է որ, եթէ վարչապետութիւնը հիթլերեան կուսակցութեան յանձնուելով մէկտեղ, ապահովուի նաեւ դահլիճին մէջ հիթլերեան պերակչռութիւնը, Հիթլեր պիտի ընդունի «նախագահական դահլիճ»ի տեսակէտը որ այնքան սիրելի է Հինտէնպուրկի:

Հիթլերի այս փոփոխութեան իրը արդարացում, իր մարդիկը կ'ըսեն թէ ազգ. ընկերվարական կազմակերպութիւնը «կուսակցութիւն» մը չէ, այլ ժողովրդային չարժում մը:

**** Ֆոն Փափէն կը կարծուի թէ այսօր իսկ իր հրաժարականը պիտի ներկայացնէ Հանրապետութեան նախագահին, թոյլ տալու համար որ այս վերջինը նոր դահլիճի կազմութիւնը յանձնէ Հիթլերի:*

Վարչապետութենէն զատ, Հիթլերեանները նոր կառավարական կազմին մէջ պիտի ստանան նաեւ ներքին նախարարութիւնը, եւ հաղորդակցութեանց նախարարութիւնը:

Ներկայ վարչապետը Ֆոն Փափէն պիտի ստանձնէ արտաքին նախարարութիւնը. իսկ Նէօյրաթ դարձեալ պիտի մեկնի Լոնտոն՝ իրը դեսպան: Արդի կառավարութեան մնացեալ բոլոր անդամները պիտի պահեն իրենց նախարարութիւնները:

Կեդրոնի կաթոլիկ կուսակցութիւնը կը նկատէ թէ ատեները եւ կամ է որ ընդդիմութեան մէջ այդքան անձնաստահութիւն ցոյց տուող հիթլերեանները, կառավարութեան մէջ մտնելով՝ ցոյց տան իրենց ընդունակութեան իրական չափը:

Կեդրոնի կաթոլիկներու այս հանդուրժող քաղաքականութեան մէջ՝ մեծ դեր կատարած է իրենց այն վախը, որով կը զգուշանան ամէն չարժումէ որ կրնայ վտանգել խորհրդարանական կարգերը որ եւ է կերպով:

Եթէ որ եւ է միջադէպ չպայ յապաղեցնել, կը կարծուի թէ Հիթլերը այս շաբթու վերջը պիտի կոչուի վարչապետութեան:

**** Կառավարութեան ձեռք առած խիստ միջոցները չեն նպաստած հանդարտեցնելու երկիրը եւ զսպելու ահաբեկիչները:*

Վերջին մէկ օրուան ընթացքին, երկրին զանազան կողմերը գործուած են 20է աւելի քաղաքական ոճիրներ:

Ֆէօնիկսպէրկի ընկերվարականներու եւ սէնոփքաներու կեդրոնատեղին մէջ, երկու ռումբ պայթեցան, բաւական կարեւոր

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ՊԵՐԵՎԱՆԻ ՍՐՏԱԳՈՒՅՆ ԿԱՐՈՒՑՈՂ ՎԱՐԺԱՐԱՆԸ ԲՐՈՒՅԼ ԿԱՐՈՏԱԿԱՆԸ

— ։-։ —

Թ.ՄԻՀԻՉ, 28 ծուլիս. — Իշխան Հաղորդ Հաղորդյանը եղել է Կարսի նահանգապետ մոտ 25ին Նոշաշենպատվոյ բերդի ռազմակայքում։

1.— Ալեքսան Ալեքսանդրյան, 19 տարեկան, Հայկ Ալեքսանդրյանի որդի, ծնված Հաղթանակ գյուղում։

2.— Յարութ Գասպարյան, 23 տարեկան, Վահրամ Գասպարյանի որդի, ծնված Հաղթանակ գյուղում։

3.— Հակոբ Մարտիրոսյան, 21 տարեկան, Մարտիրոս Հակոբյանի որդի, ծնված Հաղթանակ գյուղում։

4.— Ռուբեն Մելքոնյան, 20 տարեկան, Մելքոն Ռուբենյանի որդի, ծնված Հաղթանակ գյուղում։

5.— Ռուբեն Ավետիսյան, 21 տարեկան, Ավետիս Ռուբենյանի որդի, ծնված Հաղթանակ գյուղում։

6.— Նարեկ Գրիգորյան, 20 տարեկան, Գրիգոր Նարեկյանի որդի, ծնված Հաղթանակ գյուղում։

7.— Լուսիկ Դանիելյան, 19 տարեկան, Դանիել Լուսիկյանի դուստր, ծնված Հաղթանակ գյուղում։

8.— Նիկոլ Մարտիրոսյան, 20 տարեկան, Մարտիրոս Նիկոլյանի որդի, ծնված Հաղթանակ գյուղում։

9.— Յարութ Պետրոսյան, 23 տարեկան, Հարություն Պետրոսյանի որդի, ծնված Հաղթանակ գյուղում։

Մեծ ոգևորությամբ ընդունվեցին ծանուցումները նաև նոր կոմսոմոլականների ընդունման մասին։ Ընդունվեցին 9 որդեգիր։

Ապա ելույթ ունեցավ ընկեր Ա. Ա. Գ. գործադիր կոմիտեի քարտուղար ընկեր Ա. Ա. Գ.-ն։ Նա խոսեց կոմսոմոլի կազմակերպական հարցերի մասին։ Ընկեր Ա. Ա. Գ.-ն ցույց տվեց, որ կոմսոմոլի շարքերում դեռևս կան անհարկի ձգձգումներ անդամավճարների հավաքման գործում։ Ընկեր Ա. Ա. Գ.-ն կանգ առավ նաև կոմսոմոլի շարքերում կարգապահության ամրապնդման հարցի վրա։ Նա ցույց տվեց, որ կոմսոմոլի շարքերում դեռևս կան անկարգապահ տարրեր, որոնք խանգարում են կոմսոմոլի կազմակերպական աշխատանքին։ Ընկեր Ա. Ա. Գ.-ն կոչ արեց կոմսոմոլականներին ավելի ամրապնդել կոմսոմոլի շարքերը, ավելի ակտիվ մասնակցել կոմսոմոլի կյանքին։

Ելույթ ունեցավ նաև ընկեր Ա. Ա. Ա.-ն, որը կոչ արեց կոմսոմոլականներին ավելի ակտիվ մասնակցել կոմերիտական կազմակերպությունների աշխատանքներին։

Ընկեր Ա. Ա. Ա.-ն ընդունվեց կոմսոմոլ։

Ընդունվեցին նաև կոմսոմոլ։

Ընկեր Ա. Ա. Ա.-ն ընդունվեց կոմսոմոլ։

Ընդունվեցին նաև կոմսոմոլ։

Ընդունվեցին նաև կոմսոմոլ։

Ընդունվեցին նաև

օրէ հասնող գաղթականներով։ Տեղւոյն նորակազմ թաղականութիւնը գործնապէս ապահոված է հասարակական կացութիւնը, եկեղեցի մը ու դպրոցի շինութեան դեցիլ մը ու հարկաւոր ձեռնարկներով։ Այս գոյգ հաստատութեան կառուցումը լրացման վրայ է։

ԻՆՉ ԱՊՈՒԻՐ Կ'ՈՒՏԵՆ ՆՈՐԷՆ ՀԱՅ ՀԱՄԱՅՆԱՎԱՐՆԵՐԸ

«Ազդակ» կը գրէ թէ, Պէյրութի մէջ, «Հայ համայնավարները զարձեալ տեղի տուին քանի մը ցաւալի դէպքերու եւ վէճերու։ Հակնամիի դէպքերու համար այդ տգեղ երեւոյթին տեղացիներու վրայ ձգած զէշ տպաւորութիւնը, կը բաւականանանք արձանագրել մամուլի հրատարակութիւնների կարգ մը մէկնաբանութիւններ ընելով։ Պարզ է որ մեր համայնավար աղբարիկները անօթեցած են, ուստի զգուելի արարքներով կը լուսաբանեն վարձատրուիլ Մոսկուայէն։ «Մի քէչ գործ, փող է հարկաւոր»։

«Էլ Ահրար» իր 2 Օգոստոսի թիւով կը գրէ.—

Հայ համայնավարական շրջանակները արտակարգ գործունէութեան եւ շարժումի մը սկսած են վերջերս։ Մանաւանդ քանի մը շաբաթ առաջ, Մոսկուայի երկու գործակալներու ձերբակալումէն յետոյ։ Այս շարժումը աստիճանական կուսակցութեան կողմէ Ազգերու Դաշնակցութեան դրկուած բողոքագրէն վերջ, որով անոնք կը բողոքէին Թուրքիոյ ժուռքին դէմ, Բոլշեւիկները որոշեցին նոր գործունէութեան մը սկսիլ եւ Լիբանանի ու Սուրիոյ մէջ գտնուող իրենց բոլոր պետերը հրաւիրեցին Պէյրութ։

Կիրակի առաւօտ, հայ բոլշեւիկ խումբերը ամէն կողմէ սկսան հաւաքուիլ Մար Մխայէլ եկեղեցիի քով Երուանդ Տատուրեանի խանութին առջեւ։ Ոստիկանները ժամանակին գաշնակ կուսակցութեան պատկանող Ցակոբ Բէպապճեանի որսի զէնքը գրաւած էին։ Ցակոբ երկու ընկերներով պահակատուն կ'երթար այդ զէնքի խնդրին համար։ Անոնք երբ Երուանդի խանութին քով հասան, Փանոս Արմանեան, Միքայէլ Բէյիշեան, Արթին Մատոյեան, Զաւիկ Տատուրեան, Արթին Պիրայեան, Սէմէլեան յարձակեցան անոնց վրայ եւ սկսան հայհոյել Դաշնակիներուն։ Ցակոբ փոխադարձեց։ Ասոր վրայ բոլշեւիկները յարձակեցան երեք Դաշնակներու վրայ եւ սկսաւ կռիւը։

Երեք Դաշնակները վիրաւորուեցան։ Բոլշեւիկները ձերբակալուեցան։

Հայկական շրջանակները շատ կարեւորութեամբ կը հետեւին այս դէպքերուն։

Միեւնոյն խնդրին շուրջ «Էլ Նիտա», «Էլ Բասըտ» եւ «Էլ Թէեար» թերթերը հետեւեալը կը գրեն.—

Պէյրութի հայ բոլշեւիկները խումբ խումբ եւ զինուած կը սպասեն Դաշնակցականներուն, անոնց վրայ յարձակելու համար։

կերոչ հետ ճամբէն կ'երթար, յարձակեցաւ եւ երբ Բէպապճեան անուն ազդայնական հայ մը իր ընձակեցան վրան եւ իրենց դանակներով ու փայտերով սկսան հարուածել զայն, ամէն տեսակ հայհոյութիւններով եւ նախատինքներով, ամբաստանելով զանոնք մարզպանութեան եւ դրամատիրութեան լրտեսներն են։

Յակոբը ծանրօրէն կը վիրաւորուի եւ հիւանդանոց կը փոխադրուի։ Անոր ընկերը ձեռքէն կը վիրաւորուի եւ եթէ չփախչէր ան ալ չէր ազատեր։

ԹՈՒՐՔԻԱ

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ՇԷՆՔԷՆ ԿԱԼՈՒԱԾԱՏՈՒՐՔ ԿԸ ՊԱՀԱՆՋԵՆ

Պոլսոյ Ազգ. Պատրիարքարանի շէնքէն վերջերս կալուածական տուրք պահանջուած էր, այն առարկութեամբ թէ կրօնական հաստատութիւն չէ, այլ մասնաւոր շէնք՝ կալուածական գործերու համար եւ օրէնսդէտ անձերու կարծիքը ստանալով դիմում կատարուած էր պատկանին իշխանութեան։

Պահանջուած կալուածատուրքը, 3260 ոսկի է, տարեկան 180 ոսկիի հաշիւով 18 տարուան փոխարէն։

ԵՒՐՈՊԱ

ՓՐԱԿԱՑԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆԸ

փրակայէն կը գրեն.—

1923 թուին Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութեան հաշուին Չեխոսլովաք կառավարութիւնը թոշակներ ապահովեց 30 հայ ուսանողներու։ Անհատական չանքերով եւ արդէն կազմակերպուած հայ ուսանողութեան միջնորդութեամբ, կարելի եղաւ յաւելուածաբար 11 հոգի եւս ընդունիլ։ 10 հոգի եւս ընդունուեցին զանազանուած կազմակերպութիւններու միջոցով (գլխաւորաբար Ռուսիոյ եւ Հիւսիս. Կովկասի Դինեկինցիներու հետ տարաձրուածներէն)։ Այսպէս հայ ուսանողներու ընդհանուր թիւը բարձրացաւ 71ի։

Այդ 71 ուսանողներէն մինչեւ այժմ աւարտեր են բարձրագոյն վարժարաններ 39 ուսանողներ, իսկ աւարտական քննութիւններուշրջանում են գտնուում այժմ 8 հոգի, նշանակում է ընդամէնը աւարտած կը լինեն 47 ուսանողներ, որոնց պիտի աւելցնեն երկու հոգի եւս, որոնք կիսատ թողուցին Փրական եւ աւարտեցին իրենց ուսումը Ալսաբիոյ մէջ։ Այսինքն ընդամէնը 49 հոգի։ 47 ուսանողներ կիսատ հետացան Փրակայից ընտանեկան նիւթական, առողջապահական եւ կլիմայական պատճառներով։ Կիսատ հաշուում ենք նրանց, որոնք բարձր դպրոց իշրշանի միայն 2 տարուան ընթացքը աւարտած էին։

71 ուսանողներից դեռ եւս 21ը Չեխոսլովաքիա են, երկուսը նրանցից թոյլտուութիւն են ստացել մաս կազմելու Հայաստան գնացող Ա-թէնքի յառաջիկայ կարաւանին։ Մնկը երեւի աշնան Սուրիա կը մեկնի։ Նախապէս հետացածները ցրուած են Ֆրանսա, Սուրիա, Ռումանիա, Պուլկարիա եւ Միջագետք։ Այստեղ մնացողներն էլ հետզհետէ պիտի քաշուին այս երկրից։ Մի քանի օր առաջ մեկին ճանապարհեցինք արդէն Պարսկաստան՝ Սուրիոյ ճանապարհով։ Չեխոսլովաքիա հաստատուելու եւ մնալու ցանկութիւն ունեցող դրեթէ չկայ, թէ՛ նիւթական եւ թէ ազգային պատճառներով։

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐԸ

Ֆոն Փափէն կը պահանջէ Սարը

Ֆոն Փափէն կարեւոր ճառ մը խօսեցաւ Ֆրանքֆորթի մէջ, քաղաքին պինուորական անթելով։ Մասնաւորաբար կենալով Սարի հարցին վրայ (1919ին Սար բաժնուած է Գերմանիայէն եւ առժամապէս ինքնավար հռչակուած), ըսաւ.

— *Բացարձակ անհրաժեշտութիւն մը դարձած է Սարի հարցին լուծումը ոչ միայն Սարի եւ Գերմանիոյ համար, այլ եւ երկու մեծ ժողովուրդներու, Ֆրանսայի եւ Գերմանիոյ յարաբերութեանց բարելաւման համար։ Մինչեւ լուծում մը, օրինակի համար՝ ինքնավարութեան ձեւին տակ, անհնար կը թուի ինձի։ Համաձայն իր ոտնեսական կազմութեան, Սարը չի կրնար ապրիլ իրրեւ ինքնավար երկիր։ Այլ միայն առնուելով Գերմանիոյ մեծ շրջանակին մէջ։ Երբ Սար վերստին մտնէ Գերմանիոյ ծոցը, իր բնակչութիւնը չպիտի ունենայ ուրիշ փափաք, բայց միայն տնտեսական եւ հոգեկան կապակցութեան օղակ մը դառնալ երկու հարեւան երկիրներու միջեւ։*

... Եւ ապագան կը պատասխանէ

Զինաթափութեան մասին տաք տաք խօսելով հանդերձ, Անգլիա չէ մոռցած հրահանգներ տալ իր պինարաններուն ու նաւարաններուն, որոնք մեծ դեր ծառնչութեան մէջ են ներկայիս։

Ճիշդ է թէ նաւային չինութեանց կարգ մը ծրագիրներ յետաձգուած էին 1930էն ասդին։ Այն պայմանագրութիւնները, որ կնքուած էին տասը տարուան ընթացքին չխնելու համար նաւային զանազան միութիւններ, պիտի գործադրուին անմիջապէս։

Շինութեանց հրամանը կը վերաբերի 95,000 տակառաչափ տարողութեամբ արդիական նաւերու, որոնք պիտի ունենան 1 միլիոն ձիու ուժ, ինչպէս նաեւ 120 լայնափոդ թնդանօթներու, բազմաթիւ փոքր թնդանօթներու, Թորփիլլոձակ փողերու, հազարաւոր տակառաչափ զրահներու։

Տրուած հրահանգները պիտի արժեն 20 միլիոն անգլ. ոսկի։

Ակնկիզ զատ, հրահանգ տրուած է կատարել նաեւ 1931 եւ 1932 տարիներու նաւային ծրագիրները, որ կը վերաբերին 4 յածանաւերու (7,000 տակառաչափ, Leandreի ձեւով), 2 յածանաւերու (5,500 տակառաչափ, Arethuseի ձեւով), 2 տորմղիկներու (flottiles), 16 արագահալածներու (destroyer), 10 փոխադրանաւերու, 6 սուզանաւերու, 2 հրեանաւերու, 3 օժանդակ – նաւերու։

Ժրևեւ կը միանայ Միջերկրականի

Էտիոպի նախագահութեան տակ, Լիոնի քաղաքապետական ժողովը քննեց Ռոն գետին նաւարկութեան հարցը եւ քուէարկեց վարկ մը սկսելու համար կարեւոր աշխատանքներու, որ պիտի կատարուին այդ մեծ գետին վրայ։ Այդ աշխատանքները ոչ միայն պիտի մեղմացնեն գործազրկութեան տագնապը Ըլանին մէջ, այլ եւ պիտի բանան տնտեսական դեղեցիկ հեռանկար մը։ Այդ մասին Էտիօ յայտարարեց.

— *Կը կարծեմ թէ Ջուիցերիա մեծ վստահութեամբ կը նայի այն հեռանկարին, որ Հոհնոսը կը միանայ Միջերկրականին՝ կապուելով Ժրնեւի եւ Ռոն գետին։ Ու պէտք է խորհիլ Դանուբի նաւարկութեան միացման ծրագրին ալ մասին, հասկնալու համար թէ Եւրոպայի գետային նաւարկութեան այս հրամայական պահանջքին մէջ։*

Սովետներ նոր խաղաթուղթեր կը դնեն

Գրած էինք թէ Մոսկուա նոր հրամանագիր մը հանեց վերջերս, զինուորական պաշտպանութեան տակ առնելու համար ինքնաշարժներու (հասարակական դիւղատնտեսութեան բջիջները) եւ կոպերատիվները (համագործակցական հաստատութիւնները)։

Բացի այս հրամանագրին, պետական հարստութիւն յայտարարուած են կոլխոզներու եւ կոպերատիվներու արտադրութիւնը եւ ապրանքները, այնպէս որ ամէն կարգի վնասցում կամ գողութիւն պիտի պատժուի խստօրէն։

Ուրիշ հրամանագիր մը նոյնքան ծանր պատիժներ կը սահմանէ բոլոր անոնց դէմ, որոնք կը յարձակին կոլխոզի վարիչներուն վրայ։ Այս վերջին հրամանագիրը հետեւանքն է այն բողոքներուն, զորս կատարած են կոլխոզներու վարիչները, վախնալով այն սպանութիւններէն, որոնք վերջերս յաճախակի դարձան դիւղերու մէջ։ Ըիչենք նաեւ թէ «կուլակ»ները (ունեւոր գիւղացի) կը չարունակեն իրենց ընդդիմութիւնը հաւաքական գիւղատնտեսութեան դէմ, ոչ միայն ահաբեկելով կոլխոզներու նախագահները, այլ եւ այրելով ու վճռացնելով կոլխոզներու արդիւնաբերութիւնը։

Հայաստանի թերթերն ալ կը գրեն թէ «կուլակ»ները 40 սայլ ցորեն այրեցին յուլիսի վերջերը։

Սիմպրնի ճառը եւ Ճափոն

Կարճառօտ գրեցինք թէ ամերիկեան արտաքին յարաբերութեանց խորհուրդի անդամներէն Սիմսոն ճառ մը խօսելով ոգեկոչած էր Պրեան – Քէլլոգ դաշնագրին ոգին, թելադրած էր փոխադարձ համաձայնութեան դիմել ամէն անգամ, որ վտանգ մը կը սպառնայ խաղաղութեան։ Այս առթիւ քննադատած էր նաեւ Ճափոնի դիրքը։ Ճափոն Ուաշինկթընի իր դեսպանէն պահանջեց մանրամասն հաղորդագրութիւն մը Սիմսոնի ճառին մասին։ Կը կարծուի թէ դիւանագիտական վէճ մը պիտի ստեղծուի, երբ Ճափոն հաստատէ թէ ճիշդ են մամուլին քաղուածքները Սիմսոնի ճառէն։

Ազգայնականները ևնծ ցոյցեր կ'ընեն Հալէպի մէջ

«Ազդակ» կը գրէ թէ յուլիս 3ին Հալէպի Պրահմիէ մզկիթին մէջ տեղի ունեցաւ աղգայնականներու ժողովը, ուր ներկայ գտնուեցան հազարաւոր մարդիկ։ Սաատալլա պէյ Ճապրի, Շեւքրի պէյ Կավաալի, Խալրահիմ պէյ Հանանօ ճառեր խօսեցան։ Հանանօ պէյի ճառը եղած է չատ բուռն եւ հակակառավարական։ Ան ներկայացնելէ վերջ ազգայնականներու սուրիական քաղաքականութեան մէջ բռնած դիրքը, յայտնած է որ իրենք ոչ ներկայ կառավարութեան եւ ոչ ալ ներկայ խորհրդարանին վրայ վստահութիւն ունին։ «Դեռ թափուած արիւնը չէ չորցած» ըսած է ան եւ ի վերջոյ յայտարարած։

— «Ի՞նչ ուզէ թող ըլլայ, մենք այս խորհրդարանն ու կառավարութիւնը պիտի փլցնենք։ Ո՛վ երիտասարդներ, ձերն է ապագան, եւ հայրենիքը ձեզ կը հրաւիրէ, պահանջեցէք ձեր իրաւունքները եւ տիարութիւն ցոյց մի տաք։ Մենք չատ ղօրաւոր ենք մեր հաւատքով եւ մեր կամքով։ Ձեր իրաւունքները ճանչնալու կը հրաւիրեմ ձեզ» (չորս անգամ կրկնած է այս վերջին նախադասութիւնը)։

Խալրահիմ պէյ Հանանոյի նախագահութեամբ 100 հոգի յետոյ կը մեկնին Դամասկոս, հոն ցոյցեր ընելու եւ բողոքներ բարձրացնելու ներկայ կառավարութեան եւ խորհրդարանին դէմ։ Պիտի պահանջեն Հալէպի կուսակալին պաշտօնանկութիւնը։

Հիճազի ապստամբներու պետը սպանուած

«Էլ Ահրար»ի Դամասկոսի թղթակիցը կը գրէ.—

Դամասկոս գտնուող Հիճազի ներկայացուցիչը պաշտօնական յայտարարութիւն մը հրատարակելով կ'ըսէ թէ Հիճազի արտաքին նախարարութեան կողմէ ղրկուած հեռագրի մը համաձայն, Ազթապայի Տապա կոչուած շրջանին մէջ սոսկալի ընդհարում մը տեղի ունեցած է Հիճազի ուժերուն եւ ապստամբներուն միջեւ։ Ապստամբներու պետ Իպն Րիֆատէ իր երկու զաւակներով սպաննուած է այս ընդհարումներու միջոցին։

‘ՅԱՌԱՋ”Ի ՀԱՐՑԱՐԱՆԸ

Իմիութեան թուղթերու շուրջ

Մեր թղթակիցները վերջերս սկսան աւելի մուք եւ յուսահատական գոյներու տակ ներկայացնել փրանսաբնակ բազմաթիւ Հայերու իմիութեան թուղթի հարցը։ Իրարու յաջորդող դէպքերը ցոյց կուտան թէ ըսուածներուն մէջ ոչ միայն չափազանցութիւն չկայ, այլ նոյն իսկ մեր մամուլը եւ ազգային մարմինները կացութեան ծանրութիւնը չափելու համար չունին որոշ տուեալներ։ Կարծուածէն շատ աւելի մեծ է թիւը փրանսաբնակ հայ ընտանիքներուն եւ անհատներուն որոնք անելի մատնուած են կամ կրնան մատնուիլ մէկ օրէն միւսը։

Որ եւ է դարման թելադրելէ առաջ պէտք կը զգանք կարելի եղածին չափ ընդարձակ տեղեկութիւն ունենալ իմիութեան թուղթերու հարցին շուրջ։ Պէտք են թուանշաններ եւ մանրամասնութիւններ։

Կը հրաւիրենք մեր բոլոր թղթակիցները, ազգային մարմինները եւ ընթերցողները որոնք կը հետաքրքրուին այս ցաւոտ խնդրով, պատրաստել ցանկ մը հետեւեալ գլուխներով։

1— Ձեր շրջանին կամ ծանօթներու շրջանակին մէջ «անկանոն» վիճակի մէջ գտնուողներու անուն, մականուն։

2— Նշանակել իւրաքանչիւրին անկանոնութեան ձեւը, այսինքն՝

ա) Ինքնութեան թուղթ բնաւ չունեցողներ։

բ) «Վիզա»ի թուղթ ունեցողներ։

գ) 100 ֆրանքնոց թուղթ ունեցողներ որոնք աշխատելու իրաւունքէ զրկուած են։

դ) Արտաքսման թուղթ ստացողներ եւ պատճառը։

3— Քանի տարիէ ի վեր Ֆրանսա բնակիլը։

4— Եթէ «գօնթրաթ»ով եկած է, «գօնթրաթ»ին պայմանաժամը, ո՞ր տեղին եւ ո՞ր գործին համար եկած ըլլալը։

Այս հարցով պէտք է հետաքրքրուին ամէնէն առաջ անոնք որ անկանոն իմիութեան թուղթեր ունին։ Իրենցմէ ալ կը սպասենք որ փութան ճշդութեամբ պատրաստել վերոյիշեալ հարցարանը եւ հասցնել մեզի, առանց սպասելու որ ուրիշներ խորհին եւ գործեն իրենց համար։

Ուշադրութիւն

Գաւառէն չատեր մեզի կը գրեն, մեր հարցարանին իրրեւ պատասխան, իրենց ինքնութեան առժամեայ թուղթերը եւ ուրիշ վաւերաթուղթեր։

Կը խնդրուի, — բան չղրկել մեզի, նոյն իսկ ոչ-ռեմանետէ, եթէ չէք ուզեր որ կորսուին։

Եւ յետոյ, չատեր Փարիզէն, անճամբ խմբագրատուն կուգան, «կարգադրելու» իրենց խնդիրը։

Կը յայտարարենք, որ աւելորդ է գալ խմբագրատուն։

Մեր ուզածն է «անկանոն» թուղթ ունեցողներուն անունը, մականունը, իրենց պարագաները, ուրկէ գալը, ինչ տեսակ թուղթ ունենալը։ Այսքան։ Բոլոր այս կէտերը գրաւոր, կարճ եւ ամփոփ, ղրկել մեզի։

ՀԱՅՐԵՆԻ ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐ

(ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆԸ)

Հայաստան Բնական եւ քաղաքական

Բ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Մօտերը ունի արծաթախառն կապարի հանքեր եւ ընտիր պաղպեղ, ուրկէ առած է իր Շապլին – Գարահիսար անունը։

Ծննդավայրն է Հայոց հերոս Զօրավար Անդրանիկի։

Նշանաւոր է սեւ քարածխի մը վրայ՝ բիւզանդական կայսրերէն Կոմնենոսենց ժամանակէն մնացած բերդը, ուր Հայեր հերոսաբար դիմադրեցին Թուրքերու, 1915ին։

ԷՆՏՐԻՍ (Նիկոպոլիս), զոր հիմնած է Պոմպէոս, Միհրդատի վրայ իր տարած առաջին յաղթանակէն վերջ։ Ծաղկած է Օգոստոս կայսեր օրով։ Վերաբնակեցած է Յուստինիանոս կայսեր կողմէ։

Նշանաւոր են նաեւ Տարիանէ՝ Միջին դարու մէջ ամուր բերդաքաղաք, Տիվրիկ, որուն հիւսիսային արեւելեան կողմը կայ Զրմառա կամ Զիմառայ գիւղը, որ ծննդավայրն է Ցակոբ պատրիարք Նալեանի, Կիւրին եւ Նիքսար (Նէոկեսարիա=Նոր Կեսարիա), որ եղած է հռոմէական կայսրութեան օրով մայրաքաղաք՝ Պողեմոնական Պոնտոսի։ Կը գտնուի Գայլ գետի վրայ եւ ունի Հնութիւններ։ Նիքսալ հին տեսնը կոչուած է նաեւ Կաբիրա։

ԿԱՐԻՆ (Էրզրում)։— Մեծ – Հայքի մէջ բարձր լեռնադաշտի (2000 մեդր) մը վրայ եւ Փալանտէօքէնի լերան ստորոտը կառուցուած բերդաքաղաք։

Կառուցուած է Հռոմայեցի կայսեր Թէոդոս Բ.ի կողմէ, որուն համար կոչուած է Թէոդոսուպոլիս։

Կարնէն ոչ այնքան հեռու Հինմէ գիւղին մօտ համբաւաւոր է Հնձուց կամ Ս. Աստուածածնի Կարմիր վանքը, որ ըստ աւանդութեան՝ հիմնուած է Դ. դարուն Մեծն – Ներսէսէ։ Իր մօտերը կան բազմաթիւ ջերմուկներ։

ԵՐԶՆԿԱ (Երիզա)։— Բարձր – Հայոց եկեղեցւոյ գաւառի բարեբեր դաշտին մէջ կառուցուած հին ու պատմական քաղաք, որ կոչուած է նաեւ Յուստինիանուպոլիս, Ցուստինիանոսի կողմէ նորոգուած ըլլալուն համար։ Քրիստոսէ դար մը առաջ կը յիշուի իր անունը, որ կը կոչուէր Երէզ կամ Երիզա։

Հոս կանգնուած է ոսկեձոյլ Աստիհիի մեհեանը եւ պաշտուած է չբունակ 400 տարի, մինչ Դ. դարու սկիզբը՝ Տրդատի օրով երբ քրիստոնէութիւնը Հայաստան մտաւ, Գրիգոր Լուսաւորչի կողմէ այդ մեհեանը եւ կեղեցիի վերածուեցաւ։

Երիզա չատ անգամներ կործանած է երկրաշարժներէ։ Քիչ քաղաքներ այնքան չափ ենթակայ եղած են երկրաշարժի։

Մօտը կայ Գոհանամ կամ Սեպուհ լեռը, որուն ստորոտը եղող Թրքաբերնակ Թիլ գիւղին տեղը կար պատմական Թիլ Աւանը որ ունէր Նահէ դիցուհիին մեհեանը։

Դարձեալ նոյն լերան ստորոտը կը գտնուէր Թորդան Աւանը, այժմու Համանուն գիւղին տեղը։ Հոն կը գտնուէին Մեծն – Տրդատի եւ Գրիգոր Լուսաւորչի դամբարանները։

Ժ. դարուն Երիզայէն անցած է Վենետիկցի ճանապարհորդ Մարքօ – Բօլօ եւ յիշած է Հայերը, բամպակէ կտաւը եւ այժմ գոյութիւն չունեցող նշանաւոր Ջերմուկները։

Երիզայի չուրջ կան բազմաթիւ վանքեր, որոնց մէջ անուանի են Ս. Ներսէսի կամ Տիրաշէնի վանք, Շողակաթի վանք, Ս. Լուսաւորչի վանք, Տատասկի վանք։

ԲԱԲԵՐԴ (Պայպուրթ)։— Ճորոխի եզերքը, հին տեսնը անուանի բերդաքաղաք։ Ունի հանքային ջուրեր։ Ծովէն բարձր է 1680 մեդր։

Հայ պատմութեան մէջ առաջին անգամ Ա. դարուն վերջերը երեւնդի օրով յիշուած է հայկական սոյն քաղաքին անունը։

Ցուստինիանոս կայսր Ջ. դարուն աւելի ամրացուց զայն։

ԿՈՄԱԽ (Էմմաս)։— Հինն Անի Ամբոց, որուն մէջ կը գտնուէր Արամազդի մեհեանը, ապա Մեծն – Տրդատի, Գրիգոր Լուսաւորչի զաւակներուն ու թոռներուն, ինչպէս նաեւ Աբչակունի Թագաւորներուն գերեզմանները։

Ծանօթ են նաեւ Պայազիտ, Ալա տաղ լերան կողին վրայ, Կռնատիկ գետին եզերքը։ Հին տեսնը ծանօթ էր Թարոյնիճ հռչակաւոր բերդին անունով։ Ժե. դարէն սկսեալ մինչեւ այսօր Պայազիտ անունով կը յիշուի։ 1877 ապրիլ 26ին զայն գրաւած է Ռուս բանակի հրամանատար հայազգի զօրավար Արշակ Տէր – Ղուկասով։ Ներկայիս կիսաւեր քաղաք։ Ալաշկերտ՝ Բ. դարու վերջերը հիմնուած վաղարշակերտը։ Թորթում, հին բերդաքաղաք։ Խոտրջուր, Խնուս (*), Հարաւային արեւելեան կողմը կայ Ծովք լիճը, որուն մէջ կը գտնուի Ծովք դղեակը, ուր բնակած է Ժբ. դարուն սկիզբները Ներսէս Շնորհալի եւ իր եղբայրը Գրիգոր Պահլաւունի կաթողիկոսը, որովհետեւ ժամանակ մը կաթողիկոսարան եղած է յիշեալ դղեակը։

Մօտերը կան հայ վանքեր։

ՄԱԼԱԹԻԱ (Հին Մելիտինէ)։— Խոտ բարեբեր եւ մրգառատ դաշտի մը մէջ երկրորդ – Հայքի մայրաքաղաքը, որուն մօտ Պարսից Խոսրով Թագաւորը յաղթուած է Հռոմայեցիներէն Քրիստոսի 577 թիւին։

Ունի կիսավերակ պարիսպներ։

ԳՈՎՀ. ՊԱՊԻԵՍԵԱՆ

(Շար.)

(*) Հոս գտնուած է փիղի ընտանիքէն նախապատմական վիթխարի կենդանիի մը բրածոն։ Այս կենդանին երկրաբանութեան մէջ կոչուած է հայկական փիղ (Elephas armenicus)։ Տեսնել այս մասին հեղինակին յօդուածը «Ցառաջ» թիւ 693, 7 յուլիս 1928։

Կարդացէք եւ Տարածեցէք «ԾԱՌԱՋ»Ը

վնասներ պատճառելով: Ուրիշ քաղաքի մը մէջ՝ ձախակողմեան տպարան մը օդը հանուեցաւ:

Սիլեզիոյ մէջ ալ ահաբեկումները կը շարունակուին, գլխաւորաբար ծանօթ հանրապետականներու դէմ:

Պերլինի վրայ խղելու վախեր

Պերլինի մէջ միշտ այն վախը կը տիրէ թէ հիթլերեաններու կողմէ պատրաստուած արշաւը Պերլինի վրայ, կրնայ իրականանալ մէկ օրէն միւսը: Զրոյց կը շրջի թէ մէկ քանի օրէ ի վեր Պերլինի շուրջ հաւաքուած հիթլերեան մարտիկները օգնական ուժեր ստացած են զանազան վայրերէ: Կ'ըսուի նաեւ թէ Հիթլեր տեսակցած ըլլալով պատերազմական նախարարին հետ, գիտէ թէ հիթլերեաններու արշաւին դէմ ի՞նչ դիրք պիտի բռնէ գերման բանակը:

Տակաւին զաղտնիք կը մնայ թէ բանակը պիտի ընդդիմանա՞յ հիթլերեան արշաւին, թէ թոյլ պիտի տայ որ հանգարտօրէն անոնք քալեն Պերլինի վրայ: Ամէն ինչ կախում ունի Հինդենպուրկի կամքէն եւ անոր կամքը գործադրելու համար, պատերազմական նախարարին տրամադրութենէն:

Տակաւին զաղտնիք կը մնայ թէ բանակը պիտի ընդդիմանա՞յ հիթլերեան արշաւին, թէ թոյլ պիտի տայ որ հանգարտօրէն անոնք քալեն Պերլինի վրայ: Ամէն ինչ կախում ունի Հինդենպուրկի կամքէն եւ անոր կամքը գործադրելու համար, պատերազմական նախարարին տրամադրութենէն:

Կասկած կայ որ բանակը այդ պարագային չէզոք հանդիսատեսի դիրք բռնէ, որովհետեւ հիթլերեանները գերման բանակին մէջ կը համբեն բազմաթիւ համակիրներ:

Պողպատէ սաղաւարտակիրներու հաւաքոյթը

Պողպատէ Սաղաւարտակիրներու տարեկան հաւաքոյթը որ տեղի պիտի ունենայ սեպտեմբեր 1էն 4 Պերլինի մէջ, կարեւոր ցոյցի մը կերպարանքը պիտի ստանայ: Հաւաքոյթին պիտի մասնակցին 150,000 հոգի: Հարիւր քսան յատուկ կառախումբեր եւ 600 մեծ ինքնաշարժներ արդէն յատկացուած են այս բազմութիւնը փոխադրելու երկրին բոլոր անկիւններէն դէպ ի Պերլին:

Այս հաւաքոյթին առթիւ նախատեսուած յայտագրին գործադրութիւնը կը պահանջէ հսկայ գումար մը, զոր Պողպատէ սաղաւարտակիրներու կեդրոնը յանձն առած է հայթայթել, հակառակ Գերմանիոյ մէջ տիրող տնտեսական թշուառութեան:

ՆԱՄԱԿԱՏՈՒԿ

ՍՏԱՑՈՒՆՔ

Մարսէյլ, Մ. Յ.— 35:
Սէնթ Աւօման, Ա. Թ.— 70:
Վիլժոնպլը, Օր. Ն. Տ. Մ.— 70:
Թօրէն, Վ. Մ.— 100:
Լիոն, Փ. Ս.— 22.50:
Պուրկանպրէս, Ս. Գ.— 35:
Լա Սիօթա, Գարթ.— 315:
Լա Սիօթա, Մ. Զ.— 35:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԻՍի Լէ Մուլինօի Ֆրանսահայ կարմիր խաչի ընդհ. ժողովը վաղը Շաբաթ իրիկուն ժամը 8.30ին ծանօթ հաւաքատեղին: Կարեւոր օրակարգ:

ՀՐԱՒԻՐ

Շաւիլի եւ շրջականերու հիւղերց. ընկերակցութեան վարչական ժողովս ի գիտութիւն բարեպաշտ ժողովրդեան՝ պարտք կը զգայ յայտարարել թէ, Օգոստոս 15, յառաջիկայ երկուշաբթի օր, Վերափոխման Ս. Աստուածածնայ մեռելոցի օր, մանկապարտէզի սրահին մէջ (Ave. Ville d'Avray 20), Ս. պատարագի մատուցմամբ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի ի հանգիստ հոգւոց կամօքն Ննջեցելոց Ազգիս Հայոց:

Կը հրաւիրեմք հոգեսէր ժողովուրդը նոյն օրը ներկայ ըլլալ եւ հոգեպէս մխիթարուիլ.

Յաւարտ Ս. պատարագի խաղողի օրհնութիւն:

Սկիզբ ժամերգութեան ի ժամ 9, սկիզբ պատարագի ի ժամ 10:

վարչութիւն

Ուշադրութիւն

Լիոնի Հ. Յ. Դ. Ժողովրդային Կրթարանը ստացած է հետեւեալ նոր հրատարակութիւնները.—

Արձակ էջեր եւ հեքեաթներ՝ Զարդարեան, Պանդուխտի կեանքէն՝ Հրանտ, Դեղամ Տ. Կարապետեանի ցարօսի Աշխարհը, Դեղամ Բարսեղեանի Ամբողջական գործը, Ա. Արփիարեանի Ամբողջական գործը, Գրիգոր Զոհրապի ցանօթ դէպքեր եւ պատմուճաճքները, Մ. Վարանդեանի Մուրատ, Պերճուհիին փոթորիկէն վերջը, Ռէնի գնդակահարուածները, Վազգէն Շուշանեանի Ամրան գիշերները, Հ. Զուտերմանի Լուսաճ ջրադացը, Պէնիուրը:

Գրադարանը բաց է ամէն օր ժամը 7.30էն 9ը, բացի Շաբաթ-Կիրակի:

Վարձու խանութ

Լուսաւոր, կազ, ելեկտրականութիւն, առանց ըրփրիգի, յարմար դերձակի, սափրիչի, կոշկակարի եւ ամէն առեւտրական գործի համար: Դիւրամատչելի պայմաններ: Դիմել ՏԷր-ցակոբեան տպարան, 17 rue Damesme, Մէթրօ Թօլպիաք:

Կ'ՈՒԶՈՒԻՆ փոքրիկներու ժանթօ կարող լաւ գործաւորուհիներ: Գործը կը յանձնուի կտրուած հատը 5 ֆրանք: Վեց ամիս տեւական գործ: Դիմել՝ Տիկին Մաոիի, 7 rue de Tournon, Paris (6). *Մէթրօ Օտէոն:*

Imp. A. DER (Agopian)
7, Rue Damesme, Paris (13)
Le Gérant H. STEPHAN

Ց.



Գաւառ

ՄԱՐՍԷՅԻ Ռուսաստմ ենթակոմիտէի ընկերական ժողովը այսօր Ուրբաթ իրիկուն ժամը 9ին 63 բիս տը լա Րէփիւպլիքի սրահին մէջ:

ՄԱՐՍԷՅԻ Պատ. Միութեան վարչութիւնը խառն ժողովի կը հրաւիրէ քաղաքի, Պուլվ. Օտտօի եւ Սէն Լուի Պատանեկան միութիւններու բոլոր անդամները այս կիրակի իրիկուն ժամը 8.30ին, 63 բիս տը լա Րէփիւպլիքի սրահը: Կարեւոր օրակարգ: Պարտաւորիչ ներկայութիւն:

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ ԽԱՆԱՍՈՐԻ ԱՐՇԱԽԱՆՔԻ ՏԱՐԵԴԱՐՁԻՆԱՒԹԻԻ

ԱՐԺԱՆԹԷՕՅԻ ԱՆՏԱՌԻՆ ՄԷՋ

Կազմակերպուած Հ. Յ. Դ. ՋԻՅՈՒՆ ԿՈՄԻՏԷԻՆ ԿՈՂՄԷ

Այս Կիրակի առաւօտէն մինչեւ իրիկուն

Դեղեցիկ ժամանց, անակնկալներ, պար եւ նուագ, ճոխ պիւֆէ

կը նախագահէ Ընկ. ԿՈԹՈՂԵԱՆ

Հաղորդակց. միջոցներ.— կառ Սէն Լազարէն առնել շոգեկառք եւ իջնել կառ տ'Արժանթէօյ: Հանրակառք Թատէնէն Թիւ 40 իջնել կար Արժանթէօյ:

Հանդէս Սէն Լուի մէջ

Սէն Լուի (Մարսէյլ) Հ. Յ. Դ. Պատ. Միութեան տարեկան հանդէսը տեղի կ'ունենայ Օգոստոս 14ին: Կը խնդրուի բոլոր կազմակերպութիւններէն նկատի ունենալ այդ թուականը: Մանրամասնութիւնները առանձին յայտագրով:

ԴԱՇՏԱՊԱՐԱՀԱՆԴԷՍ ՄԱՐՍԷՅԻ ՄԷՋ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ՄԱՐՍԷՅԻ ՀԱՅ Կ. ԽԱՉԻ ԿՈՂՄԷ

Այս Կիրակի, առաւօտէն մինչեւ իրիկուն,

Route Château Gombert, Campagne La Baronne*ի մէջ*

Առաւօտ՝ սկաուտական մարզանքներ, վարդավառեան Հայկական խաղեր՝ Հայ Արիներու կողմէ, փարիզէն հասնող իրենց խումբերու մասնակցութեամբ): Կէսօրէ վերջ՝ ժամը 2.30ին կը սկսի գեղարուեստական բաժինը՝ դեկավարութեամբ արուեստագէտ Գ. Մ. Մարութեանի: Բանախօսութիւն, երգ եւ գուգերգ, արտասանութիւն, նուագ, պզտիկ աղջիկներու պար (ռուսական վինկէրքա): Հայկական հարսանիք, շարժանկարում:

Երեկոյեան պարերը կը սկսին ժամը 4.30ին:

Հաղորդ. միջոց.— Առնել 5 թիւ հանրակառքը, որ Սէն Ժէռօմէն վեր, Շաթօ Կօմպէր չի հասած, կը կեդրոնայ նոյն տպարակին (Գըմպըլեաններու) դրան առջեւ:

Ճաշը միասին բերել, ըմպելիքը կը հայթայթուի տեղւոյն վրայ:

Մուտքը 5 ֆրանք

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ, Կեանքը, Թ. Ազատեան 15 ֆրանք, ԾԱՆՕԹ ԴԻՄԱՐԵՐ ՈՒ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ, Դ. Զօհրապ 20, ՆԱՀԱՏԱԿ ԴՐՈՂՆԵՐ (Տ. Չէօկիւրեան եւ Թ. Սեւակ), Ա. Սեւակ 15, ԱՐԵՒՈՏ ՃԱՄԲԱՆ, Մաննիկ Պէրպէրեան 10, ԵՏՔԸ, Էրնիս Մարիա Ռեմարք 20, ՅԵՂԱՓՈԽՈՒԱԾԻ ՄՏՔԵՐԸ, Քրիստ. Միքայէլեան 10, ԽՆԴՔԸ եւ ՋԱԼԱԼԻՏՏԻՆ Բաֆֆի 25, ՎԱԼԱՆԹԻՆ, Ժորժ Սան 20, ԹԷՐՃԱՆՕ, (Ինւզանդիմի կայսրուհին) 25, ԱՊՐՈՒՄՆԵՐ, Մայխաս 50, ԴՆԴԱԿԱՀԱՐՈՒԱԾՆԵՐԸ, Ռէն 20, ԵՐԵՔ ԸՆԿԵՐՆԵՐԸ, Ղ. Մելոյեան 10, ՍԱԼԻՒՀ ՀԱՆԸՄ, Ե. Օտեան 2 հատոր 30 ֆր., ԺԻՒՏՔՈՒ ԵԻ ԺՈՒՔԻՆ, Ա. Պէրնէտ 2 հատոր 65 ֆր., ՍԻՄՈՆ ՓԷՔԻԼԻՒԱՆ 25, ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ԱՂՋԻԿԸ, Քասիմ 2 հատոր 25, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ, Յ. Ալրճեան (Ռոզմերի) 12.50, ՏԱՒՐԻԶ ԵՒ ԼԵՒՆ, Գ. Կաւվարնց 20, ԱՐԵՒԵԼՔԷՆ ԱՐԵՒՄՈՒՏՔ, Ոստանիկ 5, QUATRE CONFÉRENCES SUR L'ARMÉNIE, Fr. Macler 35, LES RIRES D'UNE CHARMEUSE DE SERPENTS, Armen Ghanlan 15.

Դիմել՝ ԴՐԱՏՈՒՆ ՀՐԱՆՏ - ՍԱՄՈՒԻԼ, 51 rue Monsieur-le-Prince, Tél. Danton 88-65, ուր կը գտնէք նաեւ ֆրանսերէն եւ հայերէն ամէն տեսակ գրքեր:

Պուա Քոլոնպի մէջ «Ցառաջ» կը ծախուի
Պ. ԱՌԱՔԵԼԵԱՆԻ առձառանիի մէջ
CAFE ARARAT
345 Ave. Argenteuil, Bois-Colombes

Տէսիլի մէջ «Ցառաջ»ի գործակալն է
Պ. ՎԱՀԱՆ ՀԻՒՍԵԱՆ
41, Maison l'Aurore, DÉCINES, (Isère)

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԵՒ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ

ԵԹԷ կ'ուզէք ձեր գործի տետրակները կանոնաւորել՝ ճշգրիտ ու կատար տոմարակալութեամբ մը եւ ձեր հաշիւները համաձայնեցնել տարւոյ վերջին օրէնքներուն հետ.

ԵԹԷ դատակոչեր ստացած էք huissierներէ.

ԵԹԷ պայմանագրութիւններ ունիք շարադրելիք կամ կնքելիք.

ԵԹԷ կ'ուզէք հաշիւի կարգադրութիւն մը կամ ժամանակամիջոցի մասնագէտ.

ԿՐՆԱՄ ՁԵԶԻ ԱՄԵՆԱԱՐԱԳ ԿԵՐՊՈՎ ԳՈՀԱՑՆԵԼ

Դիմեցէ՛ք **Պ. ՓԱՐՄԱԳ**ի, 28, Bld. de Strasbourg, Paris (X). Tél. Botzaris 17.64

որ կ'ընդունի աւէն օր ժամը 9էն 12, եւ կամ ժամադրութեամբ իր գրասենեակներուն մէջ:

ՀԱՄՏԷԻ ՓՈՓՈԽՈՒԹԻԻՆ

ՏՕՔԹԷՕՐ Մ. ՏԻՄԻՃԵԱՆ (ՆՈՐԱՑԻ)
147, Rue de Voies-du-Bois
Tél. Charlebourg 05-74 Colombes (Seine)
(*Փարիզէն՝ Gare St. Lazare*ի դիմը առնել եւ իջնել *La Garenne*)
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԿԻՆԵՐՈՒ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
ընդունելութեան ժամը 2—8, կիրակի եւ տօն օրեր 9—12

Հայերու ժամադրավայրը
ճաշարան **Ֆ Լ Օ Ր Ի Ա**
61 Rue Monsieur le Prince, PARIS (6e)
Մէթրօ Օտէօն եւ Սէն Միշել Հեռաձայն Danton 52—73
Արեւելեան եւ եւրոպական խնամուած կերակուրներ

Ճաշարան CAUCASE
23 Rue de la Huchette, Métro St. Michel
Դուսական եւ արեւելեան համեղ կերակուրներ՝ պատրաստուած հայտնի խոհարարներու կողմէ:
Ճաշի միջոցին անընդհատ նուագ
Prix Fixe 4 պնակ կերակուր՝ 6 ֆրանք

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՐՄԱՆԱՏՈՒՆ
ՏԷՐ ԵՒ ՏՕՐԷՆ ՏՕՔԹ. ՄԻՀՐԱՆ Կ. ՔԷՇԻՇԵԱՆ
Նախկին բժշկապետ Մերսինի Ֆրանս. հիւանդանոցներու
Պատուոյ մէտալլ Ֆրանս. առողջապահ. նախարարութենէն
Հասցէ՝ 31 Rue de la Rochefoucauld (9)
Téléphone: TRINITÉ 59—54
Բաց է ամէն օր կէսօրէ վերջ ժամը 2.50էն 7.50, (կէսօրէ առաջ միմիայն ժամադրեամբ) կիրակի եւ տօն օրերը 10—12:
Շոն կը կատարուին Ֆ. Ցառագայթներով ամէն կերպ քննութիւն, շղթանկարում (radiographie), գեղ-մանիշակագոյն, յետ-կարմրագոյն եւ ուլտրակէնեան դարմանում (radiothérapie profonde), նաեւ Տիաթերմիի բոլոր կիրարկումները եւ ելեկտրաբոյժի բոլոր ձեւերը, որ ներքին, արտաքին եւ մոքային բազմաթիւ հիւանդութիւններու դէմ գործուած գիտական ամենավերջին եւ զօրաւոր ազդակներն են:
Թոքախտաւորներու համար pneumothorax-ի գործողութիւն: Հակահիւծախտային խարդելիչ եւ բուժիչ պատուաստ եւ շիճուկ (կատարելապէս անվտանգ):
Ջղային եւ հոգեկան հիւանդութիւններու դէմ քնեցուցական, Սելադրական եւ ֆիզիքական մէթոտներ:
Դարմանատունը ունի իր մասնագէտ բժիշկները աչքի, քթի, ականջի, ինչպէս նաեւ արանց եւ կանանց ծննդամիզային եւ վէներային հիւանդութիւններու համար:
Assurance Sociale-ի պատկանող հիւանդներու կը տրուի լուրջ խնամք:
Տօքթ. Մ. Քէշիշեան, որպէս մասնագէտ ներքին հիւանդութեանց, կ'այցելէ նաեւ դուրսի հիւանդներուն.
Métro: Trinité, St. George et Pigale: Tramway 26, 28, 54:
Autobus AF, AJ, AM, B, BD, BI, G, Gbis, L, H, Hbis, R, Rbis

Հայրենակիցներու ուշադրութեան
Սուլթաններու Սուլթանը, աշխարհի սուրճերուն թագաւորը համոզին մարսողութիւնը կը դիւրանայ եւ հաճոյալի ժամանց կ'ունենայ: Պահանջեցէք հայ նպարավաճառատուններէ
կեդրոնատեղի 92 Rue d'Angoulême
S. TOROSSIAN
Մէթրօ Ccuronnes եւ Parmentier
Ծանօթ.— կեդրոնատեղիէն չորս անգամէն կամ միանուագ քիլօ գնողներու կը տրուի նուէր:

ԲՈՌ

(ՎԷՊ 1830ի ԻՏԱԼԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՕՐԵՐԷՆ)

Հեղինակ՝ Է. Վ. ՑՈՒՆԻԶ — Թարգմ. Լ. ՇԱՆԹ

Բոռ կանգ առաւ մի վայրկեան, բայց կինը ոչինչ չպատասխանեց:

— Ես մտածել եմ, շարունակեց նա. — Եթէ մի մարդ մեակ է կեանքում ու պահանջ է զգում մի կնոջ ներկայութեանը, եւ եթէ կարողանում է գտնել մի կին, որ դուր է գալիս իրեն եւ որին ինքն էլ համակրանք է ներշնչում, այն ժամանակ նա իրաւունք ունի շնորհակալութեամբ ընդունելու այդ կնոջ հաճումը, առանց աւելի տեւական կապեր հաստատելու նրա հետ: Ես այդտեղ վատ ոչինչ չեմ տեսնում, եթէ ի հարկէ երկու կողմն էլ ազատ են մնում խաբէութիւնից, անարդարութիւնից ու վիրաւորանքից: Ուրիշ մարդոց հետ ունեցած քո նախկին կապերի մասին ես չեմ մտածել: Գիտէի միայն, որ մեր կապը հարկաւոր չէ, եւ որ մեզանից ամէն մէկը ազատ է քանդելու հէնց որ ծանր զգայ: Եթէ սխալած եմ, եւ եթէ դու այլ կերպ ես նայում խնդրին, այն ժամանակ...

Նա նորից լռեց:

– Այն ժամանա՞կ· — հնչեց կինը առանց նրան նայելու:

— Այն ժամանակ ես անիրաւ եմ եղել դէպ ի քեզ եւ դա ինձ չատ է վշտացնում: Միայն արել եմ առանց դիտաւորութեան:

— «Վշտացնո՞ւմ է», «առանց դիտաւորութեան»: Դու քարից ես, ի՞նչ է, Ֆելիչէ: Մի՞թէ դու կեանքումդ երբեք մի կին չե՞ս սիրել, եւ մի՞թէ չե՞ս տեսնում, որ սիրում եմ քեզ:

Ծանկարծ մի բան հուզ եկաւ Բոռի կրծքում այդ բառը լսելիս: Ի՞նչքան ժամանակ էր անցել այն օրից, երբ նրան ասում էին· «Սիրում եմ քեզ»: Կինը յանկարծ վեր թռաւ ու երկու ձեռքով զրկեց նրան:

— Ֆելիչէ, եկ գնանք միասին, գնանք այս սարսափելի աշխարհից, այս մարդկանցից ու քաղաքականութիւնից: Ի՞նչ գործ ունինք: Գնանք — երջանիկ լինենք: Գնանք Հարաւային Ամերիկա, ուր դու առաջ ապրել ես:

Ցիւղութիւնների պատճառած ուղղակի ֆիզիքական սարսափը վերադարձրեց Բոռի ինքնիշխանութիւնը: Հեռացրեց նրա ձեռքը վզից ու պինդ սեղմեց:

— Զիտատա, ջանայ հասկանաս, ինչ որ ասում եմ: Ես քեզ չեմ սիրում, եթէ նոյն իսկ սիրէի էլ նորից չէի գնայ քեզ հետ: Այստեղ Իտալիայում եւ դործ ունիմ ու ընկերներ:

— Եւ ուրիշ մէկին էլ, որին աւելի ես սիրում քան ինձ. — բացագանչեց կինը յուսահատ: — Մ՛, ես պատրաստ եմ ձեզ սպանելու: Դու ընկերների մասին չէ որ մտածում ես, այլ գիտեմ ում:

— Կա՛ց: Ցուզած ես դու, չեզած բաներ ես երեւակայում:

— Կարծո՞ւմ ես տիկին Բօլլայի մասին եմ խօսում: Ինձ խաբելը այդպէս հեշտ չէ: Նրա հետ դու միայն քաղաքականութիւնից ես խօսում: Դու նրան էլ այնքան ես սիրում, ինչքան եւ ինձ: Դու միայն կարդինալի մասին ես մտածում:

Բոռը ցնցուեց:

— Կարդինա՞լ մասին. — կրկնեց մեքենաբար:

— Կարդինալ Մօնտանէլլի, որ աշնանը այստեղ քարոզում էր: Կարծում ես չեմեայ քո դէմքը, երբ մեր մօտիցն էր անց կենում նրա կառքը: Դու մ՛յ, այս չորի պէս սպիտակ էիր: Դու հիմա էլ տեղեակ պէս դղրդում ես, հէնց որ նրա անունը տալ:

— Զգիտես, ինչ ես խօսում: Ես ատում եմ կարդինալին: Նա իմ վատթար թշնամին է:

— Թշնամի՞ թէ ոչ: Բայց դու նրան ամէնից աւելի ես սիրում աշխարհիս երեսին: Նայիր երեսիս ու ասա սուտ եմ, եթէ կարող ես:

Բոռը չուռ եկաւ ու նայում էր պարտէզ: Կինը զղրունի դիտում էր նրան ու սարսափում ինքն իր ասածից: Մի տարօրինակ բան կար Բոռի լռութեան տակ: Վերջապէս Զիտատան կամաց մօտեցաւ նրան ու վախեցած երեխայի պէս, զգուշ ձեղ տալ թեւից:

— Ճիշդ է, — ասաց Բոռը՝ չուռ տալով դէմքը կնոջ:

XI

— Կարելի չէ՞, որ մի ուրիշ տեղ պատահեմ. Բրիզիկէլլան շատ վատնդաւոր տեղ է ինձ համար:

— Ռումանիայի ամէն մի թիզը վտանգաւոր է ձեզ համար: Բայց հէնց Բրիզիկէլլան ամէն տեղից աւելի ապահով է այժմ:

— Ինչո՞ւ:

— Իսկոյն ասեմ. միայն այդ կապոյտ բաճկոնով մարդը մեր երեսը Թող չեռնի պէտք է զգուշ լինել դրանից: — Այո՛, սարսափելի փոթորիկ էր: Ես չեմ յիշում, որ երբ եւ իցէ խաղողի որթերը այսպէս խեղճ վիճակում լինեն, ինչպէս հիմա:

Բոռը թեւերը սեղանին դրաւ ու կախեց գլուխը վրան, կարծես սաստիկ յոգնած լինէր, կամ գինուց ծանրացած: Կապոյտ բաճկոնով վտանգաւոր մարդը արագ մի հայեացք ձգելով շուրջը երկու ագարակատէր տեսաւ, որոնք մի չիշ գինու դիմաց տարայ բերքերն էին խօսում, այլ եւ մի քնկոտ սարեցի, որ գլուխը սեղանին էր դրել:

Դա սովորական պատկեր էր Մարտաիի նման եռ ընկած մի անկիւնում, եւ կապոյտ բաճկոնով մարդը վճռեց վերջապէս որ դրանց խօսակցութեանը ականջ դնել չէր Մտից իր գլխին ու անցաւ մի հակը: Այնտեղ կանգ առաւ, հաշւեհեղանին ու անփոյթ խոսքերով գինեպանի հետ: Մէջէ մէջ նայում էր միայն բաց դռանը, որտեղից երեւում էին սեղանի առաջ նստած երեք պարանքը: Երկու ագարակատէրները դանդաղ երեսնց գինին էին խմում տեղական բարբառով խօսում երկուսն էլ, իսկ Բոռը խոժռում էր իր մարդ, որի խիղճը հանգիստ է թողնում:

Վերջապէս լռեսը երեսի այն եզրակացութեանը, որ դրա ժամանակ կորցնում: Վճարեց իր հաշիւը եւ երեսով գինեպանից՝ նեղ դռդռով ցած իջաւ: Բոռը յօրանջեց, ձեղ գալով բարձրացաւ ու կոտրած պիկի թեւովը սկսեց ծոյլ – ծոյլ քերը տրորելու:

— Դժւար գործ է. — ասաց պանից մի ծալովի դանակ հանեց կարեց մի պատառ հաց: — Դու ձեղ չա՞տ են նեղացնում վերջերս Միքէլլէ:

(Շար.)

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

LE SEUL QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : Sch. Missakian

Rédaction & Administration — 17, Rue Damesme PARIS (13e)

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ — Téléphone : Glacière 15-70

(ԵՐԹԵԻԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro: TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ,—

	ՏԱՐԵԿԱՆ	ՎԵՑԱՄՍԵԱՅ	ԵՒԱՄՍԵԱՅ
Ֆրանսա եւ գաղութներ	140 ֆրանք	70 ֆրանք	35 ֆր.
Անգլիա, Եգիպտոս, Զուիցերիա, Իտալիա	250 »	130 »	—
Ամերիկա	8 տոլար	5 տոլար	—
Ուրիշ երկիրներ	200 ֆրանք	100 ֆրանք	—

ՇԱԲԱԹ 13 ՕԳՈՍՏՈՍ 1932 — 13 AOUT 1932

Ը. ՏԱՐԻ Թիւ 1956 — Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ — ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Վրաստանի վարած ազգային քաղաքականութիւնը բացայայտ է գրեթէ բոլոր ճակատներուն, մանաւանդ տնտեսական ճակատի վրայ, ուր տեսական պատճառաբանութիւնները եւ կուսակցական համամիութենական չահերու պաշտպանութիւնը վրացի կոմունիստին քով կը դառնայ կուսակցական ընդհանուր գիծ, որ սակայն կը վերջանայ Վրաստանով:

Այս գործելակերպին մէջ վրացական այս օրուան ղեկավարութիւնը կը դործէ Վրաստանի ազգայնական հոսանքներուն հետ:

Տնտեսական ձեռնարկներուն ծանօթ ճարտարապետը կը գրէ·

«Հետաքրքրական է արձանագրել վրացի բոլշեւիկներու եւ մենշեւիկներու գործակցութիւնը ազգային – տնտեսական խնդիրներու մէջ: Գորիի շաքարի գործարանի հայրը մենշեւիկ Գոտուան է, վրաստանի խորհրդարանի այն նշանաւոր պատգամաւորը որ երբ վրաց կառավարութիւնը պահանջեց 300,000 րուբլի Թիֆլիս ապրող Ռուսերը հեռացնելու համար, տեղէն վեր կեցաւ եւ առաջարկեց երեք միլիոն րուբլի, միայն թէ բոլոր ոչ – վրացիները հեռացուին Թիֆլիսէն: Գոտուան ի նկատի ունէր, ի հարկէ, Հայերը: Ահա այս մարդն է շաքարի գործարանի տնտեսական եւ թեքնիք հիմքերու կազմողը»:

Նոյն յօդուածագիրը կը ներկայացնէ Բազալտի եւ Ապակիի գործարաններու խնդիրը, որոնք նոյն կարգի ճարպիկութեամբ եւ ազգային քաղաքականութեամբ լուծուած են կամ կը լուծուին վերջս Հայաստանի եւ ի նպաստ Վրաստանի, միշտ կուսակցական կարգով եւ կոմունիստական «արցունքութեամբ»:

Բազալտի գործարանի խնդիրը սրատուչ կողմեր ալ ունի եւ կ'արժէ ամբողջութեամբ ներկայացնել այստեղ:

«10—12 տարի առաջ Ֆրանսայի մէջ կրցան գտնել բազալտը ելեքտրականութեամբ հալեցնելու միջոցը: Հալուած բազալտը կը գործածուի քիմիական դիմացկուն ամաններ, ելեքտրական բարձր հոսանքի համար անջատիչներ, անթել հեռագրի սիւներ անջատող բարձիկները եւ այլ կարգի թանկարժէք իրերու պատրաստութեան համար: Հալած բազալտի արդիւնաբերութիւնը խիստ շահաւէտ տնտեսական գործ է եւ կարող է յաջողիլ այն վայրերու մէջ, ուր կայ առատ եւ աժան ելեքտրական ուժ:

Հայաստան, ինչպէս յայտնի է, հարուստ է բազալտ քարի անսպառ պաշարով եւ ջրա – ելեքտրական աժան ուժով: Եւ բնական է, որ Հայաստանի Ժողտնտխորհը հետաքրքրուեցաւ տնտեսութեան այդ ճիւղով եւ ջանաց Ֆրանսայէն ստանալ բազալտը հալելու միջոցը: Չի կարողանալով համաձայնութեան գալ Ֆրանսայի հնարիչի հետ՝ Հայժողտնտխորհը յանձնարարեց Հայաստանի համալսարանի ուսուցչապետներ Ղամբարեանին եւ Թոռիկեանին՝ գտնել բազալտի հալման սեփական միջոցը: Զորս – հինգ տարուան յամառ աշխատանքի ու 150,000 րուբլի ծախքը պսակուեցաւ յաջողութեամբ: Ղամբարեանն ու Թոռիկեանը գտան բազալտը հալելու միջոցը· որմէ յետոյ, հերթի գրուեցաւ Հայաստանի մէջ բազալտի գործարան հիմնելու ծրագիրը:

Բայց Թիֆլիսի Գոտուանները քնած չէին: Հէնց որ վրացի կոմունիստները Հայաստանի գործարանի ծրագրի լուրն առած, խոկն անցան գործի: Գոտուան վրացի ճարտարապետի մը հետ ձեռնարկեց Վրաստանի մէջ բազալտի գործարան չհնելու ծրագրին: Բազալտը հալելու միջոցը կը մտածեն ստանալ Հայաստանէն «Կուսակարգապահութեան» կարգով: Եւ, ի հարկէ, պիտի յաջողին: Չպիտի զարմանաք, եթէ վաղը իմանաք, որ բազալտի գործարանը որոշուած է կառուցանել Վրաստանի մէջ, իսկ Հայաստանի ծրագիրը դրուած է Շիրակի չաքարի գործարանի կամ Երեւան – Աղստաֆա երկաթուղիի կողքին:

Եւ այդ այն ժամանակ, երբ կովկասի ոչ մէկ տեղը բազալտ քարը այնքան առատ չէ, որքան Հայաստանի մէջ: Նոյնպէս Հայաստանի ելեքտրական ուժը աւելի աժան է քան Վրաստանի մէջ: Բոլոր նկատումները, եւ առաջին հերթին տնտեսական չահը կը խօսի յօդուտ Հայաստանի, բայց եւ այնպէս Վրաստանի պետական մարմինները զբաղուած են բազալտի գործարանը Վրաստանի մէջ հիմնելու ծրագրով»:

Մեղմ Հայաստան, որ իր քարը, հողը եւ ջուրն իսկ չի կրնար օգտագործել: Ամբողջ տեսարանին մէջ սրատուչ է Ղամբարեանի եւ Թոռիկեանի դիւտի յաջողութիւնը, որ արտասահմանի հայութիւնը կրնայ ոգեւորել Հայաստանի չինարարութեան հեռանկարով: Այդ ոգեւորութիւնը կը մնայ օդին մէջ, իսկ գործնական կեանքի մէջ չինարարութիւնը կը բռնէ Վրաստանի ճանապարհը, աչքերը բաց՝ ապշութեան մատնելով Հայաստանի վարիչները:

«Կուսակցական կարգապահութիւն» ուրիշ ոչինչ: Ու այդ կարգապահութեան ենթակայ է Հայաստանի բամպակը, քարը, ածուխը, ջուրը: Ու հայ կոմունիստները «ազգային թեզման» մեղքերէն զերծ մնալու համար, միշտ կ'ուղեն «ուղիղ» ճանապարհով քալել, ու միշտ ճամբան Թիֆլիսէն կ'անցնի...

Երբ Հայաստանի տիրացու վարիչները հազար կաոր կ'ըլլան, ցոյց տալու թէ լէնինեան վարպապետութիւնը հիմնովին կ'ըմբռնեն եւ օրթոտոքսէն աւելի օրթոտոքս են, վերին ղեկավարութեան աչքը մտնելու համար, իրենց կողքին կը գտնեն վրացի լարախաղացները, որոնք նոյն սրատուչ հաւատարմութեամբ կը խօսին կոմունիստական տեսութիւններու մասին եւ ճիշդ այդ պատճառաբանութեամբ՝ բոլոր մեծ պատառները Վրաստանին կը մնան:

Նոյն կարգի խնդիրներ են Ապակիի գործարանի եւ Սեւանի ջուրի խնդիրները, որոնց պիտի անդրադառնանք:

Կ. Ս.

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

Էոիօ կը խօսի Սթիմսընի ճառին մասին

Էոիօ չուզեց սպասել, որ հասնի Սթիմսընի ճառին բնագիրը: Դատելով մամուլին քաղուածքներէն, գնահատեց ոգին, զոր ցոյց կուտայ Սթիմսըն, իբրեւ ձայնը Ամերիկայի:

Սթիմսընի այս ճառը ռոմանթիք խանդավառութիւն մը ստեղծած է ամէն կողմ, մանաւանդ մամուլին մէջ: Նման «կարեւոր» ճառեր չատ են լսեր փոքրիկ ժողովուրդները: Խաղաղութեան պանծացման այս առաքեալներու ճառին հետ, փոքրիկ ժողովուրդները լսեր են նաեւ լուրերը սպառազինութեանց հրահանգներու:

Այսուհանդերձ, պէտք էր, որ Էոիօն ալ ճառ մը խօսէր, արձագանգ տալով Սթիմսընի՝ նոյնքան խանդավառ ճառանար, տալ չունչով մը վառարանէր խաղաղութիւնը եւ Պրիան–Քէլլոգ դաշնագրին ոգին:

—Ֆրանսա լաւ համոզուած է, որ, ըսաւ ան, անկարելի է, յանուն խաղաղութեան շահերուն, թողուլ որ դաշնագրերը ստանան բարի կամեցողութիւններու յայտարարութեան մը նկարագիրը: Ֆրանսա եւս,— խորապէս գնահատելով Սթիմսընի յայտարարութեան այդ ոգին,— խաղաղութեան դաշնագիրը կը համարէ պարտադրութեան թուղթ մը:

Գերմանիա կը տօնէ իր հանրապետութիւնը

Պատօնները վերապահութիւններ կ'ընեն

ՊԵՐԼԻՆ, 11 Օգոստոս·— Վայմարի սահմանադրութեան 13րդ տարեդարձը այսօր պաշտօնապէս տօնուեցաւ Ռայխսթակի սրահներուն մէջ, որ զարդարուած էին կանանչներով եւ հանրապետական դրօշներով: Նախագահ Հինտէնպուրկ եւ վարչապետ Ֆոն Փափէն ներկայ էին այս հանդէսին որ բացուեցաւ ներքին գործոց նախարար Պ. Ֆոն Կայլի մէկ ճառով: Ցիշեց յետոյ թէ ներման ժողովուրդին մէկ մասը դեռ կը մերժէր սահմանադրական տօնին տալ ազգային բնոյթ, նախարարը յայտարարեց թէ Բայլի կառավարութիւնը այսու հանդերձ որոշած էր պաշտօնապէս տօնել այս տարեդարձը, առանց սակայն զայն նկատելու «իբր օր մը զոր ամէն գնով պէտք է յաւերժացնել»:

Ֆոն Կայլ յետոյ լայն գիծերով ուրուագծեց սահմանադրական բարեփոխումները զոր Բայլի կառավարութիւնը անհրաժեշտ կը դատէ իրականացնել: Այս բարեփոխութիւնները պիտի ըլլան երեք դլխաւոր կէտերու վրայ, որոնք են·— Ընտրական դրութեան փոփոխում՝ այն ձեւով որ նկատի առնուի թեկնածուներու անձնական արժէքը, ստեղծում աւելի բարձր խորհրդարանի մը (Վերակոյա) որ Ռայխսթակը հաւասարակշռէ ու հակակշռէ, եւ յետոյ՝ աւելի սերտ միութիւն մը հաստատել Ռայխին եւ Փրուսիոյ միջեւ:

Վարչապետ Ֆոն Փափէն ալ ճառ մը խօսելով յայտարարեց թէ, հակառակ իր անկատարութեանց, արդի Սահմանադրութիւնը կը պարունակէր հիմնական կարգ մը դաղափարներ, որոնցմէ գերման ժողովուրդը ապագային կրնայ օգտակարապէս ներշնչուիլ:

Վարչապետը յետոյ կոչ ըրաւ գերման ժողովուրդին եղբայրօրէն միանալ՝ ընդդիմանալով կուսակցական անհամաձայնութեանց:

Ինչպէ՞ս պիտի կազմուի գերման դահլիճը

Տակաւին կը չարունակուին խորհրդակցութիւնները քաղաքական կուսակցութեանց չրջանակներու մէջ, եւ վիճաբանութիւնները գերման մամուլի մէջ, այն մասին թէ ի՛նչպէս պիտի կազմուի ապագայ դահլիճը:

Անկարելի կը թուի կազմել դահլիճ մը բոլորովին անկախ օրէնսդիր պայքարի հոսանքներէն:

Ֆոն Փափէն եւ Հիւկէնպէրկ կը խորհրդակցին՝ կազմելու համար «նախապարագային դահլիճ մը»: Մինչ Հիթլերի համակիրները դիտել կուտան, որ պիտի ձախողի այդ դահլիճն ալ, եւ ներկայ կացութեան մէջ տարընթաց միակ լուծումն է կազմել «խորհրդարանական դահլիճ մը», պայմանով որ կեդրոնն ու Հիթլերեանները խոստանան աշխատակցիլ: Հաւանական կը նկատուի նման աշխատակցութիւն մը, որովհետեւ կեդրոնի երեսփոխանները կը կարծեն թէ այդ ձեւով միայն կարելի պիտի ըլլայ խուսափիլ Հիթլերեաններու ծայրայեղութիւններէն ու սանձարձակութիւններէն:

Եւ սակայն միւս կողմէ դիտել կուտան, որ Հինտէնպուրկ պիտի ընդդիմանայ նոր դահլիճի մը կազմութեան՝ Հիթլերի վարչապետութեամբ, որովհետեւ պիտի խախտէր «նախագահական դահլիճի» տեսակէտը:

Այսպէս ուրեմն երեք տեսակէտներ կը մնան տակաւին անհաշտ, չարունակելով չփոթութիւնը գերման քաղաքական կեանքին: Նախ, Ֆոն Փափէն, «նախապարագային դահլիճի» կողմնակից, չուզեր տեղի տալ, յօժար է միայն դահլիճին մէջ ընդունիլ 2 կամ 3 հոգի Հիթլերեաններէն:

Երկրորդ, մարշալ Հինտէնպուրկ, կողմնակից «նախագահական դահլիճի» մը, կը սպառնայ հրաժարիլ՝ եթէ նկատի չառնուի իր կամքը:

Եւ երրորդ, Հիթլերեանները եւ կեդրոնի խմբակցութիւնը, կողմնակից «խորհրդարանական դահլիճի մը», հետզհետէ հող կը գտնեն յաջողութեան:

Դեռ մինչեւ վերջին ժամ, Ֆոն Փափէն ձէր կը մնար կացութեան եւ կը գործէր խաւօրէն:

ՊՐԵՍԼԱՒ·— Պրեսլաւի ատեանը ձերբակալեց 10 Հիթլերեան, որոնք ամբաստանուած են համաձայնաւոր բանուորի մը սպանութեամբ, Կլէյվիցի մէջ: Ձերբակալուածները յանձնուեցան նորակազմ արտակարգ դատարանին:

Ամերիկա չպիտի ճանչնայ ճափոնական գրաւումը

ԹՈՒԻՕ·— Մի քանի օր առաջ Նահանգաց ճափոնական դեսպանը գալ չարթու իր երկիրը պիտի մեկնի: Ան տեսակցութիւն մը ունեցաւ Պ. Սթիմսընի հետ, որ յայտարարեր է կրկին թէ Միացեալ Նահանգները կ'ընդդիմանան Մանչուրիոյ մէջ ճափոնական գրաւումներուն, թէ չպիտի ճանչնան որ եւ է փոփոխութիւն Չինաստանի գոյավիճակին վրայ, եւ թէ ուժ պիտի տան Քէլլոգի դաշինքին՝ Չինաստանի վերապետական իրաւունքներուն որ եւ է վնաս չհասցնելու համար:

Քելլոգ կը հաստատէ Սթիմսընը

ՍԷՆԹ – ՓՕԼ·— Պ. Քէլլոգ ճառ մը խօսելով յայտարարեց թէ կատարելապէս համաձայն է Պ. Սթիմսընի կողմէ վերջերս խօսուած ճառին: Փարիզի Դաշինքը, ըսաւ մանաւորապէս, բացայայտօրէն կը յայտարարէ որ բանակցութիւնները պէտք է կատարուին այդ դաշինքը ստորագրողներուն մէջեւ:

Ռուման նոր դահլիճը

Ազգայնական – գիւղացի կուսակցութեան մէջ տեղի ունեցած խորհրդակցութենէ մը յետոյ Պ. Վայտա ստանձնեց նոր դահլիճին կազմութիւնը եւ նախարարներուն ցանկը ներկայացուց Թագաւորին: Նոր դահլիճին մէջ վարչապետութիւնն ու արտաքին նախարարութիւնը ստանձնած է ինքը Պ. Վայտա:

Ընտրական խաղերը սկսան Ամերիկայի մէջ

Հուվըր կը խօսի իր առաջին ճառը

Նիւ Եորքէն կը հեռագրեն թէ հանրապետական կուսակցութիւնը պաշտօնապէս հաղորդեց Պ. Հուվըրի թէ իր պաշտօնական թեկնածուն է յառաջիկայ ընտրութեանց մէջ եւ ան ալ ընդունեց:

Այս առթիւ տեղի ունեցան հանդէսներ:

Հուվըրի հակառակորդ թեկնածուն՝ կառավարիչ Ֆրանքլէն Ռուզվելթ այդ օրն իսկ հրաւիրեց Նիւ Եորքի քաղաքապետ ձէմմի Վալքէրը հաչիւ պահանջելու համար իր վարչութեան մասին, որուն դէմ ծանր ամբաստանութիւններ ըրած է դատախազ Սիպուրի: Բայց Հուվըրի մարդիկը այս խաղին ուրիշ խաղով մը պատասխանեցին: Նախկին նախագահ Թէոտոր Ռուզվելթի այրին որ բուռն հանրապետական մըն է, հրաւիրուեցաւ հանդէսին: Տիկին Ռուզվելթ որ 71 տարեկան է, օգնաւուով եկաւ Ուաշինկթըն անձամբ իր յարգանքը յայտնելու Հուվըրի: Այսպիսով, հանրային կարծիքին ցոյց տրուեցաւ թէ Ռուզվելթ ընտանիքն իսկ ամբողջովին համակիր չէ ռամկավար թեկնածուին:

Այս առթիւ Պ. Հուվըր խօսեցաւ թեկնածութեան իր առաջին ճառը յոյս յայտնելով որ պիտի գնահատուին իր ջանքերը երկրին տնտեսական կացութիւնը ամրացնելու համար: Ըսաւ որ միշտ կողմնակից պիտի մնայ պաշտպանողական սակագոյներու՝ այնքան չնաւսած ամերիկեան ճարտարարուեստին համար:

Պատերազմի պարագաներու մասին ըսաւ· — Կը յուսամ որ համաշխարհային սպառազինմանց մէջ այնքան մեծ կրճատումներ պիտի ըլլան որ վճարումներու մեծ մասը պիտի կրնան խնայել պարապական երկիրներու հարկատուները: Եթէ վճարման փոխարէն մեզի առաջարկեն փոխարինութեան ընդունելի ձեւեր, ինչպէս դիւրութիւն մը արտածմանց համար, վստահ եմ որ Ամերիկացիք նկատի պիտի առնեն այս առաջարկները: Ոչ մէկ գնով պատերազմի պարագաները պէտք է չնչուին կամ մեր ժողովուրդին վրայ ծանրանան:

Պէտք է բաւականաչափ ուժեղ բանակ ու նաւատորմ պահենք որպէս զի օտար զինուորները արգիլենք մեր հողը ելլել:

Պէտք է չարունակենք սեղմել զաղթողներու մուտքը դէպ ի մեր երկիրը:

Հուվըր խոստացաւ նաեւ պետական ծախքերը նուազեցնել եւ Չինեաճափոն վէճին առթիւ յայտարարեց թէ բնաւ չպիտի ճանչնան որ եւ է ազգի բռնադրաւումը՝ բռնաբարելով գոյութիւնն ունեցող դաշնագիրները:

Սպանիոյ հակայեղափոխութիւնը զսպուած

Մադրիտէն կը հեռագրեն թէ հանդարտութիւնը վերահաստատուած է Սիվիլի մէջ: Խռովութեանց վարիչը, զօրավար Սանճուրճօ ձերբակալուած է արդէն: Ոստիկանութիւնը կը չարունակէ սահմանին վրայ եւ ներքին նահանգներուն մէջ հետապնդել ու ձերբակալել անոնք, որ մաս ունէին խռովութեանց մէջ:

15 Քիւրտեր չանձնեցին

ԹԱՒՐԻԶ, 23 Յուլիս·— Երէկ ռուսական իշխանութիւնները ? Քիւրտեր յանձնեցին Պարսից իշխանութեանց: Ցանձնումին պատճառը տակաւին անյայտ կը մնայ: Կ'ենթադրուի, որ ասոնք անցեալները Արարատէն միւս ափը անցած Քիւրտերէն պիտի ըլլան:

Լաւածանօթ ապրիւրէ կը հաղորդուի որ էնկիւրի ձեռնարկած է Քիւրտերու տեղահանութեան գործին, —նոր ապրիլ տասնըմէկ մը, զոր Թուրքիան լուռ թեան մէջ կը գործադրէ իր երէկի գործակիցներուն նկատմամբ:

Կարգ մը վայրերու մէջ էնկիւրի Քիւրտերուն կողմէ լուրջ ընդդիմութեան հանդիպած է:

Խռովութիւններ Հայաստանի մէջ

8 յուլիս թուակիր թղթակցութենէ մը·—

Հայաստանի որոշ չրջաններուն մէջ մահոդիչ խռովութիւններ ծագած են, Դաւալուի գեմենտի գործարանի աշխատաւորները որոնց մեծ մասը Ռուսիոյ խորերէն եկած է, գործադուլ յայտարարած են: Ներքին յարաւեղ դաւերուն հետեւանքով, Ադասի Խանչեանը կրցած է չէզոքացնել «վարչապետ» Սահակ Տէր–Գաբրիէլեանը, որ այժմ կը գտնուի Թիֆլիս:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

(*) BULLETIN DE L'UNION ÉCONOMIQUE ET SOCIALE DE LA SOCIÉTÉ DES NATIONS

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

1932ի ապրիլ-մայիս ամիսներուն համաշխարհային տնտեսական կացութեան մասին տեղեկագրի հրատարակութեան առթիւ, Ազգերու Դաշնակցութեան Տնտեսական Կազմակերպութեան Ընդհանուր Ժողովի նախագահ պարոն Ալբերթ Թոմա հետեւեալ յօդուածը գրած է «Ժընեւ Ժուռնալ» օրաթերթին համար։ Ստորեւ կու տանք անոր թարգմանութիւնը։

Ընդհանուր Ժողովի նախագահ պարոն Ալբերթ Թոմա

Ազգերու Դաշնակցութեան Տնտեսական Կազմակերպութեան

կանացած խնդիր, Միութեան ափսիի խորհրդակցութիւնները հրաւիրելու խնդիրը։ Անդրկովկասեան կենտրոնն էլ թղթահար է անուն, թէ չ'ա արէք, չ'ն արէք։ 10-15 կէտեր էք գրկուրսիան բազաներ կազմակերպելու խնդիր, կուրսերի խնդիր...։ Նա կարծես ուզում էր հեկեկալ. հազար մի քիչ. կաթիլներն ընդունեց։ Միասին դուրս եկանք կայֆէից։ Որշեցինք Զանգի ափը զբնալ եւ խորհրդակցել. այստեղ է նշանակել Յուշիկը Պրոլետ-տուրիզմի ակտիւի հերթական խորհրդակցութիւնը, որը շուտով տեղի կ'ունենայ։

Այդ ժամանակ բլրի վրայից լսուեց էլի երգի ձայն.

Հո՛վ արէ՛ք, սարեր ջա՛ն,
Հո՛վ արէ՛ք,
Իմ դա՛րդին դարմա՛ն ա՛րէք...։

— Նա՛ է, — ասաց գործավար Մոսէնցը։

Այո՛, Յուշիկն էր. ես նրան ճանաչում էի, բայց նա ռոմանտիկ չէր առաջ։

×

Եթէ ասեմ, թէ համապատասխան վերադաս մարմինները զանում են, թէ Պրոլետ-տուրիզմի ընկերութիւնն աւելորդ է ու (ներեցէք) անգամ վնասակար, անկասկած յայտնած կը լինեմ քաղաքագիտական միտք։

Բայց ուրիշ ասելիք չեմ գտնում. որ ասեմ։

ԵՒՈՒԱՐԴ ՀՈՎՀԻԿ

«Խ. Հ.»

ԲՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԳԻՏՈՒԹԻՒՆ

Աստղերուն Ճակատագիրը

— :-: —

Մանօթ է, ներկայիս, թէ միայն որոշ մեծութիւն ունեցող աստղերն են որ կրնան բարձր աստիճանի ջերմութիւն ունենալ, ինչպէս են մեր տեսած շատ մը «անշարժ» աստղերը «երկնակամար»ին վրայ։ Մեր արեւը, սակայն, չի'նար այդ ահեղամեծ աստղերու շարքին մէջ։ Աստղաբաշխը զայն կ'որակէ «դեղին ճուճէ-աստղ», ինչ որ կը նշանակէ թէ մեր արեւը ունի համեմատաբար աւելի հասեսո տարածութիւն մը, որ սակայն, բաւարար չէ ունենալու այն բարձր աստիճանի ջերմութիւնը, զոր ունին հսկայ-սպիտակ աստղերը։ Այս վերջիններս ունին մինչեւ 20,000 աստիճան ջերմութիւն, որու միջոցաւ կը լուսաւորեն եւ կը տաքցնեն անընդմիջելի ու անհաշուելի ժամանակի մը ընթացքին, ամբողջ բանակ մը աստղերու, մինչեւ իրենց ջերմութեան կորուստն ու դառնալը տեղին, աւելի ցուրտ աստղ մը, նման մեր արեւին, որուն ջերմութիւնը կը հասնի 6000 աստիճանի։

Ինքնին կը հասկցուի, ուրեմն, թէ ինչու մեր երկիրը եւս չի կրնար եղած ըլլալ, շատ դարեր առաջ, փոքր-արեւ մը, քանի որ իր տարածութիւնը շատ քիչ է, ու իրեն նման շատ մը երկիրներու միացումովը միայն կրնայ երեւան գալ բաւականաչափ մեծութեամբ զունտ մը, որ ունենայ անհրաժեշտ ջերմութիւնը։ Դեռ մինչեւ այսօր այն կարծիքը ունեցողներ կան թէ մեր երկիրը նախապէս եղած է սեփական ջերմութիւն ու լոյս ունեցող մը, եւ սակայն ժամանակի ընթացքին հետզհետէ պաղած ըլլալով խաւերով ծածկուած է։ Ասիկա ճիշդ չէ. որուան ըլլալով որ ջերմութիւնը յարաբերական է որեւէ երկրագունտի տարածութեանը հետ։

Անկէ զատ, մեր երկրին ունեցած նպաստաւոր պայմանները, այսինքն մակերեսային խաւերը եւ ջերմութեան պակասը— ինչպէս նաեւ վայելած դրացնութիւնը արեւին հետ, որմէ լոյս ու ջերմութիւն կը ստանայ,—ստեղծած են հնարաւորութիւն մը մարդու ստեղծումին։ Շատ մը ազդակներ ինչպէս նաեւ շատ մը նպաստաւոր պայմաններ պէտք են զոյութիւն ունենալ, որեւէ երկրագունտի վրայ, որպէսզի նման էակ մը երեւան գայ։ Եթէ որեւէ երկրագունտ մեր երկրէն բաւականաչափ փոքր է, զուրկ պիտի ըլլայ անհրաժեշտ եւ մեր երկրին ունեցած քաշողական զօրութենէն կը քաշէ իր շուրջ եղած կազերը, որոնք դինք կը շրջապատեն իբրեւ օդային ծածկոց։ Ուրեմն, այդ երկրագունտերն ու աստղերը կը կորսնցնեն իրենց մթնոլորտն ու կը դառնան անբնակելի։

Իրապէս, մեր արեգակնային դրութիւնը իր մէջ ունի նման մոլորակներ։ Անոնք կը դառնան հրատին եւ լուսնթագին միջեւ, արեւին շուրջ։ Անոնց մէջեւ կարելի է գտնել այնպիսի նիւթեղէն կազմածներ, որոնցմէ միլիոնաւորներ պէտք են մեր երկրին տարածութեամբ գունտ մը կազմելու համար։ Թերեւս անոնք անջատուած մասնիկներն են երբեմնի մեծ գունտի մը։ Բայց, գիտութիւնը դեռ ոչինչ կ'ըսէ այս մասին։ Զարմացուցիչ յատակութեամբ մը կը ծնան անոնց տեղերը՝ անհունին մէջ։ Անհեռանելի բազմաթիւ մանրամասները կրնան ճանչցուիլ։ Լաւ պայմաններու մէջ, կարելի է տեսնել 300 մէթր տրամագիծ ունեցող գունդուածներ։ Արեւին յստակ լուսաւորութեանը տակ, կը տեսնուին հսկայ ու ակօսուած լեռնային գունդուածներ, կակուղ բլուրներ լայն տարածութեամբ, հաղարաւոր լեռներ, մանանիի ձեւ լայն ճեղքեր, լեցուած յաւիտենական սառուրով։ Լուսինը ամէնէն հետաքրքրականն է։

Այս երկիրը, սակայն, ամայի է ու անբնակ։ Հոն կը պակսին երկու ամենակարեւոր ազդակները կեանքի զոյացման համար։ Օդը եւ ջուրը։ Ոչ մէկ մարդկային աչք չէ տեսած լուսնի միւս կիսամասը։ Այնպէս են պայմանները, որ լուսինը իր առանցքին վրայ կր դառնայ ճիշդ այն ատեն, երբ շրջանը կ'ընէ երկրին։ Լուսնին «օր»ը երկար է։ Աւելի ճիշդ՝ մեր մէկ ամիսը իր մէկ «օր»ն է։ Լուսնի մակերեսին ամէն մէկ կէտը ունի օրուան «օր» մը, այսինքն 14 օր, անընդհատ, արեգակնային լոյս ունի, իսկ 14 օր՝ սառնային գիշեր։ «Ցերեկ» ատեն ջերմութեան աստիճանը կը հասնի մինչեւ 100 աստիճանի, իսկ «գիշեր» ատեն (այսինքն միւս 14 օրուան ընթացքին) արագօրէն կ'իջնէ ու կուգայ մինչեւ 27'2 աստիճան ցուրտին։ Որովհետեւ, այդ աշխարհը իր շուրջ չունի ոչ մէկ մակերեսային ծածկոց-օդային կամ մթնոլորտային վիճակ, որ պիտի կարողանար զինքը պաշտպանելու հակադրութիւններէ։ Այնպէս որ, Լուսնի մէջ եթէ նոյնիսկ օդ ու ջուր ըլլար, դարձեալ անբնակելի պիտի ըլլար։

Դեռ սկիզբէն, լուսինը զուրկ է եղած կեանք ունենալու առաւելութենէն։

Մանօթ է, որ լուսինը, մեր երկրի ջրային դանդուածներու ուժեղ շարժման պատճառ կ'ըլլայ։ Մակընթացութիւն եւ տեղատուութիւնն է ան։ Ասիկա շարունակ կը պատահի ովկիանոսներու ջուրերուն, որոնք երկրի շրջագայումին հակառակ ուղղութեամբ կը շարժին։ Այս պատճառաւ, լուսինը կ'ազդէ երկրի շարժման վրայ՝ իբրեւ կասեցուցիչ ու կ'երկարէ երկրի օրը։

Շատ ժամանակ առաջ, երկիրը եւս — որ լուսնէն 60 անգամ աւելի մեծ զանգուած մը ունի — լուսնին իր առանցքին վրայ շրջիլը յապաղեցուցած է։ Անոր այդ շրջագայութիւնը թերեւս քանի մը ժամ միայն կը տեւէր առաջ։ Այն ատեն, լուսինը դեռ տաքցած երկրագունտ մըն էր, երկիրը անոր վրայ յառաջ բերած է մեծ ալեկոծութիւն մը, որ կ'ընթանար լուսնի դառնալուն հակառակ ուղղութեամբ եւ, ի վերջոյ, հազարաւոր տարիներու ընթացքին, երկիրը ներգործած է անոր վրայ, այնպէս որ լուսինը երկրի շուրջ կը դառնար միշտ միեւնոյն կողմովը։ Այդ է պատճառը, որ կ'ըսէինք թէ երկրի վրայ չկայ էակ մը, որ տեսած ըլլայ լուսնի մէջս կողմը։

Այսպէս պէտք է յառաջ եկած ըլլայ, կ'ենթակացնեն աստղաբաշխները, լուսնի «գիշերն»ու «ցերեկ»ը, եռուն աստիճանի ջերմութիւնն ու մնացեալ 14 օրերու ընթացքին տիրող ծայրայեղ ցուրտը, որով լուսինը կորսնցուցած է իր օդն ու ջուրը ու բնակելի երկիր մը ըլլալու առաւելութիւնը։

Ուրեմն, ճիշդ կ'ըլլայ, նաեւ, եզրակացնել թէ լուսինը երբեմնի բնական գունտ մը եղած չէ, ինչպէս կը կարծուի։

Ուրիշ առիթով մը կը խօսինք ուրիշ աստղերու մասին։

Վ.Ա.Հ.

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐԸ

Մանչուրիոյ ողողումները

Երէկ կարգ մը տեղեկութիւններ տուած էինք Մանչուրիոյ ողողումներու մասին։ Վերջին հեռագիրները կը հաղորդեն թէ ողողումները պատճառ դարձան, որ խաղաղ երկիրը, ենթարկելով, սակայն, աննախընթաց աղէտի եւ թշուառութեան։ Բազմաթիւ քաղաքներ ողողուած են ամբողջովին։ Հաղարաւոր անձեր քշուած են հեղեղներէն ու թեզդուած եւ ուժ միլիոն կը համրուին անոնք որոնք մնացած են առանց ապաստանի եւ առանց սնունդի։ Այս տարուան բերքը ամենամեծ մասով փճացած է։ Բազմաթիւ Զինուորներ որոնք անկանոն պատերազմ կը մղէին ձախընդիներուն դէմ, յանձնուելցան եւ հիմա անոնց կը գործակցին, աղէտեալներու օգնութեան գործը կազմակերպելու համար։

Ճափոնական ուժերու հրամանատարը դադրեցուց դինուորական բոլոր գործողութիւնները աղէտեալ շրջանին մէջ եւ հիմա, իր ուժերը տրամադրած է օգնութեան գործին եւ փրկելու իր վտանգուած զօրախումբերը, մթերանոցներն ու ռազմանիւթերը։

Օգնութեան կատարած խուզարկութիւնները երեւան հանած են թէ ջուրը կը շարունակէ բարձրանալ եւ ամէնէն վտանգուած շրջանը՝ Սունկարի գետին թրջած շրջանն է։ Գետը եւ ուրիշ գետակներ յորդած ըլլալով, իրարու խառնուած են, այնպէս որ հսկայ տարածութիւն մը կը մնայ ջուրերու տակ։

Թէեւ ողողուած շրջաններու բնակչութիւնը ապաստանած է բլուրները, սակայն պարզ է թէ զրկանքը պիտի կատարէ իր աւերիչ գերը եւ շատեր պիտի մեռնին թշուառութենէն։

Մարշլնի մէջ, քաղաքին ստորին մասը ողողուած է եւ 24 ժամուան ընթացքին, ջուրը կէս մեդր եւս բարձրացած է։

Ի՞նչ կ'ըսէ Ալֆոնս ԺԳ.

«Նիւ – Բրունիքլէի թղթակիցը կրցած է հեռախօսով տեսակցութիւն մը ունենալ Ալֆոնս ԺԳ.ի հետ, որ ներկայիս կը գտնուի Զնխոսլովաքիոյ մէջ։

Նախկին թագաւորը յայտարարած է թէ ուշի ուշով կը հետեւի Մադրիտի դէպքերուն։ Հերքած է թէ, նիւթապէս նպաստած է ըմբոստութեան, թէ մասնաւոր գործակալներ ղրկած է Փարիզէն Մադրիտ, խմոքելու համար հակայեղափոխութիւնը։

Գերմանական ռազմափորձեր

Պերլինէն հասած տեղեկութիւններու համաձայն, յառաջիկայ ամսուն, 19—22, Ֆրանքֆորթի մէջ տեղի պիտի ունենան ռազմափորձեր, որոնց պիտի մասնակցին երեք զօրաբաժիններ, գերման սպայակոյտի անդամ զօրավարներու հրամանատարութեան տակ։ Նման ռազմափորձեր տեղի պիտի ունենան նաեւ ուրիշ շրջաններու մէջ։

Առեւտրական յարաբերութիւններ Ֆրանսայի եւ Քանատայի միջեւ

Օթավայի տնտեսական խորհրդաժողովը կը զբաղեցնէ նաեւ ֆրանսական տնտեսական շրջանակները։

15 դեկտեմբեր 1922ին Ֆրանսա առեւտրական համաձայնութիւն մը կնքած էր Քանատայի հետ, որ, յանկարծ, 16 դեկտեմբեր 1931ին կը տեղեկացնէր Ֆրանսական կառավարութեան թէ վեց ամիս յետոյ, այսինքն 16 յունիս 1932ին այլ եւս անդոյ կը հռչակէ կնքուած համաձայնութիւնը, թէեւ աւարտած շրջանի համաձայնագրին պայմանաժամը։ Փարիզի մէջ զարմանք պատճառեց այս ընթացքը, որովհետեւ Քանատա աւելի շատ ապրանք կը ծախէր Ֆրանսայի, քան Ֆրանսա՝ Քանատայի։ Եւ քէն միայն հակկշռեցաւ, որ քանատական կառավարութիւնը կ'ուզէր ձեռքերը ազատ ղնալ այն պահուն՝ երբ պիտի դումարուէր Օթավայի տնտեսական խորհրդաժողովը։

Քանատայի Ֆրանսացիներուն ճնշումին տակ, պէնէթ առաջարկեց այնպիսի պայմաններ, որոնք իրը թէ չափազանց չհաւէտ էին Ֆրանսայի համար երկու երկիրներու առեւծախի խնդիրներուն մէջ։

Թարմիչօ, ընդունելով այդ առաջարկները, ներկայացուց հակառաջարկ մը, մասնաւոր թոյլտուութիւններ ստանալու համար այն ապրանքներուն մասին, որոնք չեն կրնար մրցակցութիւն ստեղծել քանատական ապրանքներուն հետ։ Օթավա մեկնեցաւ։ Եւ 16 յունիսէն ասդին դանդազեցան առեւտրական դրծառնութիւնները Քանատայի ու Ֆրանսայի միջեւ։

Ֆրանսական շրջանակները նկատել կուտան, որ անիմաստ է այսքան դժուարութիւններ ստեղծել, երբ Քանատա որ եւ է վախ չունի ֆրանսական ապրանքներու մրցակցութենէն։

ՌՈՒՍԵԻՖԻՆԼԱՆՏԱԿԱՆ ԴԱՇՆԱԳԻՐԸ ՎԱՒԵՐԱՑՈՒԱԾ

Մոսկուայէն կը հաղորդեն թէ վաւերացուած է ոչ – յարձակողական դաշնագիրը, որ կնքուած էր Ռուսիոյ եւ Ֆինլանտայի միջեւ։ Եւ վաւերացման թուականէն սկսեալ, ի զօրու կը համարուի այդ դաշնագիրը։

ՊՈԼԻՎԻՈՅ ՓԱՐԱԿՈՒԷՅԻ ՎԷՅԸ ՀԱՐԹՈՒԱԾ

Հարաւային Ամերիկայի չէզոք պետութիւնները տնտեսական ճնշումի ենթարկած էին Պոլիվիան, որ կը սպառնար խանգարել խաղաղութիւնը՝ յարձակելով Փարակուէյի վրայ։ Այս ճնշման տակ, Պոլիվիա տեղի տուաւ եւ հրաժարեցաւ պատերազմէն, իրրեւ զոհացում ստանալով առժամապէս զրաւման տակ պահել Փարակուէյի երեք ամրոցները, որոնք արդէն կը գտնուէին իր զինուորներուն ձեռքը։

ԱՆԳՈՐԾ ՄՏԱՒՈՐԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Աշխատանքի նախարար Տալիմիէ հանրապետութեան նախագահին վաւերացման ենթարկեց օրինագիծ մը, որ կը հրահանգէ նպաստի մնաւելիներհաստատել Ֆրանսացի մտաւորական անգործ աշխատաւորներուն համար։ Մտաւորական աշխատաւորներն են նկարիչները, արձանագործները, գրողները եւ ուսուցիչները։

"ՅԱՌԱՋ"Ի ՀԱՐՑԱՐԱՆԸ
Իմքնութեան թուղթերու շուրջ

Մեր թղթակիցները վերջերս սկսան աւելի մուք եւ յուսահատական գոյներու տակ ներկայացնել փրանսաբնակ բազմաթիւ Հայերու իմքնութեան թուղթի հարցը։ Իրարու յաջորդող դէպքերը ցոյց կուտան թէ ըսուածներուն մէջ ոչ միայն չափազանցութիւն չկայ, այլ նոյն իսկ մեր մամուլը եւ ազգային մարմինները կացութեան ծանրութիւնը չափելու համար չունին որոշ տուեալներ։ Կարծուածէն շատ աւելի մեծ է թիւը փրանսաբնակ հայ ընտանիքներուն եւ անհատներուն որոնք աւելի մատնուած են կամ կրնան մատնուիլ մէկ օրէն միւսը։

Որ եւ է դարման թելադրելէ առաջ պէտք կը զգանք կարելի եղածին չափ ընդարձակ տեղեկութիւն ունենալ իմքնութեան թուղթերու հարցին շուրջ։ Պէտք են թուանշաններ եւ մանրամասնութիւններ։

Կը հրաւիրենք մեր բոլոր թղթակիցները, ազգային մարմինները եւ ընթերցողները որոնք կը հետաքրքրուին այս ցաւոտ խնդրով, պատրաստել ցանկ մը հետեւեալ գլուխներով։

1— Ձեր շրջանին կամ ծանօթներու շրջանակին մէջ «անկանոն» վիճակի մէջ գտնուողներու անուն, մականուն։

2— Նշանակել իւրաքանչիւրին անկանոնութեան ձեւը, այսինքն՝

ա) Ինքնութեան թուղթ բնաւ չունեցողներ։

բ) «Վիզա»ի թուղթ ունեցողներ։

գ) 100 ֆրանքնոց թուղթ ունեցողներ որոնք աշխատելու իրաւունքէ զրկուած են։

դ) Արտաքսման թուղթ ստացողներ եւ պատճառը։

3— Քանի տարիէ ի վեր Ֆրանսա բնակիլը։

4— Եթէ «գնոթրաթ»ով եկած է, «գնոթրաթ»ին պայմանաժամը, ո՞ր տեղին եւ ո՞ր գործին համար եկած ըլլալը։

Այս հարցով պէտք է հետաքրքրուին ամէնէն առաջ անոնք որ անկանոն իմքնութեան թուղթեր ունին։ Իրենցմէ ալ կը սպասենք որ փութաքեամբ պատրաստել վերոյիշեալ հարցարանը եւ հասցնել մեզի, առանց սպասելու որ ուրիշներ խորհին եւ գործեն իրենց համար։

Ուշադրութիւն

Գաւառէն շատեր մեզի կը գրկեն, մեր հարցարանին իրրեւ պատասխան, իրենց ինքնութեան առժամեայ թուղթերը եւ ուրիշ վաւերաթուղթեր։

Կը խնդրուի, — բան չգրկել մեզի, նոյն իսկ ոչրմամանտէ, եթէ չէք ուզեր որ կորսուին։

Եւ յետոյ, շատեր Փարիզէն, անձամբ խմբագրատուն կուգան, «կարգադրելու» իրենց խնդիրը։

Կը յայտարարենք, որ աւելորդ է գալ խմբագրատուն։

Մեր ուղածն է «անկանոն» թուղթ ունեցողներուն անունը, մականունը, իրենց պարագաները, ուրկէ գալը, ինչ տեսակ թուղթ ունենալը։ Այսքան։ Բոլոր այս կէտերը գրաւոր, կարճ եւ ամփոփ, ղրկել մեզի։

ՀԱՅՐԵՆԻ ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐ

(ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆԸ)

Հայաստան Բնական եւ քաղաքական

Բ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

ԱԿՆ.— Լեռան մը կողին վրայ զետնածիծաղ այգիներով եւ պարտէզներով շրջապատուած նկարչագեղ քաղաք։ Կը գտնուի Եփրատի ձախ ափին վրայ։

ԱՐԱԲԿԻՐ.— Մշակուած դաշտի մը վրայ վաճառաշահ քաղաք, զոր Ցուլոց Վասիլ կայսրը Սեբաստիա քաղաքին հետ միասին տուաւ Սենեքերիմ Թագաւորին, որուն իշխանները նորոգեցին ու մեծցուցին զայն։

Կան նաեւ Մեծկերտ, Բինկեաճ, Կամարակապ, Ապուչեխ եւ Զմշկածագ։ Վերջինը բիւզանդական հայ կայսր Յովհաննէս Զմշկիկի անունով կոչուած է։ Հին անունն էր Ցերապոլիս (սրբազան քաղաք = Hierapolis)։

ՏԻԱՐՊԱԿԻՐ (Ամիդ).— Տիգրիսի ձերքը։ Ունի հսկայ պարիսպներ, աւերակներ եւ միջնաբերդ։ Կը գտնուի Մեծ – Հայքի Մուկիք գաւառին մէջ։

Այս քաղաքը գրաւուած է Պարսից Սափոր Թագաւորին կողմէ Քրիստոսի 359 թիւին։

Ոմանք Տիարպէքիրը համարձիչ նկատած են Տիգրանակերտի, ինչ որ բոլորովին սխալ է։ Առաջինը ներկայիս գոյութիւն ունի, մինչ երկրորդը աւերակ է եւ շատ հեռու կը գտնուի առաջինէն։

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ (Ֆարղին).— Մաֆիոս եւ Նպատ լեռներուն միջեւ։ Տաբածուած հովիտի մը մէջ հին քաղաք որ լաւ ամրացած էր։

Տիգրանակերտ հիմնուած է Մեծն – Տիգրանի կողմէ եւ իր բնակչութեան գլխաւոր մասը կազմած են Մակեդոնացիները եւ Կապադովկիացի ու Կիլիկեցի Յոյները, որոնք բռնի կերպով բերուած են հոն։ Բայց Տիգրան անոյ պարիսպներուն տակ Հռոմայեցի Լուկուլլոս զօրավարէն յաղթուելով՝ անոնք արտօնուած են իրենց տեղերը վերադառնալու։

Տիգրանակերտ կոչուած է նաեւ Յուստինիանուպոլիս, բիւզանդական կայսր Յուստինիանոսի կառուցած պարիսպներուն եւ ամրութիւններուն պատճառաւ։

ԲԱԼՈՒ.— Զորբորդ – Հայքի Բալահովիտ գաւառին մէջ եփրատ գետի վրայ հին քաղաք։ Մօտը կայ Գաղցրահայեաց Ս. Աստուածածնի վանքը։ Իսկ հիւսիսային կողմը կը բարձրանայ Ս. Մեսրոպայ լեռը՝ չուրջ 1033 մեդր բարձրութեամբ, որուն քարայրներէն մէկուն մէջ իրը թէ Ս. Մեսրոպ ճգնած եւ հայ գրերը գտած է։

Ունի չքեղ անտառներ։

Ճիչուելու արժանի են Մծրին (Նիսիպին), որ Արշակունեաց մայրաքաղաք եղած եւ ունեցած է հոծ բնակչութիւն։ Այժմ գրեթէ աւերակ, ուր կ'ևրեւի տակաւին Ս. Յակոբայ եկեղեցին՝ մասամբ հողաթաղ։ Արղանա, որուն արեւելեան կողմը՝ Տիգրիսի եւ Արղանա գետերուն իրար խառնուած տեղը տակաւին կանգուն կը մնայ հայ պատմութեան մէջ ծանօթ Անգղ աւանը իր բերդովը։ Այս աւանին մէջ կը գտնուէին Արշակունի թագաւորներէն ոմանց գերեզմանը։ Գաւառը կը կոչուէր Անգեղատուն, որ կը գտնուի Զորբորդ – Հայքի մէջ։

ԲԱՂԷՇ (Պիթլիս).— Պատմական Աղձնիք նահանգի Սալնոյ Զոր կամ Սալնաձոր գաւառին մէջ վանայ ծովին հարաւային արեւմտեան կողմը ղուարճալի պարտէզներով եւ Հանքային ջուրերով նշանաւոր քաղաք։ Ունի առողջարար օդ եւ շատ գեղեցիկ դիրք։

Իր բազմաթիւ վանքերուն մէջ յիշուելու արժանի է Ամրորդոյ Ս. Յովհաննէսի վանքը, որ նշանաւոր էր իր թանկարժէք հայ ձեռագիրներու ճոխ հաւաքածոյովը, որ աւա՛ղ, խաչատարագ կորսուած կամ փճացած է 1915ի առաւոտ Ջարդերու եւ տեղահանութիւններու միջոցին (*)։

ՄՈՒՇ.— Սառնոյ լերան հիւսիսային ստորոտը պատմական Տարօնի (այժմ Ջրաբերի ու բարեբեր Մշոյ դաշտ) կեդրոնը նշանաւոր քաղաք, որ շրջապատուած է այգիներով ու պտղատու ծառերով։

Նոյն դաշտի մէջ՝ Մուշի մօտ կը գտնուի պատմական Աշտիշատ քաղաքը, որ այժմ կ'ըսուի Ս. Սահակ կամ Տէրզ եւ կառուցուած է Քարքէ լեռան կողին վրայ։

ՅՈՎՀ. ՊԱՊԻԱՆ

(Շար.)



ՏԻԱՐՊԷՔԻՐ

(*) Նոյն ճակատագիրը ունեցած են Հայաստանի մէկ ծայրէն միւսը վանքերու եւ եկեղեցիներու մէջ պահուած հնադարեան խիստ թանկարժէք բազմահազար հայ ձեռագիրները, որոնց նմոյշները կարելի է տեսնել Երուսաղէմի, Էջմիածնի, Վենետիկի եւ Վիեննայի հայ մատենադարաններուն մէջ։

Կարդացէք եւ Տարածեցէք «ՅԱՌԱՋ»ը

Ց.



Գ.

Գաւառ

ՄԱՐՍԷՅԼԻ Պատ. Միութեան վարչութիւնը խառն ժողովի կը հրաւիրէ քաղաքի, Պուլվ. Օսմօի եւ Սէն Լուի Պատանեկան միութիւններու բոլոր անդամները վաղը Կիրակի իրիկուն ժամը 8.30ին, 63 բիս, տը լա Րէփիւպլիքի սրահը։ Կարեւոր օրակարգ։ Պարտաւորիչ ներկայութիւն։

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ ԽԱՆԱՍՈՐԻ ԱՐՇԱԻԱՆՔԻ ՏԱՐԵԴԱՐՁԻՆԱՒՈՐԻՒ

ԱՐԺԱՆԹԻՕՅԻ ԱՆՏԱՌԻՆ ՄԷՋ

Կազմակերպած Հ. Յ. Դ. ԶԻՅՈՒՆ ԿՈՄԻՏԷԻ ԿՈՂՄԷ

Վաղը Կիրակի առաւօտնէ մինչեւ իրիկուն

Դեղեցիկ ժամանց, անակնկալներ, պար եւ նուագ, ճոխ պիւֆէ

կը նախագահէ Ընկ. ԿՈԹՈՂԵԱՆ

կը մասնակցի *ՆՓՐԱՏ* նուագախումբը

Հաղորդակց. միջոցներ.— Կառ. Սէն Լազարէն առնել շոգեկառք եւ իջնել կառ. տ'Արժանթէօյ։ Հանրակառք Մատլէնէն թիւ 40 իջնել կար Արժանթէօյ։

Հանդէս Մեծ Լուի մէջ

Սէն Լուի (Մարսէյլ) Հ. Յ. Դ. Պատ. Միութեան տարեկան հանդէսը տեղի կ'ունենայ Վաղը Կիրակի։ Կը խնդրուի բոլոր կազմակերպութիւններէն նկատի ունենալ այդ թուականը։ Մանրամասնութիւնները առանձին յայտագրով։

ԴԱՇՏԱՊԱՐԱՀԱՆԴԷՍ ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ՄԱՐՍԷՅԼԻ ՀԱՑ Կ. ԽՈՉԻ ԿՈՂՄԷ

Վաղը Կիրակի, առաւօտէն մինչեւ իրիկուն,

Route Château Gombert, Campagne La Baronne*ի մէջ*

Առաւօտ՝ սկաւտական մարզանքներ, վարդավառեան Հայկական խաղեր՝ Հայ Արիներու կողմէ, փարիզէն հասնող իրենց խումբերու մասնակցութեամբ)։ Կէսօրէ վերջ՝ ժամը 2.30ին կը սկսի գեղարուեստական բաժինը՝ դեկավարութեամբ արուեստագէտ Պ. Մ. Մաթուխեանի։ Բանախօսութիւն, երգ եւ գուգերգ, արտասանութիւն, նուագ, պզտիկ աղջիկներու պար (ռուսական վինկէրքա)։ Հայկական հարսանիք, շարժանկարում։

Եւրոպական պարերը կը սկսին ժամը 4.30ին։

Հաղորդ. միջոց.— Առնել 5 թիւ հանրակառքը, որ Սէն Ժէոմէն վեր, Շաթօ Կոմպէյը չի հասած, կը կենայ նոյն ազարակին (Գըմպըլեաններու) դրան առջեւ։

Ճաշը միասին քերել, ըմպելիքը կը հայթայթուի տեղւոյն վրայ։

Մ ու տ ք ը 5 ֆ ր ա ն ք

ԴԵՐԱՍԱՆ Մ. ՄԱՐՈՒՔԵԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ

Լ Ի Ո Ն.— Օգոստոս 20ին Էմիլ Զօլա թատերասրահին մէջ երեկոյեան 8.30ին՝ Ղեկավարութեամբ Մ. ՄԱՐՈՒՔԵԱՆԻ, մասնակցութեամբ՝ երգչուհի-դերասանուհի Տիկ. Ե. ԲԱՌԱԼԻ (Փարիզէն), ինչպէս նաեւ Պ. ԹՐԱԳՕՇԻ (Լիոնէն) եւ Վ. ՏԷՐ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ (Մարսէյլէն)։

կը ներկայացուի՝ ՕԹԵԼԼՕ

Տոմսերու գիները սովորական են

ՄԱՆՕՔ.— Սեպտ. 17ին փարիզի մէջ պիտի ներկայացնէ «*Բ Ո Ռ*»ը, Société Savantesի սրահին մէջ։

Պուա Քոլոնպի մէջ «Ցաւաջ» կը ծախուի

Պ. ԱՌԱՔԵԼԵԱՆԻ *տճառանիի մէջ*

CAFE ARARAT

345 Ave. Argenteuil, Bois-Colombes

Տէսիլի մէջ «Ցաւաջ»ի գործակալն է

Պ. ՎԱՀԱՆ ՀԻՒՍԵԱՆ

41, Maison l'Aurore, DÉCINES, (Isère)

ՃԱՇԱՐԱՆ CAUCASE

23 Rue de la Huchette, Métro St. Michel

Ռուսական եւ արեւելեան հասեղ կերակուրներ՝ պատրաստուած յայտնի խոհարարներու կողմէ։

Ճաշի միջոցին անընդհատ նուագ

Prix Fixe — 4 պնակ կերակուր՝ 6 ֆրանք

Հ. Յ. Դ. Լիոնի կոմիտէն իր ցաւակցութիւնները կը յայտնէ ընկ. Շաւարշ Խաչատուրեանի եւ իր պարագաներուն՝ իրենց եղբօր՝ ԿԱՅԾԱԿ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆի դառնաղէտ ժամուան առթիւ։

ՑՈՒՇԱՏԵՏՒ

ԻՍԻ ԼԷ ՄՈՒԼԻՆՕԻ Ցիրանահայ կարմիր հաչէի ընդհ. ժողովը վաղը Շաբաթ իրիկուն ժամը 8.30ին ծանօթ հաւաքատեղին։ Կարեւոր օրակարգ։

*ՄԱՐՍԻԼՅԱԲՆԱԿ Պոլսեցիներու ժայր դիւանը կը խնդրէ իր բոլոր անդամ եւ անդամուհիներէն անպայման ներկայ գտնուիլ տարեկան ընդհ. ժողովին, որ պիտի գումարուի վաղը Կիրակի օր, ժամը 2ին Canebiere No. 81, Grand Café Noailles*ի *մասնաւոր սրահին մէջ Օրակարգ՝ եռամսեայ հաշուետուութիւն եւ նոր վարչութեան ընտրութիւն։*

ՆԱՄԱԿԱՏՈՒԻՓ

ՍՏԱՑՈՂ

Գալատեան, 35։
Նէօյեի, Մ. Տ. Ս.— 150։
Փարիզ, Ռ. եղբ.— 70։
Վիէն, Պ. Մ.— 70։

ՀՐԱՒԷՐ

Շաւիլի եւ շրջականերու եկեղեցական կրթական վարչական ժողովս ի գիտութիւն բարեպաշտ ժողովրդեան՝ պարտք կը զգայ յայտարարել թէ, Օգոստոս 15, յոյսով Լեռնային երկուշաբթի օր, վերափոխման Ս. Աստուածածնայ մեծ տօնի օր, մանկապարտէզի սրահին մէջ (Ave. Ville d'Avray 20), Ս. պատարագի ժամուցմամբ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի ի հանգիստ հոգւոց կամօքն Ննջեցելոց Ազգիս Հայոց։

Կը հրաւիրեմք հոգեկէր ժողովուրդը նոյն օրը ներկայ ըլլալ եւ հոգեպէս մխիթարուիլ.

Յաւարտ Ս. պատարագի խաղողի օրհնութիւն։

Սկիզբ ժամերգութեան ի ժամ 9, սկիզբ պատարագի ի ժամ 10։

Վարչութիւն

ՇԱՀԱԽՈՐ ԱՌԻԹ ՄԸ

ՇՆԱՒՈՒ է Իսի-լէ-Մուլինօի կայարանին մօտ պօնթերրիի խանութը, ժէջը գտնուած ապրանքներով կամ առանձին, իրաւունք կայ որեէ առեւտրական գործի։ Միասին կը տրուի նաեւ գեղեցիկ յարկաբաժին մը երկու սենեակ, խոհանոց, եւալլն։ Մանրամասնութեանց համար զիմել ամէն օր կէսօրէ վերջ ժամը 2.30էն յետոյ Պ. Գաբրիէլ Գարաեանի, 75 Ave. de Verdun, Issy les Moulineaux, Seine.

ԼՈՑՄ ՏԵՍԱՒ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

Նուիրուած Ապրիլեան հերոսամարտի *15*ամեակին, հրատարակութիւն վասպուրականի Հայրենակցական Միութեան (Թաւրիզ)։

415 մեծադիր էջ, երկսիւն բազմաթիւ նկարներով եւ քարտէսներով։ Ցալուած վենետիկ։


Գին *75* ֆրանք։

Զիմել ԳՐԱՏՈՒՆ ՀՐԱՆՏ - ՍԱՄՈՒԷԼ, *51 rue Monsieur-le'Prince, Paris(6)*։

ՆԷՕՅԵԻ ՍԻՒՒ - ՍԷՆԻ ՄԷՋ ՎԱՐՁՈՒ ԵՆ

Pont de Neuilly *եւ Պուա տը Պուլօնեի ժամ, տակաւին վարձու են քանի մը դեղեցիկ յարկաբաժիններ՝ ամէն յարմարութիւններով. 3 եւ 4 փիէս 10 - 15,000 ֆր., 5 փիէս 15 - 20,000 ֆրանք հասնելու յարկաբաժիններու։ Մեծ խոհանոց, ճերմակեղէններու պահարան, հանդերձարան, ծառաներու համար խոհանոց եւ սենեակ, կեդրոնական ջեռուցիչ, վերելակ։ Ինքնաշարժի յատուկ տեղ (Պօքս)։ Զիմել՝ տեղւոյն վրայ 9 եւ 9bis* Rue Casimir Pinel *եւ* 11 Bld. de la Seine։ *Մանրամասնութեանց համար զիմել՝* M. Verdonnet, 68 Rue Boursault, Paris (17), *հեռաձայն՝* Marcadet 56-63։ *Փափաքողներու կը ղրկուի շէնքին պատկերազարդ զրքոյկը։*

Կարի յատուկ մօքհօրներ



1/15 ձիու ուժ մօթէօր եւ ըլսօսաճ 300 ֆրանք
1/8 » » » » 350 ֆրանք

Ձիան եւ հաստատուն, երկու տարուան երաշխաւորութեան վկայականն, պահանջեցէք մեր ներկայացուցիչը։

HOVHANESSIAN ingénieur

15 rue de Vienne, Paris (8)

Կ'ընդունինք Ջորեքշաբթի եւ Շաբաթ կէսօրէ եառ ժամը 3.5։

Վարձու խանութ

Լուսաւոր, կազ, ելեկտրականութիւն, առանց ըմբրիգի, յարմար դերձակի, սափրիչի, կօշկակարի եւ ամէն առեւտրական գործի համար։ Դիւրամատչելի պայմաններ։ Դիմել տէր-ցակոբեան տպարան, *17* rue Damesme, մէթրօ Թօլպիաք։

Ուշադրութիւն

Լիոնի Հ. Յ. Դ. Ժողովրդային Կրադարանը ստացած է հետեւեալ նոր հրատարակութիւնները.—

Արծակ էջեր եւ հեքեաթներ՝ *Զարդարեան*, Պանդուխտի կեանքէն՝ *Հրանտ*, *Գեղամ Տ. Կարապետեանի* ցարսնի աշխարհը, *Գեղամ Բարսեղեանի* Ամբողջական գործը, *Ա. Արփիարեանի* Ամբողջական գործը, *Գրիգոր Զոհրապի* ցանօթ դէպքեր եւ պատմուածքները, *Մ. Վարանդեանի* Մուրատը, *Պերճուհիին* փոթորիկէն վերջը, *Ռէնի* գնդակահարուածները, *Վազգէն Շուշանեանի* Ամրան գիշերները, *Հ. Զուտերժանի* Լուսաճ ջրադացը, Պէնհուրը։

Գրադարանը բաց է ամէն օր ժամը 7.30էն 9ը, բացի Շաբաթ-Կիրակի։

Imp. A. DER (Agopian)
7, Rue Damesme, Paris (13)
Le Gérant H. STEPHAN

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԵՒ ՃԱՐՏԱՐԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ԵԹԷ կ'ուզէք ձեր գործի տետրակները կանոնաւորել՝ ճշդիւթիւն ու կանոնաւոր տոմարական հաշիւներով մը եւ ձեր հաշիւները տարուան վերջին օրէնքներուն հետ։

ԵԹԷ դատակոչեր ստացած էք huissierներէ։

ԵԹԷ պարտաճանաչութիւններ ունիք շարադրելիք կամ կնքելիք։

ԵԹԷ կ'ուզէք հաշիւի կարգադրութիւն մը կամ ժամանակաւրէնքները սորվիլ։

ԿՐՆԱՄ ՃԵՃԻ ԱՄԵՆԱԱՐԱԳ ԿԵՐՊՈՎ ԳՈՀԱՑՆԵԼ

Դիմեցէ՛ք **Պ. ՓԱՐՄԱԳ**ի, 28, Bld. de Strasbourg, **Paris** (X). Tél. Botzaris 17.64

որ կ'ընդունի ամէն օր ժամը 9էն 12, եւ կամ ժամադրութեամբ իր գրասենեակներուն մէջ։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ, կեանքը, Թ. Ազատեան 15 ֆրանք, *ՇԱՒՕՔ ԴԷՐ ՈՒ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ*, Դ. Զօհրապ 20, *ՆԱՀԱՏԱԿ ԳՐՈՂՆԵՐ* (Տ. Չ. կիւրեան եւ Թ. Սեւակ), Ա. Սեւան 15, *ԱՐՇԻՒՈՆ ՃԱՄԲԱՆ*, Մանկիկ Պերպէրեան 10, *ՆՏՐԸ*, էրիխ Մարիա Ռեմարք 20, *ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆԻ ՄՏՔԵՐԸ*, Քիպլեան 10, *ՆԵՆԹԸ եւ ՋԱԼԱԼԷՏՏԻՆ*՝ Բաֆֆի 25, *ՎԱԼԱՆԹԻՆ*, Ժորժ Սան 20, *ԹԻՐՔԱՆՕ*, (Բիւզանդիոնի կայսրուհին) 25, *ԱՊՐՈՒՄՆԵՐ*, Մալխաս 30, *ԳՆԴԱԿԱՀԱՐՈՒԱԾՆԵՐԸ*, Ռէնի 20, *ԵՐԵՔ ԸՆԿԵՐՆԵՐԸ*, Պ. Մելոյեան 10, *ԼԻՒՍ ՀԱՆԸՄ*, Ե. Օտեան 2 հատոր 30 ֆր., *ԺԻՏԷՔՈՒ ԵՒ ԺՈՒԼԻՆ*, Ա. Նէտ 2 հատոր 65 ֆր., *ՍԻՄՕՆ ՓԻՒՂԻՒԱՆ* 25, *ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ԱՂՋԻԿԸ*, սիմ 2 հատոր 25, *ՐԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ*, Յ. Ալոեան (Թոգլեան 12.50, *ՏԱՒԻՂ ԵՒՈՂԵԱՆ*, Գ. Կաւաթեանց 20, *ԱՐԵՒԵԼՔԷՆ ԱՐԵՒՄՈՒՏՔ*, Ռստանիկ 5, QUATRE CONFÉRENCES SUR L'ARMÉNIE, Fr. Macler 35, LES RIRES D'UNE CHEMEUSE DE SERPENTS, Armen Ohanian 15.

Զիմել՝ ԳՐԱՏՈՒՆ ՀՐԱՆՏ - ՍԱՄՈՒԷԼ, 51 rue Monsieur-le-Prince, Tél. Danton 88-65, *ուր կը գտնէք նաեւ զիրանոերէն եւ հայերէն ամէն տեսակ գրքեր։*

ASSOUAD et KOKORIAN

56 Rue du Fbg. Poissonnière, PARIS (10)

Tél. Provence 52—15

ՄԵԾԱՔԱՆԱԿ *ԿԷՍ ՄԵԾԱՔԱՆԱԿ* *ՓՈՔՐԱՔԱՆԱԿ*

Կը ճախենք քրէպ տը շին (մէթրով), ժիւփեր, ռոպեր, քորսաներ, քրէպ տը շինէ, արուեստական մետաքսէ եւ բուրդէ էշարփներ։ Լաւագոյն ապրանքներ ամէնէն ժամանակաւոր գիներով։

Հրաւէր բոլոր փափկաճաշակներուն

ճաշարան Գ. Ա. Ր. Լ. Օ

34 Rue St. Lazare, Paris (9)

Արեւելեան եւ եւրոպական համեղ եւ խնամուած կերակուրներ

Գիները շատ դիւրամատչելի, արագ եւ անթերի սպասարկութիւն

Մի մոռնաք իր անուանի մածունը

Հայերու ժամադրավայրը

ճաշարան Ֆ Լ Օ Ր Ի Ա

61 Rue Monsieur le Prince, PARIS (6e)

Մէթրօ Օտէօն եւ սէն Միշէլ — Հեռաձայն Danton 52—73

Արեւելեան եւ եւրոպական խնամուած կերակուրներ

CABINET V. YARJANIAN

JURISCONSULTE

54, Rue La Fayette, Paris (9) (Métro Cadet) Tél. PROVENCE 87-5

Կ'ստանձնէ Առեւտրական, Պատժական, Քաղաքային ամէն տեսակ դատեր։ Իրաւագիտական խորհրդակցութիւններ, բոլոր դատական եւ վարչական գործերու համար, գրաւոր կամ բերանացի։ Նախարարութեանց եւ բոլոր պաշտօնատուններու մօտ վարչական եւ իրաւական դիմումներ։ Հայ առեւտրականներու եւ անհատներու մասնաւոր դիւրութիւններ պատուաւէն վճարման համար նկատի առնելով ներկայ տնտեսական տագնապը։ Մասնաւոր սպասարկութիւն քաղաքային եւ կրօնական ամուսնալուծման դատերու համար։ Արագութիւն եւ գաղտնապահութիւն։ Դիմեցէք եւ պիտի գտնէք ամէն գոհացում։ Գաւառներէն եւ արտասահմանէն եղած դիմումներուն կը պատասխանուի անմիջապէս։

Բ Ո Ռ

(ՎԷՊ 1830Ի ԻՏԱԼԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՕՐԵՐԷՆ)

Հեղինակ՝ Է. ՎՈՑՆԻՉ — Թարգմ. Լ. ՇԱՆԹ

— Օգոստոսի մօտակիներէն էլ անտանելի են։ Մարդ մի վայրկեան հանդիստ չունի զրանց ձեռքից։ Ուր էլ գնաս, եւսեւիցդ մի լրտես է քաշ գալիս. նոյն իսկ սարերում, ուր առաջ չէին համարձակում մտցնել, հիմա երեքը – չորսը միասին են երեւում։ Այնպէս չէ՞. Ջինո։ Հէնց դրա համար էլ վճռեցինք, որ դու ու Դոմինիկօն քաղաքում իրար հանդիպէք։

— Լաւ, բայց ինչո՞ւ Բրնդիկէլլա։ Սահմանադիծի քաղաք է, մէլա լրտեսներով լիքը։

—Բրնդիկէլլան այժմ խիստ յարմար տեղ է. այժմ այնտեղ են հաւաքւում ուխտաւորները Իտալիայի բոլոր կողմերից։

— Բայց չէ՞ որ այդ քաղաքը քէերի ճամբին է։

— Այնտեղից մօտիկ է Հռոմը. բայց դէպ ի արեւելք զնացողներից շատերն էլ մի պատյտ են անում՝ այնտեղ պատարագին ներկայ լինելու համար։

— Ես չեմ խմացել, որ Բրնդիկէլլայում այդպէս մի մասնաւոր բան կայ։

— Այնտեղ է ապրում կարդինալը։

— Ձէ՞ք յիշում, ինչպէս քարոզում էր նա Ֆլօրենցայում դեկտեմբերին։ Այդ նոյն կարդինալ Մօնտանէլլին է, որ կարծեմ մեծ իրաբանցում էր առաջ բերել այնտեղ։

— Այո, կարծեմ, բայց ես քարոզի չեմ զնում։

— Սակայն խակական սուրբի համբաւ ունի։

— Ինչո՞վ է ստեղծել այդ համբաւը։

— Զգիտեմ։ Երեւի նրանով որ իր բոլոր ոռճիկը բաժանում է աղքատներին ու ինքը ապրում է գիւղական քահանայի նման տարին 4—5 հարիւր ոսկով։

— Ձէ՞։ — առարկեց Ջինօն։ — Մեծ այդ չէ։ Ոչ մէկից իր վրդն է տալիս, այլ ամբողջ կեանքը անց է կացնում խեղճերն ու հիւանդները հոգալով։ Առաւօտից մինչեւ երեկոյ խնդրող խնդրողի վրայ է գալիս։ Ես էլ. Մի քէչ էլ, ձեղնից պակաս չեմ ատում հոգեւորականներին, միայն սրբազան Մօնտանէլլին բնաւ նման չէ միւս կարդինալներին։

— Ձի՞շդ է, նա աւելի յիմար է, քան սրիկա. — առարկեց Միքէլլէն։

— Այսպէս թէ այնպէս, ամէնքը խելքից գնում են նրա համար, եւ ուխտաւորները սովորաբար մի ոլոր են անում ու գալիս նրա օրհնութիւնը առնելու։ Դոմինիկօն մտադիր է այնտեղ գնալ վաճառականի հագուստով մի տուփ ածան խաչեր ու համրիչներ վրդն։ Այդ իրերը այնտեղ սիրով են գնում ու խնդրում են կարդինալին, որ ձեռք դպցնի. վերջը կախում են երախաների վզիկից, որ չար աչքի չդան։

— Սպասեցէք։ Իսկ ե՞ս ինչպէս եմ դնալու։ Ուխտաւորի՞ հագուստով։ Իմ այս հագուստս բաւական յարմար է, միայն կարծեմ լաւ չէ այնտեղ էլ այստեղ էլ նոյն հագուստով երեւամ։ Դա էլ մի պատճառ է անում՝ այնտեղ պատարագին ներկայ լինելու համար։

— Ես չեմ խմացել, որ Բրնդիկէլլայում այդպէս մի մասնաւոր բան կայ։

— Այնտեղ է ապրում կարդինալը։

— Ձէ՞ք յիշում, ինչպէս քարոզում էր նա Ֆլօրենցայում դեկտեմբերին։ Այդ նոյն կարդինալ Մօնտանէլլին է, որ կարծեմ մեծ իրաբանցում էր առաջ բերել այնտեղ։

— Այո, կարծեմ, բայց ես քարոզի չեմ զնում։

— Սակայն խակական սուրբի համբաւ ունի։

— Ինչո՞վ է ստեղծել այդ համբաւը։

— Զգիտեմ։ Երեւի նրանով որ իր բոլոր ոռճիկը բաժանում է աղքատներին ու ինքը ապրում է գիւղական քահանայի նման տարին 4—5 հարիւր ոսկով։

— Ձէ՞։ — առարկեց Ջինօն։ — Մեծ այդ չէ։ Ոչ մէկից իր վրդն է տալիս, այլ ամբողջ կեանքը անց է կացնում խեղճերն ու հիւանդները հոգալով։ Առաւօտից մինչեւ երեկոյ խնդրող խնդրողի վրայ է գալիս։ Ես էլ. Մի քէչ էլ, ձեղնից պակաս չեմ ատում հոգեւորականներին, միայն սրբազան Մօնտանէլլին բնաւ նման չէ միւս կարդինալներին

LE SEUL QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

ՀԱՅՐԱՆԴ

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : Sch. Missakian
Rédaction & Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

17, Rue Damesme PARIS (13e)
Téléphone : Glacière 15-70

(ԵՐԹԵԻԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro: TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ,—

	ՏԱՐԵԿԱՆ	ՎԵՑԱՄՍԵԱՅ	ԵՌԱՄՍԵԱՅ
Ֆրանսա եւ գաղութներ	140 ֆրանք	70 ֆրանք	35 ֆր.
Անգլիա, Եգիպտոս, Զուիցերիա, Իտալիա	250 »	130 »	—
Ամերիկա	8 տոլար	5 տոլար	—
Ուրիշ երկիրներ	200 ֆրանք	100 ֆրանք	—

ԿԻՐԱԿԻ
14
ՕԳՈՍՏՈՍ
1932
14 AOUT
1932

Ը. ՏԱՐԻ ԹԻԻ 1937 — ԽՄԲագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ — ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Շարունակենք ամփոփ պատկերացումը, երկրի այլ հարստութիւններուն:

Հայաստանի պէմզան (չեչաքարը), բնական մեծ հարստութիւն մը կրնայ նկատուիլ, եթէ օգտագործուի ապակիի արտադրութեան համար: Ժամանակին չեչաքարը կը գործածուէր միայն մեքենաներու մասերը յղկելու: Այժմ պէմզան մեծ չահով եւ լայնօրէն կը գործածուի ապակիի եւ շինարարական արդիւնաբերութեան մէջ:

Ըստ մասնագէտ յօդուածագրի տեղեկատուութեան պէմզան մինչեւ այժմ կը ստացուէր գլխաւորաբար Իտալիայէն: Խորհրդային Միութեան երկիրներէն միայն Հայաստան ունի պէմզա եւ այն ալ այնպիսի մեծ քանակութեամբ, որ աշխարհի ոչ մէկ երկիր կրնայ մրցիլ անոր հետ: Հայաստանի պէմզայի մէկ առաւելութիւնն ալ այն է, որ ան ունի այլազան գոյներ եւ քիմիական տարբեր բաղադրութիւն:

«Դեռ 1927ին Հայաստանի Ժողտնտխորհը ծրագրած էր հիմնել ապակու գործարան: Ամէն ինչ կը խօսէր յօդուտ ծրագրի յաջողութեան: Առատ եւ ընտիր նախանիւթ, աժան ելեքտրական ուժ, ապակու մեծ պահանջ: Պէմզայի օրինակները ղրկուած էին Թուլսատանի չարք մը տարրալուծարաններ ու ապակիի գործարաններու մէջ պէմզայի հալելու փորձերը կատարուած են նաեւ ու քարածուխի վառելիքով, իսկ Հայաստանի մէջ կ'ենթադրուէր հալեցնել ելեքտրականութեամբ, մինչդեռ, իբր թէ, էլեքտրականութեամբ հալելու ձեւը յայտնի չէ Խորհրդային Միութեան մէջ»:

Ահա, այսպէս, Հայաստանը իր անսպառ պէմզան չի կրնար օգտագործել, (գոնէ առ այժմ), մինչ անդին Վրաստանը այս գետնին վրայ ալ անշեղ կը մնայ լճնինեան ուղիղ գծին:

Քանի մը խօսք Սեւանի ջուրերու օգտագործման եւ բաշխման մասին: Ահա այդ խնդրի համառօտ պատկերացումը համաձայն յիշեալ յօդուածագրին:

Մօտ երեսուն տարի առաջ, ցարական կառավարութեան օրով, անգլիացի ճարտարագէտ Սուիւարտ կ'առաջարկէր Սեւանի ջուրը Գանձակի եւ Թիֆլիսի կարիքներուն ծառայեցնելու ծրագիրը: Պատերազմը արգելք եղաւ այդ ծրագրի իրագործման: Բայց հիմա տարբեր ձեւով, բոլշեւիկներն են որ առաջ կը քշեն Սուիւարտի գաղափարը:

Սեւանի խնդրի չուրջ այժմ կրքերը բաւական լարուած են: Հայաստանի տնտեսութեան նախանձախնդիր մարդիկ կը պաշտպանեն Սեւանի ջուրը Հայաստանին թողնելու միտքը, Թիֆլիսի ու Մոսկուան կ'ուզեն օգտագործել համամիութենական պահանջներու համար:

Այսպէս, Անդրկովկասի բամպակի կոմիտէի նախագահ Տոլստոպեատովը կ'առաջարկէ Սեւանի ջուրը Զանգուի միջոցով բաց թողնել Արաքս գետը եւ գործածել Ազրբէջանի բամպակի դաշտերու ոռոգման վրայ: Այս ծրագրի իրագործման պարագային, մասնագէտներու հաշուով, Հայաստանն առաջին հնգամեակին միայն էլեքտրական ուժի 30 միլիոն տոլարի կորուստ կ'ունենայ:

Ըստ մասնագէտ յօդուածագրի պնդման, Տոլստոպեատովի ծրագիրը ընդդիմութեան հանդիպած է ոչ միայն Հայաստանի, այլ նաեւ խորհրդային անտեսութեան նախանձախնդիր չարք մը հիմնարկութիւններու եւ անհատներու կողմէ: Այս վերջինները կը պահանջեն որ Սեւանի ջուրը օգտագործուի թէ ոռոգման եւ թէ էլեքտրականութեան համար: Այս ծրագրի համեմատ, կ'ենթադրուի Զանգու գետի վրայ չինել վեց խոշոր ելեքտրակայան, որմէ օգտագործուած ջուրը կ'երթայ Սարատարապատի եւ ուրիշ վայրերու ոռոգման:

Այս ծրագիրը ձախողեցնելու եւ իր առաջին ծրագիրը կրկին կեանքի մէջ կիրարկելու համար Տոլստոպեատովը այժմ կ'առաջարկէ Զանգուի վրայ միայն երկու ելեքտրակայան հիմնել եւ ջուրը թողնել Արաքսի մէջ՝ Մուղանի բամպակագաշտերը ջրելու համար: Այսինքն Սարատարապատը մնայ միշտ անապատ:

Բոլշեւիկեան տեսակէտով, Տոլստոպեատովը, ի հարկէ, հետեւողական է: Այդ հետեւողականութեան գոհ կ'երթայ Հայաստանը, որու վարիչները միշտ «պարտաւոր» են հետեւողական երեւնալ եւ գիջիլ: Իսկ բախտը միշտ ուրիշներուն կը ժպտի, որ իրագործման գործին մէջ իսկ հետեւողական գծի ախոյեանը կը ներկայանան:

Կ. Մ.

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

Գերմանիոյ ներքին կացութիւնը

Ֆոն Փափէն-Հիթլեր տեսակցութիւնը

Գերման վարչապետին եւ ազգայնական պետին միջեւ տեղի ունենալիք տեսակցութեան շատ մեծ կարեւորութիւն կուտան Պերլինի քաղաքական շրջանակներուն մէջ: Որովհետեւ իրօք, այս տեսակցութենէն կախում ունի Գերմանիոյ նախարարական տագնապին լուծումը: Այս տեսակցութիւնը պատրաստելու համար Հիթլերի թիկնապահներէն մէկ – երկուքը, հանդիպում մը ունեցած են Ֆոն Փափէնի եւ Շլայխերի հետ:

Կեդրոնի կուսակցութիւնը յայտներ էր թէ պատրաստ է հիթլերեաններուն հետ ապահովելու խորհրդարանական գործակցութիւն մը: Կեդրոնի այս յայտարարութիւնը մեծ ազդեցութիւն գործած է քաղաքական շրջանակներուն վրայ: Պարզ է թէ կեդրոնի այս որամադրութիւնը առանց պայմանի չէ: Եթէ չեն պահանջեր մէկ քանի նախարարութիւններ յատկացնել դահլիճին մէջ, սակայն, կը պահանջեն որ հիթլերեանները բացայայտ յանձնառութեան տակ մտնեն յարգելու Վայմարի Սահմանադրութիւնը եւ երկիրը կառավարելու համաձայն խորհրդարանական կարգերու:

— Դուք կարող էք գնաք, Բիանկա. ինձ ոչինչ հարկաւոր չէ:

Զէմման կամաց բաց արաւ դուռը: Սենեակը մութն էր բոլորովին. եւ միջանցքի լամպը ամբողջ սենեակի երկայնքովը լոյսի մի չերտ էր ձգում: Ու Զէմման տեսաւ, որ Բոռը նստել էր գլուխը կրծքին կախած: Ոտների մօտ քնել էր շունը:

— Ես եմ. — ասաց նա:

Բոռը վեր թռաւ:

— Զէմմա՛, Զէմմա՛: Ա՛, ինչպէս էի ուզում ձեզ տեսնեմ:

Եւ առաջ քան կինը մի բառ արտասանել կարողանար, ծունկի եկաւ ինքը նրա ոտների առաջ ու թաղեց դէմքը նրա հագուստի ծալքերի մէջ: Իր ամբողջ մարմինը ցնցւում էր ջղածգութեան ու նրա այդ տեսքը արցունքից էլ սարսափելի էր:

Զէմման լուռ էր: Ոչինչով չէր կարող օգնի, բացարձակապէս ոչինչ դա էր ամէնից ծանրը: Պէտք է դիտառեալ լինէր նրա վշտին կրպէս, թէեւ պատրաստ էր մեռնի որ նրան տանջանքից ազատի: Բայց նէ համարձակել կարողանար, գրկէր նրան, սեղմէր կրծքին սեփական մարմնով պաշտպանէր բոլոր ապագայ ձախորդներից: Այն ժամանակ նա մի նոր Բոռ կը դառնար իր համար, ու ցէ գար մի օր, որ հին ամպրէին:

Ա՛, ո՛չ, ո՛չ: Միթէ տղան կարէր մոռանալ: Ինքը չէ՞ր, որ ձեռքովը:

Բոռի վայրկենական թուլութիւնն անց կացաւ: Արագ ցատկեց ոտի տեց աթոռին, փակեց աչքերը, գլուխը կիսաւում էր չորթունքների ձեռ ուզում էր արիւն հանի: Ապա բարձրացրեց աչքերը ու ասաց դիտա ձայնով.

— Կարծեմ, վախեցրի ձեզ:

(Շա

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

LE SEUL QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : Seh. Missakian
Rédaction & Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme PARIS (13e)
Téléphone : Glacière 15-70
(ԵՐԹԵԼԻԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro: TOLBIAC)

ԶՈՐԵՔՇԱԲԹԻ
24
ՕԳՈՍՏՈՍ
1932
24 AOUT
1932

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ,—

	ՏԱՐԵԿԱՆ	ՎԵՑԱՄՍԵԱՅ	ԵՌԱՄՍԵԱՅ
Ֆրանսա եւ գաղութներ	140 ֆրանք	70 ֆրանք	35 ֆր.
Անգլիա, Եգիպտոս, Զուիցերիա, Իտալիա	250 »	130 »	—
Ամերիկա	8 տոլար	5 տոլար	—
Ուրիշ երկիրներ	200 ֆրանք	100 ֆրանք	—

Ը. ՏԱՐԻ Թիւ 1964

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ՓԼՈՒԶՈՒՄԸ ԿԸ ՍՊԱՌՆԱՅ

Լրացաւ մեր վերջին պանդխտութեան տասը տարին։ Եւ արդէն կը գտնուինք երկրորդ տասնամեակի մը առջեւ։

Թո՛ղ չըլլայ տասը տարի։ Բայց, ամէն պարագայի մէջ, կը գտնուինք նոր շրջանի մը առջեւ։ Շատ աւելի անստոյգ, մռայլ եւ ծանրահոգ։

Թարթափումներ չատ ունեցանք անցնող տասնամեակի ընթացքին։ Ինչպէս եւ նոր յուսախաբութիւններ՝ վառ յոյսերու հետ։

Ունեցանք բեկումներ ալ, գիմագրական ամուր եւ չինարար ճիգերու կարգին։

Անցեալի միամտութիւնները կ'ապրէին — կ'ապրին դեռ — մեր մէջ, եւ հետեւաբար ծանր եղան ցնցումներն ալ։ Մեր հանրային կեանքը կազմալուծելու ատիճան։

Եւ ահաւասիկ նոր շրջանի մը առջեւ, որ ամէն բանէ առաջ լրջութիւն եւ պատասխանատուութիւն կը պահանջէ։

×

Ըսե՞նք առանց բառերը ծամծմելու, — կը գտնուինք մեր ինքնապաշտպանութեան պայքարի ճակատագրական շրջանին վրայ։

Ինքնապաշտպանութիւն՝ գաղութներու։ Ջարդուփշուր, ճղակտոր ժողովուրդի մը վերջին մնացորդին։

Ինչ որ յղացանք, փորձեցինք ու կատարեցինք մինչեւ հիմա, անբաւական է վաղուան համար։

Ինչ որ ունինք, տակաւին, իրրեւ ծրագիր, կը կարօտի հիմնական վերաքննութեան։

Եւ յետոյ, ինչ որ հասկնալի, ներելի կը համարուէր երէկ, իրրեւ հետեւանք բացառիկ պարագաներու, չի կրնար արդարանալ տասը տարի յետոյ։

Նոր թարթափումներ, աւելի լայն ճեղքեր՝ ազգային ճակատի վրայ, ինքնահաճ մեկուսացումներ կամ խաչաձեւումներ՝ ուրիշ բանի մը ախորժաստային, եթէ ոչ վտանգներ վերագործ։

Եթէ կան մարդիկ, որ տակաւին չեն ըմբռներ թէ՝ գաղութները կը գտնուին փլուզման ճամբուն վրայ, — թո՛ղ արթննան իրենց քունէն։

Եւ եթէ կան ուրիշներ — ընկերք թէ քաղաքացի — որ կը կարծեն թէ մեր ճառերն ու թերթերը բաւական են, չարը խափանելու, — թո՛ղ սթափին։

Անցնող տասը տարին եթէ, զանազան ճակատներու վրայ, աւելի գօտեպնդեց մեզ, միեւնոյն ատեն ապառնեց, քամեց չատ մը երակներ։

Եւ այսօր, իսկապէս վերազումն է որ կը սպառնայ, եթէ երկար տեւէ մեր թմրութիւնը։ Զգեսնք՝ րթմամտութիւնը։

Թշնամին կը գործէ։ Ոչ միայն արտաքինը, Թուրքը, այլ եւ ներքինը։

Դժոխային մեքենայ մը, նորագոյն դրութեամբ, կը գործէ մեր ճամբուն վրայ։ Բոլոր գաղութներուն մէջ։ Լպրծուն պողտաններէն մինչեւ թիթեղաշէն, թղթապատ հիւղակները։ Շքեղաշուք մայրաքաղաքներէն մինչեւ փոշեթաթախ կայանները։ Քաղաքական կրկէսին մէջ, ինչպէս մշակոյթի անդաստանին վերեւ։

Եւ գործելով ժրաջան ու մեթոտիկ, ժամացոյցի պէս լարուած, ինքնապաշտպանութեան կռիւը կը հարկադրէ մեզ։

Ասպարէզ կը կանչէ մեզ։

Արթո՞ւն էք, հէ՛յ քաղքենիներ։

Կամ, եթէ արթուն էք, ունի՞ք պատրաստութիւն։

Զի բաւեր, ըսինք, ինչ որ ունէինք երէկ։ Ինչ որ դիտէինք, ինչ որ կ'ընէինք երէկ։

Զի բաւեր ոչ մեր կազմակերպուած ուժը, — Դաշնակցութենէն մինչեւ յետին հայրենակցականն ու երիտասարդականը։ Ոչ ալ մեր պաշարը։

Աւելի քան երբեք՝ պէտք ունինք զանգուածային կազմակերպութեանց։ Թուական, ինչպէս բարոյական ուժի։ Քանակի եւ որակի։

Կը սպառի եղածը։ Սպառա՞ծ է արդէն։ Մաշած են դէնքերն ու սպեղանիներն ալ։

Պատերազմը փոթորկեց աշխարհը, բայց մենք տակաւին աւանդութիւններով կը մնանինք։

Բայց չէ՞ որ սերունդ հասած է աւանդութիւններուն վրայ։ Վերջին տասնամեակի ընթացքին։

Եւ չէ՞ որ մենք հայրենիք չունինք տակաւին։ «Մեր հայրենիք ազատ, անկախ»։

Ինքնապաշտպանութիւն, ինքնապաշտպանութի՛ւն։

Այլապէս, փլուզումն է դղրդադին եւ անփառունակ։

Մեր ճամարտակութիւններն ու մարզանքները չեն կրնար կանխել անխուսափելին։

Չեն կրնար ոչ իսկ ճեղքերը խցել։

Եթէ յուսահատեր ենք Ֆրանսայէն եւ Ամերիկաներէն, ունինք Ռումանիան, Պուլկարիան, Յունաստանը, Սուրիան, Եգիպտոսը, Միջագետքը, Պարսկաստանը։

Նոյն իսկ Ս. Հայաստանը, հակառակ բոլոր հրէշային պայմաններուն։

Զի բաւեր խօսիլ Թրքահայ վերջին մնացորդի անունով։ Հարկ է նաեւ գործել անոր համար։

Գործել մրջիւնի համբերութեամբ։ Եւ անոր չափ ինքնավստահ ու յամառ։

Դարերը փլան մեր առջեւ, միշտ ժամանակակից ժողովուրդներու կուրծքին վրայ։ Բայց մենք մնացինք չնորհիւ այդ ինքնավստահութեան եւ յամառութեան։

Տասը տարին ինչո՞ւ պիտի ընկճէր մեզ, եթէ մենք արժանի ժառանգորդներն ըլլայինք Թափուած քրտինքին եւ արիւնին։

Շ.

ՕՐԸ ՕՐԻՆ

"ՏԱՒՈՒԼ ԶՈՒՌՆԱ"

— :-: —

Կը պատմէի, ճամբուս վրայ, եւ չէիի հաւատար։

Այն աստիճան որ, ես ալ սկսեր էի կասկածիլ։

Եւ սակայն, տակաւին այս կիրակի, գացի, տեսայ եւ··· յաղթուեցայ, «տավուլ զուռնա»ն տեսնելով Մարսէյլի մէջ, Զ· Ռ· Մ·ի դաշտահանդէսին։

Բոլոր երգերը՝«տավուլ զուռնա»ով. — «Լուսին չկար», «Ազատութեան սիրոյն համար» եւն·։

Եւ ոգեւորութիւն ամէն կողմ։

Ուրեմն, «տավուլ զուռնա»ն ալ շանթարգել մըն է այլասերման դէմ։ Ազդակ մը՝ ազգային ոգին վառ պահելու, հոգիները թունդ հանելու եւ ձեռերն ու ոտքերը շարժման մէջ դնելու։

Այսպէս կամ այնպէս, բանի որ «տավուլ զուռնա»ն մինչեւ արեւմտեան Եւրոպայի պողոտաները հասաւ, մեզի կը մնայ··· դաս մը հանել, ինչպէս պիտի ըսէր մեր վարժապետը։

Քանի որ ուրիշ ո՛ր եւ է միջոց չի գօրեր շարժման մէջ դնելու աս ու անազգային մարմինը — օրինակ՝ ինքնութեան թուղթերու համար — կիրթերը լռեցնելու կամ գործակցութիւն հաստատելու բաղաճական հոսանքներու միջեւ, փորձենք «տավուլ զուռնա»ն։

Մէկ – մէկ «տավուլ» եւ «զուռնա» դնենք բոլոր այն դուռներուն առջեւ որոնց ներսը կանանչ սեղաններ կան, եւ փչել ու թակել տանիք մինչեւ իրիկուն։

Եթէ ուրիշ օգուտ ալ չունենայ ,գոնէ իր հոսուն աղմուկին ուժգնութեամբ ոտքերն ու ձեռերը շարժել, խաղալ – գործել կուտայ։ Կամ թոյլ չի տար որ ուրիշ ձայներ լսուին։

ՎԱՐԱԶ

ՎԵՐԱԴԱՐՁ ԴԷՊԻ ԲՈՒՐՔԻԱ

— :-: —

Սելանիկի «Հորիզոն»ը կը գրէ թէ թրքական հիւպատոսարանը, էնկիւրիէն նպաստաւոր պատասխան ստացած է Թուրքիա վերադառնալու ցանկութիւն ունեցող խումբ մը Հայերու դիմումին համար։ Թուրք կառավարութիւնը վաւերացուցած եւ ընդունած է Սելանիկ բնակող 60ի մօտ Հայերու պէյաննամէները եւ արտօնած է որ անոնք, թրքական կանոնաւոր անցագիր ստանալով Թուրքիա վերադառնան։

Հիւպատոսարանը արդէն իսկ լուր տուած է շահագրգռուողներուն, որպէս զի երեքական լուսանկար բերելով ստանան իրենց անցագիրները եւ մեկնին։ Կը հաղորդուի թէ արտօնութիւն ստացած Հայերը մեծ մասով Զաւագ Թալէի շրջանին կը պատկանին։ Ըսուած է նոյն իսկ, որ հետզհետէ ուրիշներուն արտօնութիւնն ալ պիտի ստացուի։

Այս բոլորի մասին աւելի մանրամասն տեղեկութիւններ ստանալու համար, թէեւ անուղղակի միջոցով դիմում կատարեցինք թուրք հիւպատոսին եւ սակայն այս վերջինը բացարձակօրէն մերժեց որ եւ է յայտարարութիւն ընել, ըսելով որ «խնդիրը փափուկ է» եւ չի կրնար մամուլի խօսակցութեան նիւթ դարձնել։

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԱՆՑԱԳԻՐԸ

Ճամբորդութեան անցագիրներու փոխարժէքը 150էն 500ի բարձրացնելու ծրագիր մը ունէր Լիբանանի կառավարութիւնը։ Այդ որոշման լուրին վրայ բոլոր թերթերը միաբերան սկսան յարձակիլ կառավարութեան վրայ եւ պահանջեցին նախկին ձեւին պահպանումը։

«Ազդակ» կ'իմանայ թէ կառավարութեան պետը նոր հրամանագիր մը ստորագրած է, որով 300 ս· դ· կ'որոշէ իւրաքանչիւր անցագրի համար։ Այս որոշմանագիրը հաստատուած է մարզպանութեան կողմէ։

"ՅԱՌԱՋ"Ի ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

Թերթիս խմբագիրը իր ճամբորդութենէն վերադարձած ըլլալով, պարտք կը սեպէ իր խորին շնորհակալութիւնը յայտնել բոլոր անոնց որոնք իրենց կարելին ի սպաս դրին «Յառաջ»ի զարգացման համար։

Շուտով կը դարմանուին զանազան թերութիւններ եւ կը վերակազմուին կարգ մը բաժիններ։

Շուտով, նաեւ, մեր նոր թերթօնը։

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

Խոռվայոյզ Գերմանիան

Հինգ մահապարժ մեկ օրուան մէջ

Ամբողջ Պերլինը ցնցուեցաւ երկուշաբթի օր, իմանալով որ պէօթէնի արտակարգ ատեանը մահուան դատապարտած է հինգ հիթլէրեան ահաբեկիչներ, որոնք վայրագօրէն եւ կանխամտածութեամբ սպաններ էին համայնավար գործիչ մը։

Դատարանին վճիռը անվերաբերելի է։ Եթէ նոր իրողութիւններ երեւան չհանուին կամ կառավարութիւնը ներում չշնորհէ, հինգ մահապարտները պիտի գլխատուին կացինով։

Այս վճիռը զուգադիպելով խորհրդարանի վերաբացման նախօրեակին, կը ստանայ քաղաքական մեծ նշանակութիւն։ Շատեր կ'եզրակացնեն թէ՝ Ֆօն Փափէնի դահլիճը այսպէս ձեռնոց նետելով հիթլէրի, ըսել կ'ուզէ թէ մեծ արժէք չի տար անոր 230 երեսփոխաններուն։ Բուն մարզապանը փախած ըլլալով, կարծողներ կային թէ՝ հինգ ամբաստանեալները աժան պիտի ազատին։ Մինչդեռ, ճիշդ հակառակն եղաւ։

Ունկնդիրները տհաճութեամբ լսեցին մահավճիռը։ Բազմահազար ամբոխ մը խռնուելով դատարանին առջեւ, դատապարտեալներուն արձակումը պահանջեց։ Յետոյ ցուցարարները պատեցան քաղաքին մէջ, չարդուփշուր ընելով երկու ընկերվարական թերթերու խմբագրատան ապակիները։ Միեւնոյն ատեն աւարի արուեստի չատ մը հրէական խանութներ։ Իրիկունը ուշ ատեն օգնական ուժ հասաւ, բարեկարգութիւնը վերահաստատելու համար։

Մահավճիռը ափի բերան ձգեց նաեւ հիթլէրեանները։ Մանաւանդ որ, միեւնոյն օրը ուրիշ արտակարգ ատեան մը պարզ բանտարկութեան կը դատապարտէր տարբեր կուսակցութեան մը անդամները։ Ամէն օր բուռն արտայայտութիւններ կ'ըլլան խօսքով եւ գրչով։

Երեսփոխան կէօպէլս, որ նախագահն է Բայխստագի խորհրդարանական խմբակցութեան, յօդուածի մը մէջ կ'արտայայտ.

— Ամէնէն հրէշային նուաստացումն է որ կը կրէ ազգային – ընկերվարական կուսակցութիւնը, 14 տարուան նախատիճքներէ եւ փոքրութիւններէ յետոյ։ Մենք չենք պաշտպաններ ահաբեկիչները, բայց կը կարծենք թէ անոնք չեն բուն յանցաւորները եւ թէ կան ուրիշներ զորս պէտք է դատել անոնցմէ առաջ։ Հիմնէնպուրկ եւ Ֆօն Փափէն էաջութիւնը պիտի ունենա՞ գլխատման կոճղին վրայ դնելու այդ հինգ գլուխները։ Այդպիսի արարք մը ամէնէն անհաշուելի եւ ամէնէն ծանր հետեւանքները պիտի ունենայ։

Եթէ Ֆօն Փափէնի դահլիճը անխախտ պահէ արուած վճիռը, կը նշանակէ թէ որոշած է երկիրը վարել առանց խորհրդարանի եւ թէ վտահ է բանակին վրայ, երբ հարկ ըլլայ խաւօրէն գործել հիթլէրի չորս հարիւր հազարնոց մարտական ուժին դէմ։

× *Կարգ մը թերթեր կը պնդեն թէ նախկին վարչապետ Պրիւնինկ գաղտնի խորհրդակցութիւններ ունեցած է հիթլէրի հետ, Ֆօն Փափէնի դահլիճը տապալելու համար։*

Ո՛վ կը սպառնայ խաղաղութեան

Իտալական թերթերը կը շարունակեն պարբերաբար կճել Ֆրանսան, անարդար դատելով անոր յաւակնութիւնները եւ միշտ յիշեցնելով զաշնագիրներու վերաքննութեան պահանջը։

Այս անգամ ալ ծերակուտական Զիվիլքօն է որ քարեր կը գլորէ «Փոփօլօ տ'Իթալիա»ի մէջ։ Ասելով ապահովութեան հարցին վերաբերեալ, զոր անընդհատ կը յիշեցնէ Ֆրանսան, իտալացի ծերակուտականը դիտել կուտայ թէ վերապրելի դաշնագրով՝ Գերմանիոյ զինաթափութիւնը կապ ունի միւս՝ յաղթական պետութեանց զինաթափութեան հետ։ Այլապէս, անվաւեր կը դառնայ դաշնագիրը։

Ծերակուտականը յետոյ կը բաղդատէ Գերմանիոյ եւ Ֆրանսայի բանակին եւ նաւատորմին ուժերը եւ կ'ըսէ թէ Գերմանիոյ ձգուած ամբողջ տորմիղը չի կրնար դիմադրել նոյն իսկ Պալթիկ ծովուն մէջ կատարուելիք Ֆրանսական արշաւի մը։ Եւ կ'եզրակացնէ.

— Ֆրանսան որեան պնդէ իր ապահովութեան մասին, նոյնիսկ ինքնապաշտպանութեան պիտի մղէ գերման ժողովուրդը։ Պիտի հասկնա՞յ, վերջապէս, թէ իր ապահովութիւնը անապահովութիւն մըն է ուրիշներուն, մանաւանդ իր դրացիներուն համար։

Թուրք հաւասլաւարներուն ծոմը

Պոլսէն «Իւմանիթէ»ի տրուած հեռագիր մը կը պատմէ·—

Օգոստոս 3էն ի վեր, Պոլսոյ բանտին մէջ արգելափակուած համայնավարները ծոմ կը պահեն, իրրեւ բողոք դատավարութեան ձգձգման դէմ որ տեղի կ'ունենայ դռնփակ։

Ահա քանի օրէ ի վեր կը տեւէ այս ծոմապահութիւնը (հացադուլ), եւ չատ մը ընկերներ հիւանդացած են։ Բայց անոնցմէ 41ը արիաբար կը շարունակեն պայքարը, իրենց դատակարգային վայրագ թշնամիներուն դէմ։ Թուրք բանուորները, որոնք հերոսաբար կը մարտնչին մեր հասարակաց դատին համար, պէտք է վայելեն Ֆրանսայի աշխատաւորներուն կատարեալ համակրանքը։

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ· էջ)

ԱՒԱԶԱԿՈՒԹԻՒՆԸ ՍՈՒՐԻՈՅ ՄԷՋ

Զորս զինեալ անծանօթներ, յարձակեցան Հալէպի շրջակայքը, Ախթիրին Սօրան ճամբուն մէջ, Ֆօրտ ինճնաշարժի մը վրայ եւ առին վարիչին թղթապանակը։

Նոյն աւազակները կողոպտեցին նաեւ ուրիշ ինճնաշարժ մը, ուր կը գտնուէին չորս պետական պաշտօնեաներ, եւ տիրող խառնաչէն օգտուելով անհետացան։

× Թուրքիա գտնուող Շարապուլուսցի մը, գիւղը վերադառնալու միջոցին զէնքով հետապնդուեցաւ մինչեւ սուրիական հողը, թուրք մաքսային պաշտօնեայէ մը։

Ժանտարմներու խումբ մը որ նոյն պահուն կ'անցնէր, ստացաւ հրացանի բանի մը հարուած, բայց չյաջողեցաւ ձերբակալել թուրք պաշտօնեան, որ անմիջապէս սահմանէն անդին անցաւ։

ՕԴԱՐՇԱՒ «ՀԱՆԴԵՐՁ ԸՆՏԱՆԵՕՔ»

Ամերիկեան ընտանիք մը որոշեց օդարշաւ մը կատարել Նիւ Եորէէն Լոնտոն, անցնելով բեւեռային շրջանակէն։ Ընտանիքին պետն է գործարանատէր մը, որ միասին պիտի առնէ իր կինը եւ երկու աղջիկները, 8 եւ 6 տարեկան։ Գործարանատէրը օդանաւ մը ունի տասը հոգիի համար։ Ընտանիքէն զատ, իրեն պիտի ընկերանան առաջնորդ մը, նաւորդ մը, մեքենավար մը, հեռագրիչ մը եւ լուսանկարիչ մը։

Օդանաւը ճամբայ պիտի ելլէր երէկ իսկ, եթէ օդը նպաստաւոր ըլլար։

ԵՐԿՐԱՇԱՐԺ ԿՈՎԿԱՍԻ ՄԷՋ

Մոսկուայէն կը հեռագրեն թէ բաւական բուռն երկրաշարժ մը տեղի ունեցած է հարաւային Կովկասի մէջ։ Ամբողջ գիւղ մը կործանած է։ Մեռած են 24 հոգի։

Հեռագիրը մանրամասնութիւններ չի տար բուն վայրի մասին։

ԿՈՐԿՈՒԼՈՎ ՄԻԵՆ ԿԸ ՑՈՒՍԱՑ

Այս չաբթուան վերջը կը գումարուի «Չնորհներու յանձնաժողովը», նկատի առնելու համար Կարկուլովի խնդիրը։ Մանրակրկիտ քննութենէ մը յետոյ, յանձնաժողովը իր տեղեկագիրը պիտի ներկայացնէ Հանրապետութեան նախագահին, որ մարզպանին փաստաթուղթերը լսելէ յետոյ, որոշում պիտի տայ։

ԿԱՐԱ ՅԷՏԿԻՆ ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ

Տիկին Կլարա Յէտկին, ծանօթ համայնավար գործիչը, որ Մոսկուա կը գտնուի, շուտով պիտի վերադառնայ Գերմանիա, նախագահելու համար խորհրդարանի վերաբացման նիստին։

Արդարև Կլարա Յէտկին Բայխստագին երեցագոյն անդամն է, եւ իրեն կ'իյնայ նախագահելու պատիւը։ Թէեւ հիւանդ պառկած է Մոսկուայի մէջ, բայց չուզեր փախցնել պատեհութիւնը։

Այս առթիւ, վախ կայ որ բուռն ցոյցեր կատարեն հիթլէրեանները։ Խորհրդարանը պիտի բացուի օգոստոս 30ին։

Ա. Յ Ժ Մ Ա Լ ՁԱՐԱՇԱՀՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Մոսկուայի հեռագրական գործակալութիւնը կը տեղեկացնէ թէ խորհրդային իշխանութիւնը վճռական միջոցներ որոշած է, չարաշահութեան դէմ պայքարելու համար։ Համաձայն այդ որոշման, այն հաշուեքննիչները որ պաշար կ'ամբարեն, պիտի արգելափակուին մասնաւոր կայաններու մէջ, հինգէն տասը տարի, առանց ո՛ր եւ է ներման յոյս ունենալու։

Որոշմնագիրը դիտել կուտայ թէ, հակառակ մայիս 20ի հրամանագրին, որ կը ճշդէր հաւաքական տնտեսութեանց առեւտուրը, չարաշահութեան դէպքերը չափազանց չատցած են վերջերս, մանաւանդ անհրաժեշտ ապրանքներու չուկային մէջ։

—)(o)(—

Աէռնելի տաք մը կը մրկէ վիէննան։ Երկուշաբթի օր ջերմութեան աստիճանն էր 35, շուբին մէջ։ Բազմաթիւ զոհեր կան։ Ինը հոգի արեւահար եղան Դանուբի բաղնիքներուն մէջ եւ աւազուտին վրայ։

ԲՈԼՇԵՒԻԶՄԻ ՄԱՍԻՆ

Հոկտեմբերը չաբունակում է իշխել Ռուսաստանում: Մեղ հասած բոլոր անհաշտ տեղեկութիւնները, որ գալիս են այդ երկրից, միաբերան պնդում են, որ ինչ որ անօրինակ ու անբնական բան է կատարւում այնտեղ: Մի խումբ իշխանաւորներ մտրակը ձեռքները առած քշում են միլիոնաւոր մարդկանց դէպ ի կործանում, քշում են անողոք, դաժան խստութեամբ: Ու միլիոնաւոր, տասնեակ միլիոնաւոր զանգուածները իշխանութեան քմահաճոյքով, քամուն տալով այն ամէնը, ինչ որ նրանց կապում է կեանքի ու Աստուծոյ հետ, խելակորոյս ու կենդանական սարսափով առաջ են վազում — դէպ ի կորուստ ու աւերում: Հաւատալո՞ւ բան է: Բայց դա իրականութիւն է: Ինչպէ՞ս եւ ինչո՞վ բացատրել այդ տարօրինակ եւ զարմանալի երեւոյթը:

Պատերազմ ու նրա հետեւանքնե՞րը: Բայց ինչո՞ւ միայն Ռուսաստանում պատերազմն այդպիսի պտուղ տւեց: Ինչո՞ւ Ռուսաստանից թէ յետամնաց (Տաճկաստան) եւ թէ առաջադէմ (Գերմանիա) երկիրները, որ բնաւ պակաս ցնցումներ ու կորուստներ չունեցան պատերազմի ընթացքում ու հետեւանքով, չընկաւ բոլշեւիզմի գիրկը:

Արտասահմանեան ռուսական գաղութային մամուլի գրեթէ բոլոր թերթերը բոլշեւիզմը համարում են ռուս ժողովրդի համար խորթ ու անհարազատ մի վարդապետութիւն: Ռուսաստանի այսօրւայ իշխանաւորները համարւում են պատահական մարդիկ, որոնք զէթ բախտ հանդամանքների բերմամբ ձեռք են ձգել իշխանութեան ապարատը եւ կառավարում են երկիրը՝ արհամարհելով ռուս ժողովրդի թէ անցեալը եւ թէ ներկան: Ռուսաստանը բոլշեւիկների համար մի տեսակ փորձադաշտ է, ուր տեղի ունեցածը հետեւր կապակցութիւն անգամ չունի երկրի ժողովրդի մտաւոր, բարոյական ու մտաւորական հասկացողութիւնների հետ:

Ճի՞շդ է արդեօք այդ տեսակէտը: արդարացի՞ է պնդել, որ բոլշեւիկեան դաղափարները խորթ են ռուս ժողովուրդի հոգուն:

Կարծում եմ, այդպէս դատել նշանակում է աչք գոցել մի շարք երեւոյթների վրայ, որոնք ժխտում են յիշեալ տեսակէտը եւ որոշ չափով բացատրում Ռուսաստանում այսօրւայ տեղի ունեցածը: Թւում է թէ բոլշեւիզմը Ռուսաստանում պատահական երեւոյթ չէ, պատմական ձախորդ հանգամանքների (պատերազմ, հոգեկան յուսահատ վիճակ, անտեսական քայքայում եւայլն) արդիւնք չէ, այլ բնական զարգացումը եւ վախճանը ռուս ժողովրդի հոգեկան որոշ վիճակի ու ապրումների: Այդ վարդապետութեան ծնողը Լենինը չէ: Լենին տաղանդաւոր, թերեւս հանճարեղ կերպով իրականացրեց այն գաղափարները, որոնց երկրպագում էին ռուսական մտաւորականներից չատերը նրանից չատ առաջ: Ու թւում է, որ բոլշեւիզմը հարազատ է ռուս հոգուն ոչ թէ միայն իբր աշխարհայեացք, ուսումնք, այլ նրա համար խորթ չեն նաեւ այդ աշխարհայեացքի թելադրած մեթոտները, գործելակերպը: Ու այս վերջինը իրացի է ոչ միայն ռուս հասարակական մտածողութեան ամենաճոխ հատուածի համար, այլ նաեւ միապետականների: Այսպէս օրինակ, յայտնի է, որ բոլշեւիկները վտահութիւն չեն տածում դէպ ի հասարակական լայն զանգուածները դէպի ժողովուրդը (հաշւելով նրանց մէջ նաեւ բանւորները), որը, նրանց մտածողութեամբ, կարօտ է խնամակալի — կարող ու կառավարող ձեռքի, որովհետեւ ինքը անկարող, անընդունակ է անօրինել իր քաղաքացիական ու քաղաքական ճակատագիրը: Լաւ կապմակերպած փոքրամասնութեան դեկավարութիւնը անհրաժեշտ է ժողովուրդի բարօրութեան համար: Ինչպէս կը տեսնենք քիչ յետոյ, բոլշեւիկները այդ մտածողութիւնն ամբողջովին փոխ են առել անցեալ տարի 60—70ական թւականների գործիչներից՝ ուղիղ գծով, այսինքն՝ դարձեալ յեղափոխականներից: Բայց ժողովուրդի մասին այդ նոր կարծիքն ունեցել են նաեւ աշակողմեան միապետական գործիչները: Իբր ապացոյց այդ մտքի բերեմ մի օրինակ: Երբ Ալեքսանդր IIր գահընթացաւ, ռուս նշանաւոր հասարակական դէմքերից մէկը, Կ. Ակսակով, ներկայացրեց ցարին մի գրութիւն այս թելերով.—

I. Ռուս ժողովուրդը, չունենալով իր մէջ քաղաքական տարր, առանձնացրել է իշխանութիւնը իրենից եւ չի ուզում իշխել:

II. Ջանկանալով իշխել, ժողովուրդը վերապահում է կառավարութեան պետական անհատման իշխանութիւն:

III. Դրա փոխարէն ռուս ժողովուրդը վերապահում է իրեն բարոյական ազատութիւն, ազատութիւն կեանքի եւ ոգու:

IV. Պետական անհատման իշխանութիւնը — առանց ժողովուրդի մասնակցութեան — կարող է լինել միայն բացարձակ միապետութիւն:

V. Այդպիսի սկզբունքների վրայ է հենւում ռուսական քաղաքացիական կազմակերպում — անհատման իշխանութիւն պետութեան. ժողովուրդին — բարոյական ազատութիւն, ազատութիւն, կեանքի եւ ոգու (մաքի եւ խօսքի): Միակ բանը, որ կարող է եւ պարտաւոր է առաջարկել միահեծան կառավարութեան իշխանազուրկ ժողովուրդը — այդ իր կարծիքն է (այսինքն միայն բարոյական ուժ), կարծիք, որը կառավարութիւնը ազատ է ընդունել կամ չընդունել:

Կ. Ակսակովի այդ գրութեան առթիւ Մ. Աքսանով նկատում է, որ թէեւ Լենինը ամենայն հաւանականութեամբ անծանօթ է նրան (գրութեան) այնուամենայնիւ այնտեղ մատնանշած մտքերի մեծ մասը նա իրագործել է:

1919 թւին Լենինը մի զեկուցում է ներկայացրել Մոսկուայում գումարւած ընկերվարական այն կոնգրէսին, որը հիմ դրեց Գ-րդ Միջազգայնականին:

Այդ զեկուցման մէջ Լենինը կատաղօրէն յարձակում էր արեւմտեան բուրժուայիայի սիրող կարգերի վրայ եւ ապացուցանում էր, որ իսկական ազատութիւնը գոյութիւն ունի միայն Խորհրդային Ռուսաստանում: Կ. Ակսակովը մօտաւորապէս մի դար առաջ, խօսելով նոյն նիւթի մասին, գրում էր. «Արեւմուտքը ամբողջովին ծծւած է ներքին խաբեբայութեամբ, նա պղտիլի է»: «Ո՛չ, ազատութիւնն այնտեղ չէ, նա Ռուսաստանում է»:

Այդ տողերը գրւած են Նիքոլա Ա-ի օրօք, այն ցարի, որին անւանում էին՝ Եւրոպայի ժանտարմ: Եւ որ տարօրինակն է, այդ տողերի հեղինակը հինդ տարի պայքարել է միրուք պահելու իրաւունք ունենալու համար եւ այդ իրաւունքը չի ստացել (տոխլած միրուքը ածիլել է): Այնուամենայնիւ Կ. Ակսակովը հետեւում էր Նիքոլայեւեան ազատութեան վրայ, ինչպէս Լենինը հետեւում էր «Զեկայի կիլիկեանների վայելած» ազատութեան վրայ:

Ժողովուրդը կառավարելու, իշխանութեան կամքը նրան պարտադրելու բարբարոս ձեւերը ռուս ժողովուրդի համար նորութիւն չեն. իր պատմութեան ընթացքում նա յաճախ է վայելել բոլշեւիկեան լծախի հարւածները: Ռուս պատմական կարամզինը ցաւով է արձանագրում Օհանինէս Ահարկու ցարի երկիր կառավարելու ձեւը: Նա անխնայ կատորում էր ոչ միայն նշանաւոր, տոհմային բոյարներին, անցած յաւուրկ զօրամասի գլուխ, նա պատիժներ է անում երկրում. — մահ աւերածութիւն տարածում ամենուրեք: տարտխահար ժողովուրդը, ձգելով տուն ու տեղ, ապաստան էր որոնում մութ ու անմատչելի անտառներում: Օհանինէս Ահարկու երկիր կառավարելու իր մեթոտներով ռուս պատմութեան մէջ բացառութիւն չէ կազմում: Այդ մեթոտները իւրացրել են այսօր բոլշեւիկները:

Բայց Օհանինէս Ահարկուները, Բիրոններն ու Արակչեեւները իրենց հոգու մղումներով, ի տարիկ, բոլշեւիկներ չէին: Բոլշեւիկները նրանցից ժառանգել են երկիր կառավարելու ձեւը, իսկ նրանց հոգեւոր հայրերը այլ տեղ պիտի որոնել:

Բոլշեւիկեան դաղափարախօսութիւնը հարատատ է եղել ռուս յեղափոխականներից չատերին: Բայց այդ դաղափարախօսութիւնը առանձնապէս ցցուն է Բակունինի, Նեչայեւի եւ Տկաչովի գրւածներում:

1848 թւին Բակունին գրում էր. «Նայենք չուրջներս. ամէն տեղ յեղափոխութիւն է. ամէն տեղ նա է իշխում, նա է միայն ուժեղ: Յեղափոխութիւնը չի դադարի մինչեւ քար ու քանդ չանի ամբողջ դասամեայ աշխարհը եւ չստեղծի նորը ու դեղեցիկը: Այդ պատճառով էլ միայն ու միայն յեղափոխութեան մէջ է մեր ամբողջ ուժը, կարողութիւնը եւ յաղթանակի ապահովութիւնը: Միայն նրա մէջ է կեանքը, նրանից դուրս մահն է: Միայն նա, ով ընդառաջում է յեղափոխութեան դէմ ու նրա գործը կատարում, կը յաղթի. ով յեղափոխութեան դէմ է — վաղ թէ ուշ — փճանալու է ու չի տեսնելու փրկութեան օրը»:

Բազմաթիւ անդամ Բակունին ընդգծում է, որ փրկութեան միայն մի ճանապարհ կայ — յեղափոխութիւն եւ հին աշխարհի կործանում:

«Աշխարհը բաժանւած է երկու բանակի. նրանց մէջ չկայ միջին ճանապարհ: Այստեղ յեղափոխութիւն, այնտեղ՝ հակայեղափոխութիւն — ահա տեղ՝ հակայեղափոխութիւն — ահա նշանաբաններ. իւրաքանչիւր մարդ դրանցից մէկը պիտի ընտրի, վասն զի միջին ճանապարհ չկայ: Ով այդ միջին ճանապարհը ցոյց է տալիս ու փառաբանում — կամ խաբւած է կամ խաբեբայ»: Մի այլ տեղ նա գրում էր. «Աշխարհում ոչ ոքի համար մենք չենք պիղծ մեր ծրագրից ոչ մի կէտ: Եւ եթէ նրա իրականացման համար անհրաժեշտ է արիւն — թող հոսի արիւն»:

1870 թւին Բակունին պատրաստել էր մի դեկրետ, որը պիտի դործադրւէր Լիոնի ապստամբութեան յաղթութեան դէպքում: Այդ ապստամբութեան մէջ գործօն մասնակցութիւն է ունեցել նաեւ ինքը Բակունին: Դեկրետի վերնագիրն է՝ «Աւերածութեան մասին»: Ըստ այդ դեկրետի կազմւում է Դաշնակցական միութիւն Ֆրանսայի յեղափոխական կոմունաների՝ որը վերապահում է կառավարական ու անձնական իրաւունքի ամբողջ գործադրութիւնը տեղական կոմունաներին: Ամէն մի կոմունա ինքնուրոյն է իր ներքին կեանքում, իր դատաստանի, ոստիկանութեան, կրթութեան, ֆինանսների, արդիւնաբերութեան, առեւտրի, ներքին եւ արտաքին փոխանակութեան, հարկերի, ինչպէս նաեւ իր ներքին անձնական կազմակերպութեան մէջ: Ամէն կոմունա ունի իրաւունք ազատ կերպով հաստատելու իր հարաբերութիւնները ուրիշ կոմունաների հետ, ընդունելու նրանց ներկայացուցիչները, կնքելու նրանց հետ դաշինքներ, որոնք պիտի համապատասխանեն ընդհանուր շահերին: Ամէն կոմունա ունի իր զինւորական ուժերը, որոնք պիտի ապահովեն ներքին կարգը եւ ազատութիւնը, ինչպէս նաեւ կոմունայի անկախութիւնը: Ամէն կոմունա տիրապետում է իր ներքին պատմական յիշատակարանների, իր հնութիւնների, իր ազգային յուշարձանների, գիտութիւնների, իր ներքին կրթական հաստատութիւնների, ինչպէս նաեւ իր ներքին ոստիկանութեան, դատաստանի, ֆինանսների, արդիւնաբերութեան, առեւտրի, ներքին եւ արտաքին փոխանակութեան, հարկերի, ինչպէս նաեւ իր ներքին անձնական կազմակերպութեան մէջ: Ամէն կոմունա ունի իրաւունք ազատ կերպով հաստատելու իր հարաբերութիւնները ուրիշ կոմունաների հետ, ընդունելու նրանց ներկայացուցիչները, կնքելու նրանց հետ դաշինքներ, որոնք պիտի համապատասխանեն ընդհանուր շահերին: Ամէն կոմունա ունի իր զինւորական ուժերը, որոնք պիտի ապահովեն ներքին կարգը եւ ազատութիւնը, ինչպէս նաեւ կոմունայի անկախութիւնը: Ամէն կոմունա տիրապետում է իր ներքին պատմական յիշատակարանների, իր հնութիւնների, իր ազգային յուշարձանների, գիտութիւնների, իր ներքին կրթական հաստատութիւնների

թիւն ալ էշխանութեան գլուխանցնի, վերցայլի դաշնագիրը պէտք էզնուելու: Այդ դաշնագիրը, իր հիմքին մէջ, զուրկ է առողջ մտածումէ: Գերմանիա, ինչպէս նաեւ ուրիշ ոեւէ երկիր, ճգնաժամերու ամանակ պէտք է դիմէ այն անձերու օգնութեան, որ ուրիշ ժամանակներ աւելի գիտեն դէկավարել երկիրը պատուաւոր եւ առղջ հիմքերու վրայ: Գերմանիա 14 տարի առնց իր պետերուն մնաց: կառավարելու ընդունակ անձերը բոլի կերպով մեկուսացուցան, բայց հոգեւարքի վերջը մօտ է:

ԹՈՒՐՔԻԱ

ԱՅԱ ՍՕՖԻԱՅԻ ՄՕԶԱՅԻՔՆԵՐԸ

Այա-Սոֆիայի «մօզայիք»ները երեւան հանելու գործողութիւնները անհամաձայնութեան մը երեսէն դարձած են: Այս մօզայիքները մաքրելը իր վրայ առնող ամերիկացի բիւզանդական էնսթիթիւի պաշտօնեաներէն Պ. Վիթէմօր նըշանաւոր պատմագէտ մըն է բայց կ'ըսուի թէ հին եւ պատմական գործերը չի ճանչնար: Այդ պատճառու մօզայիքները մաքրելու գործը յանձնուած է Պ. Մարանքոնիի որ Վենետիկի Մէնթ Մարք եկեղեցիին մօզայիքները երեւան հանած եւ նոյն հաստատութեան տնօրէնն է:

Պ. Վիթէմօր, մօզայիքներու այս մասնագէտը Պոլիս բերած ժամանակ, ոչ կառավարութեան եւ ոչ ալ թանգարանի վարչութեան ներկայացուցած է: Այս նշանաւոր մասնագէտը իբր պարզ գործապետ աշխատցնելով որոշուած է մօզայիքները երեւան հանելու պատիւը իրեն վերագրել: Այս կացութենէն ազդուող Պ. Մարանքոնի Իտալիա մեկնած եւ փրօֆէսօրին երկրորդ հրաւէրը անպատասխանի թողած է: Պ. Վիթէմօր կրթական գործավարութեան եւս իր կատարելիք իորձի մասին որոշ յատակագիծ մը յանձնած չըլլալով իր գործունէութեանը վերջ տուած է:

Միւս կողմէ մօզայիքները մաքրելու գործին, թանգարանի վարչութեան կողմէ իբր հսկող նշանակուած ճարտարապետ Մաճիտ պէյ, տեղեկագրով մը յայտնած է թէ մօզայիքները կցող ծեփերուն պատին հետ ունեցած կապը խզուած ըլլալով, վտանգ կը սպառնայ: Այս տեղեկագրին վրայ կրթական գործավարութեան կողմէ յանձնախումբ մը կազմուած եւ տեղւոյն վրայ քննութիւն կատարել տրուած է:

ՍՈՎԵՏ ՄԱՍՆԱԳԷՏՆԵՐԸ ԹՈՒՐՔՈՑ ՄԷՋ

Ռուսական մեքենաներով շինուելիք գործարաններու մասին մօտերս քննութիւն պիտի կատարուի: Այդ առթիւ դալ շաբթուան ընթացքին Ռուսիայէն վեց մասնագէտներ պիտի հասնին, որոնք Ռուսիոյ ճարտարարուեստական յատակագիծերու ճիւղին մէջ կ'աշխատին:

Մասնագէտները Պոլիս կը հասնին ամսոյս 28ի առեւտրական գործավարութեան պաշտօնեաներուն ընկերակցութեամբ, խմբակներու բաժնուելով, զանազան կողմեր պիտի մեկնին քննութիւն կատարելու համար:

Գործարանները հաստատուելիք տեղերուն մէջ, նախանձութերու դրութեան, փոխադրական միջոցներուու երկրաբանական կացութեան եւ արտադրական ուժերու մասին քննութիւն պիտի կատարուի:

Քննութիւնները տեղի պիտի ունենան Իսկիշէհիրի, Ուշաքի, Տէնիզլիի, Գարաքէօյի, Ժարալքէօյի, Նազիլիի, Իզմիրի, Մէնթրնի, Առանայի, Սվազի, Գայսէրիի եւ Գաթէմունիի շրջանակները:

Այս տեղերէն առնուած նախնիութերու նմոյշները Ռուսիա դրկուելով հոն պիտի քննուին թէ ինչպիսի մեքենաներ կարելի է գործածել, իսկ միւս կողմէ գործարաններու յատակագիծերը պիտի պատրաստուին:

Գալ տարի շինութեանց եղանակը սկսածին պէս, որոշուելիք տեղերուն մէջ գործարաններուն շէնքերուն շինութեան պիտի ձեռնարկուի:

ԹՈՒՐՔ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ 1200ՕԱՄԵԱԿԸ

(1 Օգոստ. 732 — 1 Օգոստ. 1932)

— :-: —

Արեւելքի մէջ ց. Մարթաեանի մէկ յօդուածաշարքէն.—

Այս տարի Թուրքիա մէկէ աւելի ու դիւրար գող անցնող յոբելեաններու խաչաձեւման ճի՛շդ պորտին վրայ է կանգնած: Իսլամներու Մարգարէին մահուան 1300 ամեակը, Թուրքերու կանութեան ծագման 1200ամեակը, Օսմանցի Թուրքերու դեղագիտական գրականութեան իսկական հիմնադիր Աչրք փաչայի մահուան 600ամեակը (մեռած՝ 1332ին), ապրող մեծագոյն Թուրք դրագէտին Ախմէտ Հազ Համիտ պէյի ծննդեան 80ամեակը, որ ոսմանեցաւ փետր. 6ին, նոր Թուրքիոյ վերածնունդին 10ամեակը (1922ի աշնան յաղթանակը), Թուրք նոր ազգային թատերգութեան հիմնադրութիւնը ներկայ տարուոյ ընթացքին՝ «Ազդն» ու «Ջօպան» պատմական կատներով, որոնց վրայ պէտք է աւելցնել Թուրք գատմագէտներու Համժողովը՝ ուր կարեւոր լոյս մը սփռուեցաւ Թուրք ժողովուրդի սկզբնագրամական անցեալին վրայ:

×

Պէտք է ետ երթալ այժմ 1200 ձիգ տարիներ, անցնիլ Թուրք լեզուի ու գրականութեան արդի Թուրանական – ազգայնական շարժումին վրայէն, անցնիլ նաեւ Իպրահիմ Շինասիներու ու Նամըք Քէմալներու նախաձեռնած Թուրք – եւրոպական գրական չըլլանն ալ, ու յետոյ տողանցել Թուրք դասական չըլլանին փառքերէն Շէյխ Կամիլ Տէվէլ, Նէապի, Նամըք, Նէֆիլի, Ֆուզուլիի ու Պաքիի առջեւէն, անցք տալ նաեւ սուֆիներու չարքին, Եունուս Իմրէն, Նէսիմին, ու մանաւանդ վերոյիշեալ 600ամեայ յոբելեար Աչրք փաչան (իր կարիպնամէով) որ հայերէն ալ դիտեր, —բոլոր այս դէմքերն ալ յիշատակուելու իրաւունքը ունին այս հանդիսաւոր առթիւ—վերջապէս դուրս ելլելու համար Օսմանցի Թուրքերու գրականութենէն: Պէտք է ցատկել նաեւ Սելճուքներու, Ձաղաթներու, եւ նոյն իսկ Ույղուրներու Թուրք գրականութեան վրայէն՝ որպէս զի հասնինք Քէօք – Թիւրք գրականութեան, որ մեզ այսպէս կը տանի 1200 ամեակ մը ետ, ու ե՛տ նաեւ դէպ ի Մոնկոլիոյ սահմանները:

Արեւելեան Թուրքերու հնագոյն ներկայացուցիչներէն Քէօք – Թիւրք ժողովուրդին Քիւլ – Թէգինի էշխանն էր որ 731 Թուին կը վախճանի, որուն ի յիշատակ չինացի կայսրը կոթող մը կանգնել կուտայ, քէօք – Թիւրք այրուբենով գրուած բաւական երկար արձանագրութիւնով մը: Այդ գրութեան վերջին հատուածները կ'ըսեն, բնիկ լեզուով՝

«Քիւլ – Թիկին ոչխար տարուոյ քառասնեօթին (օրը) Թուաւ (վախճանեցաւ): Իններուդ ամսուն երեսունըեօթին՝ սուգ (յուղարկաւորութիւն) ըրինք: (Իր) տունը (դամբան – տաճարը), արձանը, գրելու – քարը (կոթողը) կապկի տարւոյն եօթներորդ ամսոյն 37ին մեծ (բազմութեամբ) օրհնեցինք (բացումը կատարեցինք)...:

«Ինչքան (կը վերաբերի) (այս) գրութիւնը գրողին՝ Քիւլ – Թիկինին զարմիկը (ես) Եօլիկ – Թիկին գրեցի: Քանի օր (հոս) մնալով՝ այս քարին վրայ, այս բազմաթիւ նշանները (ես) Եօլիկ – Թիկին գրեցի)...:

Նախ՝ բացայայտօրէն կը յիշատակուի հեղինակին անունը որ է Եօլիկ – Թիկին, այսինքն՝ Եօլիկ – իշխան (դիկին՝ արքայազուն իշխան ըսել է), որ հանդուցեալ խանին կամ խորթ եղբայրն էր կամ հօրեղբօրորդին եւ կամ զարմիկը (ճշդուած չըլլալով քէօք – Թիւրք ադր բառին ճշգրիտ իմաստը): Ինք էր որ նախ այդ գրութիւնը չարաբեր ու յետոյ, ինչպէս անձամբ կ'ըսէ, քանի օր այդ ամայի ու կիպիչ վայրը մնալով քարին վրայ ուրուագծեր է այդ քէօք – Թիւրք 10,000 դիրերը, անոնց փորագրութիւնը ձգելով չինացի վարպետներու (այդպէս պէտք է խորհիլ, քանի որ 10,000 դիր վիմագրելը 20 օրէ աւելի ժամանակ կը պահանջէ):

Յետոյ կուգայ արձանագրութեան Թուականը: Քէօք – Թիւրքերը, ինչպէս չատ մը Ասիացի ժողովուրդներ, կը գործածէին տարի մը՝ որ կը հաշուէր 12 տարիներց չրջաններով:

Մեր ձեռքը հասած Թուրք հնագոյն յիշատակարանին հեղինակը, ուրեմն, Եօլիկ – Թիկինն է, ու Թուականն ալ 1 օգոստ. 732: Որով, այս օր 1 օգոստոս 1932ը կը հանդիսաւորէ այդ պատմական ու խիստ նշանակելի Թուականին 1200ամեակը, օրուայ հերոս ունենալով ԵՕԼԻԿ իշխան – գրագէտը, հայր ու հիմնադիր բոլոր Թուրք գրականութիւններու:

ԿԸ ԽՆԴՐՈՒԻ յօդուածագիրները եւ թղթակիցները իրենց գրութիւնները գրել թուղթին մէկ երեսին վրայ եւ մէյ մը ալ:

ԳՐԵԼ ԿԱՐԵԼԻ ԵՂԱԾԻՆ ՁԱՓ ՄԱԳՈՒԻՐ, բանի որ մեծ մասամբ տողաշարով կը շարուի ՅԱՌԱՋը:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ԳԱՂՈՒԹԷ ԳԱՂՈՒԹ

ՀԱՅ ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒ ԲԱՆԱԿՈՒՄԸ

— :-: —

ՆԻՍ, 20 Օգոստոս.— Է. Մ. Ը. Մ.ի հայ սկաուտները, Փարիզէն, Մարսէյլէն ու Նիսէն, մօտ 92 հոգի, բանակած են, ամիսէ մը ի վեր, Նիսի եւ Անթիպի միջեւ, Գայլ գետին բերանը (Bouche du Loup), Մէյերկրականի վրայ: Գեղեցիկ եւ օգաստուն վայր մը, որ բարձրաւանդակի մը նման կը նայի ծովուն: Զիթենիի եւ եղեւինի ծառերուն մէջ կորսուած են տասնէ աւելի վրաններ, եւ այդ կանչուելեան վրայ՝ ծիսանքը հայ եռագոյնին: Հայ սկաուտներու բանակավայրէն հարիւր քայլ դէպի արեւմուտք, բանակած են ռուս սկաուտները, գրեթէ 3 ամիսէ ի վեր: Արդէն սկսած է բարեկամութիւնը հայ եւ ռուս սկաուտներուն միջեւ: Եղած են քանի մը հանդիպումներ, Ռուսերը այցելութեան եկած են հայկական բանակավայրը, լսելու հայ երգերը, եւ հայ սկաուտները գացած են ռուսական բանակավայրը, լսելու ռուսական երգերը:

Հայ սկաուտներու բանակավայրին տակը կը գտնուի ափսրակ մը, առջեւը արմաւենի ծառեր: Ռուս սկաուտներու բանակավայրին տակը կը գտնուի ձէթի գործարան մը, «Ջաղացք», գետակին վրայ հաստատուած: Աւելի վարը հաստատուր կարապատ ճամբան, որ առուն արեւածագէն մինչեւ կէս գիշեր կը տքայ սուրացող ինքնաշարժերու տակ, այնքան բանուկ ճամբայ մըն է ան: Ու քիչ վարը ծովը, իր փրփուրով ու կապոյտով: Ամէն առտու, ժամը 6.30ին կ'արթննան հայ սկաուտները եւ կարգ կապած կ'երթան լուացուելու, լողալու ծովուն մէջ: Սկաուտները կը նախընտրեն ծովը, գայլուկները՝ գետակին ջուրը: Ծուվերերքը հաստատուած են նաեւ ֆրանսացի ընտանիքներ, օգափոխութեան եկած: Ադարակապանէն, չաղացպանէն մինչեւ այս հիւր Յրանսացիները, բոլորն ալ ծանօթ են հայ սկաուտներուն: Կը ճանչնան զանոնք ու համակրալից ժպիտ մը ունին անպայման անոնց հանդէպ:

Մոռնա՞նք ժիժինները,—առաւօտնէ մինչեւ իրիկուն, եղեւիններուն ձիթենիներուն էլէկտրականութերը ժիժիներուն, ծոյլ ու ժիօրիակ ժիժինչին, թէեւ մեր մեղաւոր ժիր սկաուտները երբեք ականջ չեն տար անոնց ծուլութեան հրաւէրին: Մի մոռնաք նաեւ ծղրիթները, — ամբողջ գիշերը կ'երգեն անոնք ծովուն եզերքէն մինչեւ բարձունքները: Հապա օգոստոսի շողն ու քրտինքը: Բարեբախտաբար զով է գիշերը, երբ կը պլպլան աստղերը եւ լուսնկան, վահաղնի աչքերուն պէս հրավառ, կը բարձրանայ ծովէն, երկունքի պատրանքը տալով երփներանգ ծովուն:

Հայ սկաուտները կէսօրէն վերջը կ'անցընեն ծովուն եզերքը, ջուրի իրական տօն մը, լոգանք, մարզանք, երգ, նոյնիսկ շարականներ:

Վաղը կիրակի հանդէս ունին, եւ պատրաստութեան մէջ են բոլորը: Արմաւենիի ճիւղերով կամար են շինած, ժասրենիի ճիւղերով տախտակ մը հիւսած, վրան սկաուտական խօսքեր:

ՄԱՄՈՒԼ

Ի՞ՆՉ ԿԸ ԲԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԱՒ. ԻՍԱՀԱԿԵԱՆ

— :-: —

«Ազդակ» վերի խորագրով յօդուածի մը մէջ հետեւեալը կը գրէ Աւ. Իսահակեան:

«Տարիներ առաջ Դաշնակցութեան խորշակահար թթենիէն ինկած քանի մը զեղնած տերեւներ: Ոմանք համոզուեցան որ այլեւս չպիտի կրնան քալել հին ուղիներով: Ոմանք նպատակայարմար գտան չարունակել զինքզինք ճամբաներ, եւ եղան մարդիկ ալ որոնք չուշենալով ոչ մէկ ըսելիք, «հայրենիքի կարօտը ինձ քաշեց, Հայաստան եմ գնալու» ըսելով մեկնեցան Հայաստան: Այս վերջիններու մէջ էր ծանօթ բանաստեղծ Պ. Աւ. Իսահակեան, որ Հայաստան մուտքին երգեց «Աբու Մահարի»ի վերադարձը դէպի հայրենի երկիրը, չ՛ոչ յուզիչ բանաստեղծական բառերով: Այսքանը չատ լաւ: Բայց հայրենիքի կարօտովը մեկնող «Աբու Մահարի»ն հազիւ կարողացաւ համբերել մէկ տարի հայրենի արեւուն տակ, ու վազէ վազ վերադարձաւ հոն, ուր որ էր նախապէս:

Այդ օրերուն վրայէն անցեր են բազմաթիւ ուրիշ օրեր, եւ մոռացութիւնը եկած տարած է մեր բանաստեղծի երթ ու գարձի պատմութիւնը: Բայց Աւ. Իսահակեանը կ'երեւայ թէ չի սիրեր մոռացութիւնը: Ու այս անգամ դուրս կուգայ երեւի իր պարզ գոյնով:

— «Մեր բարեկամներին» Ռամկավարներուն բռնած ղեղքը վերջապէս բոլորովին բիւրեղացաւ, անցան դաշնակներն կողմը, եւ գերկ-գերկի տօնեցին Մայիս 28»: Այս խօսքերը կը պատկանին Պ. Աւ. Իսահակեանին, գրուած Երեւանի «Գրական թերթ»ի մէջ:

Իրա՞ւ, Պ. Իսահակեան, ճի՞շդ է որ Ռամկավարները տօնեցին Մայիս 28ը Դաշնակներու հետ: Ի՞նչպէս գրեցիք այդ զարմանալի հեքեաթը, որուն ճշդութեան հաւատալու անհեղութիւնը ձեզ կը պակսի դժբախտաբար:

Եւ յետոյ՝

— «Այդ երկու փոսած, յետադէմ տիրացուական կուսակցութիւնները հիմա չատ աչխուժացել են այն չափով, թէ Միութիւնը պատերազմի կը բռնուի Ճափոնիայի հետ, կը պարտուի կարմիր բանակը, Ռուսիայում կը սկսուին ըստ հին սովորութեան, ըմբոստացումներ, իրարանցումներ, եւրոպական պետութիւնների միջամտութիւններ, խորհ. կարգերու տապալում, կը ծնուի «դեմոկրատիք» Ռուսիա եւ հիմնապէս իրենց իշխանութեանց վերադարձ: Լրջօրէն հաւատում են, հոգեպէս եւ գործնականապէս պատրաստուում են»:

Ո՞ւրկէ սորվեցաք այս տեսակ համարձակ քաղաքական ճամարտակութիւններ ընել, «քաղաքագէտ» Իսահակեան: «Հաւատում են լրջօրէն...» Ըսէ՛ք, խնդրեմ, դուք կը հաւատա՞ք լրջօրէն ձեր այս նորօրինակ խաստութեան: Ու հիմա ստիպուած ենք ծիծաղիլ լրջօրէ՞ն...:

Շա՛տ ուշ էք ինացեր, Պ. Իսահակեան, պէտք էր աճապարէիք ձայն բռնելու համար այն դատարկամիտ ու ամբոխային հոգեբանութեամբ ժարդոց ազմուկին, որոնք միժամանակ հրապարակի վրայ կը ծաղրէին ձեր այսօրուան ֆրազները:

Անճիշդ տեղեկութիւններով մատքը պղտորելով ապրիլը, Ռ. Ա. կուսակցութիւնը տիրացուական-պուրժուական ներկայացնելն ու բամբասելը որեւիցէ առաքինութիւն չէ:

Ռամկավարներու հակախորհրդային դիրքէն կամ կեղծ բարեկամութենէն ճառող Իսահակեաններն ու նմանները ի՞նչ փաստ ունին արժեցնելու համար իրենց ըսածները: Ռ. Ա. կուսակցութեան համոզումները տարբերութիւնը խորհրդային վարիչներու ընկերային ուղղութեան հետ բաւականին զօրեղ ապացոյցներ չեն զայն թշնամի ներկայացնելու համար երկրի օրաւան իշխանութեան:

Տասներկու տարիներէ ի վեր արժատախիլ, աշխարհի երեսին տաշտղնուած այս տարագիր ժողովուրդին համար հետաքրքրականը ձեր խաժաճիկի խաղերը չեն: Օտարութեան դառնութիւններով ու վտանգներով շրջապատուած զաղութահայութիւնը կը տանջուի հայրենիքի կարօտով.— սա էլ է ուզուժ գնալ Հայաստան: Եւ երթալ, առանց կրկին կարօտնալու Փարիզի փարթամ քաֆէներն ու պուլվարները: Կ'ուզէ երթալ փաթթուիլ դարաւոր մօրը, համբուրել հայրենի հողը, իր երջանկութեան ու զժբախտութեան արցունքները խառնել անոր, լալ ու երգել, եւ կապուիլ հայրենիքի վերակառուցման աշխատանքին:

Տղաքը բոլորն ալ կը կրեին օձուժը բնութեան եւ արեւին: Դեռ վրան չչարած, շաբաթ մը հիւրընկալուած էին Նիսի մէջ, Մասալէն թաղը, հայ գաղութին կողմէ: Նկեղեցին տրամադրուած էր իրրեւ առնոց օթեւան: Պ. Պանտիկեան իր սրճարանին մէջ թէյասեղան մը տուած, իսկ Պ. Ժամկոչեան կէսօրուան ճաշով մը (պիֆթէք ու փիլաւ) պատուած զանոնք:

Ինչպէս կը տեսնուի, բախտաւոր են մեր սկաուտները եւ կը վայելեն ամէնուն համակրանքը,— եւ ուրախ՝ կ'ուտեն, կը լողան եւ կ'երգեն ժիժիներու պէս:

Անցորդ

Կարդացէք եւ Տարածեցէք «ՅԱՌԱՋ»ը

ՀԱՅՐԵՆԻ ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐ

(ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆԸ)

Հայաստան Բնական եւ Քաղաքական

Բ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Իր մօտերը կը գտնուին Մելաս գետին քով՝ Կոկիսոն (Կէօքսու), Բարձր թերդ (Պէրպէրթ) եւ Կապադովկիական Կոմանայի (*) աւերակները: Կոկիսոն աքսորուած է Յովհան Ոսկեբերան:

Կոկիսոնի մօտ կը գտնուի Կապան թերդ, ուր ամբացած է Կիլիկեան վերջին Թագաւորը Լեւոն Ե. Լուսինեան՝ իր ընտանիքով եւ իննն ամիս պաշարուելէ վերջ եդիպտացիներէն, սովէն նեղուելով անձնատուր եղած է: Թէեւ չատեր անհաւանական կը նկատեն Լեւոնի հոս ապաստանիլը:

Եդիպտոսի Մելիք – Էշրէֆ – Շապան Սուլթանը պինդը շղթայակապ իր ընտանիքովը տարած է Եդիպտոս, ուր Լեւոն 7 տարի մնալէ վերջ Աբակոնի եւ Քաթթիլլի Թագաւորներուն մէջնորդութեամբը ազատած եւ անցած է նախ Սպանիա եւ հոն երեք տարի մնալէ վերջ անցած է Փարիզ, ուր երեք տարի Լուվրի պալատը (այժմ Թանգարան) բնակելէ յետոյ մեռած եւ Թաղուած է Կեղեստինեանց եկեղեցին (*) մէջ:

Լեւոնի մարմինը անյայտ կը մնայ, միայն իր տապանաքարը իր արձանով միասին կը գտնուի Փարիզի մօտ Սէն – Տընիի եկեղեցին մէջ:

ԱՆՏԻՈՔ (Անթաքիա).— Քրիստոսէ 3000 տարի առաջ Ասորիներու Սելեւկոս Նիկատոր Թագաւորը հիմնեց այս քաղաքը եւ իր հօր՝ Անտիոքոսի անունով կոչեց զայն:

Առաջին քրիստոնեաները հոս հաւատացին Քրիստոսի:

Եղած է Սելեւկիոյ նախկին մայրաքաղաքը եւ Յաշակիրներու ժամանակ ունեցած է 100,000է աւելի բնակիչ:

Շատ անգամ կործանած է երկրաշարժներէ:

ԱՂԵՔՍԱՆԴՐԵԱԿ (Իսքէնտէրուն.— Մի՛ջերկրականի վրայ նաւահանգիստ, որ այժմ Թրանսայի հովանաւորութեան տակ մաս կը կազմէ Սուրիոյ:

Իր ճահիճներուն պատճառաւ կլիման վատառողջ է:

Միջին դարուն կոչուեցաւ նաեւ Փոքր – Աղեքսանդրիա (*). իսկ իր հին անունն էր Աղեքսանդրիա առ Իսսոսիւ (**) կամ Աղեքսանդրիա Կիլիկիոյ: Շատ վնասուեցաւ 1823ի երկրաշարժէն:

Ընդհանրապէս ընդունուած է որ հիմնուած է Մեծն – Աղեքսանդրի ձեռքով, է յիշատակ Պարսից Դարեհ Թագաւորին վրայ տարած իր յաղթանակին:

Կիլիկիոյ կամ Թուրքիոյ իշխանութեան մաս կազմած են վերջին Սելեւկիա (Զիլիֆկէ), Աղեքսանդրեակ (Իսքէնտէրուն), Ատալիա (Սատալիա), Լարանտա (Գարաման), Կիւրիստոս (***) (Հերակլիա = [Գոնիա] Էրեյլի), Կատիւրա (Նիյտէ), Գերմանիկուպոլիս (Էրմէնէկ), Կոռիկոս, Ասիամուր, Ալայա, իսկ Առանայի նահանգէն դուրս՝ Հալէպի նահանգին մէջ Գերմանիկ (Մարաչ, Այնթապ, Զէյթուն, Արեգին (Ալեպաչ), Կապան Հռոմկլայ, Պէյլան, Տլուէ (*), Բլուր Աւետաց (**) (Թլպաշար) եւ Պոզանդոս (Պօղանդի):

Ծանօթ.— Սելեւկիոյ հիւսիսային արեւելեան կողմը՝ ծովեզերքին մօտ կ'երեւին ելեւսա կամ Սեթաստոս քաղաքին աւերակները, որոնք այժմ ծանօթ են Այաշ անունով:

Գ.

ԱՐԴԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Այս գլուխով ՀԱՅԱՍՏԱՆ ըսելով պիտի հասկնանք այն հողամասը, որ ներկայիս Հայերուն ձեռքն է եւ չազատագրուած (Irredenta) Հայաստանէն զանազանելու համար կ'ըսենք Արդի Հայաստան կամ ներկայ Հայաստան, որ իր վարչաձեւին պատճառաւ կը կոչուի խորհրդային Հայաստան:

Բայց, «Հայաստան պիտի երթամ», «Հայաստանէն եկաւ», «Հայաստան եղբայր մը ունիմ», «Հայաստանէն նամակ կը սպասեմ» բացատրութիւններով պիտի հասկնանք մանաւանդ պէտք Նեղկայ Հայաստանը:

ՍԱՀՄԱՆ.— Հայաստանի սահմաններն են, հիւսիսէն՝ Վրաստան, ուր կան 380,000 Հայ, մայրաքաղաք Տփղիս կամ Թիֆլիս. հոս Հայերը ունին տպարաններ, վարժարաններ ու եկեղեցի: Արեւելքէն՝ Ադրբէջան, ուր կան 285,000 Հայ. մայրաքաղաք՝ Պաքու՝ կասպից ծովին վրայ նաւահանգիստ. ունի նաւթահորեր, որոնցմէ ոմանք Հայերու կը պատկանին Մեծ – Պատերազմէն առաջ: Հարաւէն Պարսկաստան, ուր կան 150,000 Հայեր. մայրաքաղաք՝ Թէհրան: Արեւելքէն՝ Թրքահայաստան, որ այժմ մաս կը կազմէ Թուրքիոյ:

ԴԻՐՔԸ.— Հայաստան լեռնոտ երկիր մըն է: Գրեթէ ամբողջութեամբ լեռներով ծածկուած է իր հարաւային արեւելեան մասը: Իսկ իր հիւսիսային արեւմտեան մասը թէեւ լեռնոտ է, բայց ոչ միւս մասերուն նման:

ՅՈՎՀ. ՊԱՊԻՍԵԱՆ

(Շար.)

(*) Եւդոկիոյ (Թոքատ) մօտերը կան Պոնտական Կոմանայի (Comana Pontica) աւերակները: Կապադովկիական Կոմանան (Comana Cappadocica) ալ ծանօթ է հինէն ի վեր:

(*) Այժմ զօրանոց ի Փարիզ Boulevard Henri IV թիւ 16ի եւ Rue Sully ի անկիւնը:

(*) Alexandria Minor.

(**) A. ad Issum (Իսսոսի ծոցին վրայ գտնուելուն պատճառաւ այսպէս կոչուած է):

(***) Այս բաղաբը կիլիկիոյ կուսակալ Հռոմայեցի կիկերոնի ձմերանոցը եղած է:

(*) Լատիներուն Doliche կամ Tulupa կոչածը:

(**) Լատիներուն Turbessel (Թլպաշար) անուանածը:

Մուսուլիի կը բարբառի

«Էքսէլսիօր» օգոստ. 21ին հրատարակեց Մուսուլինիի մէկ յօդուածը, Լօզանի խորհրդաժողովի արդիւնքներու մասին:

«Տուզէ»ին կարծիքով, պատերազմէն ի վեր գումարուած ժողովներուն մէջ Լօզանի խորհրդաժողովը անկասկած ամէնէն դրական արդիւնքներուն յանգեցաւ, թէեւ, Լօզանի մէջ ալ քաղաքականը կը պակսէր հարցերու խորը մտանելու, գոնէ եւրոպական խնդիրներու մասին: Մուսուլինի չի հաւատար որ Մ. Նահանգները մասնակցին յառաջիկայ համաչխարհային խորհրդաժողովին: Եւրոպան պէտք եւ Մ. Նահանգներու միացեալ ջանքերը միայն կրնան առողջացնել հիւանդը, բայց յամրոգութիւնը կասկածելի է, եթէ Մ. Նահանգները սրտանց եւ բարեացակամութեամբ չգործակցին: Ասոր համար ալ, անհրաժեշտ է որ փարատի այն հիւանդագին կասկածը թէ եւրոպական ճակատ մը կազմուած է Մ. Նահանգներուն դէմ: Եւրոպական ազգերը ազատօրէն ընդունած են Մ. Նահանգներուն ուժը՝ իրենց խորհուրդներ տալու եւ ուղղակի դեր կատարելու իրենց բանակցութեանց մէջ:

Լօզանը — կը շարունակէ Մուսուլինի — վերցուց «հատուցումներ» բառը միջազգային բառարանէն: Տասը տարուան աշխատանք պէտք եղաւ, որոշումի մը յանգեցնելու համար եւրոպական պետութիւնները. որոշում մը տրուեցաւ միայն ղէպքերու ճնշման տակ: Ինքն էր որ, 1922ին, առաջարկեց «սրբել քարետախտակը»: Ցաջորդ տարիները ցոյց տուին թէ հատուցումները ո՛ր աստիճան պատճառ եղած են աշխարհի անհաստատ վիճակին: Այդ տարիներու ընթացքին երեւան եկաւ թէ ազգ մը որ անդունդին ափը կը հասնի, ուրիշներն ալ կը քաշէ իր եռեւէն: Լօզանի խորհրդաժողովը առաջին քայլն եղաւ, ապրանքներու եւ դրամներու փոխանակութիւնը հաստատուն վիճակի մէջ դնելու համար: Եւ Իտալիան ճամբայ ցուցուց, առաջին քայլն առնելով օգնելու համար դանուբեան պետութեանց, հակառակ այդ ձեռնարկին պարտադրուած զոհողութեանց:

Բայց, Մուսուլինի անհերքելի կը գտնէ որ հին պարտքերու վճարումը պահանջուի երկրի առեւտուրին գնով: Այդ սովորութեան համաձայն, գրեթէ ամէն ազգ 50 առ 100, երբեմն աւելի, կորսնցուցած է իր վաճառականութիւնը, ներկայ տագնապի ընթացքին: Այս ձեւով կորսուած ղրամը պիտի բաւէր 20 — 30 անգամ աւելի վճարելու հատուցումները եւ պատերազմական պարտքերը: Աւելի լաւ է բարձր տուրքեր ունենալ լաւ առեւտուրով, քան թեթեւ տուրքեր՝ առանց առեւտուրի: Ցառաջիկայ համաչխարհային խորհրդաժողովին կ'ենթակայ լրացնել Լօզանի գործը: Այժմ սեղանի վրայ կայ եւրոպական համաձայնութեան ծրագիր մը՝ վերջին տասը տարիներու խնդիրներու մասին: Խորհրդաժողովին առաջին հոգը պէտք է ըլլայ առեւտուրի վերակենդանացումը, իսկ այդ կը յաջողի միայն Եւրոպայի եւ Մ. Նահանգներու գործակցութեամբ: Դառն փորձառութիւնը հաստատեց թէ այսօր աշխարհի ամէնէն ոսխոզական պէտքն է միջազգային ուժերու վերածնութիւնը եւ փոխադարձ կասկածներու փարատումը: Ներկայ տագնապին երկարաձգումը անխուսափելի կերպով յառաջ պիտի բերէ կասկած եւ անվստահութիւն՝ այն քաղաքական եւ տնտեսական սկզբունքներու մասին որ տակաւին հիմը կը կազմեն արեւմտեան քաղաքակրթութեան:

196 ժամ օդին մէջ

Օգոստոս 14ի կիրակիէն ի վեր, երկու մանկամարդ Ամերիկուհիներ կը սաւառնէին Նիւ Եորքի եւ շրջականերու վերեւ, օդարշաւի տեղեկութեան կնոջական մրցանիշը շահելու համար:

Երկու Ամերիկուհիները վար իջան երկուշաբթի օր, 196 ժամ մնալով օդին մէջ, ինչ որ նոր մրցանիշ մը կը կազմէ տեղեկութեան: Նախորդ մրցանիշն էր 122 ժամ 50 վայրկեան, զոր շահեցան երկու օդաճաւորդներ, անցեալ յունուարին:

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

ԱԼՊԱՆԻՈՑ թազաւորին դէմ մահափորձ մը երեւան հանուած է, կը գրեն Լոնտոնի թերթերը: Ձերբակալուած են խումբ մը խղճամտական գործիչներ: Կ'ըսուի թէ դաւադրութիւնը կազմակերպած են խումբ մը Ալպանացի ազատականներ որ Փարիզ կը գտնուին:

ՕԴԱՆԱՅ ՄԸ ինկաւ, Հռոմի մէջ, մանուկներու գաղութի մը վրայ, բռնկցնելով զայն: երկու օդաճաւորդները վայրկենապէս մեռան: Իսկ երկու եղբայրներ ածխացան: Ծանրապէս վիրաւորուեցան նաեւ երկու աղջիկներ:

× երէկ գերման օդաճաւորդներ, որոնք վերջերս Եւրոպայէն Ամերիկա թռեր էին, նոր արշաւի մը ձեռնարկեցին առջի օր, աշխարհի շրջանը կատարելու համար:

Ց.



Փարիզ եւ արուարձանները

ԱՒՏՈՐՎԻԼԻ Ս. Մինասեան ենթակոմիտէի ընդհ. ժողովը այս Շաբաթ իրիկուն ժամը 8.30ին Հայ Ակումբին մէջ: Զեկոյց պատգամաւորին կողմէ եւ ուրիշ օրակարգեր: Բոլոր ընկերներու ներկայութիւնը պարտաւորիչ է:

ՓԱՐԻԶԻ կոմիտէն ընդհանրական ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր բոլոր ընկերները այս Շաբաթ իրիկուն ժամը 8.30ին սալ Միւթիւալիթէի մէջ, 24 rue St. Victor: Օրակարգի շարունակութիւն: Պարտաւորիչ ներկայութիւն:

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ ԼԻՈՆԻ ՄԷՋ

Կազմակերպուած Լիոնի «Հայ Արի» գայլիկներու Արծուիկ խումբի կողմէ, այս կիրակի առաւօտէն մինչեւ իրիկուն à la Belle Colline: Կը նախագահէ՝ Պ. Վ. ՁՈՒՂՈՒՐԵԱՆ

Եւրոպական եւ հայկական պարեր, Գայլիկներու եւ սկաուտներու տոդանցք, դրօշարշաւ, վազք, բուրգեր եւայլն:

Հանդէսը պիտի շարժանկարուի: Հանդէսի մուտքը օթօքարի ծախքով միասին, երեք ու դարձ՝ 4 ֆրանք:

Մեկնումը Փլաս Կիշարէն առաւօտեան ժամը 9 եւ 11, իսկ կէսօրէ վերջ ժամը 1.30ին:

Այրի Տիկ. Ասլի եւ զաւակունք (Փարիզ), *Տէր* եւ *Տիկ. Սարգիս Ասատուրեան* (Նիւ Եորք), *Նկատար Գաբրիէլեան* (Պարսկաստան), *Մովսէս Սալաղեան* (Պարկաստան), *Ղահրաման Թումանեան* (Պարսկաստան) կը ծանուցանեն իրենց զաւկին, եղբօր եւ ազգականին՝

Պ. ԱՐՇԱԿ ԳԷՈՐԳԵԱՆԻ

դառնաղէտ մահը որ տեղի ունեցաւ 21 Օգոստոսին, Կիրակի օր:

Յուղարկաւորութիւնը կը կատարուի այսօր Շորեքշաբթի կէս օրէ վերջ ժամը 3.30ին:

Hôpital Bichat (*Փորթ Մէյնթ Ուէն*) ուրկից հանգուցեալին մարմինը կը փոխադրուի Nouveau Cimetière (Clichy), 82 rue du Général Rouget:

Հանգուցեալին քնակարանի հասցէն՝ 83 Bd. de Lorraine, Clichy.

ՇԱՆՕԹ.— Մասնաւոր մահագդ ղրկուած չըլլալով կը խնդրուի ներկայս իբր այդ նկատել:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԸՆՏԱՆԵԿԱՆ դաշտահանդէս, «Կոմիտաս» երկսեռ երգչախումբի, այս Կիրակի Մէտոնի անտառին մէջ:

Ժամադրավայր կար տէ ղ'Էնվալիտ, առաւօտ ժամը 8.30—9:

Կը հրաւիրուին բոլոր երկսեռ անդամները, համակիրներն ու բարեկամները:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

ՖՐԱՆՍԱՀԱՅ Կ. Խաչի վարչութիւնը իր շնորհակալութիւնները կը յայտնէ ամէն անոնց որոնք, իրենց մասնակցութիւնը բերին օգոստ. 14ի դաշտահանդէսին եւ ի մասնաւորի հայկական հարսանիքի կազմակերպման առթիւ:

ՄԱՍՆԱԳԷՏ ԲԺԻՇԿՆԵՐ

96 R, Rivoli, մէթ. Շանլէ: Ամմատ. եւ նոր մեթոտ, դարմ. արանց եւ կանանց մորթի, արեան՝ մեներ. ֆիւանդութիւն եւ վարիսի: Ամէն օր 9—12, 2—8, կիրակի 9—12:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ, Կեանքը, թ. Ազատեան 15 ֆրանք, *ԾԱՆՕԹ ԴԻՄՔԵՐ ՈՒ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ*, Գ. Չօիրալ 20, *ՆԱՀԱՏԱԿ ԴՐՈՂՆԵՐ* (Տ. Չէօկիւրեան եւ Ի. Սեւակ), Ա. Սեւան 15, *ԱՐԵՒՈՑ ՃԱՄԲԱՆ*, Մաննիկ Պէրպէրեան 10, *ԵՏՔԸ*, Էրիխ Մարիա Ռեմարք 20, *ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆԻ ՄՏՔԵՐԸ*, Քրիստ.Միքայէլեան 10, *ԽԵՂՔԸ եւ ՋԱԼԱԼԷՏԻՆ՝* Բաֆֆի 25, *ՎԱՀԱՆԹԻՆ*, Ժորժ Սան 20, *ԹԻՐՖԱՆԴՕ*, (Բիւզանդիոնի կայսրուհին) 25, *ԱՊՐՈՒՄՆԵՐ*, Մալխաս 50, *ԳՆԴԱԿԱՁԱՐՈՒԱԾՔՆԵՐԸ*, Ռէն 20, *ԵՐԵՔ ԸՆԿԵՐՆԵՐԸ*, Ղ. Մելոյեան 10, *ՍԱԼԻՀԱ ՀԱՆԸՄ*, Ե. Սահեան 2 հատոր 30 ֆր., *ԺԻՏԷՔՍ ԵՒ ԺԱՔԼԻՆ*, Ա. Պէրնէտ 2 հատոր 65 ֆր., *ՍԻՄՕՆ ՓԷՂԼԻՎԱՆ* 25, *ՀՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՂՋԻԿԸ*, Քասիմ 2 հատոր 25, *ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ*, Յ. Ալթեան (Թոզմերի) 12.50, *ՏԱՒԻՂ ԵՒ ՈՂԵԱՑ*, Գ. Կաւաթրենց 20, *ԱՐԵՒԵԼՔԷՆ ԱՐԵՒՄՈՒՏՔ*, Նատանիկ 5, QUATRE CONFÉRENCES SUR L'ARMÉNIE, Fr. Macler 35, LES RIRES D'UNE CHARMEUSE DE SERPENTS, Armen Ohanian 15.

Դիմել՝ ԳՐԱՏՈՒՆ ՀՐԱՏ - ՍԱՄՈՒԷԼ, 51 rue Monsieur-le-Prince, Tél. Danton 88-65, *ուր կը գտնէք նաեւ Ֆրանսերէն եւ Հայերէն ամէն տեսակ գրքեր:*

E. TER-MINASSIAN

Export und import, Komissionen und Vertretungen

ցանկն կ'առնէ կատարել Գերմանիոյ մէջ վաճառքը ինչ ինչ ապրանքներու (չոր պտուղ, աղիք եւ այլ ապրանքներ), ինչպէս նաեւ գնումը դարձեալ Գերմանիոյ ամէն կարգի ապրանքներու:

կը ստանձնէ ներկայացուցչութիւնը առեւտրական, վաճառականական եւ արդիւնաբերական հաստատութեանց:

Հասցէ՝ Motzstr 29, Berlin w. 30, Allemagne.

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԵՒ ՁԱՐՏԱՐԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ԵԹԷ կ'ուզէք ձեր գործի տետրակները կանոնաւորել՝ ճշգրիտ ու կանոնաւոր տոմարակալութեամբ մը եւ ձեր հաշիւները համաձայնեցնել տարեվերջի օրէնքներուն հետ.

ԵԹԷ դատակոչեր առացած էք huissierներէ.

ԵԹԷ պայմանագրութիւններ ունիք շարադրելիք կամ կնքելիք.

ԵԹԷ կ'ուզէք հաշիւի կարգադրութիւն մը կամ ժամանակամիջոցի մասնագէտ.

ԿՐՆԱՄ ՁԵԶԻ ԱՄԵՆԱԱՐԱԳ ԿԵՐՊՈՎ ԳՈՀԱՑՆԵԼ

Դիմեցէ՛ք **Պ. ՓԱՐՄԱԳ**Ի, 28, Bld. de Strasbourg, Paris (X). Tél. Botzaris 17.64

որ կ'ընդունի ամէն օր ժամը 9էն 12, եւ կամ ժամադրութեամբ իր գրասենեակներուն մէջ:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

ԼԻՈՆԻ ՏԷՍԻՆԻ ՎԻՇԻՆ եւ ՇՐՋ. ՀԱՅՈՒԹԵԱՆ

Հ. ԹԱՒԻՈՍԵԱՆԻ «ՏՊ. ԵՒ ՓՐԱՏ»Ը

Փոխադրուած է 36 rue Voltaire, Lyon

R. C. Lyon A. 77.929 Tél. Moncey 58-76

կը ստանձնենք գոյնզգոյն եւ գեղատիպ տպագրական ամէն տեսակ գործեր, քաւչուէ ամէն տեսակ կնիքներ՝ դիւրամատչելի գիներով: Գաւառներէն եղած ապսպրանքներուն շուտով ընթացք կը տրուին:

Հայերու ժամադրավայրը

ճաշարան **ՓԼՕՐԻԱ**

61 Rue Monsieur le Prince, PARIS (6e)

Մէթրօ Ոտէօն եւ Սէն Միշէլ Հեռաձայն Danton 52—78

Արեւելեան եւ եւրոպական խնամուած կերակուրներ


ՃԱՇԱՐԱՆ CAUCASE

23 Rue de la Huchette, Métro St. Michel

Ռուսական եւ արեւելեան ցամեղ կերակուրներ՝ պատրաստուած յայտնի խոհարարներու կողմէ: *Ճաշի միջոցին անընդհատ նուագ*

Prix Fixe 4 պնակ կերակուր՝ 6 ֆրանք

Կարի չատուկ մօթէօրներ



1/15 ձիու ուժ մօթէօր եւ բլօսաճաճ 300 ֆրանք

1/8 » » » » 350 ֆրանք

Աժան եւ ճաստատուն, երկու տարուան երաշխաւորութեան վկայական, պահանջեցէք մեր ներկայացուցիչը՝

HOVHANESSIAN ingénieur

15 rue de Vienne, Paris (8)

Կ'ընդունինք Շորեքշաբթի եւ Շաբաթ կէսօրէ ետք ժամը 3.5:

ՓԱՐԻԶԻ ամենաբերուն գլխաւոր

F. SORBIER*ի մօտ, 11 Rue Lafayette. Փարիզ: Ամբրցելի գին*

ՎԱՐՋՈՒԻ Է *կահաւորուած գեղեցիկ*

եակ մը (ընտանիքի մէջ) 260 *ֆր.,* Դիմել Mme. Gulie St. Marcel, Paris (13)

Վարձու խանութ

Լուսաւոր, կազ, ելեկտրա- թիւն, առանց բրփրիզի, դերձակի, սափրիչի, կօշկակարի ամէն առեւտրական գործի համար դիւրամատչելի պայմաններով տէր-ցակոբեան տպարան, 17 Damesme, մէթրօ Թոլպիաք:

Imp. A. DER (Agopian)
7, Rue Damesme, Paris (13)
Le Gérant H. STEPHAN

Տհսիլի մէջ «Ցառաջ»ի գործակալն է

Պ. ՎԱՀԱՆ ՀԻՒՍԵԱՆ

41, Maison l'Aurore, DÉCINES, (Isère)

Պուա Քոլոնիի մէջ «Ցառաջ» կը ծախուի

Պ. ԱՌԱՔԵԼԵԱՆԻ *արձարանին մէջ*

CAFE ARARAT

345 Ave. Argenteuil, Bois-Colombes

Բ Ո Ռ

(ՎԷՊ 1830Ի ԻՏԱԼԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՕՐԵՐԷՆ)

Հեղինակ՝ Է. ՎՈՑՆԻՉ — Թարգմ. Լ. ՇԱՆԹ

I

Ցաջորդ հինգ շաբաթը Ջեմման ու Բոռը յուզման ու աշխատանքի մէջ անց կացրին, այնպէս որ անձնական դործերի մասին մտածելու բնաւ ժամանակ չկար: Երբ ղէնքի մթերքը յաջող կերպով մոցրած էր արդէն պապական հողը, մնում էր դեռ գործի ամէնից դժւար ու վտանգաւոր մասը: Անհրաժեշտ էր ծածուկ մթերանոցներից փոխադրէին զէնքերը, դէպ ի ձորերն ու կիրճերը, բաժանելու էին տեղական կենտրոններին եւ այնտեղից էլ գիւղերը: Լրտեսները վխտում էին բոլոր այդ կողմերում եւ Դոմինիկօն, որին Բոռը յանձնել էր մթերքի փոխադրութիւնը, մարդ էր ուղարկել Ֆլորենցա ինդրելու, որ անմիջապէս օգնական ուղարկեն կամ գործը քիչ յետաձգեն: Բոռը պնդում էր, որ ամէն բան մինչեւ յունիսի կէսերը աւարտած լինի, բայց վատ ճամբաները, այլ եւ չարունակ թաքնուելու անհրաժեշտութիւնից առաջացած անվերջ արգելքներն ու դանդաղացումը կատարեալ յուսահատութեան էին մատնել Դոմինիկոյին: «Ես Սիկիլիայի ու Ամերիկայի մէջն եմ ընկել, գրում էր նա: Շատապել չեմ կարող՝ վախենալով որ ամէն բան կը բացւի, իսկ դանդաղել կարելի չէ եթէ ուզում ենք ժամանակին պատրաստ լինենք: Կամ ինձ անմիջապէս անհրաժեշտ օգնութիւնը հասցրէք կամ ասէք վենետիկցիներին, որ մենք յուլիսի սկզբից առաջ պատրաստ լինել չենք կարող»:

Բոռ նամակը բերաւ Ջեմմային, եւ մինչ վերջինս կարդում էր, ինքը մըռայլ նստել էր դորգի վրայ ու չոլում էր կաւի մաղերը հակառակ ուղղութեամբ:

— Վատ է: — ասաց Ջեմման: — Հազիւ թէ կարելի լինի ամբողջ երկու շաբաթ վենետիկցիները զսպել:

— Ի հարկէ, ո՛չ, կատարելապէս անհեթեթ բան է: Դոմինիկօն պէտք է հասկանար: Մենք ենք յարմարեցրել վենետիկցիներին, ոչ թէ նրանք մեզ:

— Բայց Դոմինիկոյին մեղադրելն էլ արդար չէ: Անշուշտ արել է, ինչ հնար էր, իսկ անհնարը պահանջել չի կարելի:

— Մենակ է, մենակ: Պէտք է մի պատասխանատու մարդ, որ մթերանոցը պահէ, իսկ մի ուրիշը, որ հետեւի փոխադրութեանը: Անհրաժեշտ է նրան մի վստահելի օգնական ուղարկենք:

— Ո՞ւմ ենք կարող: Ֆլորենցայում ոչ ոք չունինք:

— Լա՛ւ, ուրեմն ես-ս ինքս:

Ջեմման ետ նետուեց ու նայեց նրան:

— Ո՛չ· կարելի չէ: Ինչ վտանգաւոր է:

— Բայց եւ այնպէս ս-ստիպւած եմ, եթէ մի այլ ելք չգտնենք:

— Կը գտնենք մի այլ ելք, ուրիշ ո-չինչ: Իսկ որ դուք նորից այնտեղ գընաք, դրա մասին խօսք անգամ լինել չի կարող:

Մի յամառ ծալք կազմուեց Բոռի ներքին շրթունքի անկիւնին:

— Ջ-չգիտեմ, ինչու խօսք անգամ լինել չի կարող:

— Կը հասկանաք, եթէ մի վայրկեան հանգիստ մտածէք: Հինգ շաբաթ է միայն անց կացել ձեր վերադարձից· ամբողջ ոստիկանութիւնը ոտի է ուխտաւորի պատմութեան պատճառով ու որոնում են շրջակայքը հասկանալու համար, թէ բանն ինչումն է: Գիտեմ, որ դուք զարմանալի կերպով ծպտել գիտէք, միայն մի մոռանաք թէ ի՜նչ ահագին բազմութիւն տեսել է ձեզ Դիէկոյի կերպարանքով կամ դիւցազու տարազում· բայց ի դրանից չի կարելի ծածկել ոչ ձեր կազմութիւնը, ոչ էլ ձեր երեսի սպին:

— Շ-չատ կազեր կան աշխարհում:

— Այո՛, միայն Ռոմանիան չատ չեն այն մարդիկը, որոնք լինէին, երեսին սպի ունենայի հաշմ ձեռք, այլ եւ կապոյտ աչք թուխ դէմք:

— Աչքերի գոյնը բեւեռնով լի է փոխել:

— Բայց բոլոր մնացա՞ծը: Ոբնք, ձեր այդ նշաններով այդ տեղ գնալ, կը նշանակէ ուղղակի նել թակարդը· անպատճառ կը բակալեն:

— Բայց մ-մէկը պէտք է, որ Դոմինիկոյին:

— Ինչ օգնութիւն է դա Դոմինիկոյին, երբ ամենածանր վայրկեան ձեզ ձերբակալեն: Ձեր բոնեցրած բոլոր գործը կը փճացնի:

Սակայն Բոռին համոզելը դիւր էր: Վէճը չարունակուեց առանց է հետեւանքի: Ջեմման սկսեց ընկնելու, թէ հանդարտ յամառութեան ի՜նչ մի անսպառ աղբիւր նրա բնաւորութեան մէջ: Եթէ Ջեման այդ աստիճանի համոզուած իր իրաւունք ունենալուն, անտեղի կրտսեր վէճը ընդհատելու համար:

(Շար.)

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

LE SEUL QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : Sch. Missakian

Rédaction & Administration

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ,

17, Rue Damesme PARIS (13e)

Téléphone : Glacière 15-70

(ԵՐԹԵԼԻԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro: TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ,—

	ՏԱՐԵԿԱՆ	ՎԵՑԱՄՍԵԱՅ	ԵՈՒԱՄՍԵԱՅ
Ֆրանսա եւ գաղութներ	140 ֆրանք	70 ֆրանք	35 ֆր.
Անգլիա, Եգիպտոս, Ջուլֆերիա, Իտալիա	250 »	130 »	—
Ամերիկա	8 տոլար	5 տոլար	—
Ուրիշ երկիրներ	200 ֆրանք	100 ֆրանք	—

ՀԻՆԳՇԱԲԹԻ
25
ՕԳՈՍՏՈՍ
1932

25 AOUT
1932

Ը. ՏԱՐԻ Թիւ 1963 — Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ — ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ՊԱՏՆԷՇԻՆ ՎՐԱՅ, ՊԱՏՆԷՇԻՆ ՇՈՒՐՋԸ

Ի՞նչ ըսել ուզեցինք, երէկ, չէշտակի դնելով գաղութներու ինքնապաշտպանութեան հարցը:

Ակադեմական կամ վերացական խնդիր մը չէ որ կը յուզենք: Հեռւաբար, խօսինք աւելի պարզ: Մանրելով բառերն ու գաղափարները:

Երէկ՝ մենք ազդանշանը միայն տուինք: Կոչ մը՝ սթափելու եւ գործելու: Մանաւանդ ինքնագործունէութեան մղելու:

Խօսինք հատ – հատ:

×

Գաղութները վտանգուած են, ամէն բանէ առաջ, մեր ներքին պատակառումներով:

Անցնող տասնամեակը տխուր յիշատակարան մը կը կազմէ, այս տեսակէտէն:

Յիշատակարան մը՝ ուր կիրքն ու բթամտութիւնը, անհոգութիւնն ու գռեհիկ բարքերը իրար կը հրմշտկեն: Ամէնէն առաջ՝ թշնամին խնդացնելով:

Ելքը՝ կատարեալ ողբերգութիւն է, եթէ յառաջիկային ալ այսպէս չարունակուի:

Մնանկութիւն եւ փլուզում, բոլոր ճակատներուն վրայ:

Ոչ մէկ տարակոյս՝ ժողովուրդի դիմադրական կարողութեան մասին:

Աւելի ծանր փորձութիւններու, աւելի ահաւոր ցնցումներու դիմացած է այս ժողովուրդը:

Բայց, մի մոռնաք որ այն ատեն հոգ ու ջուր ունէինք: Լեռներ՝ մեր կռնակը եւ անծայրածիր դաշտեր՝ իրրեւ հորիզոն:

Ունէինք խոփ եւ արօր: Գիւղ եւ գիւղացի:

Այսօր, թէեւ շատ մը վէրքեր դարմանած եւ ոտքի կանգնած, բայց ունինք խորապէս խոցոտուած կողեր: Ունինք սիրտեր ապրիւնլուայ:

Եւ, «պէնզին» կամ փոշի է որ կը շնչենք, ահաւասիկ տասը տարիէ ի վեր, օտարոտի ցամաքներու վրայ:

Ուրեմն, հեռուհեռ կ'ուժասի դիմադրական կորովը: Իսկ ներքին պատակառումները ուրիշ բանի չեն ծառայեր, եթէ ոչ տատամսացնել սպառումը:

Ինչ որ կորնչուցինք, վերջին տասը տարիներու ընթացքին, անդարմանելի է:

Ուրեմն, մեր առաջին հոգը պիտի ըլլայ՝ կարճ կապել անմխիթար վէճերը, վերջ տալ ներքին պատակառումներուն, եւ համաձայնիլ սրբազան ուխտի մը շուրջը:

Ուխտի՝ յանուն գաղութներու ինքնապաշտպանութեան:

×

Գաղութները վտանգուած են, նաեւ, կարմիր – կանանչ գործակալներու յարձակուն գործունէութեամբ:

Ո՛րքան խօսինք այս մասին, քիչ է:

Եւ որքան ալ բանգէտ երեւնք, տակաւին չենք հասկնար ամբողջ անցուդարձը: Կատարուած կամ ծրագրուած արարքներուն իմաստը:

Ներգաղթի առթիւ երեւան եկած երեւոյթներն անգամ չթափեցուցին մեզ:

Թէեւ, այնտեղ ուր ներգաղթ կատարուեցաւ, սթափումը ձեւ ու մարմին կ'առնէ հետզհետէ: Կ'ակնարկենք յունահայ գաղութին:

Երեւանցիները մեթոտիկ ծրագրով մը յառաջ կը տանին իրենց կազմալուծման աշխատանքը: Կ'օգտուին մեր ներքին պատակառումներէն, կը խորացնեն ճեղքերը, եւ նոր ճեղքեր կը բանան իրենց կարգին:

Անոնք սրտառուչ բանաձեւեր ալ ունին: Կախարդական խօսքեր, որ կը խօսին մեր սրտին: Իսկ մենք, միշտ մակերեսային, յաճախ կը չփոթենք խօսքն ու գործը:

Եւ այնքան տարուած ենք ոխակալութեամբ, որ մեքենաբար ականջ կուտանք անոնց թմրուկին, իրար բզքտելու աստիճան:

Անոնք տիրաբար մտած են մեր տան մէջ, եւ բռնելով դուռներն ու պատուհանները, արշ կը խաղցնեն: Իսկ մենք ծափ կը զարնենք: «Ինծի չէ, քեզի է: Քեզի չէ, Դաշնակին է»...

Մինչդեռ, ծաղրն ու սլաքը, դաւն ու դանակը ուղղուած են բոլորին: Անխտիր բոլորին:

Եթէ եղած փորձերը չեն բաւեր, աղօթեցէք որ ներգաղթ կատարուի նաեւ Ֆրանսայի կամ Սուրիոյ մէջ, եւ կը համոզուիք:

Իսկ եթէ նորէն չհամոզուիք, պէտք պիտի ըլլայ եզրակացնել թէ արժանի ենք մեր ճակատագրին: Արժանի՝ թնդուելու, բոլոր ներու ամբոխի մը վերածուելու:

Քաղաքականօրէն որքան ալ կապուած ըլլանք Երեւանի, ազգա տար ենք մեր տան — գաղութներու — գործերը վարելու այնպէս ինչպէս կը թելադրէ արմատախիլ ժողովուրդին չահը:

Այստեղ ոչ ոք իրաւունք ունի աւելի բարձր խօսելու, քան գաղութները իրենք: Իրենց բոլոր կազմակերպութիւններով: Քաղաքական հոսանքներէն մինչեւ լարանական միութիւնները:

Եւ ո՛վ որ կը խանգարէ այս բնական օրէնքը, ներսէն կամ դուրսէն, պէտք է համարուի թշնամի հալածական բազմութիւներուն:

Թշնամիներ ունինք թաքուն: Թշնամիներ դիտակից կամ գործակից:

Պէտք է իւրաքանչիւրին իր տեղը ցուցնել: Իսկ ատոր լաւագոյն ճամբան է, — գործել:

Գործել՝ կանգնելով պատնէշին վրայ, կամ անոր բոլորտիքը:

Շ.

ՕՐԸ ՕՐԻՆ

„ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԵՑՈՒՆ...„

— :-: —

Անցեալները, Փարիզի մէկ անկիւնը, ծակի մը մէջ, մուկերու նման, ժողով մը գումարած էին «խումբ մը փարիզահայ աշխատաւորներ եւ մտաւորականներ»:

Խումբ մը ըսածդ 7—8 հոգի է:

Մուկերու այս ժողովին մէջ, մեր «Փարիզահայերը» որոշեր են··· կռուիլ պատերազմի դէմ:

Առածի կարգ անցած է, որ Հայը կը կռուի իրմէ մեծ բաներու դէմ: Զարմանալի չէ, ուրեմն, տեսնել հօքը Հայ, որ նիզակ կը ճօճեն անոդոմ Մոդոմի դէմ:

Կոխի այդ որոշման հետ, անոնք բանաձեւած են իրենց հաւատը թէ այս ընթացքով պիտի կարենան արգիլել պատերազմը: Երբ ունինք նման Տոն Քիշոթներ, ալ ինչո՞ւ վախնալ պատերազմէն, — մտէմ տուն եւ ննջենք ապահով:

Կրնամ ցոյն իսկ պարծենալ թէ միայն Հայերո՛ւն շնորհիւ է որ արգիլուած է պատերազմը: Այո՛, եթէ Հայերը պատերազմ ուզեն, — կ'ըլլայ· եթէ Հայերը պատերազմ չուզեն, — չըլլար: Նոյն իսկ Հայերը կրնան այլ եւս սպառնալ ամէնուն, աջ ձեռքին ցուցամատը բարձրացուցած՝ ըսելով· — Հիմա պատերազմ կ'ուզենք հա՛···

Այս խաղաղութիւնը կը պարտինք մեր կարմրուկներուն: Անոնք էին, որ աշխարհակալներուն արգիլեցին կոխել Ռուսիոյ կրունկին վրայ: Այս առիթով, յիշեցինք, որ Հայաստանն ալ վտանգի տակ է: Եւ յանուն Հայաստանի, խաղաղութիւն տուին ամէնուն: Ջմռոցան սպառնալ, սակայն, Դաշնակցականներուն, որոնք պատերազմ պիտի յայտարարէին աշխարհի դէմ, եթէ չըլլային խումբ մը··· մուկերը: Սարսափեր են, որ ԴՐՕՇԱԿը գրեր է թէ «Սուրիան հայկական ամենամեծ գաղութն է, որ կեցած հայրենիքի դրան առջեւ, ակնդէտ հետեւում է դէպքերի ծաւալման: Ապագայ անակնկալների պահուն, նա առաջինը կը լինի տեղից շարժուղն ու հայրենիք մտնողը»: Ու մեր կարմիրները, վախնալով որ, երբ արտասահմանի Հայերը հայրենիք մտնեն, կը վտանգուի Հայաստանը (կարդացէք Ռուսիան), ուզեր են արգիլել որ եւ է զինեալ յարձակում:

Եւ ձիթենի բաշխեր են ամէնուն:

Այս կարմրուկներէն մէկը, որ պատերազմի դէմ հանուած թռուցիկի մը տակ կը ստորագրէ *Թոփուզ*, մեզի վստահութիւն չի ներշնչեր սակայն իր խաղաղասիրութեան մասին: *Թոփուզ* կրող մը կրնա՞յ խաղաղութիւն խոստանալ: Ցանուն խաղաղասիրութեան՝ ըսէ, գոնէ *Յանձ* ստորագրէիր, մարդ Աստուծոյ:

ՀԱՐԹՈՑ

ՅԵՆԹ ՈՒ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Դամասկոս հրատարակուող «էլիֆ Պա» թերթը իր վերջին թիւին մէջ հետեւեալը կը գրէ Ազգ· Գատաոականի ընտրութիւններուն մասին.—

Կիրակի ժամը 9ին սկսաւ եկեղեցիին մէջ Հայ Մէճլիս Միլլիի ընտրութիւնները, որոնց անձամբ կը հսկէր կաթողիկոսական փոխանորդը:

Ընտրութիւններու ընթացքին պատահեցան կռիւներ Հնչակներու եւ Դաշնակներու միջեւ: Եպիսկոպոսին խնդրանքով հասան ոստիկանները: Կռուողները չուզեցին անոնց հնազանդիլ, ընդհակառակը զանոնք ծեծեցին: Բայց վերջապէս ոստիկանները յաջողեցան կռուողները պահականոց առաջնորդել:

Բազմաթիւ ձերբակալութիւններ կատարուեցան (17 հոգի):

Քուէտուփը բացուելով պարզուեցաւ որ քուէարկողներու թիւն էր 731:

× Կռիւէն յետոյ ընտրութիւնները շարունակուած եւ ընտրուած են վեց հոգի՝ ժողովրդական (դաշնակցական) ցանկէն, հինգ՝ հակառակորդներէն:

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

"ԱԿՆ ԸՆԴ ԱԿԱՆ„Ը ԳԵՐՄԱՆԻՈՅ ՄԷՋ

Կացութիւնը կը ծանրանայ

Մէկ օրէն միւսը աւելի բարդացաւ Գերմանիոյ ներքին պայքարը, իբրեւ հետեւանք հինգ Հիթլէրեաններու դատապարտութեան: Հիթլէր ինքը կատղած, արդէն ասպարէզ կը կարդայ կառավարութեան: Հինգ մարզասպաններու մահավճիռը հազիւ իմացած, հետեւեալ հեռագիրը ուղղեց մահապարտներուն.

— Ընկերներ, այս հրէշային եւ արիւնռուշտ վճռին հետեւանքով, ինքզինքս ձեզի հետ կապուած կը զգամ անսահման հաւատարմութեամբ: Այս վայրկեանէն սկսեալ, ձեր ազատութիւնը պատուոյ խնդիր մըն է մեզի համար: Մեր բոլորիս պարտականութիւնն է պայքարը կառավարութեան մը դէմ որուն օրով այսպիսի բան տեղի կ'ունենայ»:

Այս հեռագրէն զատ, Հիթլէր կոչ մը ուղղեց ժողովուրդին, Միւնիխի օրկանին մէջ, պարսաւ լսելով նոյն իսկ իր Պերլինի օրկանէն: Քանի մը հատուածներ՝ այդ կոչէն.

— «Ֆօն Փափէնի արդարութիւնը կ'ուզէ մահուան վիճը նետել հազարաւոր և հազարաւոր ազգային–ընկերվարականներ··· Ահա՛ ձեր արիւնոտ առաջադրութիւնը, պարո՛ն Փափէն: Այդ արարէն յետոյ, վերջապէս եւ յստակօրէն գծուած կ'ըլլայ մեր դերը կառավարութեան հանդէպ: Երկինք կրնայ ձեր փորձութիւնները գրկել մեզ, բայց մեր շարժումը պիտի շարունակէ պայքարը կառավարութեան մը դէմ որ դահիճն է մեր կռուի ընկերներուն: Պարոն Փափէն, դուք ազգային մարտիկներու արիւնով արձանագրեցիք ձեր անունը գերմանական պատմութեան մէջ»:

Այս սպառնալիքներուն կառավարութիւնը ինքն ալ կը պատասխանէ նոյնքան ուժգնութեամբ:

Վարչապետ Ֆօն Փափէն հետեւեալ զեկոյցը հրատարակեց.

— «Իբրեւ հետեւանք ահաբեկչական արարքներու, որոնք ծանրապէս կը վնասեն պետութեան վարկին, նախագահ Հինտէնպուրկ հաւանեցաւ կառավարութեան առաջարկին եւ ծայր աստիճան խիստ հրամանագիրներ ստորագրեց, վերջ դնելու համար բաղաքական ահաբեկման:

«Այդ հրամանագիրները պէտք է միեւնոյն ձեւով գործադրուին ո՛ր եւ է անհատի դէմ որ կ'անսասան օրէնքին, առանց նկատի առնելու ոչ կուսակցութիւնը, ոչ ալ անձը:

«Կառավարութիւնը չպիտի վարանի, ի հարկին, գործադրել իր տրամադրութեան տակ դրուած բոլոր միջոցները, յարգել տալու համար այս կարգադրութիւնները: Չպիտի թոյլատրէ որ կուսակցութիւն մը ընդդիմանայ իր հրամաններուն: Նմանապէս, կառավարութիւնը չպիտի ազգուի բաղաքական սպառնալիքներէ, մահապարտներուն ներում շնորհելու իր իրաւունքէն օգտուելու համար:

«Այն կրճոտ մեղադրանքները որ կ'ըլլան հիմա, հրապարակաւ, պէտք է ուղղուին այդ մահափորձերու հեղինակներուն եւ ոչ թէ պետական իշխանութեան, որ ստիպուած էր դիմել այդքան խիստ միջոցներու, հանրային բարիին համար: Կառավարութիւնը պիտի կրնայ զսպել ո՛ր եւ է փորձ որ կը ձգտի նոր ծայրայեղութեանց մղել ամբոխը»:

× *Հիթլէրեան թերթերուն մէջ հրատարակուած նոր կոչ մը «ընդվզեցուցիչ արարք եւ ազգայնական Գերմանիոյ երեսին արձակուած բռունցք մը» կը նկատէ հինգ Հիթլէրեաններու մահապատիժը եւ կ'աւելցնէ.*

— «Գերմանիոյ կեանքը վտանգի մէջ է: Հինգ հարիւր հազար Հիթլէրեաններ պատրաստ են իրրեւ մէկ զանգուած պայքարելու իրենց ընկերներուն վերապահուած ճակատագրին դէմ»:

× *Նոր խռովութիւններ ծագեցան այն քաղաքին մէջ ուր տրուեցաւ մահավճիռը: Ցուցարարները ուզեցին խուժել դատարանէն ներս, բայց ցիրուցան եղան ոստիկանութեան կողմէ:*

Ուրիշ քաղաքներու մէջ ալ ծանր դէպքեր կը նախատեսուին:

Անգլիական գործադուլը

Լանքասթըրի ոստայնանկներուն գործադուլը որոշուած է շաբաթ օրուան համար: Սէնտիքայի վարիչներէն մէկը յայտարարեց թէ պայքարը կատաղի պիտի ըլլայ:

Հակառակ այս որոշման, բանակցութիւնները կը չարունակուին: Վերջին հեռագրի մը համաձայն, գործատէրներն ու բանուորները ընդունած են Մանչէսթըրի քաղաքապետին միջնորդութիւնը:

Եթէ կարելի չըլլայ կանխել գործադուլը, մօտ կէս միլիոն բանուորներ անգործութեան պիտի դատապարտուին:

Հնդկական բնճուկը

Հնդկաստանի Իսլամները կը չարունակեն պահանջել որ Անգլիա իրենց չբջանին իշխանութիւնը յանձնէ ոչ թէ դաշնակցային կեդրոնի մը, այլ նահանգներուն: Այս կարգադրութեամբ, կը յուսան յառաջիկային դիւրացնել փչնճապի անջատումը Հնդկաստանէն եւ անոր ճուլումը՝ հարեւան իսլամ պետութեան մը, օրինակ Աֆղանիստանի հետ: Այս ծրագիրը մտահոգութիւն կը պատճառէ Սիխ ժողովուրդին, որ քանի մը միլիոն անգամ կը հաշուէ, բոլորն ալ կեդրոնացած՝ փչնճապի մէջ:

Կը կարծուի թէ Սիխերը չառաւիղներն են Մեծն Ազեքսանդրի յոյն զինուորներուն որոնք մերժեցին իրենց երկիրը դառնալ, Հնդկաստանի արշաւանքէն յետոյ եւ հաստատուեցան Փչնճապի մէջ:

Յարաբերութիւնները լարուած են Սիխերուն եւ Իսլամներուն միջեւ: Առաջիններուն ուժ կուտան Հնդիկները: Անգլիական գրաւումէն առաջ, Փչնճապի Իսլամները կը զանուէին Սիխերու տիրապետութեան տակ: Եթէ բուռն պայքար մը ծագի, Աֆղանները պիտի ուզեն օգնել Հնդկաստանի իրենց կրօնակիցներուն եւ Անգլիա պիտի հարկադրուի բուռն միջոցներու դիմել:

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ՀԱՄԱՑՆԱՎԱՐՆԵՐՈՒ ՁԵՐԲԱԿԱԼՈՒՄ ՊՈԼՍՈՑ ՄԷՋ

Պոլսոյ ոստիկանութեան առաջին նիւղը ձերբակալեց 9 անձեր, որոնք համայնավարութեան մասին բարոզութիւններ կը կատարէին եւ ընդհանրապէս Պէշիկթաշի կողմերը կը հաւաքուէին:

Ձերբակալեալներն են Արմենակ եւ Թագուոր, Հիւսէին եւ Սատի անուն երկու ծխախոտի բանուորներ, կին մը եւ ուրիշներ: Ձերբակալեալներուն տուներէն կարգ մը թուղթեր եւ յայտարարութիւններ գտնուած են:

Ոստիկանութիւնը 7 հոգի եւս հարցաքննելով, անոնց մէկ մասը ազատ արձակեց: Կը հասկցուի թէ ասոնք կապ ունէին ներկայիս դատարանի յանձնուած համայնավարներուն հետ եւ կը թղթակցէին Իզմիրցի եւ Խորհուրդի կարգ մը մարդոց հետ: Քննութիւնները կը շարունակուին:

× Ձերբակալուած երկու Հայերը գրաշարներ են:

ՄՈՒՍՈՒԼԻ ԽՈՂՈՎԱԿԸ

— :-: —

4000 ԳՈՐԾԱԻՈՐՆԵՐ Կ'ԱՇԽԱՏԻՆ ՀՈՄՍ – ՏՐԻՊՈԼԻՍ ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՑ

Մուսուլի բարիւղը Միջերկրական առաջնորդող *Փայփ Լայնի* (բարիւղատար խողովակ) շինութիւնը արդէն սկսած է Հոմս – Տրիպոլիս ճամբուն վրայ:

2000 աշխատաւոր առնուած են Հալէպէն, եւ 2000 ալ Հոմսէն:

Պարզ գործաւորը կը ստանայ օրական 40 ս· դահեկան, ուժանակներով ժայռեր փցնողը՝ 80, իսկ որմնադիրը՝ 125:

Բարիւղի ընկերութիւններուն եւ հողատէրերու միջեւ ծագած վէճերը տակաւին հարթուած չեն:

ԵՐԵՔ ՕԴԱՐՇԱՒ ՄԻԵՒՆՈՑՆ ՕՐՈՒԱՆ ՄԷՋ

Երեքշաբթի օր երեք օդանաւեր ճամբայ ելան Մ· Նահանգներէն, դէպ ի Եւրոպա:

Առաջինն է՝ շուէտական օդանաւ մը, որ Ատլանտեանը պիտի կտրէ, իջնելով Օսլօ:

Երկրորդ օդանաւը կը վարեն երկու ամերիկացի երիտասարդներ, նպատակակէտ ունենալով միեւնոյն քաղաքը:

Իսկ երրորդը այն է զոր յիշեցինք երէկ, — ամբողջ ընտանիք մը՝ ծնողքով եւ երկու զաւակներով (8 եւ 6 տարեկան):

Այս վերջին օդանաւը ճամբայ ելած ատեն, զուարթալի տեսարաններ պարզուեցան: Երկու աղջնակները միասին առած են իրենց պուպրիկները: Անդրանիկ աղջիկը ամենայն լրջութեամբ յայտարարեց լրագրողի մը·

— Վստահ եմ թէ պիտի յաջողինք եւ կասկած չկայ թէ մենք առաջին մանուկները պիտի ըլլանք որ կը կտրեն Ատլանտեանը:

ՏԻԿ· ԿՈՐԿՈՒԻԼՈՎ ԿԸ ԽՆԴՐԷ···

Տիկ· Կորկուլով խնդրագիր մը ուղղելով դատական նախարարութեան, կը խնդրէ վերաբննել իր ամուսնին դէմ տրուած մահավճիռը:

Իրրեւ նոր իրողութիւն, մարդասպանին կինը մասնագէտ յիմարաբոյժներու տեղեկագիրները հաւաքելով, կ'ուզէ ապացուցանել թէ իր ամուսինը կատարելապէս խենդեցած է մահավճիռէն ի վեր:

Միւս կողմէ, Կորկուլովի փաստաբանը յարաբերութեան մտած է չեխ բժիշկի մը հետ, որ 1921ին մարդասպանը դարմանած էր իրրեւ փրանկախտաւոր: Բժիշկը չորս անգամ «նէօ սալվաթոն»ի եւ 14 անգամ սնդիկի ներարկում կատարած է: Անկէ ի վեր կորսնցուցած էր Կորկուլովի հետքը: Բժիշկին եզրակացութիւնն այն է թէ՝ 1921ին, Կորկուլովի առողջական վիճակը կրնար տասը տարի յետոյ յանգիլ անդամալուծման:

Պատասխանելով հարցումի մը, Տիկին Կորկուլով ըսաւ·

— Ոեւիրին առաջին օրերը կը կարծէի թէ պիտի լէեմ· բայց հիմա կը շարունակեմ սիրել, բանի որ խենդ է:

ՍԵՒՆ ՈՒ ՁԵՐՄԱԿԸ ՁԱՄԲՈՒՀՍ ՎՐԱՑ

11.— ՆԱԻՆ ՀԵՇՏՕՐՕՐ ԿԸ ՍԱՀԻ...

Վերջացա՞ւ Սելանիկով։

Ոչ իսկ Սելանիկը վերջացաւ։

Պարզապէս ընդհատում։ Քաղաքն է որ կը կանչէ։ Քաղցի՛ն։ Կրնաք ըսել՝ քաղքենին։

Եւ առ այժմ, նաեւ հեչտօրօր կը սահի։ Ինչպէս ծովը ծաւալուն։ Ծովի ծփծփուն։

Ու կը ծփան տպաւորութիւններս ալ, ինչպէս նաեւ։

Հարկ եղաւ լքել քրտինքն ու փոշին «Գաւառ»ին։ Ճշտեակաները քրջագետ եւ հիւղակները թիթեղապատ։

Մնաք բարով, ընկերնե՛ր։ Յաեսութի՞ւն։ Երանի՛ թէ։

Բայց մենք հասեր ենք տեղ մը ուր խոհեմութիւնը կը պահանջէ չաս չբլր քրել վազը։

×

Բազմութիւն մը չրջիկներու։

Ֆրանսայէն անցեր են Պոլիս, եւ քեբելով Աթէնքի հնութիւնները, կը վերադառնան Մարսէյլ։

Ծոնուած, խառնուած են իրար։ Ամանց աղգի եւ սեռի խորութեան։

Սա վարդագեղ մանկամարդուհին ի՞նչ կապ կրնայ ունենալ տարեց, ուռած քթով, կապկպդի մարդուն հետ։ Ցորովայնէ ընտրեալ քաղքենի, որ կամկար չարժուձեւեր կը փորձէ։ Ծոպոտ ձայն մը՝ կոկորդին մէջ։

Բայց, ժպիտը պակաս չէ աղջկան չրթներէն։

Ինչո՞ւ յանկարծ միտքս ինկաւ Իզմիրցի Հայուհին։ Մանկամարդ, եւ նոյնքան գեղանի։ Կրնայէի գաղթականին մէջ։

— Հոգ չէ, թող քիչ մը տարբեր բլլայ, բայց դրամ ունենայ...

Սա միւսը հասակագեղ, որ թեկնածու կը փնտռէ։ Եւ երրորդ մը, գլանիկը բերնին։ Երեւութապէս մտացրիւ, բայց անշուշտ աւելի վարպետ։

Ու չորրորդը, հինգերորդը։ Նոյն իսկ Թրքուհին, որ պատրաստաւեր է պորտ խաղալու այս գիշեր, «ազնուականն»ներու պարահանդէսին։

Երրորդ կարգը, անդին, կը զուարճանայ ինքն իր գլխուն։ Միշտ բնականն ու հարազատ։ Իսկ այստեղ, մանաւանդ վերը, առաջին կարգին մէջ ամէն ինչ առն է եւ ծեքծեքուն։ Այլ թէ կին ինքնահաճ եւ կոկոզավիզ փուռած թիկնաթոռներու վրայ, ինչպէս ամենօրեայ կեանքին մէջ։ Միշտ հակամէտ՝ վերէն դիտելու։ Իշխելո՞ւ։ Բայց միշտ ալ մատհոդ վարէն։ Փոթորիկէ՞ն։

×

Փորձա՞նք։ Սեղանին վրայ դինի փոխանակեցինք, եւ... պաշտօնս է մըտիկ ընել։

— Ցոյն էք, չէ՞։

— Ո՛չ, Հայ եմ։

— Աւելի լաւ։ Ես Հայերը շատ կը սիրեմ։ Փարիզ հաստատուած եմ, եւ առաջին անգամ է որ կը տեսնեմ հայրենիքս։

— Ես չորրորդ անգամն է որ կ'այցելեմ ձեր գեղեցիկ երկիրը։

— Ուրեմն, դուք ինձմէ աւելի լաւ կը ճանչնաք իմ հայրենիքս։ Ես միայն Աթէնքը տեսայ։

— Ես եղած եմ Տէօէ Աղաճէն մինչեւ Կրետէ։ Ի՞նչ գեղեցիկ հասակ ունի սա դիմացի աղջիկը։

— Գիտէ՞ք, ես կատարի Վենիզելոսեան մըն եմ։

— Քաղաքականութեան մէջ սխալ է մոլեռանդութեամբ կապուիլ անհատներու։ Վենիզելոս ուրացաւ իր անցեալը։ Երէկ որքան կատարի յեղափոխական, այսօր նոյնքան մոլեռանդ դիւանագէտ է։ Բայց, թողո՛ւնք դիւանագիտութիւնը։ Հրաշալի չե՞ն սա կրնոջ աչքերը...

— Վենիզելոսը մեծ մարդ է, բարեկամ։ Խելացի, գօրաւոր, վճռական։

— Բայց ճակատագրական մեղք մը գործեց, համակերպելով ժողովուրդներու վոխանակութեան։ Աւելի լաւ էր հարիւր հազար հոգի եւս ջարդել տալ եւ մնալ Փոքր Ասիա, փոխանակ պարպելու զայն։

— Կեցցէ՛ք։ այստեղ իրաւունք ունինք։ Եթէ Փոքր Ասիան չպարպէին դուք ալ, մենք ալ կ'ազատէինք։

— Դուք ալ, մենք ալ զոհերն ենք միջազգային խաղերու։ Ի՞նչ հոսուն, ճապուկ թեւեր, սա դիմացը...

— Կիներու մասին յետոյ կը խօսինք։ Ի՞նչ կը կարծէք, Եւրոպան այսպէս պիտի լքէ՞ մեզ։

— Եւրոպան անդամալոյծ Շայլօք մըն է որ ճամբայ կը փնտռէ... անթացուպով։ Տէ՛ս, տե՛ս վերջալո՛յսը, ծովէն անդին, լեռներուն վերեւ...

— Բայց Վենիզելոսը մեծ մարդ է Միւանները, Ցալտարիս, Փանկալոս, Փլաթիրաս, Գունարիս, Փափանաստասիու... Ի՛նչ որ է, չըսեմ բուն բանը։

— Ձեր երկրին մէջ կուսակցութիւն չկայ։ Անհատներն են որ հոսանքներ կը ստեղծեն։ Այս աղջիկը Հելլենուհի՞ կը թէ Ֆրանսուհի։

— Կարծեմ Ֆրանսուհի։ Կը կարծէ՞ք որ միապետութիւնը վերահաստատուի Ցունաստանի մէջ։

— Բոլոր երկիրներուն մէջ ալ, միապետութենէ երբը երգուած է վերջնապէս։ Ի սէր Արամազդի, խօսեցէք լեռներուն, ծովուն, աղջիկներու մասին։

— Կը խօսինք, կը խօսինք։ Ուզած աղջիկդ ալ կը ծանօթացնեմ քեզի։ Ուրեմն, Վենիզելոսը չպիտի յաղթուի, այնպէս չէ՞։

— Ի հարկէ չի յաղթուիր։ Իշխանութիւնն ալ իր ձեռքն է, բանակն ալ։

×

Պատմ մը՝ կամրջակէ կամրջակ։

Իսկապէս որ բաժնուեր ենք Արեւելքէն։ Կիրթ չարժուձեւեր։ Լուսթիւն։ Եւ ընթերցում։

Կը կարդա՞ն։ Բոլորը անհամբեր կը սպասեն գրաղարանի ժամուն։

Կատարեալ արուեստ՝ ասոնց ընթերցումը։ Եւ պահանջ,—ինչպէս աշխատանքը, խաղը, կինը, պատմը։ Իսկ մեր մէջ՝ քմայք եւ տաղտուկ։ Նոյն իսկ չնո՞րհ։ Մեր սեփական ճըրագները մարելու գնով։

Անշուշտ, Արեւելքն ալ ունի իր արուեստը, — թուղթ ու նարտ։

Թուղթ ու նարտը մանուածապատ։ Ինչպէս իր ճակատագրի խաղը։

×

— Օրիորդ, Պոլսէն էք, չէ՞։

— Այո՛, պարոն։ Պատմի գացեր էի, կը վերադառնամ։

— Ցո՞յն էք թէ Հրեայ։

— Ցրանսացի եմ, պարոն։ Եւ Փարիզէն։

— Սիկառէ՞թ մը։

— Ինչո՞ւ չէ։ Իսկ դո՞ւք, Ցո՞յն էք։

— Ո՛չ, օրիորդ, Հայ։

— Ուրախ եմ։

Ո՛վ Աստուածն իմ հայրերուս։ ի՞նչպէս եղաւ որ չհարցուց-թէ — ի՞նչ է Հայը։ Ինչպէս կը հարցնէր, ամէն օր, Փարիզի մէջ։

×

Հելլենուհի մը՝ իր երկու տարեկան աղուն հետ։ Ամուսինը՝ Ցրանսացի։ Եւ Ցրանսա մնացած։

— Մօտէն կը ճանչնա՞ք այն պարոնը որ ձեր քովը կը նստի ճաշի առեն։

— Ո՛չ։ Նաւուն մէջ ծանօթացայ։

— Գիտէ՞ք ի՛նչ գործով կը զբաղի։

— Ձեմ գիտեր։

— Լաւ է որ չգիտնաք։ Ասոնք խումբ մըն են։ Լաւ կ'ուտեն, կը խըմեն, սահմանէ սահման գործ կ'ելեւէն։ Անշուշտ վաճառականութենէ կը հասկնաք...

Կը հասկնամ, այնպէս չէ՞, ընկե՛ր։

×

— Պարո՛ն, դուք իրաւունք չունիք Նախիլի ելլելու։

— Ի՞նչպէս թէ։

— Այո՛, ձեր անցագիրը Նախէհեան է, եւ ոստիկանապետը կնքած չէ, իրեւ արտօնութիւն։

— Բայց ես տեսած եմ Իտալիան։ Եղած եմ Վենետիկ, Փատովա, Հռոմ։ Կարդացած եմ ձեր Էմոփարտին, Քարուսէլլին...

— Լա՛ւ, լա՛ւ։ Անցագիրը թող մընայ։ ահա քեզի թուղթ մը։ Գնա պատէ ուզածիդ չափ։

Թո՛ւղթ մը, թո՛ւղթ մը, ընկեր։

Ո՛ր եւ է թուղթ, եւ աշխարհը ձերն է։

Աչխարհը տէրը չէ իր ստորագրած թուղթին։ Բայց, ամէն դուռ կը բանայ, երբ կրցար կոսը մը թուղթ ճարել։

×

— Ի՞նչ ընելու կ'երթաք Փարիզ, հանըմ էֆէնտի։

— Պարելու, խաղալու։ կէօպէ՛է... Եւ արդէն պորտ կը նետէ։ Պի՛ու...

— Ի՞նչպէս պիտի ծանուցանէք ձեր ներկայացումները։

— Հարկաւ արեւելեան թերթեր կը գտնուին։ Գիտէ՞ք դուք։

— Ձեմ գիտեր։ Ես ալ նոր կ'երթամ։

×

«Քաղաքագէտ» չուքը, նորէն, գլխուս վերեւ։

— Աղջիկները մոռցար, հիմակ ալ գիրքերու մէջ թաղուեր ես։

— Բարե՛ւ, հայրենակից։ Ճանչցա՞ք։

— Ձեմ յիշեր։

— Իսկ ես կը ճանչնամ ձեզ։ Երբեք չէք փոխուած։

— Իսկապէս չեմ յիշեր։

— Լաւ է որ չյիշէք։

— Կ'ազաչեմ, ձեր անունը։

Բառ մը՝ ականջին։

— Օհ՛։ իրաւ ցնդեր եմ։

Ու մինչ ես կը զգուշանամ իրեն համար, ինքն է որ մինչեւ կամրջակը ման կուգայ, անդադար խօսելու, պատմելու, պոռթկալու համար

— Այս ձեր թէքէեանը իսկապէս որ բան չի հասկնար դէպքերու ընթացքէն։ Այդ ի՞նչ չարականներ կ'երգէր երկու տարի առաջ, «Արեւ»ի մէջ... Թուրքը չէրզռել, անուշել, իրաւունքներ ձեռք բերել... կը ճանչնա՞ք դուք այսօրուան Թուրքը... Եթէ չցրուեն, պիտի ձուլեն։ Թէքէեանները պարզապէս հայրենասրաղծութենէ կը տառապին։ Ֆէնէր Պաղչէսին, Հէյպէլին, Պէօյիւքտէրէն կ'երազեն...

— Մի՛ մեղադրէք, տասը տարիէ ի վեր բաժնուած են, չեն գիտեր։

— Բայց գոնէ թող չգրեն։ Մենք մէջն ենք, եւ գիտենք թէ ո՛ւր կ'երթան, ո՛ւր կը տանին մեզ։

Եթէ միայն գիտնայինք թէ ո՛ւր կ'երթայ Թուրքը, — անշուշտ որ կը յաղթէինք... միաբանութեամբ։

ՇԱՏԵՐԷՆ ՄԷԿԸ

ԲՈԼՇԵՒԻԶՄԻ ՄԱՍԻՆ

(Բ. եւ վերջին մաս)

Բակունինին ժամանակակից ու գաղափարակից էր Նիչայեւը։ Աւելի գործնական ու յեղափոխական գաղափարները կեանքում կիրառելու մէջ՝ այսօրւայ բոլշեւիկների հարազատ նախահայրը։ Եթէ ռուս ժողովուրդի պատմութեան անիւը անցեալ դարի 70ական թուականների դէմ առնէր 1918 թւի պայմաններին — Նիչայեւը կը բռնէր Լէնինի տեղը։ Նախապէս հաւատացած էր, որ յեղափոխութիւնը Ռուսաստանում նման չի լինելու արեւմտեան երկիրների յեղափոխութիւններին, որոնք միշտ էլ խնայել են մանաւոր սեփականութիւնը եւ քաղաքակրթութեան ու բարոյագիտութեան առեղծուածաբանական կարդերը, այդ յեղափոխութիւնները սահմանափակել են մի քաղաքական կարգ փոխելով մի այլով։ Մինչդեռ ժողովրդի համար օգտակար միակ յեղափոխութիւնն այն կը լինի, որը հիմնայատակ կանի պետութիւնը, գլխի վայր բերելով դրատիցիանները, դասերն ու դասակարգերը — այդպիսին է լինելու ռուսական յեղափոխութիւնը։

Մենք այժմ գիտենք, որ Նիչայեւը չի սխալուել ու կատարեալ մարգարէ է եղել։

Նիչայեւի համար բոլոր միջոցները ընդունելի ու ողջունելի են, եթէ նրանք ծառայում են յեղափոխութեան. նա կատարեալ ճիզուիտ էր. իր սկզբունքն էր — մարմնի համար՝ բռնութիւն, հոգու համար՝ սուտ։ Դրանք այն միջոցներն են, որոնցմով «իշխող փոքրամասնութիւնը» իշխելու է զանգւածների վրայ ու քշելու նրանց դէպի յեղափոխութեան առաջադրած նպատակները։ «Մենք աւերողներ ենք, ստեղծելու են ուրիշները» — նրա խօսքերն են։ Եւ աւերելու, խորտակելու, հիմնայատակ անելու համար պիտի զրգռել ամբոխների կրքերը, առաջ քաշել այն տարրերին, որոնք ի բնէ օժտուած են քանդելու ու ոչնչացնելու բնազդով։ Նա առաջարկում էր միանալ աւազակների հետ, որոնց համարում էր «միակ իսկական յեղափոխականները Ռուսաստանում»։

Անդամ հարեւանցի ծանօթութիւնը Նիչայեւի գաղափարների ու նրա առաջարկած գործելակերպի հետ բաւական է տեսնելու համար թէ ինչպէս նրա ոգին ահա 14 տարի է աւաւտնում է Ռուսաստանում մի ծայրից միւսը։

Բոլշեւիկների հոգեւոր հայրերից է նաեւ Պ. Տկաչովը։ Հետաքրքրականն է նրա վերաբերմունքը դէպի ժողովուրդը։ «Ոչ ներկայում, ոչ էլ ապագայում ինքն իրեն ձգած ժողովուրդը անկարող է իրականացնել ընկերվարական յեղափոխութիւնը։ Միայն մենք, յեղափոխական փոքրամասնութիւնը, կարող է այդ անել»։ «Ժողովուրդի ազատութիւնը ժողովրդի միջոցով նա համարում է յիմարութիւն»։ Ժողովուրդը չի կարող իրեն ազատել, չի կարող անօրինել իր բաղդը համաձայն իր իրական պահանջների»։ Ապա ի՞նչ կարող է անել ժողովուրդը։ — «Ժողովուրդը քանդող ուժ է»։ Պէտք է օգտուիլ այդ ուժից հին աշխարհը խորտակելու համար։ Ստեղծագործող ուժը «յեղափոխական փոքրամասնութիւնն» է։ Այդ փոքրամասնութիւնն է, որ ժողովրդի ձեռքերով քանդած հին աշխարհի աւերակների վրայ կառուցելու է նոր աշխարհ, որտեղ ժողովուրդն էլ իրեն բաղդաւոր է զգալու։ Իսկ «ժողովուրդը առանց առաջնորդների անկարող է հին աշխարհի աւերակների վրայ չինել նոր աշխարհ, ընդունակ չէ առաջադիմելու, զարգանալու կոմունիստական գաղափարներով։ «Այդ դերն ու նշանակութիւնը վերապահուած է բացառապէս յեղափոխական փոքրամասնութեան։ Վերջինս, տիրանալով իշխանութեան, պիտի յենի սեփական ուժերի վրայ, որովհետեւ վերաշինութեան գործունէութեան մէջ չի կարող յոյս դնել ժողովուրդի աջակցութեան վրայ»։ Այս տեսակէտը հարազատութեամբ իրագրել են բոլշեւիկները։ Ժողովուրդն օգնեց բոլշեւիկներին, աւելի ճիշտ՝ բոլշեւիկները օգնեցին ժողովուրդին (զգռելով առաւելապէս նրա յոյն բնազդները — «թալանիր թալանոնը») խորտակել աւելի կարգերը։ Բայց երբ այդ խորտակուածի տեղ պիտի ստեղծէին նորերը — ժողովուրդը բաժանուեց բոլշեւիկներից, որովհետեւ այդ նոր կարգերը նրա համար նոյնպէս աւելի են։ Այս նախատեսելով, Տկաչովների ժամանակին կազմակերպել են ֆիզիքական ուժ, որի վրայ յենուած «նոր կեանքի» լուծը դնում են ժողովրդի վզին՝ բնաւ հաշւի չառնելով նրա մտածումներն ու տրամադրութիւնները։

Եթէ հարցի քաղաքական-ընկերվարական կողմից անցնինք տնտեսականին, կը տեսնենք, որ բոլշեւիկները այստեղ էլ ինքնուրոյն չեն, այլ ալանդակ մեթոտներով զարգացնում են Ռուսաստանում գոյութիւն ունեցող ժողովրդական տնտեսական ձեւերը։ Այլ խօսքով բոլշեւիկեան տնտեսական քաղաքականութիւնը ռուսական գիւղում պատահական ու անյարազատ չէ, այլ մի որոշ չափով մեկնում է այդ գիւղում գոյութիւն ունեցող տնտեսական հասկացողութիւններից։

Գիւղատնտեսական գործակցութեան նախնական ձեւերը անիշելի ժամանակներից գոյութիւն են ունեցել ռուսական գիւղում։ Դրանցից են այսպէս կոչւած տողերը, արտելները։ Զքաւոր գիւղացիք, անկարող լինելով սեփական միջոցներով գնուք բերել որ եւ է գիւղատնտեսական գործ, միանալիս են եղել ու միացեալ ուժերով կատարել այդ գործը։ Դա մի շատ սովորական երեւոյթ է եղել ռուս գիւղում։

Նոյնպէս սովորական են եղել արտելները — ընկերութիւններ, որոնք կազմւել են կապալով վերացրած հողերի համայնական մշակման համար։ Երբ Ռուսաստանում սկսւում են գործադրել երկրագործական խոշոր գործիքներ — մեքենաներ, որոնք իրենց գներով անմատչելի էին գիւղացիներից շատերին, կազմւում են ընկերութիւններ այդպիսի մեքենաներ գնելու՝ ընկերութեան անդամների տնտեսական պէտքերի համար։

Հանդամանքների բերմամբ ու կարիքի թելադրութեամբ ռուս գիւղացին միշտ էլ կազմել է նման ընկերութիւններ, գիտակցելով նրանց ուժն ու օգտակարութիւնը իր տնտեսութեան մէջ։ Պայմանով սակայն, որ ընկերութեան անդամները իրենց նիւթական. բանւորական ուժի մասնակցութեամբ չլուծուին ընկերութեան մէջ, կորզելով իբր անհատական տնտեսութիւն ընդհանուրի համար, այլ, ընդհակառակը, պահելով իր տնտեսութեան ինքնուրոյնութիւնը։ Արդէն ընկերութիւնը կազմւում էր անհատական շահի թելադրանքով։

Բոլշեւիկեան հաւայնական տնտեսութիւնները (կոլխոզները) իբր յղացում ռուս գիւղի համար նորութիւն չեն։ Առաւելապէս այս հանդամանքով էլ բացատրւում է այն երեւոյթը, որ գիւղացիք կոլխոզները էին մտնում ոչ թէ միայն ոչխիմի ստեղծած դաժան պայմանների հետեւանքով, այլ եւ ինքնաբերաբար, նա մանաւանդ մինչեւ 1928 թիւը — մինչեւ զանգւածային հաւայնացումը (կոլլեկտիվիզացիա), երբ բոլշեւիկները այդ գործի մէջ դեռ քաղաքականութիւն չէին մտցրել եւ նա ընթանում էր համեմատաբար ազատ պայմաններում։ Կան շրջաններ, ուր մինչեւ 1926 թիւը, այսինքն մինչեւ բռնի հաւայնացումից երկու տարի առաջ, գիւղացիական տնտեսութեան մի երրորդից մինչեւ կէսը այս կամ այն պատճառով դիմել են տնտեսական ժամանակի հաւայնացման գործառնութիւններին։

Ճիշդ է, այդ «այս կամ այն պատճառները» շատ բան են բացատրում, որովհետեւ այդ «պատճառները», որ ծնունդ են բոլշեւիկեան կարգերի, բացառիկ ծանր կացութիւն են ստեղծել գիւղացու տընտեսութեան համար, որը փրկելու նպատակով էլ նա թեկուզ ն կոլխոզների դուռը։ Բայց նա թեկուզ է ինքնաբերաբար, իբր ծանօթ դուռ. չէ՞ որ անցեալներում էլ, անկախ ըէժիմից, չքաւորները չքաւորութեան դէմ պայքարելու նպատակով կազմում էին տոզեր։ Այժմ էլ գիւղացին, տիրող կարգերի բերումով, անկարող լինելով պահել սեփական մի ջոցներով անհատական տնտեսութիւնը, կազմում էր կոլխոզներ, յուսալով դրանց միջոցով փրկել իր ձեռքից գնացած տնտեսութիւնը։ Գիւղացին սխալւում է, հիասթափւում ու տուժում չարաչարօրէն։ Բայց ինքնէրը դրանում չէ, այլ նրանում, որ բոլշեւիկեան տնտեսական փորձերը իրենց հիմքում նորութիւն չեն ռուս գիւղացու համար։ Նորոթիւնն այն բնոյթն է, որ բոլշեւիկները տւել են կոլխոզներին։ Այդ կոլխոզ-կոմունաները մրցանողները ընդհակառակն, վերջնականապէս գրկւում են բոլոր անհատական իրաւունքներից։ Նրանք իրենց հետ բերածով լուծւում են կոմունայի մէջ, անհատապէս անհետ կորչելով։ Հող, անասուն, ինվենտար — ինչ որ գիւղացին հետը բերում է կոլխոզ— անվերապահօրէն դառնում են սեփականութիւն կոմունայի, որի բոլոր վանդակ կեանքի ղեկավարութիւնը պատկանում է պետութեան։ Գիւղացին կոլխոզում դառնում է անարժէքաւորելու մեծ գաղափար ներդաշնակելով իրենց ապագործունէութիւնը։

Բայց յիշողութեանս մէջ կը մնան անցեալին մէջ ունեցած հիասթափումներս — թատերական վարչութեան հրաւէրով — քանի մը հանգնօթ գրական դէմքերու հետ, եւ կրած պարտութիւնը առաջին քողքոջին մէջ իսկ, երբ տարցը գացաւ խմբի ղեկավարութեան։

«Ես»երը կոպտօրէն արձակ գեղեցիկ երազները եւ ցանկութիւնները տարտղնեցան անձնական ներու եւ հաշիւներու սպառող չին առաջ...

Երանի թէ այլապէս ըլլար։

Քանի մը օրէն խորհրդակցական աւելի լայն ժողովի մը պրոյ տրուեցաւ, աւելի հանգամանուսումնասիրելու կարելիութիւնը։

Պիտի ցանկայի՝ որ այս քիչ յոռետես մտածումներս խեղան ընկայչին — եւ ոչ թէ լքումի ճառ — պերճախօս ու պատկա

ՔԱՋԱԼԵՐՈՒԹԵԱՆ ԱՐԺԱՆԻ ԶԵՌՆԱՐԿ ՄԸ

— :-: —

Ասոյա 19ին, Միւթիւալիթէ մէկ սրահին մէջ, «Սիփան» երգխումբի վարչութեան հրաւէրով կայ եղանք խորհրդակցական ժո վի մը՝ ուր հարց կը դրուէր փաո գանազան երգչախումբերը քով վի բերելով, մինչեւ այժմ տի մրցակցութեան եւ անհամաժո թեան լուծում մը գանել։

«Սիփան»ի գնահատելի պր նիքներէն մէկը պիտի ներ ձեռնարկը նոյնիսկ ձախողի անհրաժեշտ եւ պատուաբեր ա Լարկին շուրջ կատարած տանքը եւ պատրաստակամութ

Բայց, խորհրդակցութեան կայ քանի չափ արուեստագէտ րու եւ երաժշտասէրներու փո նակած կարծիքները — խորին բազատութիւններով համընո շատ մեծ յոյս մը չտուին՝ ցան եւ արդիւնաւոր համերաշխու մը նկատմամբ։

Խորհրդակցութիւնը իր լի տար արժէքը չունէր նկատի ա լով — անկախ պատճառով կ չհամութեամբ — շարք մը արո տաղէտներու եւ խմբապետն բազակայութիւնը։

Մեր կարծիքով նպատակը միայն հանդէսները չխաչձուի համար, դեկավարներու միջեւ համաձայնութիւններ կայաց աւելի հեռուները կ'երթայ՝ եւ ո է որ երթայ, արուեստի սիրոյ մար պարտադրուած ուղեգիծ կարգապահական կանոնները բակած եւ պարկեշտօրէն գործ լու ասպիճան։

Կարելի՞ է յուսալ անհատ նութիւններու այդ մասնաւոր բերումը՝ ի նպաստ հաւաքակ հասարական ընոյթ կրող գի նպատակին։

Եթէ մաղթանքներու ինքնաբ ւթիւնը ունենայի, ամբողջ զով սիրտ մաղթէի տեսնել երաժիշտ-երգիչները համերաշ օրէն փարած ի միասին արուարժէքաւորելու մեծ գաղափ ներդաշնակելով իրենց ապա կործունէութիւնը։

Բայց յիշողութեանս մէջ կը մնան անցեալին մէջ ունեցած հիասթափումներս — թատերական վարչութեան հրաւէրով — քանի մը հանգնօթ գրական դէմքերու հետ, եւ կրած պարտութիւնը առաջին քողքոջին մէջ իսկ, երբ տարցը գացաւ խմբի ղեկավարութեան։

«Ես»երը կոպտօրէն արձակ գեղեցիկ երազները եւ ցանկութիւնները տարտղնեցան անձնական ներու եւ հաշիւներու սպառող չին առաջ...

Երանի թէ այլապէս ըլլար։

Քանի մը օրէն խորհրդակցական աւելի լայն ժողովի մը պրոյ տրուեցաւ, աւելի հանգամանուսումնասիրելու կարելիութիւնը։

Պիտի ցանկայի՝ որ այս քիչ յոռետես մտածումներս խեղան ընկայչին — եւ ոչ թէ լքումի ճառ — պերճախօս ու պատկա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱՑԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Հ.

Հայաստան ճանապարհ եւ իշխանական

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՆՁԱՆՔՆԵՐ

Ներկայ տարեշրջանում ընդհանուր ծախսերի մեջ մեծ տեղ են գրավում ճանապարհների շինարարության համար նախատեսված գումարները։ Ինչպես հայտնի է, ճանապարհների շինարարությունը մեծ նշանակություն ունի ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական տեսակետից։ Ճանապարհների շինարարությունը ոչ միայն հնարավորություն է տալիս ավելի արագ զարգացնելու տնտեսությունը, այլև ամրապնդելու պաշտպանությունը։

Ներկայ տարեշրջանում ճանապարհների շինարարության համար նախատեսված է 30,000 հազար ռուբլի։ Ինչպես տեսնում ենք, ճանապարհների շինարարության համար նախատեսված գումարները ներկայ տարեշրջանում ավելի քան 3 անգամ գերազանցում են անցյալ տարվա համապատասխան գումարները։

Ներկայ տարեշրջանում ճանապարհների շինարարության համար նախատեսված գումարները

Ճախոնցիները կը շարունակեն գրաւել

Փէքինէն կը հեռագրեն թէ ճախոնցիները յարձակողականի ձեռնարկած են ճէհոլի լինական նահանգին դէմ եւ կ'ուզեն Մանչուրիոյ կեդրոնական կառավարութիւնը որոշած է դիմադրել եւ այդ իմաստով հրամաններ տուած է իր սպարապետին։

■■■■■■■■■

Անգլ. նաւաբաժինը մը վառնա պիտի հասնի սեպտ 17ին։

Պատերազմէն ի վեր առաջին անգամ է որ անգլ. մարտանաւեր պուլկարական նաւահանգիստ մը կ'այցելեն։ Ասկէ առաջ, իտալական նաւաբաժին մը եւ ֆրանսական յածանաւ մը գացին վառնա։ Այս է մէկ պատճառը որ հիմակ ալ Անգլիացիները մարտանաւ կը ղրկեն։

Անգլ. նաւաբաժինը պիտի ողջունուի Պուլկարիոյ վարչապետին եւ պատերազմական նախարարին կողմէ։

Փարիզ եւ արուարձանները



Ա. Դ.

ԱԼՖՈՐՎԻԼԻ Ս. Մինասեան հնթակոմիտէի ընդհ. ժողովը այս Շաբաթ իրիկուն ժամը 8.30ին Հայ Ակումբին մէջ։ Զեկոյց պատգամաւորին կսղմէ եւ ուրիշ օրակարգեր։ Բոլոր ընկերներու ներկայութիւնը պարտաւորիչ է։

ՓԱՐԻԶԻ կոմիտէն ընկերական ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր բոլոր ընկերները այս Շաբաթ իրիկուն ժամը 8.30ին սալ Միւթիւալիթէի մէջ, 24 rue St. Victor։ Օրակարգի շարունակութիւն։ Պարտաւորիչ ներկայութիւն։

ԻՍԻ ԼԷ ՄՈՒԼԻՆՕ-Պլեեանքուրի Զաւարեան կոմիտէն ընդհանուր ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները այս Շաբաթ իրիկուն ժամը 8.30ին ծանօթ հաւաքատեղին։ Օրակարգ՝ կոմիտէի ընտրութիւն։ Պարտաւորիչ ներկայութիւն։

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՏԵՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ ԼԻՈՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Հ. Ց. Դ. կուկունեան խումբի, հովանաւորութեամբ Հ. Ց. Դ. Լիոնի կոմիտէի, մասնակցութեամբ ցէսինի կոմիտաս երկսեռ երգչախումբի, (դեկ. Ա. Գ. Մելքոնեանի) եւ դերասան Մ. Մարուքեանի։

27 Սեպտ. Շաբաթ իրիկուն ժամը 8.30ին Գ. Թաղապետարանի սրահը։ Մանրամասնութիւնները տեղւոյն վրայ։

Կը խնդրուի բոլոր կազմակերպութիւններէն նկատի ունենալ այդ թուականը։

Դպրոցասէր Տիկնանց վարժարան

1 Bld. du Nord, Le Raincy (S. et O.)

Վարժարանը՝ հայեցի դաստիարակութեան հետ, իր աշակերտուհիներուն կ'ապահովէ միջավայրի համապատասխան ուսում։

Հայերէն եւ ֆրանսերէն լեզուները կ'աւանդուին հաւասար խնամքով։ Ուսման բոլոր ճիւղերը կը պահեն իրենց մասնաւոր տեղը։

Աշակերտուհիներու արձանագրութիւնը կը սկսի Օգոստոս 15ին։ Նիւթական անձուկ պայմաններու մէջ գտնուողներու զաւակները պիտի ընդունուին իբր կիսաթոշակ։

Պայմաններու համար դիմել վարժարանին Տնօրէնութեան, գրաւոր կամ անձամբ, երեքշաբթի, հինգշաբթի եւ շաբաթ կէս օրէ վերջ։

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ ԼԻՈՆԻ ՄԷՋ

Կազմակերպուած Լիոնի «Հայ Արի» գայլիկներու Արծուիկ խումբի կողմէ, այս Կիրակի առաւօտէն մինչեւ իրիկուն à la Belle Colline։

Կը նախագահէ՝ Պ. Վ. ՁՈՒՂՈՒՐԵԱՆ

Եւրոպական եւ հայկական պարեր, Գայլիկներու եւ սկաուտներու տողանցք, դրօշարշաւ, վազք, բուրգեր եւայլն։

Հանդէսը պիտի շարժանկարուի։ Հանդէսի մուտքը օթօքարի ծախքով միասին, երթ ու դարձ՝ 4 ֆրանք։

Մեկնումը Փլաս Կիշառէն առաւօտեան ժամը 9 եւ 11, իսկ կէսօրէ վերջ ժամը 1.30ին։

Հայրենակիցներու ուշադրութեան

Սուլթաններու Սուլթանը, աշխարհի սուրճերուն թագաւորը, իմաստին մարսողութիւնը կը դիւրանայ եւ հաճոյալի ժամանց մը կ'ունենայ։ Պահանջեցէք հայ նպարավաճառատուներէ
Կեդրոնատեղի 92 Rue d'Angoulême

S. TOROSSIAN

Մէթրօ Ccuronnes եւ Parmentier

Ծանօթ.— կեդրոնատեղիէն չորս անգամէն կամ միանուագ 1 քիլօ գնողներու կը տրուի նուէր։

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԸՆՏԱՆԵԿԱՆ դաշտահանդէս, «Կռիւիտաս» երկսեռ երգչախումբի, այս Կիրակի Մէաոնի անտառին մէջ։

Ժամադրավայր կար տէ ղ'Էնվալիտ, առաւօտ ժամը 8.30—9։

Կը հրաւիրուին բոլոր երկսեռ անդամները, համակիրներն ու բարեկամները։

ՄԱՐՍԷյԼԻ Մալաթիոյ Հայրենակցական Միութենէն կը խնդրուի իր հասցէն յայտնել Պ. Յարութիւն Քէֆէլեանի, 368 rue Vaugirard, Փարիզ (15)։

ԻՍԻ ԼԷ ՄՈՒԼԻՆՕի Ֆրանսահայ կարմիր Խաչի ընդհ. ժողովը այս Շաբաթ իրիկուն ժամը 8.30ին ծանօթ հաւաքատեղին։ Անդամներու եւ անդաժուհիներու ներկայութիւնը պարտաւորիչ է։ Կարեւոր օրակարգ։

ՄԱՐՍԷյԼԻի Հ. Մ. Ը. Մ.ի մասնաճիւղը ժողովի կը հրաւիրէ բոլոր անդամները այս կիրակի առաւօտ ժամը 10ին Bare de la Poste-ի սրահին մէջ, 2 rue Colbert։ Օրակարգ՝ հաշուետուութիւն եւ վարչութեան նոր անդամի ընտրութիւն։

ՎԱՐԶՈՒ Է *կահաւորուած գեղեցիկ սենեակ մը (ընտանիքի մէջ) ամիսը 260 ֆր.։ Դիմել* Mme. Gulian, *15 St. Marcel, Paris (13)։*

Վարձու խանութ

Լուսաւոր, կազ, ելեկտրականութիւն, առանց ըրփրիգի, յարմար դերձակի, սափրիչի, կոշկակարի եւ ամէն առեւտրական գործի համար։ Դիւրամատչելի պայմաններ։ Դիմել Ֆէր-ցակոբեան տպարան, *17* rue Damesme, մէթրօ Թօլպիաք։

ՎԱՐՁՈՒ Է *արձակուրդի կամ ամբողջ տարուան համար գեղեցիկ շրջանի մէջ 6 փիէս, լուր, կազ, պարտէզ եւ անառատ, La Flèche-ի ձկնառատ պետակին մօտ։ Դիմել* Georges Quillet, 42 *Route de Baugé*, La Flèche, *(Sarthe)*.

ՄԱՍՆԱԳԷՏ ԲԺԻՇԿՆԵՐ

96 R, Rivoli, մէթ. Շաթլէ։ Արմատ. եւ նոր մեթոտ, դարմ. արանց եւ կանանց մորքի, արեան' ժխներ. ֆիւանդութիւն եւ վարիսի։ Ամէն օր 9—12, 2—8, կիրակի 9—12։

Imp. A. DER (Agopian)
7, Rue Damesme, Paris (13)
Le Gérant H. STEPHAN

ՇԱՀԱՒՈՐ ԱՌԻՔ ՄԸ

ԾԱԽՈՒ է Իսի-լէ-Մուլինօի կայարանին մօտ պօնլթըրիի խանութ մը, ամէնը գանուած ապրանքներով կամ առանձին, իրաւունք կայ որևէ կամ առանձին, իրաւունք կայ որևէ առեւտրական գործի։ Միասին կը տրուի նաեւ գեղեցիկ յարկաբաժին մը երկու սենեակ, խոհանոց, եւայլն։ Մանրամասնութեանց համար զիմել ամէն օր կէսօրէ վերջ ժամը 2.30էն յետոյ Պ. Գաբրիէլ Գարաեանի, 75 Ave. de Verdun, Issy les Moulineaux, Seine.

ՀԱՅԵՐԷՆ ՍՈՐՎԵՑՈՒԾԷՔ ՀԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ

Այցելու ուսուցչուհի մը հայերէնի մասնաւոր դասեր կուտայ դիւրամատչելի պայմաններով։ Գրել՝ Mlle. Sevatch, 7bis rue de Pré St. Gérvais, Les Lilas, Seine.

ԶԿՆՈՐՍՈՒԹԻՒՆԸ ՊՈՒԼՈՆԵԻ ՄԷՋ

Պուլոնը սիւռ Մէր 23 օգոստ. 932

Այսօր Պուլոնեի մէջ որսացուած է առատօրէն Հարանձուկը։ Տանտիկիններ, օգտուեցէք առիթէն եւ կերէք այս պատուական ձուկը։

Etude de Me BERNARD WAHÉ (ՊԷՕՐԷՔՅԵԱՆ)
(12 année)
Licencié en Droit de la Faculté de Paris
Ancien élève de l'École des Hautes Etudes Sociales
JURISCONSULTE
Droit Français et International Privé
18, Rue Dauphine, Paris (6e) Tél. Danton 73-57
Կը առանձնէ ամէն տեսակ դատական խնդիրներ, ինչպէս նաեւ փոխադրական արկածներ, անձամբ կը պաշտպանէ առեւտրական եւ հաշտարար դատարաններու առջեւ, կուտայ certificats de coutumes-ներ, կը կատարէ ամուսնալուծման եւ ամուսնալուծման վերաբերեալ բոլոր գործողութիւնները

ՍԵԴՐԱԿ ՍԱՍՈՒՆԻ
Վիրաբոյժ - ատամնաբոյժ
ՎԿԱՅԵԱԼ ՓԱՐԻԶԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՖԱՔՈՒԼԹԷՆ
14 Rue Lagrange, PARIS (5)
ՄԱՄՆԱԳԻՏ ՈՍԿԻ ԲՈՒՐՈՆԻ, ՊՈՒՀԻ եւ ԱՏԱՄՆԱՆԱՒ
բերնի, լինդերու, ակռաներու խնամք եւ վիրաբուժ. գործ
կ'ընդունի ամէն օր, ժամը 2էն 8, առտուները ժամադրու
կիրակի եւ տօն օրեր 9էն մինչեւ կէսօր։
Métro St. Michel *կամ* Maubert-Mutualité

ՕԳՏՈՒԵՑԷՔ ԲԱՑԱՌԻԿ ԱՌԻԹԷՆ
ՁՄՐԱՆ ԿԱՐԱԳԸ ԱՊԱՀՈՎԵՑԷՔ ԱՄԱՌՈՒԱՆ ԱԺԱՆ ԳԻՆՈՎ
ՔԱՆԻ ՈՐ ԴԻՆԵՐՈՒ ԶԳԱԼԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ ԿԸ ԳՏՆՈՒԻՔ, ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՍ ՍՈՑ ՊԱՀԱՆՋԸԸ ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ, ԲԱՑԱՌԻԿ ԳԻՆՈՎ ՎԱՃԱՌՄԱՆ ՍԿՍԱԾ Է։

Անարատ կարագ		5% աղուաճ, քիլօն	12.50	ֆրանք
»	»	3%	» » 12.75	»
»	» *demi salé*	1½%	» » 13.50	»
Հալեպի հալած անարատ կարագ			» 17.—	»


2—5—10 քիլօնոց գոցուած եւ ժաքուր տուփերու մէջ, յանձնելի քանակարան։ Մեծաքանակ գնումի բացառիկ գներ։
Դիմել՝ Comptoir Général des Beurres, 74 Rue Georgovie, Paris (14). Tél. Seg. 70-07, 70-88։

Մետաքսեղէն եւ թաւիշներ
Unis et inprimés, soie naturelle et artificielle
ՄԱՐՇԷի ՅԱՏՈՒԿ ԱԳՐԱՆՔՆԵՐ
ՖԷՐՄԱՆԵԱՆ ԵՂԲԱՐՔ
26 Rue des Capucins եւ **2 Rue Romarin, LYON**
Հեռաձայն Burdeau *34-07*, հեռագրական հասցէ Fermanef, Lyon

Հայերու ժամադրավայրը
ճաշարան **Ֆ Լ Օ Ր Ի Ա**
61 Rue Monsieur le Prince, PARIS (6e)
Մէթրօ Օտէօն եւ Սէն Միշէլ Հեռաձայն Danton 52—73
Արեւելեան եւ եւրոպական խնասուած կերակուրներ

ՀԱՅԿԱԿԱՆ ՁԱՇԱՐԱՆ CAUCASE
23 Rue de la Huchette, Métro St. Michel
Ի Հասկան եւ արեւելեան համեղ կերակուրներ՝ պատրաստուած՝ յայտնի խոհարարներու կողմէ։
Ճաշի միջոցին անընդհատ նուագ
Prix Fixe 4 պնակ կերակուր՝ 6 ֆրանք

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԵՒ ՁԱՐՏԱՐԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ
ԵԹԷ *կ'ուզէք ձեր գործի տեւտրակները կանոնաւորել՝ ճշդիւտ ու կանոնաւոր տոմարակալութեամբ մը եւ ձեր հաշիւները հաստատելի տուրքի վերջին օրէնքներուն հետ.*
ԵԹԷ *դատակոչեր ստացած էք* huissier*ներէ.*
ԵԹԷ *պայմանագրութիւններ ունիք շաբաթգրելիք կամ կնքելիք.*
ԵԹԷ *կ'ուզէք հաշիւի կարգադրութիւն մը կամ ժամանակամիջոցի մասնակալ.*
ԿՐՆԱՄ ՁԵԶԻ ԱՄԵՆԱԱՐԱԳ ԿԵՐՊՈՎ ԳՈՀԱՑՆԵԼ
Դիմեցէ՛ք **Պ. ՓԱՐՄԱԳ**, 28, Bld. de Strasbourg, **Paris (X)**. Tél. Botzaris 17.64
որ կ'ընդունի ամէն օր ժամը 9էն 12, եւ կամ ժամադրութեամբ ձեր գործակներուն մէջ։



REALISATION IMMOBILIERE

Կը հրաւիրենք բոլոր անոնք որ տուն շինել պիտի տան, չի կնքել անձնառութիւն, առանց մեզի խորհրդակցելու։

Ամէն դիւրութիւն շինութեանց եւ փոխառութեանց համար։ պայմանաժամ նուազագոյն տոկոսով։

Դրուած դրամագլուխին վրայ 100ին 70 եկամուտ կ'ապահովենք։ Ունինք նաեւ վարձու յարկաբաժիններ եւ աշխատանոցներ։

Խորհրդակցութիւնները ձրի են, ժամը 2էն 6.30։

Նշանեան *20, Passage Prado*, (մէթրօ Սէն-Ժրնի)

«ՅԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ (76)

Բ Ո Ռ

(ՎԷՊ 1830Ի ԻՏԱԼԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՕՐԵՐԷՆ)

■■■■■■■■■

Հեղինակ՝ Է. ՎՈՑՆԻՉ Թարգմ. Լ. ՇԱՆԹ

Բայց այժմ լռել կարելի չէր։ Նրա գնալու զօրձնական օգուտը այնչափ էլ ակնյայտնի չէր, որ այդ պատճառով այդպէս մեծ վտանգի ենթարկէր։ Բայ ի դրանից կինը մութ կերպով զգում էր, որ Բոռի վճիռը այնքան քաղաքական անհրաժեշտութեան հետեւանք չէր, որքան մի հիւանդոտ որոնում վտանգի ու դրան կապուած յուզման։ Բոռի համար սովորութիւն էր դարձել իր կեանքին հետ խաղալը, իսկ անպէտք վտանգներ որոնելու այդ ծարաւը մի անժուժկալութիւն էլ Զեմմայի աչքին, որի դէմ պէտք էր մաքառել կամաց, բայց հաստատ կերպով։ Տեսնելով որ իր առարկութիւնները անզօր էին նրա յամառութեան առաջ, Զեմման դիմեց վերջին միջոցին։

— *Խօսենք անկեղծ*, — ասաց նա, — *եւ իրերին տանք իրենց անունը։ Դոմինիկոյի դժուար դրութիւնը չէ, որ այժմ ձեզ ստիպում է գնալու, այլ ձեր սէրը դէպ ի...*

— *Ստուա է*, — ընդհատեց նա բռնկելով։ — *Ես այլ եւս նրա մասին չեմ մտածում, ես այլ եւս չեմ ուզում նրան տեսնել։*

Լուեց ու Զեմմայի դէմքից հասկացաւ որ իրեն մատնել էր։ Նրանց աչքերը մի վայրկեան հանդիպեցան իրար ու խոնարհեցան գետին։ Եւ երկուսից ոչ մէկը չարտասանեց այն անունը, որի մասին մտածում էին երկուսն էլ։

— *Ինդիրը Դոմինիկոն չէ*. — *քրթմնջեց վերջապէս Բոռը՝ դէմքը կիսովին կատւի մազերի մէջ թաղելով։ — Ես տեսնում եմ, ի՞նչ վտանգի է ենթարկւում գործը, եթէ օժանդակութիւն չհասցնենք։*

Զեմման անպատասխան թողեց նրա այդ թոյլ խուսափումը, ու շարունակեց իր խօսքը, կարծես բնաւ ընդհատած չլինէին։

— *Ձեզ դրդողը վտանգներ որոնելու ձեր սովորական հակումն է։ Դուք վտանգի էք ծարաւում, երբ ձեզ մի բան տանջում է. այնպէս ինչպէս որ օպիում էիք ուզում, երբ հիւանդ էիք։*

— *Ես չէի ուզողը*. — *պատասխանեց նա գրգռուած*. — *ինձ ինդրում էին, որ ընդունէի։*

— *Ի հարկէ, դուք մասամբ հպարտանում էք ձեր սառնակրթութեամբ եւ ֆիզիքական ցաւի մեղմացման համար եղած առաջարկը վիրաւորում է ձեր հպարտութիւնը։ Մինչդեռ ձեր կեանքը վտանգի ենթարկելը ախորժելի է ձեզ, երբ այդ երկուսի մէջ եղած տարբերութիւնը շատ է պայմանական։*

Բոռը բռնեց կատւի գլուխը, եւ ճըկեց ու նայեց նրա կլոր դորշ աչքերին։

— *Ձի՞դ է, փիսօ, — ասաց նա։ — Արդա՞ր են սիրուհուդ այս բոլոր մեղադրանքները։ Հրաման կըտաս որ խոստովանեմ մեղքերս։ Չէ՞ որ դու մի իմաստուն զազանիկ ես ու երբեք օպիում չես պահանջում, այսպէս չէ՞։ Քո նախահայրդ Աստւած էր Եգիպտոսում եւ ոչ ոք չէր կոխում նրանց պոչը։ Բայց չդիտեմ, ինչ կը լինէր քո այդ մեծափառ անդորրութիւնդ, եթէ յանկարծ վերցնէի թաթիկդ ու բռնէի ճրագի վրայ։ Օպիում կը փնտռէի՞ր, հա՞։ կամ, դուցէ, մա՞հ։ Ո՛չ, կատւիկս, մենք իրաւունք չունինք մեռնելու մեր քէֆովը։ Մի քիչ հայհոյել, ոչինչ, կարելի է, եթէ դա քեզ թեթեւութիւն է տալիս, բայց չլինի թէ թաթիկդ եռ քաշես։*

— *Փի՛ստ։*

Զեմման վեր առաւ կատուն նրա ծնկից ու նետեց նստարանին։

— *Դեռ ժամանակ ունինք այդ մասին խօսելու։ Այժմ պէտք է մտածենք, ինչպէս անենք որ ազատենք Դոմինիկոյին իր սարսափելի դրութիւնից։ Ի՞նչ կայ, կէտտի. մա՞րդ եկաւ։ Զրաղած եմ ես։*

— *Օրիորդ Բայթից մի նամակ է, տիկին։*

Ուշի ուշով կնքւած մի նամակ էր դա, օրիորդ Բայթի հասցէին, բայց ծրարը չբացւած, վրան էլ պապական նահանգի դրոշմանիշ։ Զեմմայի մի քանի ընկերները Ֆլորենցիա էին բնակւում, գաղտնի նամակներից շատերը ստացւում էին նրանց հասցէով։

— *Մէքէլէէին է*. — *ասաց նա, մի արագ աչք ձգելով նամակին, ուր խօսւում էր Ապենինեան ամարանոցների գների մասին. երեսի վերջում երկու փոքրիկ բիծ կար։*

— *Քիմիական թանաք է. վերցրէք սրւակը սեղանի երրորդ աչքից. հակազդող հեղուկն է։ Այո, հէնց այդ։*

Բոռ փռեց նամակը սեղանի վրայ ու փոքրիկ վրձինը քսեց երեսին։ Եւ երբ նամակի իսկական բովանդակութիւնը դուրս ցայտեց թղթի վրայ փայլուն կապոյտ տառերով, Բոռ եռ նետւեց թիկնաթոռին ու սկսեց ծիծաղել։

— *Ի՞նչ է պատահել*. — *հարցրեց Զեմման չոռով։*

Բոռ նամակը պարզեց նրան։

«Դոմինիկոն ձերբակալւած է. անմիջապէս եկէք»։

Զեմման նստած մնաց նամակը ձեռքին, մի անյօյս հայեացքը սեւեռած Բոռին։

— *Է՞է*. — *հարցրեց վերջինս մի հեգնոտ ու ձիգ տւող թօնով։ — Այժմ համաձայն էք, որ գնամ։*

— *Այո՛, — եղաւ պատասխանը։ — Պէտք է որ դնաք, նոյնպէս եւ ես։*

Բոռ զարմանքով նայեց նրան։

— *Դո՞ւք։ Բայց...*

— *Այո՛, ի հարկէ, չատ անհրաժեշտ է, որ ոչ ոք չէի մնալու։ Բայց առ այժմ ամէնից առաջ է մտածենք ինչպէս անենք որ աւելորդ աշխատող ձեռք ճարենք։*

— *Մարդ այնտեղ շատ կայ։*

— *Բայց անկարելի է նրանց ձակ վստահանալ։ Ինքներդ մի քիչ առաջ, որ այնտեղ պիտի նինք երկու պատասխանատու եւ եթէ Դոմինիկոն առանձին չէր կարող, պարզ է որ նոյնչէք եւ դուք։ Մանաւանդ խիստ կասկածանքի ենթակայ դու համար աւելի դժւար է գալ եւ շատ աւելի կարիք ունի թեան։ Ձեր ու Դոմինիկոյի գործ պէտք է որ լինենք դուք ու ես։*

— *Ճիշդ է, իրաւունք ունիք*, — *ասաց նա։ — Եւ որչափ չուտ այնքան լաւ։ Բայց միասին կարելի։ Եթէ ես այս գիշեր դուք կարող էք, դիցուք վաղը։*

— *Բայց ո՞ւր։*

— *Ա՛, դեռ պէտք է մտածենք ձեմ աւելի լաւ է ուղղակի ես երեկոյեան ճամբայ կ'ընկնի լօնդօ, կը ճարեմ մի որ դուստ ու կը գնամ առաջ։*

(Շա

LE SEUL QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

ՀԱՅՐԱՆԴ

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : Sch. Missakian

Rédaction & Administration

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

17, Rue Damesme PARIS (13e)

Téléphone : Glacière 15-70

(ԵՐԹԵԼԻԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro: TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ,—

	ՏԱՐԵԿԱՆ	ՎԵՑԱՄՍԵԱՅ	ԵՌԱՄՍԵԱՅ
Ֆրանսա եւ գաղութներ	140 ֆրանք	70 ֆրանք	35 ֆր.
Անգլիա, Եգիպտոս, Ջուիցերիա, Իտալիա	250 »	130 »	—
Ամերիկա	8 տոլար	5 տոլար	—
Ուրիշ երկիրներ	200 ֆրանք	100 ֆրանք	—

ՈՒՐԲԱԹ 26 ՕԳՈՍՏՈՍ 1932

26 AOUT 1932

Ը. ՏԱՐԻ Թիւ 1966 — Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ — ԳԻՆ 30 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ԻՍԿ ԱՅՍ ՄԷԿԸ

Ուրեմն, գաղութներու ինքնապաշտպանութեան առաջին պայմանն է՝ կարճ կապել սնոտի վէճերը: Իսկ երկրորդը՝ հակազդել երեւանցիներու սարքած դաւերուն: Իրրեւ դիտակից եւ արթուն պահակ:

Ո՞ր աւանդական ազգասէրը, կամ ո՞ր քաղաքական հոսանքը պիտի համարձակէր վէճի բռնուիլ այս մասին:

Կարճ կապել ներքին պատակոմները՝ չի նշանակեր քթխտանէ արար համբուրել հանդիպողը, կամ տեսակէտ ուրանալ:

Եւ հակազդել կարմիր – կանանչ դաւադիրներու կազմակերպման աշխատանքին՝ չի նշանակեր թշնամական դիրք բռնել երեւանի դէմ:

Ես կը քննադատեմ երեւանի վարած քաղաքականութիւնը, կամ կը դնեմ պահանջներ որ մեր չենք իր ուժէն, որ կը ըմբռնի այս ժողովուրդի չահերէն:

Դուն կրնաս, աչքերդ գոց, փառաբանել երեւանի ըրածն ու չըրածը: Ազատ ես, կը բաւէ որ մոլորած չըլլաս, կամ քաղաքականութիւն չխաղաս, հակառակ համոզմանդ եւ ակներես փաստերու:

Այստեղ, երկուքիս ալ նպատակը մէկ պիտի ըլլայ, — ընդունելով կատարուած իրողութիւնը, երեւանը համարելով խորխոխ, մեկնակէտ կամ կորիզ, իւրաքանչիւրը պիտի ձգտի գործի մղել զայն յանուն այս ժողովուրդի գերագոյն չահերուն:

Եւ որովհետեւ, ներկայ պայմաններուն մէջ, երեւանը ամէն բան չէ ու չի կրնար ըլլալ, ոչ ոք ինքն իրեն թոյլ պիտի տայ հէքեաթներ հիւսել: Կամ հրաշքներ սպասել:

Այդպիսի ակնկալութեանց վրայ՝ ամէնէն առաջ երեւանը ինք խնդացած է, եւ պիտի չարունակէ խնդալ:

Արդ, երեւանէն դուրս, մենք ունինք առ նուազն կէս միլիոն մարդ: Վերջին մնացորդը չախչախուած ժողովուրդի մը:

Եղածն է որ կը պահուի, մինչդեռ աւելի քան ժամանակ էր բազմապատկուելու, եթէ ոչ իր դրօշին տակ համախմբելու ապրելեան սերունդին մեծամասնութիւնը:

Անշուշտ նիւթական զժուարութիւններն ու տեղական պայմաններն են որ կը կոտրեն Զ. Ո. Մ. թեւերը: (Ինչպէս ուրիշ Միութեանց պարագային):

Բայց, այդ պարագան չի կրնար արդարացնել մեր երիտասարդները, քանի որ ինքնապաշտպանութեան կռիւ ունինք:

Անըմբռնելի է ինքնապաշտպանութեան ճակատ մը, առանց երիտասարդութեան:

Ահա Հ. Մ. Ը. Մ.ը: Տասնամեակ մը ունի եռին, բայց կը թուի թէ եղածն ալ զժուար կը պահէ: Գոնէ Ֆրանսայի մէջ:

Անցեալ տարի, պատգամ. ժողով մը ունեցան, որ տեւեց աւելի քան...վեց ամիս: Արդիւնքը՝ չորչորուն ծրագիր–կանոնագիր մը, որ կը կարծենք թէ մինչեւ այսօր ալ դարակներու մէջ կը մնայ, ըովհետեւ... չեն կրցեր տպագրական ծախք ճարել:

Այդ ծրագրով, եւ օրուան պահանջներու բերումով, Հ. Մ. Ը. Մ.ը իր նիւթական եւ բարոյական գործունէութեան հարիւրին 75ը պիտի յատկացնէր արիներու խումբերը կազմակերպելու: Կարելի եղածին չափ շատ մանուկներ այլասերումէ փրկելու:

Մինչդեռ, երեք տարիներու ընթացքին հազիւ 2—300 հոգի կրցած է կազմակերպել: Չհաշուելով Հայ Արիներու Միութիւնը, որ կը յամառի անջատ գործել:

Ահա, վերջապէս, բազմագոյն «Լսարանականներ»ն ու «Ճառաչդիմասիրացներ»ը, որոնց անդամները կը համբուրեն տասնեակներով:

Գոնէ այս ճակատին վրայ վրդովիչ է խաչաձեւումը կամ սահմանափակումը:

Մասնաւորապէս արեւելեան գաղութներու մէջ, եթէ կարելի չէ միեւնոյն քաղաքին երիտասարդութիւնը համախմբել մէկ միութեան շուրջ, երկուքն ալ չարիք չպիտի համարէինք, եթէ, անջատ գործելով հանդերձ, իրար լրացնէին: Ու ճիգ թափէին կարելի եւ չափ շատ երիտասարդութիւն հաւաքելու: Երկու սեռէն ալ:

Շ.

ՕՐԸ ՕՐԻՆ

ԴԷՊԻ ԱՆԱՍՆՈՒԹԻՒՆ

— :-: —

Հետզհետէ կը զարգանայ ու կը ծաւալի նոր աղանդ մը, — մերկապաշտութիւն:

Ամէն տարիէ այրեր եւ կիներ, բացարձակապէս մերկ, խմբական պրոտոյտներ եւ մարզաւիճներ կը կատարեն, համախմբումներ կը սարքեն: Իրենց նշանախօսքը՝ վերադարձ դէպ ի բնական օրէնք:

Օրէնք մը, որ անշուշտ չի գոհանար մերկանալով:

Անոնք ունին իրենց թերթերն ալ, մասնաւորապէս Գերմանիոյ մէջ, ուր այրեր, կիներ, պատանիներ եւ աղջիկներ կամ երախաներ կ'երեւան առանց լաթի կտորի մը: Եւ զանազան դիրքերով: Նստած, պառկած, թեւ թեւի, դէմ դիմաց, անտառին մէջ կամ գետի մը ափը:

Շարժումին զարգացման հետ, անհամութիւնները ալ կը բազմապատկուին:

Իրարու կը յաջորդեն դատերը:

Քանի մը շաբաթ առաջ, Փարիզի մէջ, ամուսնալուծման վճիռ ստացաւ կին մը որ բողոքած էր իր մերկապաշտ «գլխաւոր»ին դէմ:

Այս կինը ինքն ալ մերկապաշտ մը եղած էր ժամանակին. բայց տեսնելով որ չափ ու սահման չկայ, նահանջած էր:

Իսկ ամուսինը ոչ միայն անվկանդ յառաջ տարած էր ուսումն ու մարզանքը, այլ եւ իր 12 եւ 15 տարեկան աղջիկներն ալ վարժեցնելով, իր եւ անոնց լուսանկարները հանել տուած էր բողոքովին մերկ, եւ զրկած իրենց՝ օրկանին, որ անմիջապէս հրատարակեց:

Լուսանկարը կը ներկայացնէր մերկանդամ հայրը: Իսկ երկու թեւերուն վրայ՝ իր մօբէ մերկ աղջիկները...

Ջհամբերեց մայրը, եւ դատ բացաւ: Դատարանն ալ իրաւունք տրուաւ, ամուսնալուծում վճռելով, եւ այրը դատապարտելով պարէն վճարելու կնոջ:

Առողջ մարզանքի մը վարժելու եւ սեռական բնազդը կանոնաւորելու պատրուակին տակ, աւելի վատառողջ մոլութիւններ կ'արծարծէ եւ անասնական կիրքեր կը գրգռէ մերկապաշտութիւնը, — կ'ըսէր վճռագիրը:

Անշուշտ որ արդար է այս եզրակացութիւնը: Մանաւանդ մեր ժամանակներուն համար:

Ջհասկցայ թէ կիներ՞ն ինչու կապկօրէն կը հետեւին այս այլանդակ ճոխութեան, երբ այս պողոտաներէն մինչեւ Աթէնք, Սեւանիկ, Սոֆիա կամ Պէյրութ, միայն բարակ մետաքս մըն է որ կը ծածկէ իրենց մարմինը, առանց թեւերու, եւ առանց գուլպայի եւ մնացեալ մանրամասնութեանց:

Աւելորդ հարցում:

Եթէ կինը կապիկի ճաշակ չունենար, կրնա՞ր կին մնալ...

ՎԱՐԱԶ

ՉԻՆԱՑԻՆԵՐԸ ՎԵՐՍԿՍԱՆ ԿՌԻԻԸ

Մուքդէնէն կը հեռագրեն օգոստոս 29 Թուականով.—

Բազմաթիւ Չինացի զինուորներ առտուն կանուխ յարձակեցան ճափոնական օդանաւային կայանին, անթելի կայանին, զինարանին եւ ուրիշ դիրքերու վրայ: Հրդեհներ ծագեցան զինարանին եւ օդանաւային կայանին մէջ: Բոլոր տրամադրելի հրասայլերը, ինչպէս եւ զինուորներն ու ոստիկանները դրկուեցան ճակատ: Բուռն կռիւներ տեղի կ'ունենան խաղաքին մէջ եւ շրջակաները:

— :-: —

ԿՈՐՍՈՒՆՑԱ՞Ն.— Շաբաթ օրէն ի վեր լուր չկայ այն երկու ամերիկացի օդանաւորդներէն, որոնք անցեալ երեքշաբթի ճամբայ ելեր էին Նիւ Եորքէն, Ատլանտեանը կտրելու համար:

Մինչեւ հիմա կատարուած խուզարկութիւնները ապարդիւն անցած են: կը կարծուի թէ երկու երիտասարդները ծովն իյնած եւ անհետ կորսուած են:

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

Ռուս մասնագէտներ Թուրքիոյ մէջ

Մոսկուայէն Պոլիս հասած բամպակի ճարտարագործութեան մասնագէտներու յանձնախումբ մը, նախագահութեամբ Փրոֆ. Օրլովի, որ տիրական դեր կատարած է հնգամեայ հին ծրագրի մէջ եւ հիմա նորը կը պատրաստէ:

Յանձնախումբը լայն ծրագիր մը ունի աչքի առջեւ: Թրքական ճարտարագործութիւնը մինչեւ հիմա մեծ ուշադրութիւն չէ նուիրած հում նիւթերու, քանի որ ներածուած նիւթերը ազատ էին մաքսաւուրքէ: Այս կերպով, մինչ Թուրքիա մեծ քանակութեամբ հում նիւթ կը ներածէր, չէր կրնար նոյն նիւթերը ծախել օտար հրապարակի վրայ: Ռուս մասնագէտներուն գլխաւոր գործը պիտի ըլլայ որոշել թէ այդ նիւթերը ինչպէս կարելի է գործածել տեղին վրայ: Այս նպատակով, արդէն իսկ ձեռնարկած են լայն պտոյտի մը, որ երկու ամիս պիտի տեւէ: Ստացուած արդիւնքին համաձայն, պիտի որոշուի թէ ո՛ւր գործարաններ պիտի չինուին: Մեքենաները Ռուսիա պիտի ապսպրուին, Լոմէթ վաչայի հետ կնքուած պայմանագրութեան համաձայն:

Մօտերս ռուս մասնագէտներու նոր խումբ մը պիտի գայ Թուրքիա, ճարտարագործութեան եւ հանքային դրամատան օդնելու եւ չաքարի եւ ուրիշ ճարտարարուեստներու մասին ընդարձակ ծրագիր մը կազմելու համար:

Սեղմումներ կը սպասկանան

Ֆրանսայի վարչապետը Մանչի կղզիները կը դանուի այս միջոցին, իբրեւ թէ Վիքթոր Հիւկոյի մասին գրելիք գործի մը համար նիւթեր հաւաքելու: Իրականին մէջ, Պ. Էռիօ տեսակցութիւններ պիտի ունենայ Անգլիոյ նախարարներուն հետ: Իրեն կ'ընկերանայ ներքին նախարար Շօթան, որ չերմ կուսակից է անգլ եւ֊ֆրանսական բարեկամութեան: Այս միջոցին կղզիները կը գըտնուի նաեւ Անգլիոյ ներքին նախարարը:

Այս առթիւ, խորհրդակցութիւններ պիտի կատարուին երկու երկիրներու միջեւ ծագած ներքին խնդիրներու մասին: Այսպէս, պիտի քննուի անցագիրներու հարցը: Օտարականներու մուտքի խնդիրը մեծ դժուարութիւններ կը պատճառէ թէ Անգլիոյ եւ թէ Ֆրանսայի մէջ: Վերջին ամիսներու ընթացքին երկու կողմէն ալ կրկնապատկուած են խստութիւնները, որպէսզի ծանօթ ոճրագործներ չկարենան անցագիր ստանալ, որպէսզի առողջապահութիւնը ապահովուի, եւ յետոյ՝ օտարականներ չկարենան տիրանալ այն գործերուն զոր կրնան կատարել երկու երկիրներու քաղաքացիները:

Անշուշտ քաղաքական խորհրդակցութիւններ ալ պիտի կատարուին: Իսկ Պ. Էռիօ իր մասին պիտի ուսումնասիրէ կիրճսիլի այն բնակարանը զոր Վիքթոր Հիւկօ դնեց 1856ին եւ ուր գրեց «Թշուառները» եւ «Ծովու Աշխատաւորները»:

"Վերադարձ դէպի Ասիա,,

Ինչպէս գրեցինք, ճափոնական կառավարութիւնը որոշեց ճանչնալ Մանչուրիոյ անկախ պետութիւնը, առանց սպասելու Ազգերու Դաշնակցութեան քննիչ յանձնախումբի տեղեկագրին: Ազգերու Դաշնակցութեան ընդհ. ժողովը յետաձգուած է Սեպտ. 26ին, որպէսզի յանձնախումբը ժամանակ ունենայ իր տեղեկագիրը պատրաստելու: Բայց ճափոն կ'ուզէ կատարուած իրողութեան առջեւ դնել պետութիւնները. մանաւանդ որ, երկրին մէջ օրէ օր կը զօրանայ նոր չարժում մը,— «վերադարձ դէպի Ասիա»: Այս չարժման եռեւը կեցած են բանակին սպաները, որոնք ընդունելով հանդերձ որ բարդութիւններ պիտի ծագին, եթէ ճափոն քաշուի Ազգերու Դաշնակցութենէն, կը պնդեն թէ արեւմտեան պետութեանց հետ գործակցութիւնը միայն նուաստացում բերած է իրենց, եւ ոչ համապատասխան տնտեսական բարգաւաճում: Հետեւաբար, ինչպէս Հիթլէրեանները, անոնք փարած են «ինքն իրեն բաւելու» վարդապետութեան: Անոնք նոյնիսկ ուժ կուտան կարգ մը ընկերվարական գաղափարներու, որոնք չատ կը նմանին Հիթլէրեաններու դրած սկզբունքներուն:

Մանչուրիոյ հետ կնքուելիք դաշնագիրը այդ նոր պետութիւնը պիտի դնէ ճափոնի խնամակալութեան տակ: Ազգերու Դաշնակցութեան միւս անդամները անցեալ գարնան քուէարկեցին բանաձեւ մը, որով յանձն կ'առնեն չճանչնալ ո՛ր եւ է հողային կամ վարչական փոփոխութիւն որ յառաջ եկած է զինու զօրութեամբ: Իսկ Ամերիկան յատկապէս դիրք բռնած է: Ցոյս չկայ որ Անգլիա եւ ուրիշ կառավարութիւններ յաջողին հաշտեցնել Ազգերու Դաշնակցութեան հեղինակութիւնը եւ ճափոնի յաւակնութիւնները. հետեւաբար, վախ կայ որ ճափոն քաշուի Ազգերու Դաշնակցութենէն:

Չինուորական դասէն յետոյ, ճափոնի երկու մեծ կուսակցութիւններն ալ ուժ կուտան «դէպ ի Ասիա» չարժումին:

Կացութիւնը Գերմանիոյ մէջ

Վարչապետ Ֆօն Փափէն կիրակի օր խօսեցաւ իր մեծ ճառը, պարզելով կառավարութեան քաղաքականութիւնը: Նախ չեչտեց թէ՝ իր պետական ըմբռնումին հիմքն է պահպանողականութիւն եւ քրիստոնէութիւն: Ցետոյ, խստօրէն ճաղկեց Հիթլէրի գործունէութեան ձեւերը: «Ես չեմ կրնար ընդունիլ թէ իր դրօշին տակ համախմբուած փոքրամասնութիւնը գերմանական ամբողջ ազգը կը ներկայացնէ: Եթէ ես այսօր կը պայքարիմ Հիթլէրի դէմ, ես եմ եւ ոչ թէ ինք որ կը հետապնդեմ իր միլիոնաւոր կուսակիցներուն նպատակը,— կուտիլ՝ կուսակցութեանց տիրապետութեան, անարգարութեան եւ կամայականութեան դէմ»:

Ցետոյ անցնելով ծրագրին, վարչապետը պարզեց այն միջոցները որոնք ձեռք պիտի առնուին, հողագործութիւնը քաջալերելու համար: Դրամը պիտի պաշտպանուի եւ կառավարութիւնը

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԳՈՐԾԱԴՈՒԼԸ

Ինչպէս կը նախատեսուէր, շաբաթ օր գործադուլ հռչակեցին Լանքաշիրի մանարաններու 200,000 բանուորները: Այս տակաւին մէկ մասն է բո՛ւն բանուորութեան, որ հետզհետէ պիտի խառնուի հոսանքին: Վէնին գլխաւոր պատճառն է օրավարձերու կրճատման հարցը: Սակայն բանակցութեանց խզման գլխաւոր պատճառն էր 3000 ճամբուած բանուորներու վերահաստատման խնդիրը: Եթէ շարժումը ծաւալի, 400,000 բանուորներ փողոց պիտի թափին: Գործատէր եւ բանուոր, երկու կողմերն ալ կ'ընդունին թէ այս տագնապը ողբալի հետեւանքներ պիտի ունենայ: Մանարանատէրերու դաշնակցութեան նախագահը յայտարարեց այս առթիւ.

— Եթէ գործադուլը շարունակուի, հարիւրաւոր մանարաններ պիտի սրճանկանան եւ հազարաւոր ոստայնանկներ անգործութեան պիտի դատապարտուին անորոշ ժամանակով: Ջեռնհաս շրջանակներու մէջ կը հաշուեն թէ գործադուլը օրական 1,500 հազար սդերլին (132 միլիոն ֆրանք) պիտի արժէ գործատէրերուն եւ սէնտիմէնտներուն, որոնք կը հոգան պայքարին ծախքերը:

Գործադուլը հռչակուեցաւ կատարեալ խաղաղութեամբ: երկու կողմերն ալ վճռած են պայքարիլ մինչեւ վերջը, ինչ որ ալ ըլլան հետեւանքները:

ՆՈՐ ՏԱԳՆԱՊ ՄԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ

Մեծ յուզում կը տիրէ Մ. Նահանգներուն մէջ, արմտիքի գիներու անկման հետեւանքով: Թզգտի ագարակապանները, որ հեզութեամբ կը կոչուին «կարագի եւ հաւկիթի արշաւախումբ», բանակ մը կազմած են եւ Ուաշինկդընի վրայ կը քալեն, պահանջելու որ աւելի բարձր գիներ որոշուին հողագործական արտադրութեանց համար: Գնդացիրներով եւ հեղձուցիչ կազերով սպառազինուած գինուորներ կը սպասեն նամրուն վրայ:

Կացութիւնը ծանր է նաեւ Շիքակոյի մէջ: Հողագործները որոշած են խաղաքը զրկել իրենց արտադրութիւններէն, եթէ գոհացում չտանաւն: Աստիճան մը յաջողած են իրենց այսձեռնարկին մէջ, կրկնապատկելով կաթին գինը: Նախապէս շարժումը համակրութիւնն կը վայելէր, բայց հանրային կարծիքը հետզհետէ պաղեցաւ եւ ընդհարումներ պատահեցան: Ոստիկանութիւնը հարկադրուեցաւ միջամտել, ապահովելու համար հողագործական արտադրութեանց եւ արջառի ազատ փոխադրութիւնը:

ՄՈՒՍՈԼԻՆԻ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ՃԱՌԵԼ

Վերջին ռազմափոթերու առթիւ, Մուսոլինի ճառ մը խօսելով սպանեցաւ, ըսաւ.

— «Այս ռազմախոթերը, զոր ես յղացայ եւ հրամայեցի, կատարելապէս համապատասխանեցին իրենց նպատակին: Տասնըհինգ տարուան ուշադիր ուսումնասիրութիւններ եւ զինուորական կարգապահութիւն, եւ հինգ տարուան տիրական ղեկավարութիւն պատերազմական, ծովային եւ օդային նախարարութեանց, ինծի իրաւունք կուտան յայտարարելու թէ մեծ ռազմախոթերը ոչ միայն օգտակար են, այլ եւ անհրաժեշտ, ոչ միայն անհրաժեշտ են, այլ եւ անխուսափելի: Ահա այս է տասը տարուան մեր իշխանութեան արդիւնքը: Եղաւ ժամանակ մը երբ այս ոգին չկար. ռազմախոթերի կուզային առանց խանդավառութեան, զօրակոչին կը պատասխանէին ինչպէս տարապարհակ աշխատանքի մը: Այսօր ամէն բան փոխուած է. խանդավառութիւն կայ. այն խանդավառութիւնը զոր ես ինծի օր մը կը կոչէի «պատմութեան թթխմորը»:

ՀՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ նաեւ նպատակը,— կուտիլ՝ կուսակցութեանց տիրապետութեան, անարգարութեան եւ կամայականութեան դէմ»:

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀ

Ամենաերկար ճանապարհը

Ամենաերկար ճանապարհը
Ոչ թե ծովն է, ոչ էլ ցամաքը,
Ոչ թե անապատն է ավազոտ,
Ոչ էլ ամպերի ճամփան բոց,
Ամենաերկար ճանապարհը
Ոչ թե ձմեռն է, ոչ թե գարուն,
Ոչ թե ամառն է, ոչ աշունը,
Ոչ էլ ամպրոպն է ահեղ,
Ամենաերկար ճանապարհը
Ոչ թե ցերեկն է, ոչ թե գիշեր,
Ոչ թե ամիսն է, ոչ տարին,
Ոչ էլ ամենաերկար տարին,
Ամենաերկար ճանապարհը
Ոչ թե ծերն է, ոչ թե մանուկ,
Ոչ թե ուղտն է, ոչ ձին,
Ոչ էլ ամենաերկար ուղտը,
Ամենաերկար ճանապարհը
Ոչ թե ճամփան է, ոչ ոտքը,
Ոչ թե ճամփորդն է հոգնած,
Ոչ էլ ամենահոգնած ճամփորդ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

(ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ)

Հայաստան ճեմական եւ յուրախական

Ք.

ՓՈՂՈՑԱՅԻՆ ՀԱՑԱՍՏԱՆ

Երեւան դէպ ամառնային տաստակերտն Մարի – Նուռուզ տարածութիւնը (*), գիտուէնը ցամաքած Մարի լճակի հովտին մէջ, ճեմարանի մօտ, ծաղկաստուերոտ ակունքներու մէջ, ինչպէս նաեւ Ծաղկաձորի, Կարմրաշէնի, Քանաքեռի, Հրազդանի, Ամանորեայ, Ջրաշէնի, Ֆրանսական դպրոցի, Ազատութեան հրապարակի, Ամերիկեան համալսարանի, Ֆրանսական հիւանդանոցի, Ամերիկեան հիւանդանոց

չպիտի խառնուի մասնաւոր տնտեսութեան: Պէտք է նոր վատահութիւն ներշնչել անհատական նախաձեռնութեան: «Մինչեւ հիմա տնտեսական բոլոր ճիգերուն արդիւնքը կ'երթար կը լեցուէր հատուցումներու դանապեան կարասը: Բայց այսօր, մենք ազատած ենք այդ բեռէն: Արտասահմանի մէջ ամէն տեղ եւ մասնաւորապէս Ամերիկայի մէջ նոր յոյսեր յառաջ բերաւ Լօզանի խորհրդաժողովը: Պէտք է մենք ալ մեր կարգին յիշենք թէ Լօզանէն իվեր մեր աշխատանքին պտուղը անճնապէս մեզի է որ օգտակար կ'ըլլայ: Այսպէս ստեղծուած է տնտեսական վերականգնումի առաջին պայմանը»:

Ֆօն Փափէն այս առթիւ չեշտեց թէ գործազրկութիւնը գլխաւոր խնդիրն է երկրին համար: Այս պատճառով ալ, կառավարութիւնը ընդարձակ ծրագիր մը պատրաստած է: Երկու միլիառ մարքի դրամագլուխ մը պիտի տրամադրուի, գործերը դիւրացնելու համար: Կառավարութիւնը եռ կեցած է բանի փոխառութեան մը ծրագրէն: Բարեփոխումներ պիտի կատարուին նաեւ տուրքերու գանձման մէջ, եւ կարելի պիտի ըլլայ գործ ճարել 1,700,000 գործազուրկներու:

Այրի տիկին Սօֆի Միքայէլեան եւ զաւակները եւ ազգականները սրտի խորունկ կսկիծով կը ծանուցանեն իրենց ամուսնոյն, հօր եւ ազգականին՝

ՄԻՀՐԱՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆԻ

դառնադէտ մահը:

յուղարկաւորութիւնը կը կատարուի այսօր, երեքշաբթի առաւօտ, ժամը *10.30*ին Lariboisière-ի (կար տի Նօրի մօտ) հիւանդանոցին մէջէ:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՏԱՐՕՆ - ՏՈՒՐՈՒԲԵԱՆի Հայրենկց. միութեան փարիզի մասնաճիւղի նոր վարչութեան անդամներն են.— ատենապետ՝ պետրոս վարդանեան, գանձապահ՝ տիգրան տիրոեան, քարտուղար՝ լեւոն ջոնիկեան: Խորհրդականները՝ Խաչիկ Մկրտիչեան եւ յարթեթ յարութիւնեան: Թղթակցութիւնները պիտի ըլլան ի֊հետեւեալ հասցէին.— Léon Doniguian, 52, Rue Isidor Neujahr. Bagneux (Seine).

ՄԱՍՆԱԳԷՏ ԲԱՅԻՇԿՆԵՐ

96 R, Rivoli, մէջ. Շաքէ: Արմատ. եւ նոր մէքոտ, դարմ. արանց եւ կանանց մորթի, արեան' ժեներ. հիւանդութիւն եւ վարիսի: Ամէն օր 9—12, 2—8, կիրակի 9—12:

ՀԱՅ ՕՐԻՈՐԴ ՄԸ ԳՈՐԾ ԿԸ ՓՆՏՌԷ

Հայ օրիորդ մը գործ կը փնտռէ հայ տունի մը մէջ եւ կամ կարի վերաբերեալ, համեստ պայմաններով: Կը ներկայացնէ լաւագոյն յանձնարարականները: Դրել Շ. Նարդունիի, ցառաջի հասցէով:

Վարձու խանութ

Լուսաւոր, կազ, ելեկտրականութիւն, առանց րըփրիգի, յարմար դերձակի, սափրիչի, կօշկակարի եւ ամէն առեւտրական գործի համար: Դիւրաժատելի պայմաններ: Դիմել տէր-ցակոբեան տպարան, *17* rue Damesme, մէթրօ Թօլպիաք:

Imp. A. DER (Agopian)
7, Rue Damesme, Paris (13)
Le Gérant H. STEPHAN

Ց.



Գ. Հ.

Գաւառ

Լիոնի մարզպետ խումբի խմբական ժողովը, այս շինգշաբթի երեկոյ ժամը *8.30*ին գրադարանի սրահը: Խիստ կարեւոր օրակարգ: Անդամներու ներկայութիւնը պարտաւորիչ է:

Լիոնի կայծակ խումբը ստիպողաբար իր ընկերները ժողովի կը հրաւիրէ վաղը, չորեքշաբթի երեկոյ, ժամը *8.30*ին, Գրադարանի սրահը:

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՒ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ ԼԻՈՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Շ. Ց. Դ. կուկունեան խումբի, հովանաւորութեամբ Շ. Ց. Դ. Լիոնի կոմիտէի, մասնակցութեամբ ՅԷՍԻՆի կոմիտաս երգչախումբի, (դեկ. Ա. Գ. մելքոնեանի) եւ դերասան Մ. Մարութեանի:

24 Սեպտ. Շաբաթ իրիկուն ժամը 8.30ին Գ. Թաղապետարանի սրահը: Մանրամասնութիւնները տեղւոյն վրայ:

Կը խնդրուի բոլոր կազմակերպութիւններէն նկատի ունենալ այդ թուականը:

Դերասան Մ. ՄԱՐՈՒԹԵԱՆի ներկայացումները

1932 Սեպտեմբեր 17ին Շաբաթ իրիկուն ժամը 8.45ին
Société Savantes*ի մէջ* (28 rue Danton)
Ղեկավարութեամբ հանրածանօթ դերասան
Մ. ՄԱՐՈՒԹԵԱՆի
եւ մասնակցութեամբ երգչուհի դերասանուհի
ՏԻԿ. Ե. ԲԱԴԱԼԻ
կը ներկայացուի

ԲՈՒՐ

(Տրամ 5 արար)

Հեղինակ՝ Է. Վոյնիչ
Թարգմանեց՝ Լ. Շանթ
Բեմի վերածեց՝ Մ. Մարութեան

Կը մասնակցին՝ տիկ. Ե. Բադալ, Պ. Պ. Ա. կոթիկեան, Սերժ Թորոսեան Ս. Մաքսուտեան, Ա. Յարաֆեան, Ե. Գրիգորեան, Գազազեան, եւայլն:

ՏՈՄՍԵՐՈՒ ԳԻՆԵՐԸ Ա. 20, Բ. 15, Գ. 10, Դ. 5 ֆր.

Տոմսերը կը ծախուին բոլոր հայկական ճաշարաններուը, Գրատուն Հրանտ-Սամուէլ 51 rue Mr. le Prince *եւ լուսանկարիչ Phébusի մօտ:*

ՇԱՒՕԹ.— Նոյն խաղը կը ներկայացուի Լիոնի մէջ Հոկտ. 22ին, Էմիլ Զօլայի մէջ եւ 23ին Տէսինի մէջ, հայ ժողովրդական նորածնունդ սրահին մէջ:

Երգչուհի Տիկ. Բագալի երգահանդէսները տեղի կ'ունենան Հոկտ. 2ին Վիէնի մէջ, Հոկտ. 8ին Լիոնի եւ 8ին Տէսինի մէջ:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ, կեանքը, Թ. Ազատեան 15 ֆրանք, ՇԱՒՕԹ ԴԻՄԱՒՈՐ ՈՒ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ, Գ. Զօհրապ 20, ՆԱՀԱՏԱԿ ԳՐՈՂՆԵՐ (Տ. Զէօկիւրեան եւ Ռ. Սեւակ), Ա. Սեւան 15, *ԱՐԵՒՈՏ ՃԱՄԲԱՆ*, Մաննիկ Պէրպէրեան 10, *ԵՏՔԸ*, Էրիխ Մարիա Ռեմարք 20, *ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆԻ ՄՏՔԵՐԸ*, Քրիստ. Միքայէլեան 10, *ՀԵՆԹԸ եւ ՋԱԼԱԼԷՏԻՆ՝* Բաֆֆի 25, *ՎԱԼԱՆԹԻՆ*, ժորժ Սան 20, *ԹԷՐՁԱՆՕ*, (Բիւզանդիոնի կայսրուհին) 25, *ԱՊՐՈՒՄՆԵՐ*, Մայիաս 50, *ԳՆԴԱԿԱՀԱՐՈՒԱԾՆԵՐԸ*, Ռէն 20, *ԵՐԵՔ ԸՆԿԵՐՆԵՐԸ*, Ղ. Մելոյեան 10, *ՍԱԼԻՒԱ ՀԱՆԸՄ*, Ե. Օտեան 2 *հատոր* 30 *ֆր.*, *ԺԻՒՏՔՈՒ ԵՒ ԺԱՔԼԻՆ*, Ա. Պէրնէտ 2 *հատոր* 65 *ֆր.*, *ՍԻՄՈՆ ՓԻՔԼԻՎԱՆ* 25, *ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ԱՂՋԻԿԸ*, Քասիմ 2 *հատոր* 25, *ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ*, Յ. Ալոճեան (Իզմիրլի) 12.50, *ՏԱՒԻՂ ԵՒՈՒԼԵԱՆ*, Գ. Կառվարենց 20, *ԱՐԵՒԵԼՔԷՆ ԱՐԵՒՄՈՒՏՔ*, Ղուտանիկ 5, **QUATRE CONFÉRENCES SUR L'ARMÉNIE, Fr. Macler 35, LES RIRES D'UNE CHARMEUSE DE SERPENTS, Armen Ohanian 15.**

Դիմել՝ ԳՐԱՏՈՒՆ ՀՐԱՆՏ - ՍԱՄՈՒԷԼ, 51 rue Monsieur-le-Prince, Tél. Danton 88-65, *ուր կը գտնէք նաեւ ֆրանսերէն եւ հայերէն ամէն տեսակ գրքեր:*



Tricots TERZIAN
20 Rue Mélingue, Paris
Tél. Botzaris 22-98 Métro Butte-Chaumont
ՓԱՐԻԶԻ ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ ԹՈՒԻԿՈՑԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Կ'ՈՒԶՈՒԻ թիւ *10* մեքենայ ունեցող եւ տունը աշխատող գործ... ուորներ: Լաւագոյն վճարումով: Մոռթ սեզոն չունեցող եւ ... րին *12* ամիս աշխատող միակ թուիքոյի գործարանը:

ՕԳՏՈՒԵՑԷՔ ԲԱՑԱՌԻԿ ԱՌԻԹԷՆ
ՁՄՐԱՆ ԿԱՐԱԳԸ ԱՊԱՀՈՎԵՑԷՔ ԱՄԱՌՈՒԱՆ ԱԺԱՆ ԳԻՆՈՎ
ՐԱՆի ՈՐ ԳԻՆԵՐՈՒ ՁԳԱԼի ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ ... ԳՏՆՈՒԻՆՔ, ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՍ ՍՈՑՆ ՊԱՀԱՆՋՔԸ ՆԱԶՍՏ ՈՒՆԵՆԱԼՈՎ, ԲԱՑԱՌԻԿ ԳԻՆՈՎ ՎԱՃԱՌՄԱՆ ՍԿՍԱԾ Է:

Անարատ կարագ	5% աղուած, քիլօն	*12.50*	Ղրշ.
» »	3% » »	*12.75*	»
» » *demi salé*	1½% » »	*13.50*	»
Հալէպի հալած անարատ կարագ		*17.—*	»

2—5—10 քիլօնոց գոցուած եւ ժաքուր տուփերու մէջ, յանձին բնակարան: Մեծաքանակ գնումի բացառիկ գներ:

Դիմել՝ Comptoir Général des Beurres, 74 Rue Georges, Paris (14). Tél. Seg. 70-07, 70-88.

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԵՒ ՁԱՐՏԱՐԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ԵԹԷ *կ'ուզէք ձեր գործի տետրակները կանոնաւորել՝ ճշգրիտ ու կանոնաւոր տոմարակալութեամբ մը եւ ձեր հաշիւները համաձայնեցնել տուրքի վերջին օրէնքներուն հետ.*

ԵԹԷ *դատակոչեր ստացած էք huissierներէ.*

ԵԹԷ *պայմանագրութիւններ ունիք շարադրելիք կամ կնքելիք.*

ԵԹԷ *կ'ուզէք հաշիւի կարգադրութիւն մը կամ ժամանակամիջոցի ստանալ.*

ԿՐՆԱՄ ՁԵԶԻ ԱՄԵՆԱԼԱՒ ԿԵՐՊՈՎ ԳՈՀԱՑՆԵԼ

Դիմեցէ՛ք **Պ. ՓԱՐՄԱԳ**ի, 28, Bld. de Strasbourg, Paris (X). Tél. Botzaris 17.64
որ կ'ընդունի ամէն օր ժամը 9էն 12, եւ կամ ժամադրութեամբ իր գրասենեակներուն մէջ:

Տեսիլի մէջ «Յառաջ»ի գործակալն է
Պ. ՎԱՀԱՆ ՀԻՒՍԵԱՆ
41, Maison l'Aurore, DÉCINES, (Isère)

ԼՈՑՍ ՏԵՍԱԾ ԵՆ

Նահատակ Գրագէտներու Բարեկարգիր

ՄԱՏԵՆԱՇԱՐԻՆ վեց հատորները

Ռ. Զարդարեան, Հրանդ, Գեղամ Տէր Կարապետեան, Գեղամ Բարսեղեան, Ա. Արփիարեան, Զօհրապ:

Պատրաստուելու վրայ են առաջին շարքին ինացեալ վեց հատորները:

Տիգրան Չէօկիւրեան, Եր. Սրմաքէշխանլեան, Եր. Օտեան, Ար. Յարութիւնեան: Տ. Սեւակ, Տ. Զրաքեան:

Բաշալերեցէք այս գեղեցիկ ձեռնարկը: Ամէն մէկ հատոր կ'արժէ 20 ֆրանք: Դիմել՝ M. Barsamian, 121 Rue Marcadet, Paris (18)

CABINET V. YARJANIAN
JURISCONSULTE
54, Rue La Fayette, Paris (9) (Métro Cadet) Tél. PROVENCE 87-53
Կ'ստանձնէ Առեւտրական, Պատժական, Քաղաքային ամէն տեսակ դատեր: Իրաւագիտական խորհրդակցութիւններ, բոլոր դատական եւ վարչական գործերու համար, գրաւոր կամ բերանացի: Նախարարութեանց եւ բոլոր պաշտօնատուներու մօտ վարչական եւ իրաւական դիմումներ: Հայ առեւտրականներու եւ անհատներու մասնաւոր դիւրութիւններ պատուագնի վճարման համար, նկատի առնելով ներկայ տնտեսական տագնապը: Մասնաւոր սպասարկութիւն քաղաքային եւ կրօնական ամուսնալուծման դատերու համար: Արագութիւն եւ գաղտնապահութիւն: Դիմեցէք եւ պիտի գտնէք ամէն գոհացում: Գաւառներէն եւ արտասահմանէն եղած դիմումներուն կը պատասխանուի անմիջապէս:

Հայերու ժամադրավայրը
ճաշարան **ՖԼՕՐԻԱ**
61 Rue Monsieur le Prince, PARIS (6e)
Մէթրօ Օտէօն եւ սկէն Միշել Հեռաձայն Danton 52—73
Արեւելեան եւ եւրոպական խնասուած կերակուրներ

Միջազգային դարմանատուն
ՏԷՐ ԵՒ ՏՕՐԷՆ ՏՕՔԹ. ՄԻՀՐԱՆ Կ. ՔԷՇԻՇԵԱՆ
Նախկին բժշկապետ Մերսինի Ֆրանս. հիւանդանոցներու պատուոյ մէտալյ Ֆրանս, առողջապահ. նախարարութենէն հաստ՝ 31 Rue de la Rochefoucauld (9)
Téléphone: TRINITÉ 59—54
Բաց է ամէն օր կէսօրէ վերջ ժամը 2.50էն 7.50, (կէսօրէ առաջ միմիայն ժամ... Քեամք) կիրակի եւ տօն օրերը 10—12:
Հոն կը կատարուին՝ ֆ. ճառագայթներով ամէն կերպ քննութիւն, շողանկարում (diographie), գեր-մանիշակագոյն, յետ-կարմրագոյն եւ ուէօնկէկենան դարմանում (thérapie profonde), նաեւ Տիաթէրմիի բոլոր կիրարկումները եւ ելեկտրաբոլոր ձեւերը, որ ներքին, արտաքին եւ մորթային բազմաթիւ հիւանդութիւններու գործուած գիտական ամենավերջին եւ զօրաւոր ազդակներն են:
Թոքախտաւորներու համար **pneumothorax**ի գործողութիւն: Հակաչիճախտային խարգելիչ եւ բուժիչ պատուաստ եւ շիճուկ (կատարելապէս անվտանգ):
Ջղային եւ հոգեկան հիւանդութիւններու դէմ քնեցածական, Թելադրական եւ ... եան մեթոտներ:
Դարմանատունը ունի իր մասնագէտ բժիշկները աչքի, քթի, ականջի, ինչպէս արանց եւ կանանց ծննդամիզային եւ վէներային հիւանդութիւններու համար:
Assurance Socialeի պատկանող հիւանդներու կը տրուի լուրջ խնամք:
Տօքթ. Մ. Քէշիշեան, որպէս մասնագէտ ներքին հիւանդութեանց, կ'այցելէ նաեւ հիւանդներուն.
Métro: Trinité, St. George et Pigale: Tramway 26, 28, 54: Autobus AF, AJ, AM, B, BD, BI, G, Gbis, L, H, Hbis, R, Rb

Պուա Քոլոնպի մէջ «Յառաջ» կը ծախուի
Պ. ԱՌԱՔԵԼԵԱՆի արձարաւիճի մէջ
CAFE ARARAT
345 Ave. Argenteuil, Bois-Colombes

ԲՈՒՌ

(ՎԷՊ 1830Ի ԻՏԱԼԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՕՐԵՐԷՆ)

Հեղինակ՝ Է. ՎՈՅՆԻՉ — Թարգմ. Լ. ՇԱՆԹ

Ջեմման նայեց նրա երեսին, երբ տալիս էր բանալին: Հասկանում էր, որ դա մի պատրւակ էր միայն իրենց առանձին թողնելու:

— *Մենք իրար հետ կը խօսենք դեռ վաղը.* — ասաց Ջեմման: *Առաւօտեան ժամանակ կը լինի, երբ իրերը կը կապեմ ու կը վերջացնեմ:*

— *Ա՛խ, այո՛, ժամանակ դեռ շատ կայ: Ձեզ մի բան էլ ուզում էի հարցնել, Բիվարէց, բայց կը խօսենք ճամբին: Լաւ է կէտումին ուղարկէք քնելու, Ջեմմա, ու ինքներդ էլ ցած խօսէք: Ուրեմն տասնըմէկին, ցտեսութիւն:*

Ու դուրս ելաւ գլխի մի թեթեւ շարժումով ու ժպտուն, եւ ամուր փակեց իր ետեւից տան դուռը. Թող հարեւանները իմանային, որ տիկին Բօլլայլ հիւրերը գնացին արդէն:

Ջեմման իջաւ խոհանոց, գիշեր բարի ասաց կէտումին ու դարձաւ սենեակ մի դաւաթ սեւ սուրճ դրած ափսէին:

— *Չէ՞ք ցանկալ մի քիչ պառկէք.* — հարցրեց նա: — *Ամբողջ գիշերը չէք քնելու:*

— *Ա՛խ, ոչ. կը քնեմ Սան – Լօրէնցում, մինչեւ հազուստները պատրաստեն:*

— *Այն ժամանակ դոնէ սուրճ խմեցէք: Սպասեցէք մի վայրկեան, ձեզ պիսքուի բերեմ:*

Եւ երբ իջաւ գետնի ու բացաւ պահարանի ստորին աչքը, Բոռ յանկարծ ծուեց դէպ ի նրա ուսը:

— *Ի՞նչ ունիք տեսնենք այդտեղ: Ա՛խ, չոքոլա ու կարամէլ: Վա՛յ, արքայավայել քաղցրեղէն է:*

Ջեմման նայեց նրա այդ բերկրանքին, մի թեթեւ ժպիտով:

— *Շաքարեղէն սիրո՞ւմ էք: Ես միշտ պահում եմ Ձեզարէի համար:*

Այդ տեսակէտից նա մի իսկական եբախայ է:

— *Ի՜իրա՞ւ: Այն ժամանակ նրա համար նորը ճարեցէք, իսկ սրանք կը տաք, որ տանեմ հետս: Կարամէլը կը դնեմ գրպանս, եւ նա կը փոխարինէ ինձ կեանքի կորցրած ուրախութիւնները: Ցոյս ունիմ, որ Թոյլ պիտի տան մի կտոր սառ – չաքար կրծելու, երբ ինձ կախելու տանեն:*

— *Սպասեցէք, ձեզ համար մի չաքարի տուփ ճարեմ, թէ չէ շատ է կպչուն: Շոքոլա՞ն էլ դնեմ մէջը:*

— *Ո՛չ· կ'ուտենք հիմա միասին:*

— *Բայց ես չոքոլա չեմ սիրում եւ ուզում եմ, որ այժմ նստէք մօտս ու լուրջ խօսէք: Չէ՞ որ հազիւ թէ մի անգամ էլ տեսնենք իրար նախ քան մեզնից մէկի սպանւելը եւ...*

— *Շոքոլա չի սիրում.* — *քրթմնջում էր Բոռը կամաց:* — *Լաւ, անուշ կ'անեմ առանձին: Չէ որ սա մահապարտի վերջին ընթրիքն է: Դուք այսօր բոլոր իմ քմայքներս կատարէք պիտի: Ամէնից առաջ ցանկանում եմ, որ նստէք այստեղ Թիւիլուաթուրին, եւ քանի որ ինձ առաջարկում էիք պատկել, ա՛յ կը պատկեմ այստեղ բոլորովին յարմար:*

Իջաւ գորգի վրայ, նրա ոտքերի մօտ, արմունկը յենեց Թիւիլուաթուրին ու նայեց Ջեմմայի երեսին:

— *Ի՛նչ գունատ էք: Դա նրանից է որ այդպէս սեւ էք նայում կեանքին ու չոքոլա չէք սիրում:*

— *Դէ՛, մի հինգ վայրկեան դոնէ լուրջ եղէք: Կեանքի ու մահու հարց է սա վերջապէս:*

— *Երկու վայրկեան էլ չեմ ուզում լուրջ լինել, անգթնա: Այդ պատւին ո՛չ կեանքը արժէ, ոչ մահը:*

Ալեց Ջեմմայի երկու ձեռքը ու խըփում էր թեթեւ՝ մատների ծայրովը:

— *Է՛, մի լինէք այդպէս լուրջ, Մեներվայի պէս: Թէ չէ խնդրի լաց կը լինեմ ու դուք կը խղճաք: Ես ուզում եմ, որ ժպտէք: Մի այնպիսի յանկարծ ժպիտ ունիք դուք: Խնդրում եմ, մի յանդիմանէք ինձ, անգթնա. եկէք միասին ուտենք մեր պիսքուին, առանց կուելու, երկու եղբօր պէս. չէ որ վաղը մահն է գալիս:*

Վեր առաւ քաղցր պիսքուին պնակից ու դդուչ կէս արաւ մէջից, ճղոցրէն բաժանելով եւ վրայի չաքարէ զարդը:

— *Թող սա մեր հաղորդութիւնը լինի, ինչպէս եկեղեցում: Առէք ու լսեցէք — այս է իմ մարմինս: Իսկ վրայից կ–կը խմենք գ–գինին միեւնոյն բաժակից· այդպէս է ընդունւած: Արէք խնդիրքս, իրրեւ յիշատակ···*

Ջեմման բաժակը դրաւ սեղանին:

— *Վերջ տուէք.* — *ասաց նա գրեթէ հեկեկալով: Բոռ նստեց, նայեց նրան ու նորից վերցրեց նրա ձեռքերը իր ձեռքի մէջ:*

— *Մոռանանք մի վայրկեան բոլոր հոգերը: Երբ մեզնից մէկը մեռնի, միւսը կը յիշի այս ժամը: Մոռանանք աղմկոտ ու տաղտկալի աշխարհը, որ մռնչում է մեր շուրջը· գնանք միասին, ձեռք ձեռքի, մահուան ծածուկ հանգստարանները ու պառկենք կապչի կարմիր ծաղիկների վրայ: Լռենք մի քիչ:*

Դրաւ գլուխը նրա ծունկին ու պէմքը ծածկեց ձեռքերով: Ջեմման կամաց հակւեց նրա վրայ ու դրաւ ձեռքը նրա գլխին: Այդպէս սահում էր ժամանակը, եւ երկուսից ոչ մէկը ոչ շարժւում էր, ոչ խօսում:

— *Սիրելիս, այժմ կէս գիշերի մօտ է արդէն,* — *ասաց կինը վերջապէս:*

Բոռ բարձրացրեց գլուխը:

— *Մի քանի վայրկեան ունինք ընդամէնը: Մարտինին խնդրի կը վերադառնայ եւ գուցէ մենք այլ եւս տեսնի միմեանց: Ինձ ոչինչ ասելու:*

Բոռ դանդաղ վեր կացաւ ... սենեակի միւս անկիւնը: Տիրոջ կեանքի լուծիչն:

— *Ես ձեզ ուզում եմ ասել ...* — *ասաց նա հազիւ լսելի:* — *Մ... ասեմ ձեզ···*

Կանգ առաւ ու նստեց լուռ... մօտ, ծածկելով դէմքը երկ... քով:

— *Ի՞նչ երկար ձիգ ունիք ուզում խղճալ.* — *շշնջեց Ջեմման:*

— *Ինձ կեանքումս ոչ ոք չէ ... ցել. մէկ էլ կարծում էի սիրո... ձեզ համար միեւնոյն է դա···*

— *Այժմ այդպէս չէ՞ք կարծ...*

Ջեմման մի վայրկեան սպասեց պատասխանին, յետոյ անցաւ ... կը ու կանգնեց նրա կողքին:

— *Ասացէք ինձ վերջապէս ճշ... տը: Մոռածեցէք, եթէ սպանեմ ... եւ ինձ ոչ, ես պէտք է ապրեմ ... կեանքս եւ երբեք պիտի չդի... հաստատ···*

Բոռ ամուր հուպ էր տալիս ... ձեռքերը:

(Շար...

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

LE SEUL QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : Sch. Missakian

Rédaction & Administration — 17, Rue Damesme PARIS (13e)

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԻՆ — Téléphone : Glacière 15-70

(ԵՐԹԵԼԻԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro: TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ,—

	ՏԱՐԵԿԱՆ	ՎԵՑԱՄՍԵԱՅ	ԵՌԱՄՍԵԱՅ
Ֆրանսա եւ գաղութներ	140 ֆրանք	70 ֆրանք	35 ֆր.
Անգլիա, Եգիպտոս, Ջուիցերիա, Իտալիա	250 »	130 »	—
Ամերիկա	8 տոլար	5 տոլար	—
Ուրիշ երկիրներ	200 ֆրանք	100 ֆրանք	—

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 31 ՕԳՈՍՏՈՍ 1932 — 31 AOUT 1932

Ը. ՏԱՐԻ ԹԻՒ 1970 — Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ — ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

«ԴՐԱՄԸ ՈՒՐԿԷ՞ ԿԸ ԳՏՆԵՆ»

Էնկիւրին յամառօրէն կը հետապնդէ փոքրամասնութեանց լուծման կամ թրքացման քաղաքականութիւնը:

Բազմաթիւ փաստերու կարգին, ահաւասիկ վերջինը, հրատարակուած՝ այսօր իսկ: (Գ. էջ):

Թուրքիոյ Կրթական գործակալութիւնը չրջաբերական մը ուղղելով փոքրամասնութեանց եւ օտարականներու դպրոցական վարչութեանց, պահանջած է իրենց եկամուտներուն ցուցակները:

Այս առթիւ, թուրք թերթերը մէկ բերան կը հարցնեն.

— Օտար եւ փոխադրամասնութեանց դպրոցները շատ մը ծախքեր ունենալով հանդերձ, ի՞նչպէս կը մատակարարուին:

Ուրկէ՞ կը գտնեն դրամը:

×

Հարցումը, ինքնին, այնքան պերճախօս է որ, մարգարէ ըլլալու պէտք չկայ, հետեւանքները դուշակելու համար:

Տրուած հրամանին վրայ, դպրոցական վարչութիւնները պիտի ներկայացնեն իրենց ելքն ու մուտքը: Պատասխանը ստանալէ յետոյ, Էնկիւրին ուրիշ կարգ մը հարցումներ ալ պիտի ուղղէ, նոր կարգադրութիւններ պիտի ընէ, եւ իր թաթը պիտի դնէ մատակարարութեանց վրայ:

Մինչեւ հիմա, զգուշացած է այդ միջամտութենէն, ոչ թէ մեր սեւ աչքերուն համար, այլ համաձայն կոնկորտ ծրագրի մը, որ կը թելադրէ ամէն ինչ օրէնքի մը կապել եւ աղմուկ չհանել:

Արդէն, փոքրամասնութեանց դպրոցները ելած են համայնքներու ձեռքէն, եւ կապուած ուղղակի Մէարիֆին: Կառավարութիւնը չի ճանչնար ոչ Ուսումն. Խորհուրդ, ոչ Հոգաբարձութիւն, ոչ ալ Թաղ. Խորհուրդներու իրաւասութիւն:

Դպրոցները սահպուած են նշանակել մէկ – մէկ հիմնադիր – տնօրէն, որոնց բարի կամքէն կամ խղճմտանքէն կախում ունի իրենց գոյութիւնը, այս կամ այն ուղղութիւնը: Այս հիմնադիր – տնօրէնները ուղղակի ենթակայ են կրթական տեսչութեան: Տէր – տիրականը դպրոցին եւ պատասխանատու՝ կառավարութեան առջեւ. Թաղ. խորհուրդներուն կը մնայ մխայ դրամ ճարել: Մանաւանդ օրը օրին վճարել կառավարութեան կողմէ նշանակուած թուրք ուսուցիչներուն եւ ուսուցչուհիներուն թոշակները:

Հակառակ պարագային, դպրոցը անմիջապէս կը փակուի: Նոյն իսկ վերջնապէս: Արդէն մեծագոյն չնորհն է որ կ'ընեն, հանդուրժելով անոնց գոյութեան:

Հիմա այդ «չնորհ»ն ալ պիտի ցնդի, երբ կառավարութիւնը, հետզհետէ ձեռք առնելով դպրոցներու մատակարարութիւնը, քիթը կոխելով ամէն բանի մէջ, վճռէ թէ այս կամ այն դպրոցը բաւարար եկամուտ չունի. հետեւաբար պէտք է փակուի:

Ուշադրաւ է որ, այս յուրին հետ մէկտեղ, թուրք մամուլը վերջերս ողբեր կը հիւսէ փոքրամասնութեանց դպրոցներու գլխուն փաթթուած թուրք ուսուցիչներու նիւթական կացութեան մասին:

«Ձիւմհուրիյէթ»ն էր որ կ'աղաղակէր, օգոստ. 18ին.

— «Ինչո՞ւ համար յոյն տղու մը խօսած թուրքերէնը թուրք տղու մը խօսած թուրքերէնը չէ. ինչո՞ւ համար հայ տղու մը գրիչէն ելած թուրքերէնը թուրք տղու մը գրիչէն ելած թուրքերէնը չէ:

... եթէ կ'ուզենք ազատել այդ վարժարաններու մէջ թուրքերէն լեզուն, նախ եւ առաջ պէտք է որ թուրքերէնի ուսուցիչները ազատենք... Շատ հեռու ենք մէկ ձուկով 40 հոգի կերակրող Մարգարէի դարէն»:

Մինչդեռ, փոքրամասնութեանց դպրոցներուն վրայ նշանակուած թուրք ուսուցիչները երկու – երեք անգամ աւելի ժամավարձ կ'առնեն, քան հայ, յոյն կամ հրեայ ուսուցիչը: Եթէ չենք սխալիր, նախակրթարաններու համար ժամը 75 ղրուշ, իսկ բարձրագոյն վարժարաններու համար՝ 150 ղրուշ: Իրականին մէջ, ամսական 25 ոսկիով պաշտօնավարողները ոչ – թուրքերն են, ոչ թէ թուրքերը: Այն ալ, ամիսներով ապառիկ մնալու պայմանաւ:

×

Այս հարցին մէջ ալ, Էնկիւրին կը հետապնդէ քանի մը նպատակ միանգամայն:

Կը ձգտի ոչ միայն իր թաթին տակ առնել փոքրամասնութեանց եկամուտները, այլ եւ երեւան հանել նոր աւար: «Լքեալ» գոյքեր: Հաստութաթեր կալուածներ: Անշուշտ իր ձեռքով «մատակարարելու» համար զանոնք:

Ընդարձակ ծրագրի մը մէկ մասն է այս քաղաքականութիւնն ալ, փոքրամասնութիւնները անելի մատնելու, զանոնք յուսահատեցնելու եւ ցրուելու համար:

Անցեալ փետրուարին, Էնկիւրի ծրագիր մը հրատարակեց, որուն համաձայն չպիտի կրնան համախումբ ապրիլ միեւնոյն ցեղին պատկանող եւ թուրքերէն չգիտցող համայնքները:

Օրէնքին հրատարակութենէն անմիջապէս յետոյ, լուրթիւն հրամայուեցաւ: Բայց այդ չի նշանակեր թէ օրէնքը ետ առնուեցաւ:

Ընդհակառակն, լուրթիւնը աւելի դիւային հանգամանք մը կուտայ այդ չարաշուք ծրագրին:

Լուրթիւնը լաւագոյն միջոցն է, ծրագիրը կամաց – կամաց գլուխ հանելու:

Ահա տարիներէ ի վեր հանրաւաուներ կը բացուին հայաչատ քաղաք մը, Ֆէրիւիէի մէջ, հակառակ եղած բողոքներուն: Պարզապէս Հայերը զգուեցնելու եւ ցրուելու համար:

Եւ դեռ ուրիշ հրէշային կարգադրութիւններ:

... «Ուրկէ՞ կը գտնեն դրամը»:

Ի՞նչպէս կ'ապրին ըսելու ձեւ մը, որ կը ձգտի գաղտնիքներ հանգնալ, գաղտնի որոշումներ գործադրելու համար:

Շ.

ՕՐԸ ՕՐԻՆ

ՀԱՑԿԱԿԱՆ ԵՐԳԱՐԱՆ

— :-: —

Հետաքրքրութեցայ թէ ի՛նչ գիրքեր կը գնէ մեր ժողովուրդը, ընթացիկ բացատրութեամբ մը՝ «ընթերցող հասարակութիւնը»:եւ հարցուցի Հրանտ Սամուէլին, մտնելով իր գով գրատունէն ներս:

— Ամէնէն աւելի երգարան կը ծախուի, յետոյ ազօթագիրք...

Հոգեբանական վերլուծման գեղեցիկ նիւթ է այս, — ճնճղել թէ ինչո՛ւ հայ ժողովուրդը, այսքան փլուզումներէ եւ բայբայումներէ յետոյ, տագնապի եւ տառապանքի մէջ, բան չի խնայեր ունենալու համար իր երգարանը: Չեմ ուզեր խօսիլ անոնց մասին, որոնք ազօթագիրք կը փնտռեն, — հոգեպէս տկար եւ ազգուն, բարոյապէս դիւրաթեք ու կրաւորական այս մարդիկը հիւանդներ են, որոնք կը կարծեն միսթիսիզմի մէջ գտնել դարմանը իրենց ցաւերուն:

Բայց առողջ բազմութիւն մըն է այն, որ երգարան կը փնտռէ, — «երգելով կ'ուզէ մեռնիլ», կամ «երգելով կ'ուզէ ապրիլ»: Ու այդ բազմութիւնը գիտէ թէ հայ երգարաններուն մէջ է պահուած ինչ որ կորսնցուց ինք, — մեր երգարաններուն մէջ են հայրենի «բարձր սարերը», «լուսնակն անուշ-ները», «չինար եարերը», «հոռովէլ»ով բրբռուն արտերը, «շուն Թուրֆ»ին դէմ մեր կռիւները, Սիփանը, Մասիսը, Արաքսը: Այնտեղ են մեր գարունները, որոնց վրայ «ձիւն ա աբել», այնտեղ են մեր անձրեւները, երբ «ուռ ու տերեւ» կը դողան, այնտեղ են հայ աղջկան սիրտերը, որ կը բաբախեն ազնուական եւ երանելէտ սէրով մը, եւ այնտեղ են օրօրոցի մեր երգերը:

Այնտեղ՝ Հայոց պատմութիւնը, մեր իղձերը, մեր երազները, մեր ափիւնը:

Մեր կտակարանն է «հայկական երգարանը», մեր Տապանակ Ուխտին, — ահա թէ ինչո՛ւ երգարան կը գնէ գաղթական հայ ժողովուրդը:

Ափսո՜ս, որ չունինք շնորհիով երգարան մը: Ամէն մարդ, օգտուելով մեր ժողովուրդին այս տրամադրութենէն, երգարան է կազմեր, — գէշ տպագրութիւն, անճաշակ հատոռում, աղաւաղուած բառերով: Գանի մը տասնեակ երգարաններ ունինք, եւ երգարանի «հեղինակներ», մէկը միւսէն աւելի գէշ: Ահա *ԱԶԳԱԿ* եւ *ՆՈՐ ՕՐ* թերթերն ալ, նոյն բարեացակամութեամբ, սկսեր են պրակ առ պրակ երգարան տպել: Չեմ գիտեր թէ որքա՛ն խնամք պիտի դնեն, եւ որքա՛ն պիտի դարմանեն իրենց տպարաններին թերութիւնները՝ լոյս ընծայելու համար շրջոգիրհիով երգարան մը, գեղարուեստական ու հատընտիր:

Ինչ որ ալ ըլլայ, գեղեցիկ է տեսնել, որ հայ ժողովուրդը երգարան կը սպառէ, ինչպէս մանուկը՝ այբենարան:«Ագգապահպանման» աղուոր միջոց է այս: Վասն զի հայ ժողովուրդը հայ պիտի մնայ այնքան ատեն որ հայերէնն կ'երգէ:

Երգէ՛, Հայոց ժողովուրդ, երգէ՛ խորոտիկ լեզուովդ, երգէ՛ ծիծեռնակի պէս, երգէ՛ կոռնկի պէս, բայց երգէ՛ ապրելու համար:

ԱՐԵՒԱՆ

ԳՈՐԾԵՐԸ ԿԸ ԲԱՑՈՒԻ՞Ն

Նախագահ Հուվըրէն յետոյ, Պելժիոյ ազգ. դրամատան տնօրէնն ալ լաւատես յայտարարութիւններ ըրաւ առջի օր:

— Այսօր կացութիւնը աւելի լաւ է քան վեց ամիս առաջ: Դեռ ամէն ինչ ստոյգ չէ, բայց յոյսի շող մը կը պլպլայ: Այդ շարժումը զօրացնելու համար, կան երկու Էական պայմաններ գոր կը յուսամ թէ պիտի իրականացնէ միջազգային տնտեսական խորհրդաժողովը, — 1. վերահաստատում դրամական ապահովութեան, կարելի եղածին չափ շատ երկիրներու մէջ: 2. վերջ գանգան երկիրներու միջեւ կատարուած փոխանակութեանց սահմանափակման:

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

Ամերիկա պիտի ճանչնա՞յ Խ. Մ. Հ. Մ.Ը

Ինչպէս գրած էինք երէկ, Մ. Նահանգներուն մէջ հետզհետէ կը զօրանայ խորհրդային իշխանութիւնը ճանչնալու տրամադրութիւնը:

Այս առթիւ թերթերը հետեւեալ տեղեկութիւնները կը հաղորդեն.—

Խորհրդային իշխանութիւնը ճանչնալու տրամադրութիւնը յառաջ եկած է զանազան պատճառներէ: Մէկը այն է որ, Օթաւայի խորհրդաժողովին մէջ, որոշուած է ամերիկեան արտադրութեանց առջեւ փակել կարգ մը չահաստաններ: Մ. Նահանգները կ'ուզեն այս կորուստները փոխարինել նոր չահաստաններ գտնելով խորհրդային Միութեան մէջ: Արդէն իսկ կարեւոր դրամատուն մը առաջարկած է պարտաւորիչ փոխառութիւն մը հրապարակ հանել, ի նպաստ խորհրդային իշխանութեան: Մ. Նահանգներուն համար նոյնքան անհրաժեշտ է դրամագլուխներ որքան ապրանքներ արտածել:

Մ. Նահանգները ճանչնալով խորհրդային իշխանութիւնը, միեւնոյն ատեն կ'ուզեն պատասխան մը տալ Ճափոնի, որ ճանչցաւ Մանչուրիոյ պետութիւնը եւ իր խնամակալութեան տակ առաւ Չինական այդ հարուստ նահանգը:

Վերջապէս, բազմաթիւ մարդիկ այն տեսակէտն ունին թէ Մ. Նահանգները չեն կրնար յաւիտենապէս անդիտանալ կառավարութիւն մը որ կ'իշխէ աւելի քան 12 տարիէ ի վեր, անսահման երկրի մը վրայ, որուն անտեսական ուժը կ'աճի տարուէ տարի եւ որուն հետ առեւտրական բազմաթիւ յարաբերութիւններ ունի արդէն Ամերիկան:

Այս միջոցին Մ. Նահանգներու արտաքին նախարարութիւնը կ'ուսումնասիրէ մանաւանդ պատուիրակութիւն մը ղրկելու առաջարկը, զոր ըրած էր Ռամզէյ, Ժընեւի մէջ: Ջուիցերիայէն մեկնելէ առաջ, Ամերիկայի արտաքին նախարարը խօսակցութիւններ ունեցած էր խորհրդային պատուիրակներուն հետ, որոնք վճռապէս յայտարարած են թէ անկարելի է որ Ռուսիան հրաժարի համայնավարական Միջազգայինէն, ինչպէս թելադրուած էր: Անոնց կարծիքով, ջնջել համայնավարական Միջազգայինը՝ կը նշանակէ ջնջել հաղորդակցական կապակցութիւնը Մ. Նահանգներուն մէջ:

Մանաւանդ պատուիրակութիւն մը ղրկելու համար, անհրաժեշտ է վարկեր ստանալ Եռեսթ. Ժողովէն, ինչպէս եւ ապահովել Ծերակոյտին հաւանութիւնը: Այս առաջարկը յանձնուած է նախագահ Հուվըրի, որ թերահաւատ է, բայց ուզած է պօրահի եւ ուրիչ ծերակուռականներու կարծիքն առնել:

× «Թայմզ» կը գրէ թէ՝ Ժընեւի մէջ կատարուած խօսակցութեանց ընթացքին, արամադրութիւն յայտնուած է փոխադարձ համաձայնութեամբ կարգադրելու խորհրդային իշխանութեան կողմէ բռնագրաւուած ամերիկեան առագաստանաւերու եւ կերեւնկած ըլլալով թէ առաջարկուած պատուիրակութիւնը չպիտի կրնայ երեւան հանել Ռուսիոյ իրական կացութիւնը, Ռուսէք պատասխանած է թէ պատուիրակութիւնը կրնայ միասին տանիլ իր թարգմանները եւ եթէ աննպաստ եզրակացութեան յանգի, նեղութիւնը չկայ:

Հնդկաստան հրաբուխի վրայ

Բրիտանական կառավարութիւնը միշտ մտահոգ է Հնդկաստանի վիճակին եւ միջոցներ կը խորհի ելք մը գտնելու համար: Միջնորդ մը ճարած են, որպէս զի տեսակցի Կանոնի եւ միւս ազգայնական վարիչներուն հետ:

«Տէյլի Էքսփրէս»ի Թղթակիցը կը հեռագրէ Պոմպէյէն.—

Հնդկաստան հրաբուխ մըն է որ կրնայ մէկ օրէն միւսը պայթիլ: Երկիրը հանդարտ է երեւութապէս, որովհետեւ 24,732 հնդիկ առաջնորդներ եւ գործիչներ ձերբակալուած են: Ազգ. համադումարին գործունէութիւնը թուլցած է: Պետերը ձերբակալելու եւ անոնց ստացուածքները գրաւելու հրամանները անչուշտ մեղմացուցած են չարժումը, բայց խլրտումը վերջացած չէ:

Թերթը կ'աւելցնէ թէ կառավարութիւնը այժմ կը չնայ անհրաժեշտ միջոցները ձեռք առնել խաղաղութիւնը վերահաստատելու համար, եւ այս նպատակով կ'ուզէ հաշահաճնել հնդիկ ազատականները, որոնք համաձայն չեն կանոնի ծայրայեղութեանց:

Գերմանական թնճուկը

Երէկ արտակարգ խորհրդակցութիւն մը տեղի ունեցաւ Գերմանիոյ հանրապետութեան նախագահին եւ նախարարներուն մէջեւ, օրուան կացութեան մասին:

Այս խորհրդակցութենէն առաջ, յանկարծ Պերլին հասաւ Հիթլէր եւ տեսնուեցաւ վարչապետ Ֆօն Փափէնի հետ: Մեծ վերապահութիւն կը տիրէ այս տեսակցութեան մասին, որուն ներկայ էր նաեւ Զօր. Շլայխէր: Համաձայն արձանագրուած լուրերու, Հիթլէր յայտներ է թէ ինք համաձայնած է կեդրոնի կուսակցութեան հետ եւ անոր յանձնած՝ խառն դահլիճի մը ցանկը: Բայց, աւելցուցեր է թէ իր ուզածը այդ չէ եւ պիտի նախընտրէր մասնակցիլ նախագահական դահլիճի մը, Ֆօն Փափէնի կամ Զօր. Շլայխէրի վարչապետութեամբ:

Հաւանական չի համարուիր որ համաձայնութիւն գոյանայ:

Հիթլէր արդ տեսակցութենէն եւ վարչապետին հետ ձախելէ յետոյ, ունկնդրութեան ընդունեցաւ իր 230 երեսփոխանները, որոնք փառաւոր ցոյց մը կատարեցին: Այս առթիւ ճառ մը խօսելով, չէչտեց թէ օրէ օր կ'ուժգնանայ իր ուժերուն ձայնը, թէ Գերմանիոյ զանազան մասերուն մէջ իրենք արդէն տէր են իշխանութեան: Սակայն, չեն կրնար կառավարել ամբողջ Գերմանիան: «Բայց, մեր յաղթանակը ժամանակի խնդիր է»: Աւելցուց թէ Ֆօն Փափէնի դահլիճը

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ԱՐՄՏԻՒԻՒ ԳՈՂՈՒԹԵԱՆ ԴԷՄ

Ս. Միութեան Գերագոյն Ատեանը հրամայեց բոլոր նահանգային ատեաններուն՝ անմիջապէս կազմել տեղեկատուներու մնայուն վաշտ մը, օգնելու համար հունձքի եւ ուտեստի գողութեան դէմ կազմակերպուած պայքարին: Իւրաքանչիւր հաւաքական տնտեսութենէ մէկ – երկու անդամներ պիտի արձանագրուին այս գաղտնի ծառայութեան համար, եւ վստահելի գործակալ մը պիտի դրուի իւրաքանչիւր խորհրդային խանութի մէջ:Գործակալները առանձին չպիտի գործեն, այլ պիտի կապուին իւրաքանչիւր շրջանի կեդրոններուն հետ, ուր ժողով պիտի գումարեն, տեղեկագիրներ կազմելու եւ հրահանգներ ստանալու համար, այսպէս դառնալով մասնագէտ խուզարկուներու մարմին մը՝ խորհրդային ստացուածքի պահպանման համար: Ասոնք պիտի օգնեն գործադրելու վերջին հրամանագիրը, որ մահուան պատիժ կը սպառնայ արմտիքի գողերուն եւ պիտի համոզեն բազմութիւնները թէ «խորհրդային Միութեան մէջ ընկերվարական ստացուածքը անհունապէս աւելի սրբազան է եւ անբռնաբարելի քան անհատական ստացուածքը՝ հաղթենի երկիրներու մէջ»:

Արմտիքի գողութեան դէմ հրատարակուած հրամանագիրը բուռն պայքար բացած է գիւղացիներուն մէջ, որոնք իրար կը լրտեսեն այժմ: Կը թուի թէ Մոսկուայի ուշածն ալ այս է, քանի որ միացեալ գիւղացիութիւն մը վտանգաւոր կը համարուի: Խորհրդային մամուլը կը պահանջէ անողորմաբար գործադրել մահապատիժը, նոյն իսկ այն գիւղացիներուն դէմ որոնք գրպանները կամ գոգնոցները լեցուն հասկեր կը տանին տուներնին, դաշտէն վերադարձին:

ԹՈՒՐՔԵՒՍՈՒՐԻԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ ՎՐԱՅ

Սուրիոյ «Լիսան իլ Հալ» թերթը կը գրէ.—

Թուրքեւսուրիական սահմանին վրայ ապահովութիւնը պահելու պատրուակով, թրքական կարեւոր ուժ մը գետեղուած է: Հալէպի թերթերը ցարդ բազմաթիւ դէպքեր յիշեցին, որոնք կատարուած են այդ թրքական ուժերու կողմէ:

Այս անգամ ալ, ահա, Հալէպի ժանտարմայի տեղեկագրէն կը իմանանք հետեւեալ երկու դէպքերը:

Առաջին.— Թամօ անուն ձարապլուսցի մը կ'ուզէր սահմանը անցնիլ, մօտակայ թուրք գիւղ մը հանդիպելով իր առեւելիքը գանձելու համար: Թուրք գինուորները սակայն կը սկսին կրակ տեղալ անոր վրայ եւ առանց բառ մը իսկ փոխանակելու տեղն ու տեղը կը մեռցնեն զայն:

Երկրորդ.— Սուրիացի հովիւ մը, Մէյտան էֆպէկի մօտ գտնուող գետ մը բերած է իր հօտը, ջրելու համար: Գետը կը գտնուի սուրիական սահմանին մէջ, բայց շատ մօտ թրքականին: Թուրք գինուորներ կը կռռոպտեն զայն, ոչխարներն ու այծերը կը բշեն թրքական սահման:

ՔՈԼԵՐԱ ՊԷՅՐՈՒԹԻ ՄԷՋ

Պէյրութի առողջապահական տնօրէնութիւնը իմանալով որ Քոլերայի դէպք մը ծագած է հովանոց շինողի մը տան մէջ, ամէն նախազգուշական միջոցները հրահանգեց ապէտը սահմանափակելու համար:

× Ձիպէյլի մէջ բազմաթիւ մարդիկ վարակուած են ժանտատեղդէ:

Առողջապահական տնօրէնութիւնը կը թելադրէ որ ամէն ոք պատուաստուի:

— :-: —

ԻՐԱՔԻ ԹԱԳԱՒՈՐԸ, որ Քիւրտիստան գացած էր օգանալով, Պաղտատ վերադարձաւ:

ՊԱՂԵՍՏԻՆԻ մէջ կատարուած պեղումներու ընթացքին, Տիբերիս լիճին մօտ գտնուեցան աւերակները եկեղեցիի մը որ շինուած էր այն տեղին վրայ ուր Քրիստոս հինգ հազար հոգիի բաւեցուցած էր հինգ նկանակը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳԱՂՓԱՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՏԻ ՕՐԳԱՆ

ՀԱՅԿՈՄ — «Ֆուկս» յօդուածաշարէ մը
նախօրեակին Նորքիոյ ու Լիլբումլի կայարան
բեռնաթափուած ծխելիք:

— Ֆուկս, ինչո՞ւ կը ծխես, մինչ գիտես որ
հիւանդ ես եւ բժիշկդ արգիլած է քեզի:

Ֆուկս կը պատասխանէ, թէ ինք ծխելով
կ՚ազատի ամէն տեսակ ախտերէ, ինչպէս
նաեւ ամէն տեսակ չարիքներէ:

Ֆուկս կ՚ապրի Նորքի մէջ, ուր ունի
ծխախոտի խանութ մը, որ կը գտնուի
Ազատամարտիկներու պողոտային վրայ:
Ան ունի նաեւ ծխախոտի գործարան մը,
ուր կը պատրաստուին «Ֆուկս» ծխախոտի
տեսակները:

Ֆուկս ամէն առաւօտ կ՚այցելէ իր գործա-
րանը, ուր կը հսկէ, որ ամէն ինչ կանոնա-
ւոր կերպով ընթանայ:

Ֆուկս ունի նաեւ ծխախոտի մեծ պահես-
տանոց մը, ուր կը գտնուին ծխախոտի
տարբեր տեսակներ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵՆ

(ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ)

Հայաստանի հեռախոսն ու յոթ խոսափող

Բ.

ԳՈՂՈՒՄՆԵՐԻ ՀՆՁՈՒՆԸ

— Լսո՞ւմ եք։ Ես Ձեր հարևանն եմ (Ձեր Ձեռքերն ու ոտքերը ինչ-որ կերպ ես արդեն տեսել եմ)։ Ուզում եմ ձեզ ասել, որ ես ձեր ձայնն եմ լսում։ Ես ձեզ հետ եմ։ Ես ձեզ հետ եմ ուրախանում և տխրում։ Ես ձեզ հետ եմ ապրում։ Ես ձեզ հետ եմ ամեն ինչ անում։ Ես ձեզ հետ եմ ամեն ինչ անում։ Ես ձեզ հետ եմ ամեն ինչ ան

ՖԱՄԱ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳՅԱՆ ՑՈՒՑԱՓԱՅՓՈՒՆԸ ՊԱՏՄՈՒՄ Է 1830 ԹՎԱԿԱՆԻՆ)

ՀԵՆՐԻ Ց. ԱՆՑԵԼԻ

Թարգմ. Լ. ԸՆԴՈՒ

— Եթե ինչ-որ բան... Գիտե՞ս, Ջեֆրսի, ես քեզ հետ ինչ-որ բան ունեմ... Ինչ-որ բան, որ ես ուզում եմ ասել քեզ... Ես... Ես ուզում եմ ասել, որ... Ես ուզում եմ ասել, որ... Ես ուզում եմ ասել, որ... Ես ուզում եմ ասել, որ... Ես ուզում եմ ասել, որ... Ես ուզում եմ ասել, որ...

Ջեֆրսին ոչ մի խոսք չասաց։ Նա միայն նայեց ընկերոջը, ապա ոտքի կանգնեց և սկսեց քայլել սենյակում։ Նա ուզում էր ինչ-որ բան ասել, բայց չգիտեր, թե ինչպես սկսի։ Նա ուզում էր ասել, որ ինքն էլ է սիրահարված, բայց չգիտեր, թե ինչպես ասի։ Նա ուզում էր ասել, որ ինքն էլ է սիրահարված, բայց չգիտեր, թե ինչպես ասի։ Նա ուզում էր ասել, որ ինքն էլ է սիրահարված, բայց չգիտեր, թե ինչպես ասի։

— Ես... Ես ուզում եմ ասել, որ... Ես ուզում եմ ասել, որ... Ես ուզում եմ ասել, որ... Ես ուզում եմ ասել, որ... Ես ուզում եմ ասել, որ...

Ջեֆրսին կանգ առավ և նայեց ընկերոջը։ Նա տեսավ, որ Հենրին շատ է տանջվում, և որոշեց օգնել նրան։

— Հենրի, ես գիտեմ, թե ինչ ես ուզում ասել։ Ես էլ եմ սիրահարված։ Ես էլ եմ ուզում ասել, որ... Ես էլ եմ ուզում ասել, որ... Ես էլ եմ ուզում ասել, որ... Ես էլ եմ ուզում ասել, որ... Ես էլ եմ ուզում ասել, որ...

Հենրին ժպտաց և գլխով արեց։ Նա հասկացավ, որ Ջեֆրսին էլ է սիրահարված, և որ նրանք երկուսն էլ ուզում են ասել նույն բանը։ Նա ուզում էր ասել, որ ինքն էլ է սիրահարված, և որ նրանք երկուսն էլ ուզում են ասել նույն բանը։ Նա ուզում էր ասել, որ ինքն էլ է սիրահարված, և որ նրանք երկուսն էլ ուզում են ասել նույն բանը։ Նա ուզում էր ասել, որ ինքն էլ է սիրահարված, և որ նրանք երկուսն էլ ուզում են ասել նույն բանը։

— Ես... Ես ուզում եմ ասել, որ... Ես ուզում եմ ասել, որ... Ես ուզում եմ ասել, որ... Ես ուզում եմ ասել, որ... Ես ուզում եմ ասել, որ...

Ջեֆրսին ոչ մի խոսք չասաց։ Նա միայն նայեց ընկերոջը, ապա ոտքի կանգնեց և սկսեց քայլել սենյակում։ Նա ուզում էր ինչ-որ բան ասել, բայց չգիտեր, թե ինչպես սկսի։ Նա ուզում էր ասել, որ ինքն էլ է սիրահարված, բայց չգիտեր, թե ինչպես ասի։ Նա ուզում էր ասել, որ ինքն էլ է սիրահարված, բայց չգիտեր, թե ինչպես ասի